Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

89199
И-70

[illegible]

ՇԱՀՐԻԱՐ

# ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ

ՎԷՊ

Պարսկաստանի կեանքից

ԹԻՖԼԻՍ
Տպար. Վրաց Հրատ. Ընկ. | Тип. Груз. Изд. Т-ва.
Большая Ванкская ул.
1902

## ՇԱՀՐԻԱՐԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ՋՀՈՒԳ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեան-քից.
2. ԹԱՄԱՐԻՍ, մեծ վէպ հին Հայաստանի և հին Պարսկաստանի կեանքից (անտիպ).
3. ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ, մեծ վէպ հին Հայաստանի կեանքից (անտիպ).
4. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ, 2 հատոր (անտիպ)։

891.99 Q-70
01 JAN 2009
19 NOV 2010
1001 / 9995

ՇԱՀՐԻԱՐ

# ՋՀՈՒԳ-ՔՈՒՇԱՆ

(Հրէասպանութիւն)

ՎԷՊ

Պարսկաստանի կեանքից

Արտատպուած „Մուրճ" ամսագրից

ԹԻՖԼԻԶ

Տպար. Վրաց Հրատ. Ընկ. Тип. Груз. Изд. Т—ва.

Большая Ванкская ул.

1902

Тифлисскаго ... Библиотека
... Публичная Библиотека
7/XI-1922

Дозволено цензурою. Тифлисъ, 24 сентября 1902 г.

# I

Մահմէդ Շահ Ղաջարի թագաւորութեան վերջին տարիներն էին։

Արքաների արքան, Շահնշահը, Աստծոյ ստուերը երկրի վրա, աշխարհի ապօթարանը, իմաստութեան, հանճարի, գեղեցկութեան, բարութեան քուրան[1]) արդէն հրաման էր տուել, որ բարխանաները[2]) ճանապարհ գնուեն դէպի Դամավէնդի բարձունքը, ուր նա մտադիր էր պատսպարուել ամառային տօթերից ծիրանագոյն վրանների տակ և հանգստանալ հարեմական զուարճութիւնների ծոցում։ Հարեմը արդէն քեաջավաներով, թախտրավաններով[3]), ներքինիների և Ղըլար-Աղասիի[4]) ընկերակցութեամբ Մունէջիմ-բաշու[5]) բարեգուշակ

---

[1]) Պարսից Շահի տիտղոսներն են։ [2]) Տան իրեր, կահկարասի։ [3]) Քեաջավա, թախտրավան, ամենահին ժամանակից Պարսկաստանում գործածւող փոխադրական անանիւ կառքեր են, որոնցով ճանապարհորդում են. քեաջավան բաղկացած է երկու փոքրիկ վանդակից և գցվում է ջորու վրա, իսկ թախտրավանը մի մեծ վանդակ է, որ տանում են երկու ջորի կամ ձի։ [4]) Ներքինապետ։ [5]) Գլխաւոր աստղագէտ, որ ամեն մի Շահ ունի։

յայտարարութիւնից յետոյ ճանապարհ էր ընկել։ Արեգակնափայլ Շահը այս անգամ չափաւորութեան մեծ օրինակ էր ցոյց տուել. հարեմի 400 կանանցից միմիայն 200-ը պէտք է արժանանային քաղցրացնել իրանց տիրոջ սիրտը և ծառայել նրան. մնացածը պէտք է մնային Թէհրանում և երկրորդ Ղզլար-Աղասիի հսկողութեան տակ գիշեր և ցերեկ աղօթէին Աստծոյ ստուերի կեանքի երկարութեան համար։

Մի գարնանային օր էր, մայիս ամսի սկիզբները, երբ Թէհրանում արդէն սկսվում է տօթը։ Չը նայելով որ դեռ առաւօտ, օդը չափազանց հեղձուցիչ էր. փողոցները փոշոտ և գարշահոտ ապականութիւններով լի։ Սակայն քաղաքի գըլխաւոր փողոցներից կամ խ ի ա բ ա ն ն ե ր ի ց մէկի վրա, Ա լ ա-Դ օ վ լ ա խիաբանի վրա մեծ շարժում և իրարանցում կար։ Դա այն փողոցն էր, որով Շահը պէտք է իր պալատից անցնէր և դուրս գար քաղաքից։ Խիաբանի երկու կողմով ընկած ծառուղիները բաց էին անում իրանց արանքում մի լայն ճանապարհ, որ եռանդուն կերպով ջրվում էր ծառուղիների երկարութեամբ ձգւող բաց ջրանցքներից ս ա ղ կ ա ն ե ր ի[1]) ձեռքով։ Ֆէրրաշները՝ ճիպոտները ձեռին, կարմրագեստ, ու խայտաճամուկ փետրաւոր գլխարկներով զարդարուած չաթիրներն իրանց հասա և

[1]) Ջրկիր. ջուրը ածում են կաշուէ տիկերի մէջ։



արծաթապատ գաւազաններով վազվզում էին խիաբանի միջով և իրանց սպառնական նայուածքներով հալածում անցորդներին։ Ճիպոտները երբեմն-երբեմն բարձրանում և ընկնում էին անզգոյշ անցորդների ուսերի վրա։ «Փ ե ղ է ր ս ո ւ խ տ ա ն ե ր[1]), գոռում էին չաթիրները և ֆէրրաշները, ճիպոտի հարուածներից ուսերը գալարուած անցորդների ուֆը լսելով,—կամենում էք փ ա լ ա խ կ ա յ ի մէջ չորացնենք ձեզ. կորէք այստեղից»։ Միայն սև չարշաւների մէջ տուգած և ո ւ ր բ ա ն դ ո վ[2]) երեսները օտար տղամարդի հարամ նայուածքից թագցրած կանայք, առանց երկիւղի, անցնում են խիաբանով անպատիժ, լաւ իմանալով, որ ոչ ոք չի համարձակի վիրաւորել իրանց։ Կնոջ խփելը համարվում է ամարդութիւն և արգելուած է ղուրանից։

—Իբրահիմ, շշնջաց մի չաթիր իր ընկերներին, արևից խաթեր, մի այստեղ նայիր. ախ, կեղծաւո՛ր, խաբեբա՛յ։

Եւ այդ խօսքերը արտասանելով հանդերձ, նա մի խոր գլուխ տուեց խիաբանով անցնող և սպիտակ էշի վրայ հեծած մի մօլլայի, որ ջ ո ւ բ բ ա ն[3]) քաշել էր գլխին. սուրբ մարդը, ամբողջովին անձնատուր եղած վերացական և հոգեշահ մտածողութիւնների, խլացրել էր ականջները, ծած-

[1] „Հայրդ այրուած“,—հայհոյանք, որ նշանակում է թէ հայրը այրուել է դժոխքում։ [2]) Քող, որով պարսիկ կանայք ծածկում են երեսները։ [3]) Վերարկու։

կել աչքերը, որպէս զի, նահլաթ չար սատանային, որևէ պիղծ բան չը տեսնի, երկրային սնոտի խօսակցութիւն չը լսի և, մանաւանդ, քաֆիր-գեավուրի չը պատահի։ Նրա բոլոր հագուստները—վարտիքը, ջուբբան, ամմաման ձիւնի պէս սպիտակ կտորից էին,—առաքինութեան, անմեղութեան և անարատութեան նշաններ։ Էշի սանձից բռնած, առաջից գնում էր մի գեղեցկատեսիլ պատանի, որ սուրբ մարդին և ծառայում էր, և ղուրանի, մարգարէների, իմամների իմաստութիւնները ու հադիսները սովորում նրանից... Ամբոխը, պատկառանքի և մեծարանքի ամենամեծ նշաններով, մօտենում էր էշի վրա հեծած մօլլային և համբուրում չորսի քղանցքները։ Դա՝ Թէհրանի Իմամ-Ջումէն էր, հաջի միրզա Ջաւադ աղան, որ հռչակուած էր իր օրենսգիտութեամբ և շարիաթի կանոնների խիստ պահպանութեամբ։ Նրա ետևից մի ծառայ էր գնում ղալյանը ձեռքին բռնած. ապա հետևում էին մի խումբ միրզաներ, թալաբաներ և ծառաներ։

Իմամ-Ջուման գնում էր Շահաբդուլ-ազիմ ուխտատեղին՝ աղօթելու։

Նա մօտ 50 տարեկան մի անձն էր, հիւծուած, մաշուած. հաւատացեալները և թալաբաները ասում էին, որ տքնութիւնից, գիշեր-ցերեկ աղօթելուց է նա հիւծուել և մաշուել։ Աչքերը խոր էին ընկել, գլուխը բոլորովին ածիլած էր, իսկ



մօրուքը, ալեխառն, հասնում էր մինչև գօտին, որի անհամար ծալքերի մէջ խրուած էր մի փոքր ձեռագիր ղուրան։ Համակ դէմքը արտայայտում էր մի տեսակ դժնդակ, խիստ, անգութ տրամադրութիւն. աչքերի մէջ երբեմն-երբեմն վառում էր մի մոլի կայծ, որը, սակայն, իսկոյն հանգչում էր, և աչքերը իրանց առաջուայ պաղութիւնն ու անշարժութիւնն էին ստանում։ Թէև էշի վրա նստած և նրա գլուխը ծածկուած էր սպիտակ ջուբբայով, բայց նա ամեն րոպէ արտասանում էր բարձրաձայն «ալէ-քում-սալամ», անցորդների «սալամ-ալէքում» ողջոյնին։

—Ի՛նչ ասեմ,—ասաց Սէլիմ չաթիրը Իբրահիմին, երբ գնացքը անցաւ,—թո՛ղ Ալլահը գոնէ մի օր, մի ժամ ինձ Շահ դարձնի և ես ցոյց կը կամ միրզա Ջաւադ-աղային, թէ նա ի՛նչ պտուղն է։ Ալլահ, Ալլահ, փա՛ռք Քեզ, փառք մարգարէին. ինչո՞ւ, Ալլահ, թոյլ ես տալիս որ այսպիսի անըզգամները մուսուլմաններին խաբեն և շարիաթը ոտնատակ տան։

—Խ ո ւ ր[1]), ասաց Իբրահիմը, ենթադրենք, որ Ալլահը—անբաւ է Նրա ողորմութիւնը—կատարեց խնդիրքդ և դու մի օր Շահ դարձար. էհ, ի՞նչ կ'անես։

—Ինչ կ'անե՞մ, աչքերը բարկութեամբ վառուած բացականչեց Սէլիմը. ինչ կ'անեմ. ես նրան կը

1) Լաւ։

տկլորացնեմ և նրա մարմնի վրա իմ այս գաւազանի միջոցով ցոյց կը տամ, թէ ինչպէս են «տկլորներին» ողորմութիւն տալիս։

—Դու չէի պնդում ես քո ասածների վրա։

—Թո՛ղ Ալլահը խռով կենայ գլխիս, թո՛ղ Աղրայիլը[1]) հոգիս առնի և ջհաննամի փայ[2]) դառնամ, եթէ ասածիս մէջ ստութիւն կայ. բայց ո՞վ է լսում խեղճ չալթիրին. յոյսս մնացել է միայն Հազրէթ Աբբասի[3]) վրա. նա է թշուառների և խեղճերի պաշտպանը։

—Դէ՛ մի լաւ պատմիր, նորից լսեմ. մինչև այժմ ուշադրութիւն չեմ դարձրել ասածներիդ վրա. գուցէ մի բան անել կարողանանք. արխային կաց, էնդէրունում[4]) ծանօթներ ունեմ։

Ես նստելով փողոցի դռներից մինի սաքուի վրա, Սէլիմը մի խոր ախ քաշեց ու սկսեց։

—Դու գիտես, որ հայրս, հաճի Թաղին, մի հարուստ վաճառական էր. նա աստուածաճանաչ մարդ էր. նամազ, զաքեաթ[5]) նա ճշտութեամբ կատարում էր. շարիաթի կանոնները գրեթէ անգիր գիտէր. տարին հինգ անգամ թազիա[6]) կը սարքէր, աղքատներին ու խեղճերին

---

[1]) Հոգէառ հրեշտակի անունը։ [2]) Դժոխքի բաժին։ [3]) Ամենայարգի իմամներից մինը։ [4]) Ներքնանոց, կանանոց [5]) Կրօնական տուրք։ [6]) Սուգի հանդէս, երբ կրօնական միստերիաներ են կատարվում և հանդիսականներին կերակրում, «հոգու հաց» տալիս։



կը կերակրէր. սէյիդների, մոլլաների տասանորդը իր ձեռքով կը բաժանէր։ Ալլահն էլ տեսնելով նրա մաքուր մուսլիմանութիւնը, կրկնապատկեց նրա հարստութիւնը, լցրեց նրա տունը ամեն տեսակ բարիքներով։ Հէնց որ ես, նրա մինուճար զաւակը, տասնեւթ տարեկան դարձայ, նա ինձ հարսանիք արեց և ինձ համար ուզեց մուշթայիդի, այդ անիծուած Իմամ-Ջումայի եղբօր աղջիկը Ֆաթիմային. խեղճ մայրս հակառակ էր, որովհետև Ֆաթիման շատ տգեղ և չար աղջիկ էր. ինչպէս ասում էր, նա կամենում էր ինձ համար կին ուզել գեղեցկուհի Լէյլային, մեր դրացի մաշադի Քէրիմի աղջկան. բայց ով կարող էր հակառակել հօրս կամքին. նա կամենում էր և մեծ պարծանք էր համարում բարեկամանալ Իմամ-Ջումայի տան հետ։ Մեր հարսանիքը կատարուեց. Ֆաթիման իմ կինը դարձաւ, բայց ես նրան սիրել չէի կարող. նա տգեղ էր, անշնորհք, չարասիրտ. ուրիշ կին էլ ուզել չէի կարող Իմամ-Ջումայի վախից. հայրս էլ թոյլ չէր տայ։ Ես պատրուակ բռնեցի, որ մեծ ցանկութիւն ունեմ գնալ Քեալբլա, ուխտ՝ հազրաթ Ալու գերեզմանին, խնդրեցի հօրս թոյլ տալ ինձ այդ ուխտը կատարել. Իմամ-Ջուման հաւանութիւն տուեց դիտաւորութեանս և ես ճանապարհ ընկայ։ Վերջապէս ես ազատ շունչ քաշեցի. մտածում էի Քեալբլայից Մէքքէ գնալ. երբ «Քալբլայի ու հաճի» տիտղոսներն ստացած կը

լինեմ արդէն, այն ժամանակ հեշտ կը լինի ինձ համար ազատուել տգեղ Ֆաթմայից կամ երկրորդ անգամ ամուսնանալ գեղեցիկ Լէյլայի հետ. չէ՞ որ մեր շարիաթը հալալ է համարում չորս օրինաւոր կին ունենալը։ Նա երկու տարի մնացի Քեալբլայում և Մէքքայում. վերադարձայ Թէհրան «Հաճի Սէլիմ» փառաւոր տիտղոսով, բայց, ախ, երանի թէ հէնց մարգարէի գերեզմանի վրա մեռած լինէի և չը վերադառնայի։ Իմ բացակայութեան ժամանակ հայրս մեռել էր և կտակ էր արել, որ եթէ ես Ալլահի կամքով մեռնեմ և չը վերադառնամ, իր բոլոր գոյքը բաժնուի «քաղցածներին և տկլորներին». կտակակատար էր կարգել Իմամ-Ջումային, իբրև շարիաթի ներկայացուցչին, այս սատանայ կեղծաւորին, որ այժմ մեր առաջից անցաւ։

Սէլիմը կանգ առաւ. դառն յիշողութիւնները կարծես ճնշում էին նրա միտքը և հոգին և նա ընկաւ խոր մտածողութեան մէջ։

—Դէ, շարունակիր, շարունակիր, ասաց Իբրահիմը կարեկցութեամբ. Ալլահ թ ա ա լ ա ն[1]) մեծ է և ողորմած։

—Այո, դ ո ւ ր բ ա ն[2]) լինեմ նրա զօրութեան. երևի ճակատագիրս այդպէս էր։ Որտեղ մնացի. հա, հայրս կտակակատար նշանակել էր Իմամ-Ջումային։ Հազիւ անցնում է 4—5 ամիս հօրս

1) Ամենազօր Աստուածը։ 2) Մատաղ։



մահից յետոյ, Իմամ-Ջուման, որ արդէն գրաւել էր հօրս բոլոր ունեցածը իբրև կտակակատար, յայտնում է մօրս, թէ իբր ես ևս վախճանուել եմ Մէքքայում. տանում է Ֆաթմային իր տունը և մի քանի հարիւր թուման փող տալով մօրս՝ յայտնում է, որ կտակի համաձայն, հօրս մնացած բոլոր կարողութիւնը, Ֆաթմայի քեաբինի փողը դուրս գալուց յետոյ, պէտք է բաժանէ «տկլորներին և քաղցածներին»։ Այդ նպատակով, նա, այդ անգութը, ականջ չը դնելով մօրս լաց ու կոծին, աղաչանքին, ծախում է հօրս տունը, գիւղը, գոյքը և փող չինում. հօրս կարողութիւնը 100,000 թումանից աւելի է լինում։

—Էհ, ինչ եղաւ. մի՞թէ այդքան փողն էլ բաժանեց տկլորներին և քաղցածներին։

—Ինչպէս չէ՞, պատասխանեց հեգնութեամբ Սէլիմը, բաժանել է, բաժանել «տկլորներին և քաղցածներին». ապա Իմամ-Ջուման «շ ա ր ի յ»[1]) է արել։

—Ի՞նչպէս, պատմիր շուտով։

—Այդ խաբեբան ամեն օր, առաւօտեան նամազը անելուց յետոյ, տկլորացնում է իր բազմաթիւ կանանց և մանկլաւիկներին և չար գցում իր մեծ սենեակում, ապա սկսում բաժանել այդ «տկլորներին» մի-մի ոսկի. երբ նրանք չորսը հագ-

1) Համաձայն շարիաթի. մահմեդական իրաւագէտների կարծիքով ամեն բան ներելի է, եթէ բառացի մտքով համաձայն է շարիաթին։

նում են, դարձեալ այդ ոսկիները բերում տալիս՞ են իրան։ Այդպէս շարունակւում է ամբողջ երեքջամիս. բացի դրանից ամեն օր, կէսօրին, գնում է հաւերի բակը, հրամայում է հաւանոցից բաց թողնել բոլոր հաւերին, որոնց սոված էին պահում մինչև այդ ժամանակ. երբ քաղցած հաւերը վրա են թափւում, նա կուտի հետ միասին թափում է և ոսկիներ, որ դարձեալ յետ է հաւաքում։ Այդպիսով, նա կատարում է հօրս կտակը, տալով նրա փողն «ակլորներին և քաղցածներին» ու «չարիյ» է անում։

—Վա՜յ խաբեբայ, վա՜յ սատանայ, ծիծաղեց Իբրահիմը, անիծածը ի՜նչ խելօքն է եղել։ Ե՛հ, դու որտեղից իմացար այդ բոլորը։

—Մօրս պատմել է Լէյլան, որ Իմամ-Ջումայի սիղա կինն [1] է դարձել։

—Լաւ, հապա երբ դու եկար, չը գնացի՞ր, չը պահանջեցի՞ր նրանից հօրդ հարստութիւնը։

—Ի՛նչպէս չը գնացի. սակայն նա ասաց թէ չատ ցաւում է, որ այդպէս է պատահել. միայն, երևի, այդպէս է եղել Ալլահի կամքը և իմ ճակատագիրը և ես իբրև բարի մուսուլման, պէտք է հնազանդեմ ճակատագրիս։ Նա առաջարկեց

[1] Բացի քեաբինի օրինաւոր չորս կնոջից, մուսուլմանները իրաւունք ունեն և սիղա, հարճ պահել. սիղային աւելի հեշտ է արձակել, քան քաբինաւոր կնոջ։



ինձ, իբրև պարգև իր կողմից, չորս հարիւր թուման, որն ես մերժեցի։

—Իսկ կինդ, Ֆաթման։

—Ֆաթմային Իմամ-Ջուման աւդէն քեաբին էր կապել իր որդու հետ, իմ քեաբինի փողն լաւ մարսելու համար.

—Դէ, գնայիր, դիւանին դանգատ տայիր, Շահին արզ [1] անէիր։

—Այդ բոլորն փորձեցի. մի փոքր գումար էլ, որ դեռ մնում էր մօտս, այն փողերից, որ Մէքքէ գնալիս հայրս տուէլ էր ինձ, ծախսեցի, բայց անօգուտ. ո՞վ Իմամ-Ջումային թողած, իմ կողմս պէտք է բռնէր. Շահին մի գեղեցիկ աղախին փիշքէշ արեց և ամեն բան վերջացաւ. քի՛չ էր մնում, բանտ նստեցնէին ինձ։ Ամբողջ 5 տարի դատ վարեցի. խեղճ մայրս ցաւին չը դիմանալով, մեռաւ։ Ախ, հա՛յր, հա՛յր, ինչ բերիր դու մեր գլխին քո միամտութեամբ։

Եւ Սէլիմի աչքերի վրայով գլորուեցին արտասուքի մի քանի կաթիլներ. դարձեալ խորասուզուեց իր մտքերի մէջ. գլուխը քաշ արած մտածում էր և Իբրահիմը, բայց չուտով ձեռքը դնելով ընկերի ուսի վրա, փիլիսոփայօրէն ասաց. «ճակատագիրը անկարելի է ջնջել. փառք փեղամբարին [2]. յոյսդ Ալլահից մի՛ կտրիր. ասած է՝ մի առուից, որ ջուր է գնացել, էլի ջուր

[1] Խնդիրք, աղերսագիր։ [2] Մարգարէ։

կը գնայ և չի ցամաքի։ Բայց այս ինչ ղալմաղալ է. Ալլահ, Ալլահ, ի՞նչ է պատահել։

Եւ երկուսն էլ գաւազանները վեր առնելով վազեցին դէպի խիաբանի ծայրը, որտեղ մեծ աղմուկ ու իրարանցում էր նկատւում։

## II

«Սալաւաթ, սալաւաթ, եա Ալի, մահ ջհուդներին»—ահա այն աղաղակները, որոնք լսվում էին ամբոխի ժխորի մէջ։ Խաւնիճանդանճ ամբոխի առաջից վազում էին տռնաբոբիկ երեխաներ և փոքր քարեր իրանց փեշերի մէջ ածած «ջհուդ, ջհուդ» ասելով ոստոստում էին. ապա գալիս էին սէյիդներ, Թալաբաներ, և մօլլաներ. մի քանի դէրվիշ ևս, մազերնին գզգզուած, չանագները[1]) ուսերնին ձգած, տապարները շարժելով, «եա հակ, եա հու» գոռումներով թնդացնում էին օդը։ Ամբոխը գնալով-գնալով ստուարանում էր։ Մօտակայ փողոցներից վազում էին, փողոցի վրայի դուները բացւում էին և ամեն մարդ հարցնում էր. «ի՞նչ խաբար է. ի՞նչ է պատահել»։ «Ջհուդ-քուշան» է, պատասխանեց մի սէյիդ և այս խօսքի վրա յանկարծ հարիւրաւոր բերաններից, գայլի ոռնոցի նման լսուեց մի ընդհանուր գոռոց՝ «ջհուդ-քուշան, ջհուդ-քուշան»։

1) Նամ քեաշկիւլ։



—Սալաւաթ, սալաւաթ, նորից թնդաց օդը։

Յանկարծ լռութիւն տիրեց. ամբոխը կանգ առաւ խիաբանի մէջ տեղ. մի սէյիդի կապոյտ փաթոթաւոր գլուխը երևաց մի դռան սաքուի վրա և ամենքի աչքերը դէպի նրան ուղղուեցին։

— Մուսուլմաններ, պոռաց սէյիդը, լսեցէք. տեսնում էք այս ջհուդ աղջկան. սա «միւրթադ»[1]) է, սա ընդունել է իսլամը, այժմ ուրանում է. ի՞նչ է սրա պատիժը։

—Մահ, ոռնաց ամբոխը, քարկոծ պէտք է անել։

—Բայց սպասեցէք, շարունակեց սէյիդը, շարիաթը կնոջ վերաբերմամբ մահուան պատիժ թոյլ չէ տալիս. նրան պէտք է յաւիտեան բանտարկել և ամեն օր, նամազի ժամանակ, գանահարել. սակայն գուցէ նա յետ դառնայ իր անօրէն դենից. գուցէ այս անիծեալ ջհուդներն են նրան խելքից հանել. տանենք սրանց աղայի մօտ և սպասենք թէ ինչ ֆիթվա կը տայ աղան[2])։

—Գնանք աղայի մօտ, գնանք, աղայի մօտ—պոռաց ամբոխը. մուռտառ ջհուդները համարձակւում են նախատել իսլամի կրօնը, մեր շարիաթը. մահ նրանց. ժամանակ է «ջհուդ-քուշան» սարքել։

1) Ով իսլամութիւն ընդունէ և ապա ուրանայ, նա միւրթադ է, արժանի մահուան։ 2) Ֆիթվա—վճիռ, իսկ աղա բառով սովորաբար հասկացւում է կրօնապետը։

Եւ նորից «սալաւաթ, սալաւաթ» կանչելով, սոսկալի ժխորի և աղմուկի մէջ, մոլեռանդ ամբոխը շարունակեց իր ճանապարհը, բայց, յանկարծ, կարծես մի խոչընդոտի հանդիպելով, կրնկի վրա յետ դարձաւ և մի րոպէում այնպիսի շփոթութիւն ու իրարանցում պատահեց, ու փախչող փախչողի եղաւ որ, ինչպէս ասում են, շունը տիրոջ չէր ճանաչում։

«Հարամզադաներ, փեդէր-սուխտաներ, այս ինչ աղմուկ է, որ բարձրացրել էք. հէնց այժմ Շահը կերևայ. ճանապարհ բացէք. խփէք դրանց վզակոթներին»,—լսուեց մի խրոխտ և թնդալից ձայն, որ ստիպեց շատերին փախուստ տալ. ճիպոտները, դաւազանները աջ ու ձախ թափվում էին սրա նրա գլխին. «վայ աչքս, վայ գլուխս, վայ ուսս» աղաղակները խառնվում էին երեխաների ու կանանց վայնասունի հետ։

Հրաման արձակողը, իրարանցումն առաջ բերողը Թէհրանի Բէգլար-բէգին[1]) էր, որ վրա էր հասել ֆէրրաշներով, և լսելով աղմուկ, զարհուրած՝ մնացել էր, տեսնելով որ ճանապարհը բռնուած էր ամբոխով։ Ամեն րոպէ կարող էր փչուել պալատից Շահի ելքը ծանուցանող շեփորը և վայը եկել տարել էր Բէգլար-բէգուն, եթէ Շահի հանդիսաւոր գնացքը որևէ խոչընդոտի հանդիպէր ճանապարհի վրա. Բէգլար-բէգին կար-

1) Ոստիկանապետ։



ծես արդէն զգում էր իր ոտների վրա ֆալախկայի հարուածները, որոնց, անպատճառ պէտք է ենթարկուէր, եթէ Շահը վրա հասնէր։ Այդ պատճառով Բեգլար-բէգին ձին քշելով, անդադար յորդորում էր ֆէրրաշներին և չաթիրներին ցրուել ամբոխը. ֆէրրաշները, նրա առաջից գնալով, աջ ու ձախ ճիպոտի հարուածներ հասցնելով սրա նրա գլխին, ճանապարհ բացեցին ամբոխի միջով, մինչև հասան աղմուկի կենտրոնը և Բէգլար-բէկու առաջ հետևեալ տեսարանը պատկերացաւ. Գետնի վրա չոքած էր և ձեռները դէպի երկինք բարձրացրած մի ծերունի. երկար, բուխարէ մորթուց գլխարկը ընկած էր նրա առաջ. գլուխը ածիլած էր, երեսն արևնաթաթախ, մօրուքը, որ հասնում էր մինչև գօտին՝ գզգզուած էր։ Գօտին բացուած և կուրծքի վրա, աջ կողմին, գորշ ղատաքից կարած արխալուղի վրա կարուած էր մի կլոր կարմիր կտոր, որից իսկոյն կարելի էր իմանալ, թէ նա հրէայ է, «ջհուդ» է. այդ ցոյց էր տալիս և դէմքի նուրբ գծագրութիւնը։ Ծերունին, ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում իր ուսերին, մէջքին, երեսին անդադար տեղացող հարուածներին և ապտակներին, այլ անմռունչ, աղերսախառն նայուածքով նայում էր հասարակութեան և հեծեծում, «աման, աման, ձեր մարգարէի խաթրին խնայեցէք, աղջկանս ձեռք մի՛ տաք»։ Եւ ձեռքով ցոյց էր տալիս գետնի վրա պպզած մի կնոջ, որ ամբողջովին փաթաթուած էր չարչաֆի մէջ և որի



ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА 1922

չորս կողմը կանգնած էին մի քանի սէյիդներ ու մօլլաներ, շրջանակ կազմելով. երեւում էր, որ կինը լացում էր, որովհետև ուսերը շարժւում էին, ինչպէս շարժւում են հեծկլտանքի ժամանակ: Ծերունու կողքին, երեսի վրա, գետնին ընկած էր մի երիտասարդ, որ ամեն անգամ, երբ գլուխը բարձրացնում էր և որևէ շարժում էր անում, իսկոյն հայհոյանք, թուք, հարուած տեղում էին նրա վրա. Նրա դէմքը արտայայտում էր խորին կսկիծ, երեւում էր, որ նա գրեթէ անզգայ էր դարձել և անտարբեր էր ամբոխի իր վրա թափած հարուածներին, հայհոյանքներին: Չը նայելով որ դէմքը թաթախուած էր փոշու մէջ և ուռած՝ ստացած հարուածներից, բայց գծագրութիւնը և հազիւ բուսած ընչացքը ցոյց էին տալիս, որ նա գրեթէ մի պատանի է, հազիւ 22—24 տարեկան. Նրա կրծքից ևս կպցրած էր սիմբոլական կարմիր նշանը և երբեմն լսւում էր նրա կրծքից խուլ հառաչանք:

—Ինչո՞ւ էք այս մարդկանց բռնել, ինչու էք ծեծում սրանց, ինչու է լացում այս կինը—սլոուաց Բէգլար-բէգին. փեղէր-սուխտաները, միթէ Շահը մեռել է, միթէ դիւան չը կայ: Ֆէրրաշներ, ցրուեցէք այս ամբոխը:

—Սպասիր, խան, առաջ եկաւ մի ծերունի սէյիդ. այս բոլորը կատարւում է աղա Իմամ-Ջումայի հրամանով: Այս կինը—և մատով ցոյց տուեց գետնի վրա պլլած կնոջ—ահա այս սէյիդի



կինն է, քեաբինի կինը, բայց այս մուրտառ ջհուդները փախցրել են նրան և գլխից հանել ու ջհուդ դարձրել. նրանց պատիժը մահ է:

—Ճշմարիտ է ասածը, ջհուդ,—դարձաւ Բէգլար-բէգին ծերունի հրէային. վեր կաց, պատմիր տեսնեմ, ինչ ես ասում:

Ծերունին կռացաւ, վերցրեց գլխարկը և գըլխին դնելով, ոտքի կանգնեց ու խոր գլուխ տալով, ասաց.

—Խան, քո գլուխդ վկայ, Շահի ազիզ[1]) գլուխը վկայ, այդպէս չէ. այս աղջիկը, Նաթերը, իմ մինուջար զաւակս է, այս ղ ո ւ լ ի դ[2])—և ծերունին ցոյց տուեց մատով գետնի վրա դեռ ընկած պատանուն—նշանածն է. շուտով հարսանիքը պէտք է լինէր, բայց մեր թաղի հարևան այս սէյիդը հինգ օր սրանից առաջ ուժով իրանց տունն է քաշում աղջկան, երբ նա աղախնի հետ փողոցով անցնում էր, և պահում. երէկ երեկոյեան, դուռն բաց գտնելով, աղջիկս կարողանում է փախչել և վերադառնալ տուն, և երբ մենք պատրաստւում էինք գալ ձեզ գանգատի, յանկարծ թափուեցին մեր վրա Իմամ-Ջումայի մարդիկը և մեզ թակելով, հայհոյելով դուրս քաշեցին, ասելով, որ իբր մենք մուսուլման կին ենք փախցրել. ծեծելով, հայհոյելով, թքելով բերին մինչև այս-

---

1) Պատուական: 2) Ղուլ—ստրուկ. փոքրերը մեծերի հետ խօսելիս, այսպէս են անուանում իրանց.

տեղ. միթէ մենք Աստծու ստեղծած չենք, միթէ մենք Շահի հպատակ չենք:

—Սուտ է խօսում այդ անօրէն ջհուդը, գոռաց հրէայ աղջկայ գլխին կանգնած մի երիտասարդ սէիդ. սա իմ քեաբինաւոր կինս է, սա մուսուլման է. ահա թող մոլլա Քեազիմը վկայէ:

—«Աշադան-Ալլահ»[1]), առաջ գալով վըրկայեց մոլլան, աչքերը խոր ընկած, գաւազանի վրա յենուած, թասբէհը[2]) ձեռքին բռնած մի ծերունի. ես եմ սրանց քեաբինը կարել, ես եմ «քեալմէի շահադաթը»[3]) լսել այս ջհուդ աղջկայ բերանից. զարմանում եմ, որ այդ դինսըզ ջհուդը փոխանակ ուրախանալու, տխրում է. փառք տուր, ջհուդ, Ալլահին, որ աղջիկդ ջհաննամի փայ դառնալու, բհեշդի[4]) փայ պէտք է դառնայ:

—Խա՛ն, երդւում եմ մեզ Ստեղծողով, որ մի է, մոլլան սուտ է խօսում. աղջկանս վախեցրել են, թէ կը սպանեն, եթէ չը կրկնի, ինչ որ իրանք ասում են և քեաբինն էլ իրանք են կտրել զոռով. քեզ երդուեցնում եմ Շահի ջըղղալով[5]), վերահասութիւն գործիր և այն ժամանակ կը տեսնես, որ ասածներիս մէջ մի դարրայ[6]) սուտ չը կայ. հազրաթ Մուսան[7]) գլխիս խռով կենայ, ինձ տուր թիքա-թիքա[8])

1) «Վկայ է Աստուած». 2) Տէրողորմեայ. 3) Հանգանակ հաւատոյ. 4) Արքայութիւն. 5) Թագ. 6) Նշանախեց. 7) Մովսէս մարգարէն. 8) Կտոր-կտոր.



անեն, եթէ սուտ դուրս գամ: Եսթեր, զաւակս, պատմիր խանին եղելութիւնը:

Բէգլար-բէգին շուարած մնացել էր. յանձնել աղջկան հօրը, անկարելի բան էր. այդ կը նշանակէր գրգռել Իմամ-ջումայի բարկութիւնը և մեծ վտանգի ենթարկել հրէական թաղը, մանաւանդ որ սովորական ջհուդ-քուշանի օրը մօտենում էր. թոյլ տալ, որ սէյիդները տանեն աղջկան, այդ ևս անկարելի էր, որովհետև հրէաները կարող էին դիմել Շահին. վերջապէս, անգլիական դեսպանը կարող էր միջամտել և խնդիրը կարող էր շատ բարդուել:

Այդ միջոցին յանկարծ լսուեց չափորի ձայնը. «Շահը գալիս է, Շահը գալիս է», լսուեց ամեն կողմից: Բէգլար-բէգին զարհուրեց. ճողէապէս նա վճռեց իր անելիքը: «Շո՛ւտ, շուտ—հրամայեց նա,—ջհուդներին և աղջկան տարէք աղայի տունը և այդտեղ սպասեցէք ինձ. հէնց որ դըբլէյի-ալէմը[1]) կ'անցնի, ես կը գամ և աղայի ներկայութեամբ վերահասութիւն կը անենք գործին. դուք էլ, աղա սէյիդներ, գնացէք աղայի մօտ»:

Դառնալով ապա իր կողքին կանգնած Սէլիմ չաթիրին, նա մի քանի խօսք փսփսաց նրա ականջին, և ապա, բարձրաձայն ասաց.

—Հաջի՛ Սէլիմ, տար ջհուդներին աղայի տունը և հսկիր, որ նրանց ոչ ոք չը նեղացնի. այժմ հեռացէք ամենքդ, կորէք. քշեցէք ամենքին:

1) Աշխարհի ազօթարան.

Ֆէրրաշների, չաթիրների ճիպոտները նորից բարձրացան օդի մէջ և սկսեցին տեղալ ամբոխի գլխին: Այն միջոցին, երբ Սէլիմ չաթիրը հրամայեց գետնի վրա ընկած երիտասարդ հրէային վեր կենալ և հետևել իրան միւս հրէաների հետ, երբ ծերունի հրէան բռնեց Եսթերի ձեռքից, երիտասարդ սէյիդը մօտեցաւ երիտասարդ հրէային և ասաց.

—Եթէ իմ կնոջ մօտենաս, երեսին նայես, տեղն ու տեղը կը սատկեցնեմ քեզ, մուրտառ ջհուդ:

Հրէան ոչ մի պատասխան չը տուեց. կարծես նա չը հասկացաւ, նոյն իսկ չը լսեց սէյիդի ասածը, այլ մեքենայաբար հետևեց չաթիրին:

Շեփորը նորից փչուեց, այս անգամ աւելի զօրեղ և աւելի թնդալից. դա նշան էր, որ արեգակնափայլ Շահը պալատի դարպասից դուրս գալով, իր մ ո ւ բ ա ր է ք[1]) ոտքը դրել է ձիի ասպանդակի մէջ: Նորից ճիպոտները, գաւազանների հարուածները տեղացին աջ ու ձախ ամբոխի վրա. չաթիրները շարուեցին իրանց տեղերը և մի բոպէում գերեզմանային լռութիւն տիրեց. ամբոխը, խիաբանի երկու կողմին, պատերի տակ շարուած, շունչը փորը գցած, սպասում էր. շատերը շտապ-շտապ հագնում էին իրանց ջուբբաների և ա բ ա ն ե ր ի թևքերը[2]):

1) Օրհնեալ, շնորհաւոր: 2) Սովորութիւնը պահանջում է, որ երբ փոքրը ներկայանայ մեծին, ի նշան խորին յարգանքի, վերարկուի թևքերը պէտք է հագած լինի և ոչ վերարկուի մէջ փաթաթուած:



Բէգլար-բէգին մի վերջին հայեացք գցեց ամբոխի վրա. նրա սիրտը թրթռում էր վախից. «ողորմած Աստուած, տուր անփորձ անցնել այս բոպէն», մրմնջում էր նա: Նա լաւ գիտէր, որ բողոքաւորները, հարստահարեալները միջոց չունենալով իրանց ա ր զ ը[1]) հասցնել Շահին, այդպիսի օրերն են ընտրում Շահի առաջը կտրելու և իրանց գանգատը անելու. վայն եկել տարել է Բէգլար-բէգուն, եթէ Շահը վատ տրամադրութեան մէջ լինի. եթէ ոտքերը փալախկայի չարժանանան, յամենայն դէպս գլխանը սաստիկ կը տուժէ. մի քանի հարիւր, դուցէ և հազար է չ ր է ֆ ի ն ե ր[2]) պէտք է մատաղ անել Շահի գլխին և սադրազամին: Սակայն նա կասկածելի ոչ ոքի չը նկատեց ամբոխի մէջ. բացի դրանից նա ամեն միջոց ձեռք էր առել, իր ֆէրրաշները պատուէր էին ստացել հսկել, որ ոչ ոքի չը թողեն մօտենալ: Այնու ամենայնիւ Բէգլար-բէգին հանգիստ չէր և հոգին խռոված էր. գիշերը վատ երազներ էր տեսել և ժամանակ չէր ունեցել գնալ երազահան միրզա Գաբարիին հարցնելու: «Է՛հ, մտածեց նա, ինչ որ զ ը ս մ է թ[3]) է, այն կը լինի»:

Երրորդ անգամ հնչեց շեփորը և Դարը-Ալմասիէի (ալմաստի դուռ) անկիւնից երևաց հանդիսաւոր գնացքի ծայրը:

1) Խնդիրք: 2) Ոսկի: 3) Ճակատագիր:

## III

Ամենից առաջ գալիս էին զամբուրակչիները[1]) ուղտերի վրա նստած և զամբուրակները առաջին դրած. ապա զուռնա-նաղարէն[2])։ Նրանց հետևում էին հարիւրաւոր ֆէրրաշնէր, ճիպոտները ձեռքին և գոռալով. «դո՛ւր բաշ, բրօ, բրին»[3]). ապա գալիս էին շաթիրները կարմիր մահուդի հագուստով, խայտաճամուկ փետրաւոր գլխարկներով, արծաթեայ թօփուզներով և դեղին լապչիններ հագած։ Շաթիրներից յետոյ միրախոռները[4]) «եադակով»[5]) տանում էին Շահի նշանաւոր արաբ և թիւրքմէն նժոյգներից մի քանիսը, զարդարուած թանկագին մետաքսեայ գինփուշով[6]), ընդելուզուած մարգարտով, ոսկէ րախտով[7]). մի քանիսի ճակատին բախտի մէջ փայլում էր ադամանդ կամ մի այլ գոհար—զմրուխտ, յակինթ։ Նժոյգների ագիները ներկուած էին ծիրանի գոյն՝ արքայական նշան։ Եդակներից յետոյ մի ամբողջ տարածութիւն բաց էր մնացած։ Եւ նորից սկսվում էր գնացքը միրղաղաբներով (դահիճներով), որոնց կարմիր

[1]) Զամբուրակ, փոքր թնդանօթներ, տանելի ուղտերի վրա. զամբուրակչի—թնդանօթաձիգ։ [2]) Զուռնի, թմբուկի ամբողջ սարքը։ [3]) Հեռու կանգնիր։ [4]) Ախոռապետ։ [5]) Հետևակ։ [6]) Ծածկոց թամբի։ [7]) Սարք—սանձ։



հագուստը, ձեռքին բռնած տապարները և մետաքսէ պարանները իսկոյն որոշում էին նրանց պաշտօնը—տապարի հարուածով կամ պարանի կապով տեղնուտեղը պատժել այն յանդուգն անձին, որ կը համարձակէր իր վրա գրգռել զըլլէ-ալէմի (աշխարհի ապօթարանի) բարկութիւնը։ Դահիճներից յետոյ ընթանում էին խասփիշխըդմէթներ՞ը[1]), թիրմա շալի հագուստներով։ Ապա ծանրաքայլ գալիս էր «վէզիրը թէշրիֆաթը»[2])—Զահիր-Դօվլէն, պարսիկ հին մուստօֆիների պալատական հագստով—երկար թիրմա նուրբ շալի վերարկուով, եզրերը ընդելուզուած մարգարիտներով և մարգարտեայ ծոպերով, գլխին դրած նոյնպէս շալի փաթոյթ, գօտիի մէջ խրած՝ ղալամդան[3]) և ձեռքին բռնած ոսկէ թօփուզ։ Նրան հետևում էր արդէն, Շահի ձիի առաջից, մեծ վիզիր ծերունի հաջի Միրզա-Աղասին, թիրմա ջուբբան հագած, եռանկիւնեայ բուխարէ մորթի երկար գլխարկը ծածկած և սպիտակ ներքնավարտիքով և կանաչ սրածայր չմըշկներով ու մի եբենեայ գաւազան ձեռքին բռնած։ Վերջապէս, մի հիանալի չքեղ սպիտակ նժոյգի վրա նստած երևաց Մահմէդ-Շահը, աշխարհի ապօթարանը. ժողովուրդը մինչև գետին գլուխ էր ծռում ամեն անգամ, երբ Շահը նայում

[1]) Պալատական կամերգէրներ։ [2]) Մեծ արարողապետ։ [3]) Գրչաման։

էր այս և այն կողմը. ձին ամբողջովին կոլած էր ականերով ընդելուզուած ոսկէ բախտի մէջ, իսկ ճակատին փայլում էր մի խոշոր ադամանդ. ասպանդակները համակ ոսկուց էին։ Ինքը Շահը հագնուած էր այնպէս, ինչպէս հագնում էին իր պապ Ֆաթալի-Շահը և իր հայր անուանի Աբբաս-միրզան։ Գլխին դրած էր մորթէ եռանկիւնի, բայց կարճ քուլահ[1]), որի մէջ տեղ, ճակատին պնդացրած էր փոքրիկ ջղգան[2]), շահութեան նշանը. դա մի շարք խոշոր ադամանդներից շինած առիւծի և արեգակի — Շիր ու Խուրշուդի պատկերն է։ Թանկագին սամոյր քիւրքի[3]) տակից երեւում է թիրմա շալի բաճկոնակ, որի վրա կապած էր լայն թիրմա գօտի, որից կախ էին ընկնում սխտորի պէս խոշոր մեծութեան մարգարիտների երկու ծոպեր. այդ գօտու մէջ խրուած էր արքայական թուրը, պատեանը ամբողջովին ադամանդից, յակնթից, զմրուխտից շինած։ Թեւքին կապած ունէր ոսկէ բազպաններ, նոյնպէս խոշոր գոհարներով բանուած, ոտքին հագած ունէր զինուորական կամ սէֆերի (ճանապարհորդային) երկար կօշիկներ. Դէմքը հիւանդոտ էր. մօրուքը, հակառակ իր պապի և հօր սովորութեան, երկար չէր թողած. մազերը խինայած էին, ինչպէս և եղունգները։

---

1) Գլխարկ, փափախ։ 2) Արքայական նշան։ 3) Մուշտակ։



Ամբոխի երկրպագութիւններին նա ոչ մի նշանով չէր պատասխանում. երբեմն-երբեմն նրա դէմքի վրա երեւում էր քմծիծաղ։ Ձիի երկու կողմից գնում էին դարձեալ խաս փիշխըդմէթները, մի քանի մուստօֆիներ[1]), ապա գալիս էին ղէյլանչիները, շէրբէթչիները, ձիի վրա նստած և իրանց պաշտօնին վերաբերեալ ամբողջ սարքով—սարք ու կարգով. Նրանցից յետոյ գալիս էին թիկնապահ ձիաւորները կամ ղարափափախները, ոտքից գլուխ զինուած։ Ապա գալիս էր մի ամբողջ կարաւան ջորիների, եախտաններով[2]), մաֆրաշներով, թամբալիաներով[3]) բեռնաւորուած։

Երբ Շահը մօտեցաւ Ալմասիէ խիաբանի մեծ կամարաւոր դուան՝ Թօփխանի մէյդանը մտնելու համար, նա դիմեց ծերունի մեծ վեզիրին և ասաց. «Աթմ, մուրախխաս ես[4]). այժմ գնա ձի նստիր»։

Սովորութեան համաձայն, մեծ վեզիրը և մեծ արարողապետը պէտք է ուղեկցեն Շահին ոտքով մինչև քաղաքի դուռը, բայց Մահմէդ Շահը, որ իր մեծ վեզիրին աթա, հայր անունն էր տալիս միշտ, չէր կամենում ենթարկել ծերունուն յոգ-

---

1) Պետական քարտուղար։ 2) Սնդուկ. 3) Բեռնի հակերը. 4) Երբ մեծերը կամենում են արձակել իրանց ներկայութիւնից փոքրերին, ասում են „մուրախխաս“ (ազատ ես)։

նածութեան, ուստի և ի նշան չահնշահական առանձին բարեհաճութեան, թոյլ չը տուեց նրան շարունակել: Հաջի-միրզա-Աղասին խոր գլուխ տալով, համբուրեց Շահի փէշերը և յետ դարձաւ նստելու իր ձին, որ իր միրախորը [1]) ետևից բերում էր, բայց հազիւ ոտքը դրել էր ասպանդակի մէջ, որ յանկարծ տեղի ունեցաւ մի սարսափելի դէպք. տիրեց մի ընդհանուր իրարանցումն, որի մէջ լսվում էր միմիայն «Ալլահ, Ալլահ» ձայները, իսկ յետոյ լսուեց Շահի խրոխտ և բարկացոտ աղաղակը. «հաջի-Միրզա-Աղասի». ծերունին հևալով, «ղուրբա́ն, ղուրբան [2]), այստեղ եմ» ասելով, վազեց առաջ:

Ճիշտ այն րոպէին, երբ Շահի ձին անցնում էր մեծ դռան կամարի տակով, յանկարծ ամբոխի միջից մի անծանօթ մարդ ցայտեց դռան սաքուի վրա և ձեռքին բռնած մի թուղթ բարձրացնելով գլխի վրա, պոռաց. «Ղուրբա́ն, արզ ունեմ. առայս իմ կեանքն էլ, թո́ղ իմ արիւնը քո վզին մնայ, եթէ ա դ ա լ ա́ թ [3]) չանես իմ որբերին. դա́դ, դադ անիրաւ Բէգլար-բէգու ձեռքից: Եւ արտասանելով դա́դ դա́դ խօսքերը, նա հանեց գօտու մէջ խրած մի փոքր դաշոյն և կոխելով փորի մէջ, ընկաւ գետին, ձեռքերը պարզած, երեսի վրա:

---

[1]) Ախոռապետ: [2]) Մինիստրները, պալատականները Շահին դիմելիս ասում են „ղուրբան", մատա́ղ: [3]) Արդարադատութիւն:



Շահը լաւ տեսաւ, թէ ինչպէս մարդի փորոտիքը, աղիքը թափուեցին, և ձեռքով աչքերը ծածկեց. ձին խրտնեց և քիչ էր մնում վայր գլորի Շահին, եթէ միրախուռները վազելով, չը բռնէին սանձից: Շահը հասկացաւ. կատարուեց մէկը այն տեսարաններից, որ անխուսափելի են բռնապետական երկրներում. այդտեղ, բողոքաւորը, հարստահարուածը, երբ բոլոր ատեաններին դիմելուց, բոլոր դռները բաղխելուց յետոյ չէ կարողանում արդարադատութիւն գտնել, յոյսը կտրում է այլ ևս մարդկային արդարութիւնից, նա դիմում է վերջին, յուսահատական միջոցին, բողոքի ծայրայեղ արտայայտութեան. նա անձնասպանութիւն է գործում Շահի կամ կուսակալի աչքի առաջ, իր արեան պատասխանատուութիւնը նրանց վզին է գցում, որպէս զի արթնացնի նրանց խղճմտանքը, ստիպէ նրանց արդարութիւն անել և պատժել հարստահարողին: Նա դրանով բողոքում է Ալլահին՝ Շահի ձեռից:

Անձնասպանը, թէև երեսի վրա ընկած, բայց թուղթը դեռ ձեռքին բարձր բռնել էր:

«Տո́ւտ, շուտ, տեսէք մեռել է, թէ կենդանի է, հրամայեց Շահը, առէք ձեռքից թուղթը և տուէք հաջի-Միրզա-Աղասուն»:

Փիշխըտմէթները վազեցին. թշուառը դեռ շնչում էր. փորոտիքը ամբողջովին դուրս էին թափուել. նա շշնջում էր շարունակ. «իմ տունս քանդողին

տունը Ալլահն քանդի, Եզիդի, Շիմրի[1]) ընկեր դառնայ»։

«Բէգլար-բէգին, ուր է փեդէր-սուխտա Բէգլար-բէգին, պոռաց յանկարծ Շահը, երբ մի ակնարկ ձգեց անձնապահի ձեռքից առած և իրան մատուցած թղթի վրա ու յանձնեց մեծ վէզիրին. տարէք այդ խեղճին մի տեղ, կանչեցէք ջարրահ-բաշուն[2]) և թող բժշկի նրան»։

Ապա դառնալով մեծ վէզիրին, հրամայեց.

—Վերահսկողութիւն տուր գործին և յայտնիր ինձ. այժմ ի՞նչ ես տեսում, շարունակե՞նք ճանապարհը թէ ոչ։

—Ո՛չ, ղուրբան. անկարելի է, լաւ նշան չէ այս բոլորը, պէտք է վերադառնալ պալատ, պատասխանեց մեծ վէզիրը։

Շահի դէմքը մթագնեց. աչքերի մէջ փայլեց մի րոպէ բարկութեան հուր, բայց, առանց առարկելու, դարձրեց ձիի սանձը, մեծ վէզիրը առաջը ընկաւ, և կանչելով ֆէրրաշ-բաշուն, ասաց.

—Շղթայեցէք Բէգլար-բէգուն, տարէք պալատի բանտը, պահեցէք մինչև ինձանից նոր հրաման ստանալը։

[1]) Ամենամեծ անէծքը, որ մի շիա մահմեդական արող է տալ շիային. Եզիդը և Շիմրը Իմամ Հուսէյն և Հասանի հալածողներն ու սպանողն են եղել։
[2]) Վիրաբուժների գլխաւորը։



խեղճ Բէգլար-բէգին, որ այդ րոպէին մկան ծակը հարիւր հազար թումանով կ'առնէր, կուչ եկած, անմռունչ սպասում էր իր ճակատագրին, ուստի երբ ֆէրրաշ-բաշին մօտեցաւ շղթաներով, նա միայն արտասանեց։

—Ա՜խ, երազս կատարուեց։

Նորից շեփորները փչեցին և ներքինիները, իմանալով Շահի անակնկալ վերադարձը, լեղապատառ վազեցին հարեմխանան՝ հսկելու կարգապահութեան վրա։

Շահը շտապով վերադարձաւ պալատ և հազիւ իջաւ ձիուց ու մտաւ ներքին պարտէզը, որ հրամայեց. «Գտէք որտեղ որ է այդ փեդէր-սուխտա մունէջջիմ բաշուն ու քաշ տալով բերէք այստեղ, մի տեսնեմ թէ այս ինչ խէր օր էր, որ նա գուշակեց մեզ»։

Էշիկ-Աղասի բաշին[1]) վազեց կատարելու Շահի հրամանը, բայց մունէջջիմ-բաշին, որ փորձով գիտէր, թէ որքան վտանգաւոր է Շահին ներկայանալ նրա բարկութեան առաջին րոպէներում, արդէն իր գլխի ճարը տեսել էր. կամենալով ազատել ոտքերը ֆալախկայից, նա փախել բէստ[2]) էր մտել Շահի ախոռատունը, մինչև որ անցնի Շահի բարկութիւնը և փորձանքը հեռանայ իրանից։

Այն րոպէին, երբ գօտին քակած ու ոտաբոբիկ մունէջջիմ-բաշին փախչում էր դէպի ախոռատունը

[1]) Պալատական գվարդիայի պետը։ [2]) Ապաստան։

և կարողացաւ ձգել իրան այնտեղ, նա զարմացքով նկատեց, որ երկու հրէայ, մէկը ծեր, միւսը երիտասարդ և մի հրէայ աղջիկ, նոյնպէս լեղապատառ, վազում էին դէպի ախոռատունը և նրանց վազում էին մի չաթիր ու մի սէյիդ. վերջինս գոռում էր. «բռնեցէք, բռնեցէք, մուռտառ ջհուդներին»։

Բայց հրէաները, հևալով, քրտնած, արդէն կարողացան մտնել ախոռատունը, մանաւանդ որ չաթիր Սէլիմը շատ էլ եռանդ գործ չէր դնում հասնելու նրանց։

Հրէաները նոյնպէս բէստ էին մտնում Շահի ախոռատունը, ինչպէս և մունէջջիմ-բաշին. այստեղ այլ ևս ոչ ոք, նոյն իսկ ինքը Շահը, չէր կարող հալածել նրանց և նրանք ապահով էին։

Սէյիդը ատխպունեց քոռ ու փոշիման յետ գնալ, իսկ Սէլիմ չաթիրը, ծիծաղելով նրա ետևից, ասաց.

—Սէլիմը դեռ շատ օյիններ կը բերի աղա Իմամ-Ջումայի գլխին։

Նա ուրախ էր, որ կարողանում էր վրէժը առնել, միևնոյն ժամանակ մի քանի տասնեակ թուման, ի հարկէ, կը ստանար ջհուդներից, որոնց նա հնարաւորութիւն տուեց փախչել և բէստ մտնել Շահի ախոռատունը։ Նա կարողացել էր ճանապարհին փսփսալ ծեր հրէայի ականջին, թէ ինչ պէտք է անել. այդ միտքը յղացել էր հնարագէտ Բէգլար-բէգին։ Սէլիմը դեռ չը գիտէր



վերջինիս գլխին հասած փորձանքը, ուստի և ասաց. «Այժմ գնամ արզ անեմ Բէգլար-բէգուն, որ իր հրամանը ճշտութեամբ կատարեցի։ Ո՜հ, որքան կը կատաղի Իմամ-Ջուման, որ որսը ձեռքից ապատուեց»։

Երբ գլխաւոր միրախոռը եկաւ և արզ արեց Շահին, թէ մունէջջիմ-բաշին բէստ է մտել, նա յայտնեց միևնոյն ժամանակ, որ ջհուդներն ևս բէստ են մտել ախոռատուն։

Շահը քա՜հ քա՜հ ծիծաղեց և, դառնալով մեծ վիզիրին ասաց.

—Տե՜ղն է, թող այժմ ջհուդների հետ քնի վեր կենայ. ես իմ աստուածս, լաւ պատժուել է միւնէջջիմ-բաշին. այդ նա չէր գուշակել, թէ չէ, բէստ չէր մտնի. այժմ նրա նամազը բաթըլ[1]) կը լինի։

Եւ աշխարհի ապօթարանը անցաւ խալվաթխանէն[2]), ուր պատրաստուած էր նհարը[3])։

## IV

Նազիրը[4]) բարձրացրեց դռան վարագոյրը և տիեզերքի բեեուը[5]) մտաւ թալարը[6]), ուր

---

1) Մուսուլմանի համար նամազը բաթըլ է, անընդունելի է Ալլահին, եթէ մուռտառ բանի պատահի նամազ անելիս։ 2) Առանձնարան։ 3) Նախաճաշը։ 4) Տընտեսապետ. նազիր և վեզիր—արեւելեան պետութիւնների մէջ գլխաւոր պաշտօնեաները։ 5) Շահի մի այլ տիտղոսը։ 6) Դահլիճ։

պատրաստուած էր նախաճաշը։ Քիրմանի գործերով ծածկուած գետնի վրա պատրաստուած էր դաստըխանը[1]). Թալարի մէջտեղ մի ծայրից մինչև միւս ծայրը, գցուած էր մի երկար ընտիր ղալամքարի սփռոց. նրա վրա՝ ոսկեթել ասեղնագործած կաշեայ սփռոց, որ ամբողջովին ծածկուած էր արծաթեայ կլորակ մէջմահիներով[2]). ամեն մի մէջմահու մէջ դարսուած էին մի քանի տեսակ կերակուրներ, իրանց մազաներով[3]), համեմներով, խուրուչներով, թթուեղէնով, քաղցրեղէնով, պտղեղէնով, կանաչեղէնով, մածնեղէնով։ Բոլոր կերակուրները լցուած էին կլոր չինական կամ հին պարսկական յախճապակեայ ափսէների մէջ, ծածկուած սրածայր սաղաւարտանման սարփուչներով[4]) և ապա կնքուած[5]) նազիրի կնիքով։ Երբ նազիրը կնիքները քանդեց և փիշխըդմէթները վեր առան սարփուչները, բազմատեսակ փիլաւներից, չիլաւներից, խուրուչներից[6]), աբդուչաներից[7]), քեաբաբներից[8]) բարձրացրած բուր-

---

[1]) Սեղան, ճաշ։ [2]) Մատուցարան, սինի։ [3]) Ախորժակ գրգռող ուտելիք. [4]) Ծածկոց։ [5]) Պարսկաստանում հնուց սովորութիւն է որ բոլոր կերակուրները Շահի սեղանի համար կնքվում են խոհանոցում նազիրի կնիքով. այդ կնիքը բացվում է Շահի աչքի առաջ և առաջ ինքը նազիրն է ճաշակում կերակուրից, ապա Շահը։ Այդ զգուշութիւնը գործ է դրվում որպեսզի Շահին չը թունաւորեն։ [6]) Համադամ։ [7]) Արգանակ։ [8]) Խորոված։



մունքները և չոգիները հաճոյ կերպով գրգռեցին Շահի և Թալարում, երկար փէնջէրէի[1]) առաջ շարուած չահզադէների քիմքը. այդտեղ էր և պատանի գահաժառանգ Նասրէդդին-միրզան, Շահի եղբայր Բէհմէն-միրզան՝ Ատրպատականի փոխարքան, միւս եղբայր Ղահրաման-միրզան. այստեղ էր և Մէլիք-Գասըմ-միրզան՝ Ֆաթալի-Շահի եօթանասուն որդիներից մինը, Մահմէդ Շահի հօրեղբայրը։

Շահզադէները խոր գլուխ տուին Շահին, որ նկատելով իր կրտսեր եղբայր Բէհմէն-միրզային, կիտեց յօնքերը և գլխի թեթև շարժումով պատասխանելով չահզադէների երկրպագութեան, չոքեց սեղանի գլխին, մէջքը թիկն տալով մութաքաներին։ Մեծ վէզիր հաջի Միրզա-Աղասին կանգնեց չահզադէների հանդէպ. նրանից մի քիչ ներքև կանգնեց հէքիմ-բաշի[2]) Լօղման-ուլ-Մէմալիքը[3]), իսկ Շահի մօտ չոքեց նազիրը, որպէս զի առաջ ինքը ճաշակէ այն կերակուրը, որ հէքիմ-բաշին թոյլ կը տայ ուտել և ապա մատուցանի Շահին, և որպէս զի Շահը ապահով լինի, որ կերակուրները թունաւորուած չեն։

---

[1]) Լուսամուտ. սենեակի ամբողջ մի պատը՝ ծառայում է իբրև լուսամուտ, յարմարեցրած լինելով այդ պահանջին. պատը շարժական է լինում, փայտից շինած։ [2]) Պալատական բժշկապետ։ [3]) Տէրութեան լօղմանը. վերջին բառով պարսիկները անուանում են Հիպօկրատին։

Հարիւրաւոր տեսակ կերակուրներից բացի մէջ առ մէջ շարուած էին սփռոցի վրայ բազմատեսակ պտուղներ, հազուագիւտ տարուայ եղանակի համար, անուշեղէն և թանկագին սրուակների ու շաքասաների[1]) մէջ գոյնզգոյն օշարակներ, շէրբէթներ, արդուղ[2])։ Այդ սեղանը, անշուշտ, կարող էր կերակրել հարիւր հիւրեր իր առատ և ճոխ համադամ ուտելիքներով։ Դանակ և պատառաքաղ ու անձեռոց չը կար, միայն սփռոցի չորս կողմը շարուած էին սպիտակ, թղթի բարակութեամբ լաւաշ հացեր։

Խասփիշխըդմէթը[3]) ներկայացրեց Շահին ոսկէ ալթափա-լեագեան[4])։ Շահը լուաց ձեռները և նայելով իր հօրեղբօրը՝ ասաց. «Մելիք-Գասըմ-միրզա, նստիր, հաց կեր»․ ապա դառնալով մեծ վէզիրին՝ «Սատրազամ, դու ևս նստիր, ծեր մարդ ես»։ Դրանով Շահը կամենում էր հասկացնել, որ եթէ, հակառակ պալատական էտիկէտի, նա արժանացնում է մեծ վեզիրին Շահի հետ սեղան նստելու մեծ պատուին, այդ՝ լոկ ի յարգանս նրա ծերութեան. իսկ գահաժառանգը իբրև որդի և եղբայրները, իբրև կրտսերներ, ընդունուած աւանդութեան համաձայն, պէտք է կանգնած մնան և չը մասնակցեն սեղանին։ Եթէ Մէլիք-Գասիմ-միրզան արժանանում էր սեղանա-

1) Խոր ափսէներ։ 2) Թան։ 3) Շահի ծառայող պաժերը կամ մանկլաւիկները կոչվում են այդպէս։ 4) Կոնք ու ջրաման։



կից լինելու մեծ պատուին, դրա պատճառն այն էր, որ նա, իբրև Շահի հօրեղբայր, հօր պատիւ ունէր, իսկ հօր պատիւը պարտադիր է շարիաթի պատուիրանով, որի պահպանութիւնը Մահմէդ Շահը իր համար նուիրական պարտք էր համարում, ինչպէս մանկութիւնից սովորեցրել էր իրան իր ուսուցիչ հաջի Միրզա-Աղասին։ Սակայն թէ ծերունի մեծ վեզիրը, թէ հօրեղբայրը, խոնարհ գլուխ տալով ասացին՝ «ղուրբան, դուք մէյլ[1]) արէք նհարը, մենք յետոյ վալիահդի[2]) հետ սեղան կը նստենք»։ Այս մերժումով նրանք կամենում էին թէ չը վիրաւորել պատանի գահաժառանգին և թէ պահպանել աւանդութիւնը, որի համաձայն ոչ ոք չէ կարող նստել այնտեղ, ուր վալիահդը նստած է։

Շահը այլ ևս չը պնդեց, կռացաւ մէջքից և նազիրին մատով ցոյց տուեց փասեանով ու կաքաւով փիլաւը. Նազիրը անմիջապէս մի թիքա լաւաշ հացով ճաշակեց փիլաւը և ապա ամբողջ ափսէն դրեց Շահի առաջ, որ հինգ մատերը մըխելով մէջը, սկսեց ուտել։

—Ղուրբան, նկատեց հէքիմ-բաշին, լաւ կը լինի չլով-քեաբաբ ուտէք, փիլաւն մի քիչ ծանր է և դժուարամարս։

Նազիրը ճաշակեց չլով-քեաբաբը և ափսէն դրեց Շահի առաջ։

1) Անուշ։ 2) Գահաժառանգ։

«Դէ որ այդպէս է, այս փասեանով փիլաւը, հաջի, քեզ համար եմ թողնում։

Եւ խուղաթաթախ մատները թափ տալով ափսէի վրա, Շահը հրեց ափսէն դէպի մեծ վեզիրի կանգնած կողմը։ Վերջինս խոր գլուխ տուեց այդ մեծ իլթիփաթի[1]) համար և ասաց.

«Ալլահի օգնութեամբ, ձեր մեջաջը չերիֆը (նուիրական ստամոքսը) շատ լաւ է երևում և կարծեմ հէքիմ-բաշին ես մասլահաթ[2]) կը տեսնի, որ մի քիչ զափրանով փիլաւ մէյլ անէք»։

—Զափրանը շատ էլ չեմ սիրում, բայց այս բատրջանի խուրուշը վատ չէ։

—Բատրջանը, ղուրբան, հարարաթ[3]) ունի, բայց մի քանի թիքա ուտելն վնաս չէ, միայն նուան չերբէթ մէյլ արէք։

Շահի տրամադրութիւնը ակներև կերպով դէպի լաւն էր գնում. մատները հանելով խուղալի բատրջանի խուրուշի միջից և սրբելով լաւաշով, մի մեծ գդալ օշարակ տանելով դէպի բերանը, նա ծիծաղելով ասաց չահզադէներին.

—Լսեցէ՞ք մունէջջիմ-բաշու գլխին ինչ օյին եկաւ։

—Բէ՛լի, բէ՛լի[4]), ղուրբան,—պատասխանեցին միաբերան չահզադէները,—նա լաւ պատժուել է՝ մուստառ ջհուդների ընկեր դառնալով։

1) Շնորհ։ 2) Խորհուրդ։ 3) Գրգռող է, հիւանդութիւն յուզող։ 4) Այո, այո։



—Ի՞նչ պատիժ պէտք է տանք մունէջջիմ-բաշուն, չահզադէներ, հարցրեց Շահը իշխաններին։

—Հրաման ձեր շահնշահական հրամանն է[1]), ասացին չահզադէները, բայց մեր նուաստների կարծիքով, մունէջջիմ-բաշին արժանի է ֆալախկայի, որ լաւ չէ կարողացել իմանալ, թէ ինչ են գուշակում աստղերը։

—Իսկ դու, հաջի Միրզա-Աղասի, ի՞նչ ես ասում, դիմեց սադրազամին Շահը, որ զուրկ լինելով առհասարակ անհատական ինքնուրոյնութիւնից և հաստատ կամքից, ոչ մի գործ չէր կատարում և վճռում առանց իր ուսուցչի և մեծ վեզիրի կարծիքն ու կամքն իմանալու։

Ութսունամեայ ծերունի սադրազամը, լաւ զգալով որ իր կամքն է լինելու մունէջջիմ-բաշու բախտը վճռողը և կամենալով ցոյց տալ գոռոզ չահզադէներին իր անսահման իշխանութիւնը ու վիրաւորել նրանց ինքնասիրութիւնը, պատասխանեց.

—Ղուրբան, ի հարկէ, հրաման ձեր արքայական հրամանն է, բայց ես կարծում եմ, որ մունէջջիմ-բաշին արժանի է խալաթի[2])։

1) Բոլոր նախարարները, պաշտօնեաները, նոյն իսկ գահաժառանգը առանց այդ խօսքերի չեն կարող յայտնել իրանց կարծիքը։ 2) Վերարկու, իսկ փոխաբերական մտքով՝ վարձատրութիւն. երբ Շահը կամենում է մէկին վարձատրել, նա ուղարկում է նրան իր խալաթներից մէկը։

—Ի՞նչպէս, խալաթի, բացականչեց Շահը։

—Այո՛, զուրբան, խալաթի. արզ անեմ. յիշո՞ւմ էք, որ ես չարունակ արզ էի անում, թէ Շահնէ մէթուլլահի աստղագէտի արած գուշակութիւնը սխալ է և զուր է աշխարհի աղօթարանդ անհանգիստ լինում։

Մահմէդ Շահի հիւանդոտ դէմքը մթագնուեց և երկիւղի արտայայտութիւն երևաց նրա աչքերում. սադրազամը մատը դրել էր նրան կրծող վէրքի վրա։ Երկու հարիւր տարի առաջ մի մունէջիմ (աստղագուշակ) գուշակել էր Շահնէմէթուլլահ գրքի մէջ Պարսկաստանի ութ թագաւորների անունները և թագաւորութեան տևողութիւնը. արդ, Մահմէդ Շահը վերջին ութերորդ թագաւորն էր և աստղագուշակի գրածին նայելով նա պէտք է թագաւորէր միայն տասն երեք տարի. իր նախորդների վերաբերմամբ գուշակութիւնը կատարուել էր. այդ պատճառով Շահը չարունակ երկիւղի մէջ էր, որ իր վերաբերմամբ ևս նա պէտք է կատարուի։ Արդէն նա իր թագաւորութեան տասներեք տարումն էր, ուստի և համրում էր օրերը և ժամերը. Նա չարունակ մտատանջութեան մէջ էր լինում և շատ անգամ կամենում էր ազատուել այդ մտատանջութիւնից զուարճութիւնների և քէյֆի մէջ։ Նա շատ զարմացաւ, որ սադրազամը համարձակւում է արթնացնել նրա մէջ ցաւալի յիշողութիւնը, ուստի ցասմամբ լի ձայնով, ասաց.



—Ինչի՞ համար ես յիշում այդ գուշակութիւնը.

—Ոտքիդ տակ կոխուելու հող լինեմ, պատասխանեց սադրազամը, նրա համար եմ յիշում, որ ցոյց տամ, թէ այդ գուշակութիւնը սխալ է, և աշխարհի աղօթարանդ դեռ երկար և ձիգ տարիներ պէտք է լուսաւորէ աշխարհս իր ճառագայթներով։

—Բայց ինչպէս, ինչպէս։

—Չէ՞ որ մեր մունէջիմ-բաշին, որ Իրանի հռչակաւոր գիտուններից մինն է, այսօրուայ համար գուշակութիւն արեց և, սակայն, գուշակութիւնը սխալ դուրս եկաւ. ինչո՞ւ Շահնէմէթուլլահի մունէջիմի գուշակութիւնը ճիշտ պէտք է լինի. ինչո՞վ մեր մունէջիմ-բաշին պակաս է նրանից. քանի որ սրա գուշակութիւնը ուղիղ դուրս չեկաւ, նրանը հօ ուղիղ չէ, ուղիղ։

Շահի դէմքը պայծառացաւ, ուրախութեան կայծ փայլատակեց նրա աչքերում։

—Մաշալլա, մաշալլա, հաջի, ուղորդ որ այդպէս է. ոչ միայն մունէջիմ-բաշին արժանի է խալաթի, այլ և դու։

Բայց յանկարծ մի նոր կասկած մռայլ արտայայտութիւն տուեց Շահի դէմքին։

—Բայց զ ը ս մ է թ ը, ճակատագիրը. ինչպէս, դու, մօլլա և մուսուլման, չես հաւատում ճակատագրին։

—Ա ս տ ա ֆ ր ո ւ լ լ ա, ա ս տ ա ֆ ր ո ւ լ լ ա[1]),

---

1) Մեղայ տէր, քաւ լիցի։

քաֆիրը միայն կարող է չը հաւատալ. ճակատին գրածը ոչ ոք չէ կարող ջնջել։ Իմ ասածս այն է, ղուրբան, որ ոչ թէ աստղերն են սխալ գուշակում, այլ մունէջջիմ-բաշիներն են սխալվում իրանց հաշիւների մէջ և սխալ գուշակութիւններ անում։

—Փիլիսոփայ է, փիլիսոփայ, հաջի Միրզա-Աղասին, դարձաւ Շահը չահզադէներին, բոլորովին ուրախացած և միամտուած. չէ, նա արժանի է լաւ խալաթի։

Եւ դառնալով փիշխըդմէթներին, ասաց. «կանչէք իսկոյն սանդուխտար-բաշուն[1]) և խօջա-բաշուն»[2])։

Եւ Շահը ձեռքը մեկնեց դէպի Սպահանի սեխը և սկսեց ուտել, «աջաբ[3]) քաղցր է» ասելով։

Վարագոյրը բարձրացաւ և հանդերձապետն ու ներքինապետը երևացին դռան չէմքում, խոր գլուխ տալով։

«Մօհսուն-միրզա, ասաց Շահը սանդուխտարին, որ չահզադէ էր, մի լաւ խալաթ ուղարկիր մունէջջիմ-բաշուն, թող բէստից դուրս գայ և ապահով լինի. այս մէջմահիներից մէկն էլ ուղարկէք նրան. խեղճը ջհուդների հետ մնալով սովացած կը լինի։ Իսկ դու, խօջաբաշի, այսօր երեկոյեան սադրազամի հարէմը ուղարկիր այն աղջկան, որ

1) Գանձապահ—հանդերձապետ։ 2) Ներքինապետ։ 3) Զարմանալի։



Բիւրդխտանի հաքիմը[1]) ուղարկել էր անցեալ օրը, թող սադրազամը քէյֆ անի։

—Ղուրբան, իմ ինչ գործն է ջահէլ աղջիկը, իմ մի ոտս գերեզմանումն է արդէն, քմծիծաղ տալով ասաց սադրազամը։

—Չես իմանում որ ջահէլ աղջիկը ծերոց դաւազան է. այս գիշեր իսկ սիղան կարդալ տուր[2]). նա քեզ կը ջահէլացնի, ծիծաղեց Շահը և թիկն տալով մութաքէին ասաց. այժմ ես գնամ առանձնասենեակս. դու, վալիահդը և չահզադէները նհար արէք. ես էլ մի քիչ կը քնեմ և նամազից յետոյ կը գաս արզերդ կ՚անես։

Փիշխըդմէթը ներկայացրեց ոսկէ կոնքը և ջըրամանը. Շահը լուաց ձեռները, ողողեց բերանը. մի այլ փիշխըդմէթ ներկայացրեց միսվակը,[3]) բայց Շահը ձեռքով հրեց, «յետոյ, յետոյ» ասելով։

—Չէ, ղուրբան, մէջ մտաւ սադրազամը. վեր առէք այժմ միսվակը. հազրէթը փէղամբարը[4])—թող յաւիտեան փառաւորուի նրա անունը—հրամայել է, որ նամազից առաջ միսվակի գործածութիւնը 75 հասարակ նամազի տեղն է բռնում։ Ամեն անգամ, երբ աշխարհի ազօթարանդ միսվակն գործ ածի, անիծեալ չէյթանը

1) Նահանգապետը։ 2) Ամուսնութեան գիրը, որ կարդում է և գրում մոլլան։ 3) Քչփորիկ, ատամփորիկ։ 4) Սուրբ մարգարէն։

սաստիկ բարկութեան մէջ կը մտնի և Ալլահը կը հրճուի [1]):

Շահը վեր կացաւ, քչփորիկը ատամների մէջ խաղացնելով. շահզադէները խոր գլուխ տուին. Նա ուղղուեց դէպի յարակից սենեակը և դառնալով Բէհմէն-միրզային. «Եղբայրս, ասաց, քո արզերդ կարդացի, Հաջին քեզ դէմ գանգատներ ունի. խորհուրդ եմ տալիս քեզ՝ լսել նրա ասածները և վարուել այնպէս, ինչպէս նա մասլահաթ կը տեսնի. Նա աթա է, աէրութեան և մեր ղաջարների գահին հաւատարիմ ծառայ. վալիահդն էլ թող շարժի նրա հրահանգների համաձայն»:

Եւ վարագոյրը, որ փիշխըդմէթներից մինը բարձրացրել էր, ընկաւ նրա ետևից ու Շահը մտաւ առանձնարանը, ուր սովորաբար խմում էր սուրճը և ծխում ղէյլանը:

Անմիջապէս վալիահդ Նասրէդդին-միրզան չոքեց դաստրխանի առաջ, Շահի նստած տեղից մի քիչ ներքև և «բիսմըլլահ» ասելով, հրաւիրեց շահզադէներին նոյնպէս չոքել, Որովհետև պալատական էտիկէտը թոյլ չէր տալիս, որ վալիահդի հետ սեղան նստեն ոչ-շահզադէները, ուստի ծերունի սադրազամը, որին և ոչ ոք չը հրաւիրեց

[1]) Ատամփորիկի մասին մի ամբողջ գրականութիւն կայ իսլամի աստուածաբանութեան մէջ: Ամեն հաւատացեալի պարտքն է միսվակի գործածութիւնը, իբրև Ալլահին հաճելի գործ, որովհետև նա բարկացնում է շէյթանին, սատանային:



մասնակցել ճաշին, գլուխ տալով վալիահդին, ասաց. «Ես էլ, ղուրբան, գնամ աշըս [1]) ուտեմ, յետոյ կը հասնեմ ձեր սպասին»:

Անմիջապէս նազիրը ակնարկ արեց և սեղանի մէջմահիներից մինը դուրս տարեցին սադրազամի համար:

—Հողը մեր շահզադէների գլխին, ասաց Բէհմէն-միրզան, փիլաւի սկաւառակը առաջը քաշելով, հողը Իրանի գլխին, որի կառավարիչն այսպիսի ցնդած ծերուկը պէտք է լինի.

—Սուս, սուս, աչքով արեց Ղահրաման-միրզան. այս պատերը ականջներ ունեն, առանց այն էլ Հաջին գրգռուած է քեզ դէմ, հօրեղբայր:

Եւ շահզադէները լուռ ու մունջ ճաշեցին. Նրանցից յետոյ սեղանի նստեցին փիշխըդմէթները հէքիմ-բաշու, նազիրի հետ: Մնացած և ձեռք չը տուած մէջմահիները հետզհետէ անցան զանազան սենեակներ, իսկ փշրանքները և թափթփուքը ստացան դռնապանները, պարտիզպանները և ձիապանները:

Թողնենք Շահին ծխել իր ղէյլանը՝ ոսկեհուռ և գոհարակապ, Շիրազի անուշահոտ ծխախոտից, խմել իր սուրճը փոքրիկ ֆինջանով Արաբիայի ընտիր բերքից, խաղալ սատրանջ՝ իր խաս-փիշխըմէթների հետ և լսել իր ծաղրածուի կատակները. —Նախաճաշից յետոյ մինչև չորրորդ նամա-

[1]) Թանապուր:

գի ժամանակը այդ է սովորաբար Շահերի զուարճական պարապմունքը—և հետևենք Իրանի սադրազամին, որի ձեռքում են լինում իսկապէս կենտրոնացած պետութեան բոլոր գործերը։

Պարսից սադրազամի և միւս վեզիրների պաշտօնատները պարփակուած են Շահի պալատի շրջանակում, մարմարեայ գահի շինութեան մասին կից։ Ցերեկները, վաղ առաւօտից մինչև երեկոյեան էգանը[1]) թէ սադրազամը և թէ միւս վեզիրները զբաղվում են գործերով այդ պաշտօնատներում. աւելի խորհրդաւոր և գաղտնի գործերը տեսնվում են երեկոյեանները, պաշտօնեաների տներում։ Սադրազամը գրեթէ ամեն ժամ ստիպուած է լինում գնալ Շահի ոտքը. կամ Աստուծու վէքիլն[2]) է կանչում նրան, կամ ինքը պէտք է տեսնում արժանանալ արեգակնափայլ երեսի տեսութեան՝ հրամաններ և հրահանգներ ստանալու համար. իսկ միւս վեզիրները նոյնպիսի պայմանների մէջ են գտնվում սադրազամի վերաբերմամբ. այդ է պատճառը, որ պետական բոլոր կենտրոնական պաշտօնատները կամ նախարարութիւնները կենտրոնացած են Շահի պալատի շրջանակում։ Մեր ժամանակում այդ պաշտօնատների գործավարութեան ձևը դեռ փոքր ի շատէ եւրոպական ձև է ստացել և կա-

[1]) Մօլլայի աղօթքի հրաւիրելը մինարէթից։ [2]) Փոխանորդ. Շահի մի այլ տիտղոսը։



տարվում է գրաւորապէս, բայց յիսուն-վաթսուն տարի առաջ, գործավարութիւնը նախամեծարապէս բանաւոր էր. գրագրութիւն շատ քիչ կար, ամեն բան կատարվում էր բերանացի, մի հրամանով, ձեռքի, գլխի մի շարժումով, դէմ առ դէմ խօսակցութեամբ և բանակցութեամբ։ Ամեն մի պաշտօնեայ, լինի նա սադրազամ, վեզիր, փոխանորդ, վէքիլ՝ իր դիւանատունը իր վրա է կրում երկար թումարի[1]) ձևով, որ խրուած է լինում գօտու մէջ, իսկ գրպանումն զալամդանը՝ իր եղեգնեայ գրիչներով, մելանով, փոքրիկ արծաթեայ գդալով և թանաքամանով։ Հաշուապահութիւնը՝ պետական եկամուտքի, նահանգների, գտնվում է մուստոֆիների ձեռքում և ամեն մի նահանգ կամ կուսակալութիւն ունի իր մուստոֆին։ Մուստոֆիները պաշտօնեաների մի առանձին դասակարգ կամ կաստա են կազմում Պարսկաստանում և երկրի ֆինանսական վիճակի բաժինը ամբողջովին նրանց ձեռքումն է կենտրոնացած, ինչպէս և ռոճիկների, թոշակների, թիուլների վարչութիւնը և այդ պատճառով այդ կաստան ահագին և ազդեցիկ դեր է խաղում և տնօրինում է երկրի բախտը։ Ամեն մի պաշտօնատուն բաղկացած է մի մեծ և երկար թալարից, ուր գետնին փռուած գորգերի վրա ծալապատիկ նստած կամ չոքած են մուստոֆիները,

[1]) Հաշուեցուցակ։

միրզաները և թուղթը ծնկին յենած՝ գրում են, և մի կամ երկու փոքր սենեակից, ուր նստած են լինում վեզիրները, պաշտօնատան պետերը. Նստում են ամենքը բարձի կամ ս ա դ ր ի համաձայն. ով պաշտօնով, աստիճանով աւելի բարձր է, նա և աւելի բարձր է, կամ նրա բարձը, սնարը աւելի բարձր պէտք է դրուի. Վեզիրը նստում է սենեակի գլխին, առանձին սադրի վրա և անջրպետը նրա և միւս պաշտօնեաների մէջ բաւական լայն է լինում. Նրա առաջ չոքում են իր մտերիմ խորհրդականները, քարտուղարները, որոնց նա անդադար հրամայում է այս և այն գրել։ Բացի դրանից ամեն մի վեզիր ունի իր փ ի շ ք ա ր ը[1]), որ միջնորդ է վեզիրի և նրան դիմող աղերսարկուների կամ խնդրատուների մէջ և որից է կախուած լինում գործին այս կամ այն ուղղութիւն տալը։

Բոլոր պաշտօնեաները այստեղ և անում են իրանց նհարը, ծխում են ղէյլանը, խմում են սուրճը և կատարում ցերեկուայ նամազները. Նհարը առանձին-առանձին մէջմահիների մէջ, բաղկացած զանազան տեսակ կերակուրներից, նայելով պաշտօնեաների դիրքին և աստիճանին, բերվում են կամ Շահի կամ ս ա դ ա ր ա թ ի[2]) խոհանոցներից, իսկ օշարակները՝ Շահի շ է ր բ ա թ խ ա ն ա յ ի ց[3])։

1) Գործակալ։ 2) Մեծ վեզիրի պաշտօնատուն։ 3) Օշարակատուն, մառանատուն։



Կէսօր է. մուէզինի զիլ ձայնը վաղուց հնչել էր Շահի մզկիթի մինարէթից. սադարաթում շատերը արդէն կատարել էին նախաճաշեան նամազը, մի քանիսը պահել էին այդ նամազը, կամենալով միացնել յետճաշեան նամազի յետ. Նհարը մէջմահիներում թէև վաղուց դարսուած էր սադարաթի թալարում, բայց ամենքը սպասում էին սադրազամին, որ գայ իր նհարը անի, որպէս զի իրանք էլ կարողանան անուշ անել փիլաւը և չիլաւը։

Թալարը հեազհետէ լցվում էր բազմականներով. գալիս էին խնդրատուներ, սէյիդներ, մօլլաներ, խաներ, եթէ միայն կարողանում էին անցնել բակով, բարձրանալ սանդուխներով և հասնել մինչև սադարաթի դուռը, այդտեղ կանգնած բազմաթիւ ֆէրրաշներից և չաթիրներից չարգելուելով. այդ արգելքը վերացվում էր, ի հարկէ, մի քանի ղռանով, որ մտնողները կամաց սահեցնում էին ֆէրրաշների ձեռքը։ Թալարի վերևում, այդ օր ս ա դ ր ն շ ի ն[1]) էր սադրազամի փիշքար միրզա Իբրահիմ խանը, յիսուն տարեկան, մազերը ու մօրուքը խինայած մի մարդ, որի առաջ թափուած էին բազմաթիւ թղթեր, թումարներ և որի առաջ չարունակ չոքում էին բոլոր մտնողները ու քչփչում քիթ քթի տուած։

Նախասենեակում լսուեց իրարանցում. Թալա

1) Նախագահ, Նախաբարձ։

րի վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ երեննայ գաւազանի վրա յենուած հաջի Միրզա-Աղասին: Ամենքը անմիջապէս ոտքի ցատկեցին և խոնարհ գլուխ տալով, կանգնեցին. սադրազամը, առանց նայելու ոչ ոքի, ղուրանի ա յ ա ն ե ր ը[1]) մըրմնջալով, իր ութսունամեայ հասակին անսովոր առոյգութեամբ, անցաւ թալարից և մտաւ իր առանձնասենեակը, ուր հրաւիրեց անմիջապէս փիշքար միրզա Իբրահիմ խանին գալ. Անմիջապէս սադրազամի հրևից ներս մտաւ կեղտոտ չորերով մի ա շ փ է զ չ ա կ ե ր տ[2]), գլխին դրած արծաթեայ մէջմահին և յանձնեց փիշխըրդմէթին. դա Շահի սեղանից վերցրած մէջմահին էր, սադրազամի նհարը: Այդ նշան էր, որ կարելի է նըրհար անել և պաշտօնեաները չոքեցին մէջմահիների առաջ ու տիրեց խոր լռութիւն ամբողջ թալարի մէջ:

Մտնելով իր աշխատութեան սենեակը, ուր ամբողջ զարդը բաղկանում էր գորգերից, սադրազամը նստեց մ ի ն դ ա ր է ի[3]) վրա, հանեց գօտից թումարը և գրպանից ղալամդանը. վերցրեց երկար բուխարէ մորթու գլխարկը ու դրեց կողքին. ապա քակեց գօտին և հանելով գրպ-նից Քեաշանի աղլուխը, սրբեց ճակատից քրտինքը: Փիշխըրդմէթը դրեց նրա առաջին մէջմահին. մի-

[1]) Յօդուածներ, կտորներ: [2]) Խոհարարի աշակերտ:
[3]) Դեօշակ:



քանի գդալ աշ խմելով և միքանի թիքա լաւաշով փլաւ ուտելով, նա հրամայեց վերցնել մէջմահին ու տալ ղէյլան և սուրճ. ապա դառնալով իր առաջ ձեռքերը ծալած կանգնած միրզա Իբրահիմ խանին, ասաց.

—Գնա նհարդ արա և շուտ եկ, մինչև ղէյլանս կը քաշեմ: Փիշքարը, գլուխ տալով դուրս եկաւ, պատուիրելով դէպի նախասենեակը տանող դռան առաջին կանգնած հաջի Սէլիմ չաթիրին՝ ոչ ոքի ը թողնել սադրազամի մօտ մինչև իր վերադարձը:

Այդ մէջքը կուացած, երկարաքիթ, ատամները թափած, աչքի ստորին կոպը դուրս ցցուած, քեօսա, նիհար, բայց կայտառ ութսունամեայ ծերունին ամբողջ Իրան-Թուրանի հրամանատարն էր այդ ժամանակ շնորհիւ այն անսահման վստահութեան, որ տածում էր դէպի նա հիւանդոտ և տկարամիտ Շահը: Նա հասել էր սադրազամութեան մեծ պաշտօնին բոլորովին անակնկալ կերպով, ինչպէս յաճախ պատահում է արևելեան բռնապետական երկիրներում: Երիտասարդ ժամանակը, Միրզա-Աղասի անունով, նա մօլլայի պաշտօն ունէր Մաքուի մէջ. կարօտութիւնը ստիպեց նրան գնալ Երևան, որտեղ նրան աջողուեց դառնալ Էջմիածնի Հայոց Եփրեմ կաթողիկոսի միրզան, պարսկերէնի գրագրութեան համար և իր խոնարհ, հլու ծառայութեամբ, բայց գլխաւորապէս սրամտութեամբ ու պարսկե-

րէնի մէջ ունեցած հմտութեամբ կարողացաւ գրաւել հռչակաւոր Ներսէս խ ա լ ի ֆ ա յ ի[1]) բարեկամութիւնը ու հովանաւորութիւնը։ Ներսէսի անընդհատ գրագրութիւնը գահաժառանգ Նայիբ-ուլ-Սալթանէի հետ նա էր վարում. բացի դրանից նա ունէր բանաստեղծական ձիրք և պարսկական չ է յ ր ե ր[2]) էր թխում, բայց միևնոյն ժամանակ նա իսկական մուսլիմ էր և մոլեռանդ չէր։ Մի անգամ նա Ներսէս խալիֆայի յանձնարարութեամբ գնաց Թաւրիզ Նայիբ-ուլ-Սալթանէի մօտ. սա, տեսնելով փոքրիկ բանաստեղծ միրզայի ընդունակութիւնները և Ներսէսի ծառայութեան մէջ ձեռք բերած հմտութիւնները, նշանակեց իր որդիներից մինի՝ Մահմէդ-միրզայի դաստիարակիչ և ուսուցիչ։

Լինել չահզադէի, այն էլ գահաժառանգի որդու դաստիարակիչ, այդպիսի բախտաւորութիւն երբէք չէր անցել խեղճ մօլլա Միրզա-Աղասու մաքից, ուստի նա ուխտեց իր սանին տալ ամենաբարեպաշտ մուսուլմանական կրթութիւն։ Ի բնէ հեզ, վախկոտ Մահմէդ-միրզան սիրեց իր ուսուցչին և չկամեցաւ ուրիշ ուսուցիչ ունենալ. բայց իր միւս եղբայրները, մանաւանդ կայտառ և առոյգ Բէհմէն-միրզան տանել չէին կարողանում տգեղ, քեօսա մօլլին և չարունակ ծաղրում ու արհամարհում էին նրան։ Մօլլան երբէք չը ներ-

[1]) Ներսէս Աշտարակցու։ [2]) Ոտանաւոր։



րեց Բէհմէն-միրզայի վիրաւորանքները և ուխտեց վրէժ հանել ու, ինչպէս շուտով կը տեսնենք, հանեց իր վրէժը։

Մի օր, երբ պատանի Մահմէդ-միրզան ուրախ և գոհ տրամադրութեան մէջ էր, նա հարցրեց ուսուցչից. «Ի՞նչ ես կարծում, լա՛լա[1]), ես Շահ կը դառնա՞մ երբևիցէ»։—Իսկ ի՞նչ կը տաս ինձ, եթէ դառնաս, պատասխանեց Միրզա-Աղասին։—Եթէ ես Շահ լինեմ Ալլահի ողորմութեամբ, քեզ մեծ վեզիրս կը շինեմ, ասաց պատանի չահզադէն։—Ուրեմն, դու անպատճառ Շահ կը դառնաս Ալլահի ողորմութեամբ։

Դէպքերը արդարացրին միրզա Աղասու գուշակութիւնը։ Գահաժառանգ Աբբաս-միրզան, նա, որ երկնում էր վերանորոգել Պարսկաստանը, որ արդէն նկատվում էր որպէս Շահ, իբրև Նայիբ-ուլ-Սալթանէ, և որի վրա էր դրել իր բոլոր յոյսերը Ֆաթալի Շահը, մեռաւ հօրից առաջ. շուտով, այն է 1834-ին, մեռաւ և ինքն Ֆաթալի Շահը, նշանակելով առաջուց գահաժառանգ Աբբաս-միրզայի Մահմէդ-միրզա որդուն, որ նստելով Դարէհների գահի վրա, կատարեց իր խոստումը և սադրազամ նշանակեց իր ուսուցիչ հաջի Միրզա-Աղասուն ու շուտով ամբողջովին նրան թողեց պետութեան կառավարութիւնը, տածելով դէպի նրան կոյր և անսահման հաւատ ու վստա-

[1]) Դաստիարակ։

հութիւն։ Դառնալով սադրազամ, արդէն եօթանասունամեայ հասակում, ծերունի հաջին չը փոխեց իր կեանքի եղանակը. նա մնաց նոյն դէրվիշը, ինչ որ էր առաջ, ժուժկալ, սակաւապէտ, բայց նրա փառասիրութիւնը, սնապարծութիւնը, մանաւանդ իբրև բանաստեղծ և ռազմագէտ փայլելու ցանկութիւնը սաստկացաւ նրա մէջ. նա չը մոռացաւ և իր թշնամիներին, ծաղրողներին. ոյժ տուեց առանց այն էլ ազդեցիկ հոգևորականութեան հեղինակութեան, և հոգևորականութիւնը նրա օրով ահագին կշիռ ստացաւ. սակայն հասարակ ժողովուրդը սիրում էր նրան իբրև դէրվիշի և լաւ մուսուլմանի։ Նրա մասին հարիւրաւոր անեկդոտներ էին պտտում ամբոխի մէջ, որոնք մինչև այսօր էլ պատմվում են։ Նա շատ սէր ունէր քեահրիզներ[1] փորել տալ, ճանապարհներ, կամուրջներ շինել, այգիներ տնկել տալ. մի օր երբ նա գնաց դաշտը՝ հսկելու թէ ինչպէս է առաջ գնում քեահրիզի գործը, նա կանգնեց հորի գլխին. ք ե ա ն ք ա ն ն ե ր ի ց[2] մինը, որ բանում էր հորի մէջ և չէր տեսնում սադրազամին, ասաց ընկերին. «Մէկը հարցնող լինի այդ տխմար ծերուկ հաջի Աղասից, թէ այսպիսի աւազոտ տեղում ջուր կարո՞ղ է դուրս գալ»։ Լսելով այդ խօսքերը, հորի գլխին կանգնած սադրազամը ասաց. «Ա՛յ փէդէր-սուխտա,

[1] Ջրհորներ։ [2] Հոր պեղող.



եթէ յիմար հաջի Միրզա-Աղասու համար ջուր չի դուրս գայ, քեզ համար հօ փող դուրս կը գայ»։ Եւ այդ խօսքերն եղան յանդուգն քեանքանի պատիժը։

Ահա ինչ տեսակ անձի ձեռքումն էր գտնվում մեր պատմութեան ժամանակ ամբողջ Պարսկաստանի կառավարութեան ղեկը։

## V

Երբ կէս ժամից յետոյ միրզա Իբրահիմ խանը, որի տիտղոսն էր Մուշիր-ուլ-Միւլք[1], կամացուկ մտաւ սադրազամի առանձնասենեակը, նա գտաւ նրան նիրհած, դդումի ղէյլանը ձեռքին։

—Հա, դու ես, Մուշիր-ուլ-Միւլք́. նստիր, տեսնենք ինչ կայ։

Փիշքարը նստեց սադրազամի առաջ, հանեց գոտուց թումարը և սկսեց զեկուցանել.

«Սպահանից չ ա փ ա ր ը[2] եկել է. Էմին-Դովլէն արզ է անում, որ մուշթէիդը և մօլլաները, իրանց չուրջը հաւաքելով մի խումբ լ օ թ ի ն ե ր[3], միանգամայն քամահրում են իր և Շահի իշխանութիւնը, հարկեր են դրել վաճառականների վրա, կարաւանների վրա. նա խնդրում է թոյլատրել իրան զինուորական ոյժ բանեցնել, ձերբակալել մուշթէիդին և ուղարկել Թէհրան, իսկ

[1] Խորհրդական տէրութեան։ [2] Սուրհանդակ։ [3] Սրիկաներ։

լօթիներին գլխատել կամ գլխիվայր թաղել՝ խուովարների անհաբեկման համար. սալա նա յայտնում է, որ մուջթէիդի և լօթիների ապստամբութեան պատճառով, այս տարի բաղի[1]) կ'ունենայ մօտ 100,000 թուման»:

—Լաւ, փորացաւը հասկացանք, ասաց սադրազամը. բաղի մի դինար անգամ չեմ ընդունի, այդպէս էլ գրի իրան և պատուիրիր որ դրատերը[2]) անյապաղ ուղարկի, եթէ չէ կամենում ենթարկուել Շահի բարկութեան. յիշիր և այն, որ Սպահանի կուսակալութեան ցանկացողներ շատ կան և իրանից շատ վճարել խոստացողներ:

«Մուխբիր-Դօվլէն հէնց այս առաւօտեան եկել էր, յայտնեց փիշքարը, և արզ էր անում, որ եթէ շնորհ անէք Սպահանի կուսակալութիւնը յանձնէք իրան, Շահի գլխին թաստաուղ[3]) կ'անի 300,000 թուման, իսկ ձեր գլխին 50,000 թուման:

—Թող սպասի, Աստծով եկող նովրուզին[4]) կը տանք իրան. հիմա, քանի որ Սպահանում շլուղ[5]) է, Շահը չի համաձայնի Էմին-Դօվլից առնել կուսակալութիւնը:

[1]) Վնաս, դեֆիցիտ. կուսակալները երբ չեն կարողանում կամ չեն կամենում իրանց խոստացած վարձագրամը վճարել, ասում են բաղի ենք բերել:
[2]) Վճար պայմանաժամի: [3]) Մատաղ: [4]) Նոր տարի:
[5]) Խռովութիւն:



—Իսկ մուջթէիդի ձերբակալութեան և լօթիների գլխատման համար ինչ կը հրամայէք գրեմ Էմին-Դօվլին:

—Գժուել ես, ինչ է, մարդ դու, գայրացած ասաց սադրազամը. Սպահանի մուջթէիդին, Շէյխ-ուլ-Իսլամին ձերբակալել կարելի՞ է: Ուզում էք ամբողջ երկիրը ոտքի կանգնի՞. թող Էմին-Դօվլէն մտքիցն անգամ չանցկացնի այդպիսի բան. իսկ լօթիներին թող ծածուկ ձերբակալել տայ և ուղարկէ այստեղ Թէհրան, բայց առանց որ մուջթէիդն իմանայ. այստեղ պատիժն կը տանք: Եադդաշտ արա[1]), որ Շահին արզ անեմ:

«Խորասանից վաճառականները և գիւղացիները չափարով մի մեծ արզուհալ[2]) են ուղարկել, աստիկ գանգատվում են, որ կուսակալ Սաադ-ուլ-Դօվլէն կեղեքում է ժողովուրդը, ծանր տուգանքներ է առնում»,—շարունակեց զեկուցումը փիշքարը:

—Իսկ Սաադ-ուլ-Դօվլէն ինչ է գրում:

—Նա ուղարկել է 10.000 բաճաղլու[3]) ձեր սպասին ներկայացնելու, իսկ Շահի համար երկու գեղեցիկ քեանիզ[4]):

—Շատ լաւ, վաճառականները և գիւղացիները թող ինչքան ուզում են գանգատեն. բայեաթին[5]) շատ էլ երես չը պէտք է տալ. ասած է՝ բայեաթ

[1]) Արձանագրիր յուշատետրի մէջ: [2]) Խնդրագիր:
[3]) Ոսկի: [4]) Աղախին: [5]) Հպատակին:

թաբէհը գիւլմէսթ[1]). յիշատակիր, Շահին արզ անեմ, մի լաւ խալաթ ուղարկենք Սաադ-ուլ-Դօվլին։

Փիչքարը արձանագրեց յուշատետրի մէջ և ապա շարունակեց.

«Խամսայի հաքիմ Մադսուտ-միրզան[2]) խոստանում է 100,000 բաջաղլու Շահին, 30,000 ձեզ, եթէ Համադանի կառավարութիւնը իրան տաք. իսկ Նասրուլլահ-խանը ձեր գլխին 50,000 բաջաղլու է թասատուղ անում. եթէ իրան տաք»։

—Այդ շահզադէներից օգուտ չը կայ. Մադսուտ-միրզան ֆրանկի-մաաբ է[3]), որ մուսուլմանին չի վայելիլ. յիշատակիր, Շահին արզ անեմ Նասրուլլահ-խանին տանք։

Փիչքարի դէմքը փայլեց ուրախութեամբ, որ աննկատելի չանցաւ սադրազամի փոքրիկ, բայց սուր աչքերից. Նասրուլլահ խանը 5000 բաջաղլու էլ իրան էր խոստացել. Նա շարունակեց, բայց այս անգամ աւելի կամաց ձայնով։

«Բէհմէն-միրզայի փիչքարն եկել էր երեկ գիշեր ինձ մօտ, տունս...

Սադրազամի դէմքը մռայլուեց.

—Ի՞նչ էր ասում։

---

1) Հպատակը ծնուած է բռնութիւն տեսնելու։ 2) Երբ միրզա բառը անունից յետոյ է գրուած, նշանակում է շահզադէ։ 3) Նշանակում է եւրոպականացած, եւրոպական տարազի սովորած։



—Ասում էր որ շահզադէն կը տայ ձեզ 50,000 բաջաղլու, եթէ Շահին միջնորդէք օր առաջ յետ ուղարկէ իրան Թավրիզ վալիահդի հետ և տայ իրան այն իրաւունքները որ նա խնդրել է իր խնդրագրով, այսինքն այն իրաւունքները, որ վայելում էր ջաննաթ-մաքան[1]) Ֆաթալի Շահի ժամանակ իր հայր Աբբաս-միրզան. շահզադէն յոյս ունի որ ձեր միջնորդութեամբ Շահի աչքը կը քաղցրանայ նրա վրա։

—Ինչպէս չէ, այն էլ իմ միջնորդութեամբ, վատ յոյս չէ, մրմնջաց սադրազամը, որ դառնապէս յիշեց պատանի Բէհմէն-միրզայի ծաղրաբանութիւնները և վիրաւորանքները. երևի մեզ յիմարի տեղ է դնում. ես վաղուց նկատում եմ նրա փառասիրական ձգտումները. նա ոչ թէ Ատրպատականի փոխարքայ է ուզում մնալ, այլ Շահ է ուզում դառնալ. տեսնենք. ասած է՝ խորամանկ աղուէսը ջուխտ ոտքով թալակ կ'ընկնի, բայց դու ասա նրա փիչքարին, թող 50,000 բաջաղլուն բերի։

—Բերի՞, զարմացական բացականչութիւն արեց միրզա Իբրահիմ խանը։

—Արա, ինչ քեզ պատուիրում եմ։

—Զէչմ[2]). հարկաւոր եմ համարում այս ևս արզ անել, որ շահզադէները ամեն գիշեր հաւաքվում են Բէհմէն-միրզայի մօտ, իսկ միքանի

---

1) Դրախտաբնակ։ 2) Աչքիս վրա։

անգամ ռուսաց վ ե զ ի ր - մ ու խ տ ա ր ի[1]) թարգմանը գնացել է նրա տունը և երկար մնացել:

—Թող ջ ա ս ու ս ն ե ր ը[2]) լաւ հսկեն և ամեն բան հաղորդեն. շարունակիր։

—Ի՞նչ էք հրամայում Բէգլար-բէգու մասին. նա մնում է չղթայած բանտում. ես նրա կողմից ձեր գլխին թասաատուղ եմ անում 5000 բաջաղլու. իմ աներձագն է, ինձ բաշխեցէք, ես ձեր ստրուկը և ծառան եմ։ Նա խոստանում է լիովին վարձատրել ինքն իրան սպանող մարդի ժառանգներին, վերադարձնելով այն այգին, որ խլել էր նրանից և վճարելով այն դ ի յ ա ն[3]) որ կը նշանակի շարիաթը:

— Շատ լաւ, մի քանի րոպէ մտածելուց և համբիչի վրա մի քանի անգամ «խէր, շառ, Աստուած» կրկնելուց յետոյ ասաց սադրազամը, ես կը կատարեմ խնդիրքդ, կ'ազատեմ նրան, բայց Շահը շատ բարկացած է, քիչ էր մնում գլուխը կտրել տար. մունէջիմ բաշին ես իրան արդարացնելու համար բոլոր մեղն պէտք է ձգէ Բէգլար-բէգու վրա. Թող այգին վերադարձնէ ժառանգներին. ձեր համար ոտները կը դնենք ֆալախկի մէջ միայն պատուիրիր ֆէրրաշներին, որ չը խփեն, այլ խփել ձեւացնեն։ Շահին արզ կ'անեմ, որ ֆալախկի մէջ ենք դրել և կ'աշխատեմ մի քանի օրից յետոյ խալաթ տալ ու վերահաստատել պաշտօնի մէջ։

[1]) Լիազօր դեսպան։ [2]) Լրտեսները։ [3]) Արեան գին։



—Թող Ալլահը երկարացնէ ձեր կեանքը. Բէգլար-բէգին ձեր խոնարհ և հաւատարիմ սպասաւորն է. այսօր առաւօտեան նա իր ճարպիկութեամբ ազատել է հրէաներին. իրանք հրէաների ա ղ-ս ա խ կ ա լ ն ե ր ը[1]), որ եկել այստեղ են, կամենում են ձեր սպասին հասնել, մեծ շնորհակալութիւն են անում Բէգլար-բէգուց, օրհնում են նրա կեանքը։

—Լաւ, ջհուդներին ներս կը կանչես մի քիչ յետոյ, այժմ ուղարկիր մի ֆէրրաշ, թող կանչեն վ է ք ի լ ը խ ա ր ի ջ ա յ ի ն[2]), Գավամ-Դօվլէին[3]), իսկ մինչ այդ ես նամազս կ'անեմ։

Եւ այս խօսքերը արտասանելով հաջի Միրզա-Աղասին վեր կացաւ, «բէչչա»[4]) աղաղակեց իր սուր ձայնով, և երբ մի փեշխըդմէթ երևա՛ց, «ա լ թ ա ֆ ա»[5]) ասաց ու դուրս գալով նախասենեակը, ձեռքերը լուաց. ապա ներս մտնելով, ձեռքի թաց մատներով ոտքի մատների արանքը սրբեց, անթերի կերպով կատարելով լուացման գործողութիւնը, որ շարիաթը պատուիրում է նամազից առաջ. հանեց վրայից ոսկէ ժամացոյցը և դրեց մի քիչ հեռու. հանեց գրպանից արըլչում կտորից կարած փոքր քիսէն և դրեց ժամացոյցի մօտ[6]), սկսեց կոճկել կտաւէ շալիկի

[1]) Ծերունիները։ [2]) Արտաքին գործերի մինիստր։ [3]) Նեցուկ պետութեան։ [4]) „Այ տղայ“։ [5]) Ջրաման։ [6]) Նամազ անողը չը պէտք է իր վրա որևէ զարդ, փող, թանկագին իր ունենայ։

երկար թեքերը. փէշխըդմէթը սենեակի միւս
գլխին փռեց մի մետաքսեայ ս է ջ ա դ է[1]). Հա-
ջին, գուլբաները հանած, կանգնեց սաջադայի
վրա, գ ը բ լ է ի[2]) ուղղութեամբ, հանեց ծոցից
մի փոքրիկ քար, դրեց առաջը սաջադայի վրա
այնպէս, որ կռանալիս ճակատն նրան դիպչի և
սկսեց նամազը անել:

Այդ միջոցին վարագոյրը բարձրացաւ թալարի
կողմից. ներս մտաւ Մուշիր-ուլ-Միւլքը և նրա հետ
մի երիտասարդ, հազիւ 22—23 տարեկան, գե-
ղեցիկ դէմքով, թուխ աչքերով և կիսա-պարսկա-
կան, կիսա-եւրոպական տարազով, կարճ քուլա-
հով, բայց առանց կօշկի, թիրմանման գուլբա-
ներ հագած: Այդ 22 տարեկան երիտասարդը
Պարսկաստանի արտաքին գործերի մինիստրն էր,
միրզա Ալի-Խան անունով, Գավամ-Դօվլէ տիտղո-
սով: Մի տարի կար, որ նա նշանակուել էր այդ
պաշտօնին, որ առաջ վարում էր իր հայրը միր-
զա Մասուդ խանը, մինը այն սակաւթիւ անձե-
րից, որոնք ձգտում էին վերանորոգել Պարսկա-
ստանը, մեծացած լինելով Աբբաս-միրզա Նայիբ-
ուլ-Սալթանէի դպրոցում, և լաւ ըմբռնել էին,
թէ որքան աղետաբեր է իրանց հայրենիքին կրօ-
նական մոլեռանդութիւնը և չիտ հոգևորակա-
նութեան ձեռք բերած իշխանութիւնը: Միրզա-
Մասուդ խանը կարողացել էր բաւական ազդե-

[1]) Փոքր գորգ: [2]) Աղօթարան:



ցութիւն ձեռք բերել Շահի մօտ և ներշնչել նրան
վստահութիւն, որով և գրգռել էր ծերունի և
մոլեռանդ սադրազամի նախանձը. վախենալով
մի՛ գուցէ վերջ ի վերջոյ Մասուդ խանը իր անկ-
ման պատճառ դառնայ, նա կարողացել էր բարի,
բայց տկարամիտ ու կամքից զուրկ Մահմէդ Շա-
հին անվստահութիւն ներշնչել, և մի օր Մասուդ
խանը հրաման ստացաւ գնալ Խորասան ստանձ-
նելու թիւրքմէնների դէմ ուղարկուած զօրքի
հրամանատարի պաշտօնը, բայց դրա հետ միա-
սին հօր պաշտօնը յանձնուեց քսան և մի տարե-
կան որդուն, միրզա Ալի-խանին, որին և շնոր-
հուեց Գավամ-Դօվլէի բարձր տիտղոսը: Այդ մի-
ջոցով հաջի Միրզա-Աղասին ազատուեց մի լուրջ
ախոյեանից, որովհետև թէև երիտասարդ միրզա
Ալի-խանը նոյնպէս ֆրանգի-մաաբ էր, գիտէր
նաև ֆրանսերէն—մի հանգամանք որ շատ ազ-
դել էր նրան արտաքին գործերի մինիստրի պաշ-
տօնը տալու վճռի վրա – բայց նա անփորձ լինե-
լով, մանաւանդ, իբրև երիտասարդ, անձնատուր
լինելով մոլի զուարճութիւնների և հարեմական
բերկրանքների, չէր կարող վտանգաւոր լինել:
Եւ հէնց այդ մոլութիւնները դարձան ապագա-
յում թէ երիտասարդ մինիստրի և թէ հօրը անկ-
ման ու կործանման պատճառը: Պէտք ունենալով
դրամի իր ցոփ ու շուայտ կեանքի համար, միր-
զա Ալի-խանը սկսեց աջ ու ձախ կաշառներ,
փէշքէշներ վեր առնել. այդ, թէև, տիրող ընդ-

հանուր սովորութիւնն էր և ոչ ոք՝ սկսած մեծ վիզիրից մինչև վերջին մուստօֆին զուրկ չէր այդ յատկութիւնից, բայց խորամանկ Հաջի Միրզա-Աղասու ձեռքում ծառայեց զէնք երիտասարդի և հօրը դէմ։ Կաշառակերութիւնը Պարսկաստանում սիստեմի է վերածուած. ամենքը գիտեն և ամենքը ուտում են, բայց նա ծառայում է և իբրև զէնք մեծերի ձեռքում, երբ կամենում են կործանել փոքրերին կամ ազատուել մրցակիցներից…

Հաջի Միրզա-Աղասին բարձրաձայն արտասանեց. «եա րէբ-ուլ-ալէմին»[1]), «Լա-իլլահ-իլ-Ալլահ, Մուհամէդ-էլ րասուլ-Ալլահ. Ալի Վալլի-ուլլահ»[2]), և դառնալով միրզա Ալի-խանին, որ ձեռքերը կրծքին դրած, կանգնած էր դռան առաջ, ի նշան յարգանաց և խոնարհութեան, ասաց.

«Բիսմուլլահ[3]), Գավում-Դօվլէ, նստիր. այս րոպէիս կը վերջացնեմ»:

Երիտասարդ մինիստրը այնուամենայնիւ կանգնած մնաց:

Նորից լսուեց ծերու ձայնը՝ «Լա-իլլահ». ապա մրմնջիւնը դադարեց. սադրազամը անցաւ նստեց իր մինդարէյի վրա, հագնելով գուլպաները և հանելով բազմաթիւ գրպաններից մինից մի սպիտակ, քըր-

---

1) Ով ստեղծող տիեզերքի։ 2) Չը կայ Աստուած բացի Աստծուց. Մահմէդը՝ Աստծու Մարգարէն, Ալին՝ Աստծու փոխանորդը։ 3) Համեցէք։



տինքից իւղոտած արախչին, դրեց գլխին: Ձեռքի թեթև շարժումով նա նորից հրաւիրեց մինիստրին նստել. սա չոքեց մինդարի մօտ։

—Ինչալլահ, ձեր օրհնեալ ստամոքսը (մէզաջ չէրիֆ) լաւ է, գլուխ տալով ասաց միրզա Ալի-խանը։

—Փառք Ալլահին, իսկ ձեր հալը ինչպէս է։

—Ձեր բարձրութեան հովանին որքան իմ գըլխին է, միշտ լաւ եմ. թող չը պակասի ձեր ստուերը իմ գլխից:

Եւ ապա, խորհրդաւոր դէմք առնելով, Գավամ-Դօվլէն յարեց.

—Ռուսաց վէզիր-մուխտարի աւագ թարգմանը նորից եկել էր. խստիւ պահանջում է, որ դրական պատասխան տանք. ասում է, լաւ չէ գըրգռենք իմփէրաթօրի[1]) զայրոյթը. որքան շուտ վերջացնենք գործը, այնքան լաւ։

—Լաւ, ասաց սադրազամը, այստեղ մի բան կայ. ես չեմ հասկանում թէ ինչու՞ այդ քաֆիր ռուսները մի աղի և անպէտք ջրի համար այդքան փող են խոստանում մեզ. ախր ինչի՞ է պէտք մի ջուր, որ ոչ խմել կարելի է և ոչ դաշտերը ոռոգել, ոչ էլ ձուկն ունի մէջին: Դու ինչ ես կարծում:

—Ի հարկէ, հրաման ձեր հրամանն է, բայց երևի ռուսների համար այդ Խըզըր ծովը[2]) շատ

---

1) Կայսր։ 2) Կասպից ծովը։

կարևոր է. ախր կարող են նրա վրա նաւ բանեցնել:

—Ինչքան ուզում են թող բանեցնեն, մեզ ինչ. դու այն ասա, ինչքան են խոստանում տալ:

—Հինգ հարիւր հազար բաջախլու, իսկ ձեզ էլ 100,000 և առաջին կարգի նշանչան։

—Իսկ ձեզ, ինչքան են տալիս։

—Ձեր հովանին թող պակաս չը լինի գլխիցս. ինձ էլ, ի հարկէ, ձեր պատուի համար չեն մոռանայ։

—Շատ լաւ, ուրեմն այդպէս էլ եադդաշտ արա, որ Շահին արզ անենք. ռուսները կամենում են, որ Կասպից ծովի կէսը, որ մերն է, իրանց տանք. որովհետև այդ ծովի ջուրը անպէտք է, աղի, անհամ, վարուցանքսի էլ անօգուտ, ուստի բարւոք է տալը, մանաւանդ որ Շահի խազինէն կը հարստանայ և ռուսներն էլ մեզ բարեկամ կը մնան:

—Բայց մասլահաթ չէ՞ք տեսնում շուրա[1] անել:

—Ո՞վ պէտք է լինի շուրայում, շահզադէնե՞րը. նրանց ինչ խելքի բանն է, նրանք ինչ գիտեն. ինչ շուրա անելու բան կայ. աղի, անհամ ջրի համար այդքան փող են տալիս, դեռ նազ պէտք է անե՞նք։ Երբ Շահը կամենայ, ո՞վ այլ ևս կը համարձակի խօսել. այդպէս չէ՞։

---

1) Պետական խորհուրդ։



—Բէլի, բէլի, պատասխանեց միայն արտաքին գործերի մինիստրը և ապա յարեց.

—Ինգլիզի վեզիր-մուխտարը ուղարկել էր իր թարգմանին ասելու, որ մօլլաները սպառնալիք են կարդում քաղաքում հրէաներին, գրգռում են ամբոխը. խնդրում է պատժել խռովարարներին։

—Շատ դժուար է ջհուդների գործը. Իմամջումէն և սէյիդները չեն հանդարտի մինչև աղջկան չը տանք իրանց, իսկ աղջիկը հօր հետ բէստ է մտել Շահի ախոռատունը. այնու ամենայնիւ դու միամտցրու ինգլիզի վեզիր-մուխտարին, որ հրէաների մասին միամիտ մնայ. պէտք է Աբբաս խան սարդարին հրամայել, սարբազներ դնի ջհուդների թաղում և հսկէ որ իջմա[1] չը լինի։

—Ձեր հրամանները ճշտութեամբ կը կատարուեն, պատասխանեց միրզա Ալի խանը և վեր կենալով, խոր գլուխ տուեց ու դուրս եկաւ։

Փիշխըդմէթը ներս մտաւ չաղ արած ղէլյանը ձեռքին, չօքեց մի ծնկի վրա և ներկայացրեց ղէլյանի եղեգնեայ ծայրը:

—Ներս կանչեցէք ջհուդներին, հրամայեց սադրազամը, գլգլացնելով ղէլյանը։

Մի քանի րոպէից յետոյ նախասենեակում մի տեսակ իրարանցումն տիրեց. երբ վարագոյրը բարձրացաւ, Սէլիմ չաթիրը մրմնջաց ներս մըտ-

---

1) Յարձակումն, գրոհ տալ։

նող ծերունի հրէայի ականջին. «Ղօչաղ կաց, չը վախենաս, համարձակ խօսիր»:

Հինգ ծերունիներ էին ներս մտնողները, հագնուած բոլորովին պարսկական տարազով, երկար մորթէ գտակներով, ղադաք արխալուխով, ջուբայով. միայն ղադաքի վրա կարած կարմիր կըտորի նշանակը ցոյց էր տալիս, որ նրանք պատկանում են Ալլահից անիծուած ցեղին: Առաջին ծերունին, որ միւսների առաջնորդն էր երեւում, ձեռքին բռնած ունէր մի փոքր արծաթեայ մատուցարան, վրան մի փոքրիկ, Թիրմա շալից կարած սփռոց գցած. մտնելով սենեակը, ծերունիները խոր գլուխ տուեցին սադրազամին և չարուեցին դռան առաջ. առաջնորդ-ծերունին, մօտեցաւ, մատուցարանը դրեց հաջի Միրզա-Աղասու առաջ և վերցրեց ծածկոցը. մատուցարանի մէջ դրուած էր յիւլունքով կարուած ջիբի երկու քիսաներ, մէջը լցուած բաջախլուներով:

—Այս ինչ է, Խախամ-բաշի, հարցրեց սադրազամը ծերունուն,

—Շահի և ձեր գլխին Թասատուղ է, ներողութիւն արէք աւել-պակասի համար. մեր գլխի տէրը դուք էք. Աստուած և մեծ մարգարէ Մովսէսը չը պակասեցնեն մեր գլխից ձեր ստուերը. սէյիդները, մօլլաները սպառնում են մեզ փողոցներում, բազարներում, թէ մեզ կը կոտորեն, կ'աւերեն մեր Թաղը. մենք ինչ յանցանք ենք գործել, մի՞թէ մենք Աստծու արարած չենք, Շահի հպատակ չենք. մի՞թէ մենք հարկ չենք վճարում:



—Նստի՛ր, նստիր, Խախամ-բաշի՛, մի՛ վախենաք, Շահի հովանին միշտ ձեր վրա է, ձեր գըլխից մի մազ անգամ չի պակասի. բայց ասացէք, խնդրեմ, դուք խելօք մարդ էք, արժէ՞ մի քածի համար, մի աղախնի համար այդքան աղմուկ հանել, գրգռել Իմամ-ջումայի բարկութիւնը. կնիկարմատը ինչ բան է, որ նրա պատճառով ամբողջ ժողովուրդը զինաւորէք ձեր դէմ:

—Ա՛ղա, ձեր գլխին զուրբան, լաւ էք հրամայում, բայց ինչ հողը տանք մեր գլխին, որ մեր կանայք և աղջիկները չեն կարող մեր փողոցներում ազատ պտտել. Մենք ոչոքի ներողութիւն չենք տալիս. հօ չենք կարող գնալ Ինգլիզի, մոսկօֆի դրօշակի տակը մտնել. մեր տէրը Շահն է, դուք էք. ձեզ էլ դիմում ենք և աղերսում պաշտպանել մեզ:

—Միամիտ մնացէք. ես ձեր նուէրը գըբլէյի ալէմի սպասին կը ներկայացնեմ և ինչ որ հարկն է արգ կ'անեմ. դուք գնացէք միամտացրէք ձեր ժողովրդին,—ասաց սադրազամը և քսակները վեր առնելով դրեց ծոցը:

Հրէաները նորից խոր գլուխ տալով յետ-յետ գնացին դէպի դուռը:

Հազիւ վարագոյրն ընկել էր հրէաների ետեւից, որ մի սև, խափշիկ մանկլաւիկ շտապով ներս մտաւ և ասաց. «Շահը հրամայեց, աղա, որ այս րոպէիս գնաք իր սպասին»:

—Իսկոյն, իսկոյն, պատասխանեց սադրազամը, և դառնալով դէպի դուռը, գոչեց իր սուր ձայնով.

—Բէչչա, կօչիկներս:

Բայց հազիւ սադրազամը մի քանի քայլ առաջ էր գնացել Թալարում, երբ Թալարի ներքևի դռան վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ սպիտակ ջուբբան վրան գցած, գաւազանը ձեռքին՝ Իմամ-ջուման, իսկ նրա ետևից սէյիդների և մօլլաների մի ամբողջ գրոհ:

Սադրազամը կանգ առաւ. միրզաները, մուստօֆիները, ֆէրրաշները ամենքը մօտեցան Աղայի աջը և քղանցքը համբուրելու:

—Բիսմըլլահ, բիսմըլլահ, ասաց սադրազամը, տանելով Իմամ-ջումային իր առանձնասենեակը, որից նոր էր դուրս եկել:

Սադրազամը նստեց մինդարէյի վրա և իրանից բարձր նստացրեց Իմամ-ջումային: Անմիջապէս փիշխըդմէթներից մինը մի փոքր սրուակով վարդաջուր բերեց և Իմամ-ջուման լցնելով բուռի մէջ վարդաջուրը, շփեց երեսը և մօրուքը:

—Շատ ի լ թ ի ֆ ա տ [1]) էք արել, աղա, դ ա ր խ ա ն է ն [2]) գալով, ի՞նչ նոր բան կայ:

—Էլ ինչ պէտք է լինի, աղա սադրազամ, յուզուած և գրգռուած ձայնով ասաց Իմամ-ջուման. իսլամ երկրում, Մահմէդ-Շահի Թագաւո-

1) Շնորհ: 2) Պալատ:



րութեան ժամանակ, հաջի Միրզա-Աղասու սադրազամութեան ժամանակ մուրտառ ջհուդները ծաղրում և անգոսնում են մեր սուրբ դենը և մենք տանում ենք այդ անպատուութիւնը, համբերում ենք. մի՞թէ այս օրն էլ պէտք է տեսնէինք:

—Հանդարտուեցէք, աղա, ամեն բան կը դրստուի, կարգի կ'ընկնի. արժէ մի ջհուդ քածի համար այդքան վրդովուել. ինչ անենք, եթէ բռնութիւն գործ դնենք, ինգլիզի և ռուսի դեսպանները կը միջամտեն և մեր տէրութեան համար լաւ չի լինի: Դուք մի քիչ համբերեցէք, ես գուցէ կարողանամ համոզել ջհուդներին, որ աղջկան յետ տան. նրանք բէստ են մտել Շահի ախոռատունը. հօ բէստից զոռով հանել չենք կարող:

—Մի՞թէ համբերելը սրանից աւելի կը լինի, ասաց Իմամ-ջուման. հազրաթը Աբբասի գլխով երդւում եմ, որ ժողովուրդը վաղուց հիմնայատակ արած կը լինէր ջհուդների Թաղը, եթէ ես ֆիթվան տուած լինէի. ինձ հանգստութիւն չեն տալիս: Ո՞վ էր տեսել մինչև այժմ, որ ջհուդը համարձակուի ձի նստել, առաջից լապտեր տանել տալ, իսկ այժմ այդ մուրտառները այդ էլ են անում. չէ՛, հաջի, իսլամը բոլորովին ոտնատակ եղաւ:

—Մեծ է մարգարէի զօրութիւնը, իսլամը միշտ զօրաւոր է եղել և կը լինի, աղա, բայց փօլիտիկ

պէտք է բանացնել: Ես հենց այժմ արդ կ'անեմ Շահին, որ դուք չնորհ էիք բերել և կը հաղորդեմ ձեր ասածները. հանդարտեցրէք ժողովուրդը:

Փիշխըդմէթը ներս բերեց սուրճ, բայց ոչ թէ շաքարով, այլ չամիչով. Իմամ-ջուման սովորութիւն չունէր անհաւատների ձեռքով պատրաստած շաքարը ճաշակել:

Նորից երևաց խափշիկի գլուխը դռան շէմքում. «Շահը բարկանում է, հրամայեց այս րոպէիս գաք»:

—Իսկոյն, իսկոյն. աղա, ներող եղէք, Շահը կանչում է, ասաց սադրազամը և սուրճը ձեռից թողնելով, հետևեց խափշիկին:

Վերկացաւ և Իմամ-ջուման և նոյն մեծարանքի, երկրպագութեան մէջ հեռացաւ, մրմնջալով աղօթք և շարժելով ձեռքում սև համրիչը:

Սէլիմ չաթիրը դրեց Իմամ-ջումայի առաջ չըմուշկները և խոր գլուխ տուեց, մրմնջալով կռանալիս. «սպասիր, ես քո հախից կը գամ, քո փորացաւդ ջհուդի գեղեցիկ աղջիկն է. տեսնենք»:

—Հա, հաջի-Սէլիմ, դու ես, քէֆդ լաւ է:

—Ձեր աղօթքով, աղա, ապրում ենք:

Եւ չըթունքները մօտեցրեց աղայի քղանցքին:



## VI

Ծերունի սադրազամը հեալով, երենեայ գաւազանը խփելով դարխանի սալայատակներին, հասաւ Շահի պալատի դուռը: Դռնապանը, խոր գլուխ տալով, բարձրացրեց կարմիր մահուդէ վարագոյրը, որ ծածկում էր դռան մուտքը և թողեց անցնել սադրազամին, որին հետևում էին Սէլիմ չաթիրը և խափշիկ սև դուլը[1]).

Հաջի Միրզա-Աղասին մտաւ պալատի բ ի ր ո ւ ն ի[2]) մասը. դա մի ընդարձակ պարտէզ էր, կամ աւելի ճիշտն ասած, մի լայնատարած այգի, շրջապատուած չորս կողմից շինութիւններով: Լայն ծառուղիներ, դարևոր չինարի հաստաբուն ծառեր, բազմատեսակ և բազմերանգ ծաղիկներ, որոնց մշակութիւնը այնքան զարգացած է Պարսկաստանում ամենահին ժամանակներից. այգու կենտրոնում լճանման մի մեծ մարմարեայ աւազան, բազմաթիւ շատրուաններով, որի վրա ծփում էր մի փոքրիկ նաւակ և որի վճիտ ջրի մէջ լող էին տալիս կարպներ, իսկ անկիւններում փոքրիկ աւազաններ, ջրի փոքր առուներ ծառաստանների երկու եզրերով, մանաւանդ

1) Ստրուկ. 2) Պարսկաստանի բոլոր տները բաժանւում են բ ի ր ո ւ ն ի և է ն դ է ր ո ւ ն ի (դրսի և ներսի) մասերի. առաջինը յատկացրուած է տղամարդկանց, երկրորդը՝ որը կոչվում է նաև հ ա ր ա մ խ ա ն ա յ—կանանց:

կարմիր, սպիտակ և դեղին վարդերի, անուշաբոյր նարգիզների թփեր. թռչունների դայլայլիկները, առատ հոսող ջրի զովութիւնը և կարկաչիւնը՝ այդ ամենը դրախտի տեսք էր ընծայում ընդարձակ այգուն և մեղկալի հեշտասիրութիւն էր գրգռում այն մահկանացուի մէջ, որ արժանանում էր գերագոյն բախտին՝ մտնելու այդ դրախտը։ Այդտեղ տիրում էր լռութիւն. ամեն մարդ, այգեպան, ծառայ, դռնապան, սենեկապան, նոյն իսկ սադրազամը քայլում էին հանդարտ, անաղմուկ, որովհետև ենթադրվում էր, որ Տիեզերքի Բևեռը կարող է չորս կողմի շինութիւնների դահլիճներից մինում նստած լինի՝ ղէյլան ծխելիս, կամ սատրանջ խաղալիս և կամ այգում, սաղարթախիտ ծառերի ստուերների տակ հանգստանալիս։ Զգոյշ և խոհեմ վեզիրները, սարդարները, սպասալարները, փիշխըդմէթները հէնց մտնում են այգին թէ ոչ, հարկ են համարում խոր գլուխ իջեցնել դէպի այս և այն կողմը, ուր կարող է աներևոյթաբար բազմած լինել Շահը։

Սովորաբար, գարնան և ամառը, ցերեկները, Շահը գտնվում է պալատի արևմտեան կողմի բաժնում, թանգարանին կից սրահներում. այդ կողմի շինութիւնը ձգւում է մինչև հարամխանայի դուռը։

Սադրազամը անցաւ մեծ աւազանի կողքով, մտաւ ընդարձակ ծաղկանոցը կամ նարընջա-



տունը, ապա բարձրացաւ սանդուխներով և մտաւ այն թալարը, ուր առաւօտեան Շահը արել էր նախաճաշը. այդտեղ սենեկապան չահգադէն յայտնեց, որ Շահը կողքի փոքրիկ առանձնասենեակումն է և անհամբեր սպասում է նրան։ Մի քանի րոպէ կանգ առնելով և շունչ քաշելով, մեծ վեզիրը շփեց մօրուքը, դրստեց ջուբբայի թևերը, գլխարկը և նշան արեց փիշխըդմէթին՝ բարձրացրել առանձնասենեակի վարագոյրը։ Շահը նստած էր մինդարէի վրա, իսկ առաջին՝ չոքած էր մունէջջիմ-բաշին, որ մէջտեղ դրուած նարդի զառերը ձեռքին խաղացնում էր։ Ականակուռ ղէյլանը մի ձեռքին բռնած, միւսով սուրճի փոքրիկ ոսկէ ֆինջանը, Շահը հազիւ տեսաւ ծերունի սադրազամին, որ ֆինջանը, գետին դնելով, ձեռքով ցոյց տուեց մունէջջիմ-բաշու մօտ չորքոտանու նման չոքած, խայտաբղէտ հագուստով մի տղամարդի, գլխին չալի փաթոթ դրած. նրա մէջքը համետուած էր՝ մետաքսեայ կերպասի երեսով և ծոպերով մի փոքր փալանով։ Դա պալատական ծաղրածուն կամ կատակաբանն էր, որ պաշտօն ունի զուարթացնել և ուրախ տրամադրութիւն ներշնչել արքաների արքային ամեն անգամ, երբ տխրութիւնը պատում է նրան։ Մի անգամ, կատակաբանութեան համար, Շահը, իբրև պատիժ, հրամայել էր միրախուրին բերել տալ ախոռատնից՝ փոքրիկ չահգադէնների հեծնելու փոքրիկ էշերի համետներից մինը և երբ հա-

մեար դրել էին «Հիւսն-ու-Մէմալիք»[1] (այդպիսի մականուն էին տուել պալատական ծաղրածուին իր ոգեղութեան համար) մօլլա Գասըմի մէջքին, Շահը ասել էր. «Տեսնո՞ւմ ես, ինչ հիանալի խալաթ եմ տալիս քեզ»։ Մօլլա Գասըմը, օգուտ քաղելով ծաղրածուի խրատներից[2], անմիջապէս պատասխանել էր.—Շատ շնորհակալ եմ, որ ձեր մ ո ւ բ ա ր է ք թ է ն փ ո ւ շ ի ն[3] ինձ արժանացնում էք։ Շահը ստիպուած էր կլլել այդ վիրաւորական սրախօսութիւնը և ծածկելով զայրոյթը, քահքահ ծիծաղել, ասելով. «Այս անգամ կատակդ լաւ տեղին ասացիր. պէտք է կրկնես սադրազամի առաջ ևս»։ Եւ հրամայել էր անմիջապէս կանչել հաջի Միրզա-Աղասուն.

—Ա՛խ, հաջի Միրզա-Աղասի, չարունակ ծիծաղելով ասաց Մահմէդ Շահը, տե՛ս այս նզովից արմատը ինչ է ասում. շատ փ ե դ է ր - ս ո ւ խ տ ա ն է. կրկնի՛ր ասածդ։

—Աշխարհիս աղօթարանը շնորհ է արել ինձ խալաթ տալով, որ ահա մէջքիս դրուած է. ես էլ արդ արի որ թէնփուշը մուբարէք է։

[1]) Երկրների գեղեցկութիւն։ [2]) Արեւելեան երկրներում, ծաղրածուները ամեն տեսակ հանաք և սրախօսութիւն կարող են անել, և աւանդութեան համաձայն, նրանք չեն կարող պատժի ենթարկուել նոյն իսկ, եթէ սրախօսութիւնները վիրաւորական լինեն թագաւորի համար։ [3]) „Շնորհաւոր մարմնի ծածկոցը“. Չը պէտք է մոռանալ, որ Շահերը պարգև տալիս են իրանց անձնական զգեստներից, խալաթներից։



Սադրազամի դէմքը մռայլուեց. մի րոպէ նրա մտքով անցաւ օգուտ քաղել ծաղրածուի այդ անլուր յանդգնութիւնից և ֆալախկի հարուածները զգացնել տալ նրան այն բազմաթիւ վիրաւորական կատակների համար, որոնց ենթարկուել էր և ինքն պալատականների ներկայութեամբ, բայց խոնարհուելով աւանդական սովորութեան առաջ որ անձեռնմխելի և անպատիժ դիրքի մէջ է դնում կատակաբաններին, նա փոխեց միտքը և կամեցաւ գրաւել մօլլա Գասըմի սիրտը։

—Ղուրբան, ասաց նա Շահին, մօլլա Գասըմի այդ պատրաստախօսութեան համար, արժէ իսկապէս նրան խալաթ տուած փալանի համար իր նման հեզ մի աւանակ ևս բաշխել, որ վրան հեծած՝ ման գայ մայրաքաղաքի փողոցներում։

—Աֆէրիմ[1], հաջի Միրզա-Աղասի, վրա բերաւ ծաղրածուն, երևում է, որ քո գարշապարում աւելի խելք կայ, քան մեր մունէջիմ-բաշու գըլխում. դու իսկոյն գուշակեցիր իմ իղձը, իսկ մունէջիմ-բաշին իր բոլոր աստղերի օգնութեամբ չը կարողացաւ գուշակել, որ այսօր ստիպուած կը լինի մուռտառ ջհուդների հետ մի ախոռում դարման ուտել։

Մունէջիմ-բաշին կաս-կարմիր կտրեց բարկութիւնից և կայծակնահար նայուածք ուղղեց կատակաբանին։

[1]) Կե՛ցցես։

Շահը սաստիկ ծիծաղից համարեայ թուլացել էր:

—Շուտ, շուտ, հրամայեց նա, գնա՛, մօլլա-Գասըմ, միրախուրին ասա՛ մի լաւ էշ տայ, տար կապիր տանդ։

Ծաղրածուն վեր թռաւ յանկարծ, վեր առաւ համետը և էշի նման տռտինկ տալով, դուրս եկաւ սենեակից: Նրան հետևեց և մունէջիմ-բաշին, սադրազամի մի ակնարկի վրա:

Փիշխըդմէթները ներս բերին էսրանէն—նախընթրիքը, որ բաղկացած է լինում բացառապէս պտուղներից և կանաչեղէնից—արծաթեայ մատուցարանների մէջ։ Այդտեղ կար—կեռաս, թութ, սալոր, վարունգ և հազար-քեահու, որ պարսիկները մեծ հաճոյքով ուտում են գարնան, իբրև առողջարար և մաքրող բանջար խաքէնջիբիի[1]) հետ։

Շահը սկսեց քեահու ուտել. սադրազամը չոքեց նրա առաջ և հանեց գօտուց թումարը, ասելով.

—Ղուրբան, կարևոր արզեր ունեմ անելու և շտապողական։

Շահը գլխի նշանով յայտնեց որ կարող է սկսել։

Այդ միջոցին վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ խափչիկ ղուլը ականջից արծաթեայ օղեր—

1) Քացախի և մեղրի խառնուրդ։



ստրկութեան նշանը՝ կախած: Հաստ, ածուխի նման սև, դուրս ցցուած շրթունքի արանքից երևում էին ձիւնափայլ սպիտակ ակռաները. գլխի խճճուած մազերը այնքան խիտ էին, որ աւելի նման էին մի կտոր թաղիքի, քան մարդկային մազերի: Նա խոր գլուխ տուեց և լուռ, արձանի նման անշարժացած՝ կանգնեց։

—Ի՞նչ կայ, ասաց Շահը:

—Ներքինապետը հրաման է խնդրում ձեր արեգակնափայլ աչքերի առաջ երևալ:

—Թո՛ղ երևայ։

Խափչիկը բարձրաձրեց վարագոյրը և ձեռքով կանչեց ներքինապետին, որ սպասում էր թալարում։

Ներս մտաւ գիրուկ, աչքերը փոքրիկ, երեսի կաշին եփած խնձորի տեսք ստացած, անմազ և անորոշ տարիքաւոր մի մարդ. առաջին ակնարկից կարելի էր կարծել, որ նա հազիւ 25 տարեկան մի երիտասարդ լինի, մանաւանդ երբ լսում էր նրա բարակ, սուր, կանացի ձայնը, բայց զննող աչքը իսկոյն կը նկատէր, որ նա ծերունի է, իսկ կերպարանքի անբնական յատկութիւնները կամ հակաբնական խոտորումները հետևանք են այն անգութ և հակամարդկային գործողութեան, որին ենթարկվում են ներքինիները իրանց մանկութեան ժամանակ—ներքինացման։

Եւ սակայն այդ գիրուկ, դառնացած, հակաբնականացրած հեզ ու խոնարհ ծերունին ամե-

նահզօր պաշտօնեան էր Շահի ամբողջ պալատում և հարիւրաւոր գեղանի, գեղածիծաղ, ջահել աղջկերք ու կանայք, որոնց համար երիտասարդները հոգի էին տալիս, դողում էին այդ ամենահզօր ծերուկի առաջ և նրանից սպասում իրանց բախտը և երջանկութիւնը. նա հարէմի տէրն էր ու իշխանը. նա խօջա-բաշին էր։

Ներքինապետ Հուսէյն-աղան խոր գլուխ տալով Շահին, ձեռքերը ծալեց կրծքի վրա և լուռ կանգնեց։

—Ի՞նչ կայ, Խօջա-բաշի, հարցրեց Շահը, ամեն բան կարգի՞ն է հարէմխանում։

—Ձեր չահնշական ողորմութեան հովանին քանի որ տարածուած է մեր գլխին, թուչունը իր թևով, ջինը իր հմայքով և կախարդութեամբ մեր կողմերը մօտենալ չեն կարող. հարէմխանէն ուրախ, զուարթ, առողջ, ձեր թանկագին կեանքի համար աղօթելով է զբաղուած։ Այիշա-խանըմը, Էնիս-ուլ-Դօվլէն[1]) համբուրելով ձեր գարշապարը, աղաչում է, որ այս գիշեր ձեր արևով լուսաւորէք նրան և իր հետ անցկացնէք. երկու նոր կաքաւող գեղեցիկ աղախիններ են ուղարկել նրան Շիրազից, կամենում է, որ տեսնէք և մի քիչ զուարճանաք։

—Շատ լաւ, չատ լաւ, բարև արա Էնիս-ուլ-Դօվլէին և ասա, որ այս գիշեր իր հետն եմ. ես

1) Զարդ պետութեան։ Շահի կանայք ես տիտղոսներ էն կրում։



վաղուց ցանկանում եմ նրա մօտ լինել. ասա, որ ընթրիքն ես իր մօտ կ'անեմ։

—Թող Ալլահը և նրա մարգարէն երկարացնեն ձեր թանկագին կեանքը։

Եւ ներքինապետը յետ-յետ գնալով, դուրս եկաւ։

Նրա ետևից դուրս եկաւ և խափշիկ ղուլը. նա կանգնեց վարագոյրի առաջ թալարում, թոյլ չը տալու համար, որ ոչ ոք մտնի, ասելով, որ խալվաթ[1]) է. նա երևում էր անտարբեր, նոյն իսկ երբեմն-երբեմն խօսքեր էր ասում թալարում նստած փիշխըդմէթներին, բայց ականջը սրած աշխատում էր լսել վարագոյրի ետևից սադրազամի և Շահի խօսակցութիւնը։

Ներսում, սադրազամը սկսեց զեկուցանել Շահին մի առ մի իր արած կարգադրութիւնները, ստացուած առաջարկութիւնները, յիշատակագրերը, ոսկինները, այն ամենը ինչ որ առաւօտեան կարգադրուել էր փիշքար Մուշիր-ուլ-Միւլքի հետ։ Շահը գլխի շարժումով հաւանութիւն էր տալիս սադրազամի կարգադրութիւններին, կամ երբեմն սահա[2]) էր դնում թըղթերի վրա։

—Այժմ պէտք է, արզ անեմ, ղուրբան, ասաց ձայնը ցածրացնելով սադրազամը, որ Բէգլար-

1) Առանձնութիւն, գաղտնի նիստ։ 2) Սահի, ուղիղ. սահա դնել, նշանակում է վաւերացնել։

բէգին մի մեծ ծառայութիւն է մատուցել Ձեր Արքայական...

—Բէգլար-բէգին, ընդհատեց Շահը, ինչո՞ւ նրա մասին ամենից առաջ չը զեկուցեցիր, ինչո՞ւ այն մարդուկը սպանեց իրան. ի՞նչ եղաւ, քանի փայտ խփեցին Բէգլար-բէգուն ֆալախկայի մէջ։

—Դեռ ֆալախկայի չեն կապել նրան, ղուրբան։

—Ի՞նչպէս, դեռ չեն կապե՞լ. ո՞վ համարձակեց չը կատարել իմ հրամանը։

—Ես արդէն հարկաւոր կարգադրութիւնները արել եմ, բայց կամենում էի առաջ մի կարեւոր յայտարարութիւն անել...

—Ոչ, ոչ, առաջ ֆալախկան, այս րոպէիս։

Սադրազամը տեսնելով Շահի վճռողական հրամանը, որ իր համար անակնկալ էր, ծափ տուեց։ Մտաւ խափշիկ ստրուկը։

--Ուղարկիր անմիջապէս Մուշիր-ուլ-Միւլքին ասեն, որ Բէգլար-բէգուն բանտից հանեն և բերեն մեծ աւազանի մօտ, ֆէրրաշ-բաշուն էլ թող ասեն, որ բերել տայ ֆալախկէն և ճիպոտներ։ Երբ ամեն բան պատրաստ կը լինի, իմաց տուէք մեզ։

Եւ մոռանալով ամեն զգուշութիւն, սադրազամը ասաց Շահին այնքան բարձր ձայնով, որ դուրս եկող խափշիկը լսեց առաջին բառերը.

—Ղուրբան, Բէհմէն-միրզան պետական դաւաճան է, իսկ այդ մենք իմացանք շնորհիւ Բէգլար-բէգուն...



—Ի՞նչ, ի՞նչ ասացիր. եղբա՞յրս ինձ դէմ դաւադրութիւն է սարքում, մռմնջաց Մահմէդ Շահը գունատուած, դողդոջիւն ձայնով։ Երկիւղը կարդացվում էր նրա աչքերում և նրա հիւանդոտ դէմքը վշտալի արտայայտութիւն ստացաւ։

Խափշիկը շտապով հաղորդելով փէշխըդմէթներից մինին սադրազամի հրամանները, սկսեց վարագոյրի ետևից զգուշութեամբ ականջ դնել։

—Բայց ի՞նչ փաստեր կան, նուաղած ձայնով հարցրեց Շահը։

Սադրազամը պատմեց, ինչ որ Մուշիր-ուլ-Միւլքը հաղորդել էր։

—Բայց չահզադէների նրա մօտ գնալը, ինչպէս և ռուսաց թարգմանի նրա մօտ գալը, մի՞թէ ապացոյց են, որ նա դաւադրութիւն է սարքում մեր դէմ. չէ՞ որ կարող էին իբրև հիւրեր գնալ նրա մօտ—մի քիչ զայրացկոտ ձայնով հարցրեց Շահը։

—Դժբախտաբար, ես ունեմ մի ուրիշ փաստ։

—Ասա՛, որն է։

—Բէհմէն-Միրզան չէ՞ որ չարունակ աշխարհի ազօթարանից գլխացաւ էր տալիս իր խնդրագիրներով թէ դրամ չունի, խնդրում էր աւելացնել ռոճիկը, և մեծ գումար էր պահանջում վերադառնալու համար Թաւրէզ վալիահդի հետ։

—Հա, յետո՞յ։

—Նա այսօր 50,000 բաջաղլու է ուղարկել ինձ նուէր։

—50,000 բաջաղլու քեզ նուէր...

—Այո՛, զուլըրան։

—Եւ դու ընդունեցի՞ր։

—Ընդունեցի, որպէս զի նրան բոլորովին միամրտացնեմ և դաւադրութիւնը երևան հանեմ։

—Բայց ինչի՞ համար է ուղարկել քեզ։

—Նրա փէշքարն ասել է, թէ այդ գումարը շահզադէն տալիս է ինձ, որպէս զի բարեխօսեմ աշխարհիդ ապօթարանիդ առաջ, որ ձեր աչքը քաղցրացնէք նրա վրա և խնդիրները կատարէք։ Ես, զուլըրան—չարունակեց ծերունին սադրազամը, ձեր հաւատարիմ ստրուկն եմ, այդ 50,000 բաջաղլուն արքայական գանձարանը պէտք է մտնի, իբրև դաւադրի փող։

—Լաւ, բայց ո՞րտեղից է ճարել եղբայրս այդքան մեծ գումարը։

—Ի հարկ է, քանի որ նա ինքն չունի, ուրեմն նրան տուել են ռուսները, կամ ինգլիզները։

Շահի դէմքը բարկութիւնից և հոգեկան յուզմունքից պղնձագոյն դարձաւ. Նրա աչքերի մէջ փայլեց վայրագ կատաղութեան կայծ։

—Ալլահ, Ալլահ, պոռաց նա, իմ հարազատ եղբայրս ինձ դէմ դաւադրութիւն սարքի՞. բայց ոչ, ոչ, ես չեմ հաւատում, այդ անկարելի է. Նա շատ լաւ գիտէ, որ այդպիսի խաղով իր գլուխը կը թողնի։ Միթէ նա չը գիտէ Զիլլա-Սուլթանի վախճանը։

—Կամք ձեր արքայական կամքն է, բայց ձեր



հաւատարիմ ստրուկի խորհուրդն այն է, որ չարիքը իր սաղմի մէջ խեղդենք։

—Ի՞նչ, դու կամենում ես, որ ես նրան սպանել տամ, ձեռքս եղբօրս արեան մէջ թաթախեմ. երբէք։

—Հրաման ձեր արքայական հրամանն է, ասաց խորամանկ ծերունին, ես իմ պարտքս կատարեցի, Նախազգուշացրի։

Շահը խոր մտատանջութեան մէջ ընկաւ, գլուխը կախ գցեց. երբեմն թառանչ էր քաշում, երբեմն աղօթք էր մրմնջում, երբեմն խոշոր սաթէ համրիչն էր գցում։

Առաջին անգամն չէր, ի հարկէ, որ նա գլխատման հրաման պէտք է տար. քանի-քանի անգամ նա ստորագրել էր ֆիրմաններ, շատ անգամ նոյն իսկ բերանացի հրաման էր տուել «հանգստացնել», «խաֆա» անել[1]) այս և այն յանցաւորին, խանին, բայց հրամայել գլխատել իր սեպհական եղբօրը, հարազատ եղբօր արիւնը թափել, այդ անկարելի էր թւում նրան։ Ճիշդ է, շահզադէներին, նշանաւոր պաշտօնեաներին չեն գլխատում, իբրև հասարակ ոճրագործներ, այլ կամ մի փոքրիկ ֆինջան թունաւորուած սուրճ են համեցէք անում, կամ բաղնիքի տաք աւազանի մէջ երակն են բանալ տալիս, կամ կուրացնում են և կամ Ներքինացնում։ Երկու զգա-

---

1) Խեղդել։

ցումն կատաղի կռիւ էին մղում հիւանդոտ, ի բնէ բարեհոգի Շահի սրտի մէջ. եղբայրական զգացումը թելադրում էր չը թաթախել ձեռքը հարազատ եղբօր արեան մէջ. սեպհական անձի և թագի պաշտպանութեան զգացումը ներշնչում էր արիւնհեղութեան անհրաժեշտութիւնը. Ինքն Ազրայիլ հրեշտակապետը թելադրում էր այդ հաջի Միրզա-Աղասու դէմքով. վերջապէս չէ՞ որ իր նախորդները, իր հայրը, իր պապը այդպէս են վարուել. ո՞վ է մեղաւոր, ինչո՞ւ Բէհմէն-Միրզան տեղը հանգիստ չէ նստում, ինչո՞ւ ձգտում է զրկել իր աւագ եղբօրը, իր Շահին գահից և թագից, գուցէ և կեանքից. Երևի այդպէս է գրուած նրա ճակատին. երևի աջէլը[1] եկել հասել է. այդպէս է նախասահմանութեան կամքը. թող կատարուի ուրեմն ճակատագիրը. խեղճ եղբայր։

Շահը բարձրացրեց գլուխը. դէմքը մռայլ էր, յոգնած, աչքերը նուաղած։ Արդէն երեկոյ էր. արևը բաւական թեքուել էր. առանձնասենեակի բաց փէնջարայից[2] փչում էր պարտիզի զով և անուշաբոյր օդը. լսւում էր աւազանների մեղմ խոխոջիւնը։ Շահը վեր կացաւ, խփեց ձեռքերին և ներս մտնող փիշխըդմէթին հրամայեց ջուր բերել նամազի համար. այս անգամ բերին յախճապակեայ կոնք։ Կատարելով որոշած լուացումն,

1) Մահուան ժամը. ամեն մարդի աջէլը նախասահմանուած է։ 2) Լուսամուտ։



նա սկսեց նամազ կատարել, առաջուց մերկանալով իր վրա գտնուած բոլոր զարդերից և գոհարներից։

Սադրազամը նոյնպէս վեր կացաւ և լուռ կանգնած, մրմնջում էր ղուրանից հատուածներ։

Երբ Շահը վերջացրեց նամազը, նրա դէմքի վրա երևում էր վճռականութիւն. նա արդէն վճռել էր անելիքը։

Մութը սկսել էր կոխել։

«Ես չեմ կարող խաւարացնել եղբօրս կեանքը, ասաց նա սադրազամին, բայց թող նա կուրանայ. ահա մատանիս,—և հանելով մատից արքայական մատանին, տուեց սադրազամին.—վաղը յայտնիր իրան, որ իբր իր միջնորդութիւնները ընդունուած են և թող պատրաստութիւն տեսնի Թաւրէզ գնալու. նա կը միամտուի. ապա մի գիշեր ուղարկիր Աբբաս-խանին, դահճապետի հետ, թող աչքերը հանեն. կուրացած՝ նա անզէն կը լինի։ Ախ, Բէհմէն-միրզա, Բէհմէն-միրզա»։

Եւ Շահը արտասուեց։

Այդ միջոցին խափշիկ ստրուկը ներս մտաւ բազմաճիւղ ոսկեայ աշտանակը ձեռքին, որ դրեց սենեակի մէջտեղ, իսկ կողքին՝ մի ոսկեայ մաղաչ[1]. ճարպէ մոմի ճրագները աղօտ լոյս սփռեցին սենեակի մէջ. այդ աղօտ լոյսի փայլով, Շահի առանց այն էլ սաստիկ գունատուած

1) Ունելիք, որով կտրում են ճրագի քիթը։

դէմքը մեռելային գոյն էր ստացել. արտասուքը աչքերից շիթ-շիթ թափւում էին եւ մօրուքի վրա։

Խափշիկը լսեց միայն Շահի արտասանած վերջին բառերը, բայց նկատեց մատանու յանձնումը սադրազամին։

Այդ միջոցին մուէզզինի զիլ ձայնը Շահի մզկիթի մինարէից խզեց տիրող ճնշող լռութիւնը։

—Ֆէրրաշ-բաշին աղաչեց արզ անեմ, գլուխ տալով ասաց խափշիկը որ ֆալախկան պատրաստ է, Բէգլար-բէգուն էլ բերել են բանտից։

—Հա, շատ լաւ, քիչ էր մնացել մոռանայի. գնանք, սադրազամ, բրիլլիանտեայ[1] դահլիճը եւ տեսնենք ինչպէս են դաղում Բէգլար-բէգու ոտները—ասաց Շահը, ուրախացած կարծես, որ կարող էր բարկութիւնը թափել մէկի վրա։

—Բայց, ղուրբան, համարձակեց նկատել ծերունի սադրազամը, ես կարծում էի որ Բէգլար-բէգուն ներումն կը շնորհէք, քանի որ...

—Ոչ, ոչ, իր գործած յանցանքի համար նա պէտք պատժուի. հազրաթը Աբբասը վկայ, որ եթէ նա լիուլի բաւարարութիւն չը տայ այն խեղճ մարդուկին, նա կ'արժանանայ աւելի ծանր պատժի, իսկ խալաթ նրան կարելի է տալ վաղը, այն էլ քո խաթրի համար։

[1] Ադամանդեայ։



Իսկապէս Շահը սրտում դառնացած էր Բէգլար-բէգու դէմ. նա աւելի ուրախ կը լինէր, եթէ ոստիկանապետը երեւան հանած չը լինէր Բէհմէն-միրզայի դաւադրութիւնը։ Շահի սրտի մէջ դեռ խղճի խայթը խօսում էր. դաւադրութեան ստուգութեան մասին կասկածի նշոյլը դեռ չէր անհետացել նրա մէջ։

Փիշխըդմէթը աշտանակը ձեռքին առաջնորդում էր Շահին սենեակների միջով, որոնք ամենքն էլ լուսաւորուած լինելով ճարպէ կամ ճրագուի մոմերով, գրեթէ կիսամթութեան մէջ էին ընկղմուած. սադրազամը, ներքինապետը։ Իչիկ-աղասի-բաշին հետեւում էին Շահին։

Բրիլլիանտեայ դահլիճը, ուր մտաւ Շահը, պալատի լաւագոյն դահլիճներից մինն է, կից թանգարանին։ Նրա առաջն է ամբողջ այգին և հանդիսաւոր սէլամների ու ընդունելութիւնների ժամանակ Շահը սովորաբար այդ դահլիճումն է նըստում փոքրիկ գահի վրա։ Ամբողջ առաստաղը եւ պատերը ագուցուած են հայելիների փոքր կտորներով, որոնք լուսաւորութեան ժամանակ ադամանդի նման շողեր են արձակում եւ այդ պատճառով նա ստացել է «ադամանդեայ» անունը։

Գարնանային մեղմ, հովասուն երեկոյ էր. լուսինը իր ամբողջութեան մէջ գտնուելով, բարձրացած էր արդէն երկնակամարի վրա եւ նրա արծաթափայլ լոյսը, տարածուելով ծառերի, ծառաստանների, վարդի թփերի ու աւազանների

վրա, տալիս էր ամբողջ այգուն կախարդական, դիւթիչ տեսք։ Բաց փէնջէրէից, որ սենեակի մի ամբողջ պատն էր կազմում, բուրում էր ծաղիկների, վարդերի անուշահոտութիւն և փչում էր մեղմիկ զեփիւռ. այդ փէնջէրէի առաջ, գահի վրա, բազմեց Շահը։

Ուղիղ, դէմ առ դէմ ընկած է մեծ աւազանը. Նրա գլխի ծայրին կանգնած էին մի քանի ֆէրրաշներ, որոնց մէջ դողդոջուն և գունատուած՝ Բէգլար-բէգին. մի քիչ հեռու, փէնջէրէի առաջ, կանգնած էր ֆէրրաշ-բաշին, ակնդէտ սպասելով Շահի հրամանին։

—Սկսեցէք, հրամայեց Շահը։

Լուսնի տարածած աղօտ լոյսով կարելի էր տեսնել թէ ինչպէս ֆէրրաշները գետին գլորեցին Բէգլար-բէգուն, հանեցին ոտքից կօշիկները և գուլպաները, վեր քաշեցին վարտիքը և բարձրացնելով ոտքերը, դրին ֆալախկայի մէջ։ Սէլիմ-չաթիրը սկսեց ոլորել այն պարանը, որին պնդացրուած են ֆալախկայի տախտակները, զգուշանալով, ի հարկէ, շատ սեղմել։ Դէմքը դէպի երկինք ուղղած, ոտքերը բարձրացրած, Թէհրանի թշուառ ոստիկանապետը անշուշտ չէր կարող ազատուել ոտքի եղունգները թափուելուց և յետոյքի փափուկ միսը արիւնազանգ լինելուց, եթէ Մուշիր-ուլ-Միւլքը առաջուց հրահանգ տուած չը լինէր ֆէրրաշներին ճիպոտների և խարազանների գործածութեան մասին։



—Վայ, վայ, մեռայ, հոգիս դուրս եկաւ, ինձ գլխովդ պտոյտ տուր, ողորմած Շահ, բախշիր ինձ, դ ա լ ա թ [1]) եմ արել, քեզ ղուրբան—ահա այն աղիողորմ ձայները, որ արձակում էր Բէգլար-բէգին, ամեն անգամ երբ ճիպոտները բարձրանում էին օդում և իջնում ֆալախկայի վրա։ Այդ ձայնը սկսեց հետզհետէ նուազել, որից Շահը համոզուեց, որ յանցաւորը, ուժասպառ է եղել ցաւից և հարուածների սաստկութիւնից։

Ճիշդ այդ միջոցին սադրազամը սկսեց միջնորդել։

Շահը ձեռքով շարժումն արեց և ֆէրրաշ-բաշին պոռաց. «Բաւական է. թող Ալլահը երկարացնի Շահի կեանքը»։

Շահի բարկութիւնը իջել էր արդէն. նա սկսել էր նոյն իսկ փոշմանել, որ այդպիսի խիստ պատժի ենթարկեց ոստիկանապետին։ Դիմելով սադրազամին, ասաց.

«Սադրազամ, ներում եմ Բէգլար-բէգուն, ի նկատի ունենալով նրա նախկին ծառայութիւնները։ Թող նա գոհացումն տայ, ինչպէս հրամայում է շարիաթը, իր հարստահարած մարդի ընտանիքին, և վաղը վերահաստատիր նրան Բէգլար-բէգութեան պաշտօնում ու մեր սանդուղխանայից խալաթ թող ուղարկեն։ Այժմ ամենքդ մ ո ւ ր ա խ ա ս [2]) էք։ Ես գնում եմ էնդէրուն։

---

[1]) Մեղանչել եմ։ [2]) Արձակուած էք։

Անմիջապէս ներքինապետը վերցրեց աշտանակը և ընկաւ Շահի առաջը, որին այս անգամ հետեւում էին միայն խափշիկ ներքինիներ և Էշիկ-աղասի-բաշին։ Երբ հասան հարամխանայի դուան, վերջինս կանգ առեց։ Շահը, ներքինապետը և ներքինիները ներս մտան հարամխանայի բակը. վարագոյրը ցած ընկաւ և ծածկեց հասարակ մահկանացուների աչքից այդ խորհրդաւոր աշխարհի մուտքը։ Էշիկ-աղասի-բաշին հէնց հարամխանայի դուան առաջ նստեց, փաթաթուած՝ իր եափունջիի մէջ և ամբողջովին զինաւորուած ըսկսեց հսկել, որ այլ ևս ոչ մի արարած ոտքը չը կոխի դուան շէմքից. միայն նրա դիակի վրայով կարելի էր մտնել հարամխանան, իսկ հարամխանայում Շահի պահպանութեան պատասխանատուն ներքինապետն էր իր բազմաթիւ ներքինիներով։

Երբ Շահը հեռացաւ, սադրազամը շտապով իջաւ այգին, մօտեցաւ Բէգլար-բէգուն, որ իր աղիողորմ ողբերն աւելի սաստկացրեց «վայ տներս, վայ տներս» լացով։

—Վեր կաց, Բէգլար-բէգի, գիշերից յետոյ ցերեկ կայ, խաւարից յետոյ լոյս, փոթորիկից յետոյ խաղաղ օդ, պատժից յետոյ վարձատրութիւն։

—Շահը—թող Ալլահը պահպանէ յաւիտեան նրա տէրութիւնը և թագաւորութիւնը—իմ միջնորդութեամբ հրամայեց վերահաստատել քո պաշտօնը. վաղը խալաթը կը ստանաս. այժմ



գնա տուն. հանգստացիր և աղօթք արա աշխարհիս աղօթարանի արևշատութեան համար։

—Մեծ Մարգարէն թող վարձատրէ քո բարերարութիւնդ. ես քո ստրուկն եմ և նուաստ սպասաւորը։

Ապա սադրազամը դառնալով իր փիշքարին, ասաց. «Միւշիր-ուլ-Մուլք, գնա Բէհմէն-միրզա շահզադայի մօտ, արզ արա թէ Շահը կատարում է նրա բոլոր աղերսները և հրամայում է պատրաստութիւն տեսնել ու մինչև 4—5 օր գնալ Թաւրէզ, իր պաշտօնատեղին։

Խափշիկ ղուլը, որ ներկայ էր, գլուխը թօթուեց. Նա արդէն գլխի էր ընկնում իր բոլոր տեսածից և լսածից, որ Բէհմէն-միրզային, այդ առատաձեռն, զուարճասէր և գեղեցիկ երիտասարդ շահզադային վտանգ էր սպառնում ժլատ, չար ոգի, քաւթառ (ինչպէս նա անուանում էր) սադրազամի լարած թակարդներից։

Այդ միջոցին, յանկարծ մօտակայ ծառից, գիշերային լռութեան մէջ լսելի եղաւ չարագուշակ բուի անախորժ ձայնը։ Ամենքը սարսեցին. «անպատճառ մեզանից մէկի օրը խաւարուելու է», մտածեց ամեն մէկը և տխուր, տրտում ամենքը հեռացան։

Մի քանի րոպէից յետոյ ամբողջ պալատում տիրում էր գրեթէ գերեզմանային լռութիւն։

## VII

Անցեալ դարի քառասնական թուականներին Թէհրանը գրեթէ ոչնչով չէր զանազանւում Պարսկաստանի միւս քաղաքներից. Նոյն նեղ, գարշահոտ փողոցները, անանցանելի անձրև ժամանակ, նոյն ցեխի պատերը, մութ բազարները, որոնց մէջ տիրում էր նեխուած, ապականուած օդ, նոյն բաց ջրանցքները, որոնց մէջ կանայք լուանում են իրանց լաթերը, նոյն լճացած աւազանները, որտեղից ջրկիրները լցնում են ջրով իրանց թ ո ւ լ ո ւ ղ ն ե ր ը[1] և տանում ծախում բնակիչներին։ Բնական է, որ այդպիսի քաղաքում տարափոխիկ և վարակիչ հիւանդութիւնները անդադար կատարում են առատ հունձ, մանաւանդ մանկական աշխարհի մէջ։

Ռամազան ամսի սկիզբն էր։ Երեք օր էր անցել Բէգլար-բէգու յիշողութեան մէջ անջնջելի տպաւորութիւն թողած այն նշանաւոր երևոյթից, երբ խաւարին յաջորդեց լոյսը և Բէգլար-բէգու գանահարուած մարմինը արժանացաւ արքայական խալաթի մէջ ափածանուելու։ Ծոմապահութեան օրերն էին, երբ փողոցները, առաւօտից սկսած մինչև կէսօր, գրեթէ լուռ և դատարկ են լինում, որովհետև բնակիչները քնած են լինում, ամբողջ գիշերը անցկացրած լինելով կերուխումի

1) Ջրի տիկ։



մէջ։ Միայն կէսօրից յետոյ, սկսում են երևալ փողոցներում մարդիկ և շուտով բոլոր մզկիթները լցւում են աղօթողներով. այդ մզկիթներում նշանաւոր քարոզիչները բացում են հաւատացողների աչքի առաջ այն երանաւէտ դրախտը, լի հուրիներով և փէրիներով, ուր մեղր և կաթ է հոսում գետերի տեղ, կամ անմահական ջուր, որ վերապահուած է բոլոր մուսլիմներին։ Մզկիթները լիքն են լինում ոչ միայն տղամարդիկներով, այլև կանանցով, որոնք կամ նստում են ծալապատիկ խսիրներով ծածկուած յատակի վրա առանձին, կամ նոյն իսկ խառն տղամարդկանց հետ, դէմքերը պինդ ծածկած իրանց ուրբանդներով և տուգած՝ իրանց չ ա խ չ ո ւ ր ն ե ր ի[1] մէջ։ Այդ դրութեան մէջ կանայք կարող են խօսակցութեան մէջ մտնել տղամարդկանց հետ։

Արևմուտին կամ էզանին երկու ժամ մնացած բազմութիւնը դուրս է խուժում մզկիթներից և այն ժամանակ փողոցները մի առանձին կենդանութիւն են ստանում. ոգևորութիւնը տիրում է բազարներում. ամեն մարդ, նոյն իսկ ամենաաղքատը գնում է չ ի ր ի ն ի[2], և չիրինիվաճառների տօնն է ռամազան ամիսը. զանազան տեսակ փէշմակներ, րահաթ-լօխումներ, ղուրաբիներ, փ ա խ լ ա ւ ա ն ե ր[3], նաբաթներ, այլևայլ

1) Վարտիկ, վրայի փոխան։ 2) Քաղցրեղէն։ 3) Շաքարեղէն խմորի տեսակներ։

կարկանդակներ պատրաստվում են ահագին քանակութեամբ և դարձեալ սպառողներին դժուար է լինում գոհացնել։ Եւ ոչ միայն չիբինիվաճառները, այլ բոլոր վաճառողները—հացագործ, մսավաճառ, նպարավաճառ, պտղավաճառ, բոլոր բախկալները ընդարձակ և արդիւնաւոր առևտուր ունեն ռամազանի ամսին։ Եթէ ժողովրդի միջակ և չքաւոր դասակարգը սովորաբար, լի օրերում, բաւականանում է հացով, պանրով, կանաչեղենով, մածունով կամ թանով, ռամազանին, նոյն իսկ աղքատը, աշխատում է անպատճառ միս, պտուղ, չիբինի ունենալ իր ի ֆ թ ա ր ի [1]) համար։ Բարեկեցիկ և հարուստ դասակարգը արդէն պէտք է գեղխ, չռայլ իֆթար ունենայ. իսկ մեծամեծները, գլխաւոր պաշտօնեաները, ինչպէս սադրազամը, սպասալարը, բէգլար-բէգին և այլ վիզիրները ռամազանի ամիսը ահագին ծախսեր են սովորած անել և հարիւրաւոր, հազարաւոր մարդկանց իֆթար տալ. այդ այն միջոցն է, որով նրանք ժողովրդականութիւն են ձեռք բերում, հռչակվում իբրև «հացով» մարդիկ և գըրաւում են մանաւանդ հոգևորականութեան համակրութիւնը, որովհետև իֆթարին գալիս են, սովորաբար, աղքատ սէյիդներ, մօլլաներ, դէրվիշներ, թալաբաներ, որոնց անպատճառ փիլաւ պէտք է տրուի, իսկ այդ փիլաւը, օրինակ, սադ-

1) Երեկոյեան ընթրիքը ծոմից յետոյ։



րազամի տնում, պէտք է գոնէ հազար հոգու համար պատրաստուի, որովհետև առաջուց ամենևին յայտնի չէ, թէ որքան հոգի կը գան։ Շատ վատ նշան է, եթէ իֆթարի եկող բոլոր անկոչ հիւրերին չը կարողանան գոհացումն տալ։

Իֆթարից բացի կայ և ս ը հ ա ր ի—առաւօտեան ճաշը, որ ուտում են արևածագից առաջ, որովհետև արևածագից մինչև արևմուտ այլ ևս ոչինչ չէ կարելի ուտել, ո՛չ խմել, ո՛չ ծխել. պէտք է խիստ ծոմ պահել, նոյն իսկ խօսքի ծոմ, եթէ կարելի է, չը խօսել, այլ միայն աղօթել։ Կարելի է երևակայել, թէ որքան ահագին նեղութիւն և տանջանք է, երբ ռամազանը պատահում է ամառուայ ամիսներին. ամբողջ օրը, այն ևս այնպիսի տաք երկրում, ինչպէս Պարսկաստանն է, մի կաթիլ ջուր անգամ չը խմել, չը զովացնել պապակուած բերանը, ի հարկէ, մեծ տանջանք է, բայց առհասարակ ժողովուրդը ստոյիկաբար կրում է այդ տանջանքը ի փառս Ալլահի և նրա մեծ մարգարէի ու 12 իմամների, աշխատելով նոյն իսկ արևի կիզիչ ջերմութեան տակ, իսկ բարձր դասակարգը, սովորաբար, քնում է մինչև երեկոյ։ Իֆթարից յետոյ սովորութիւն է միմեանց այցելութեան գնալ. թէյ, սուրճ խմել, ղէյլան, չիբուխ քաշել և նոյն իսկ գործով զբաղուել։ Նոյն կերպով վարւում են և կանայք, հարամխանաները, նրանք ևս յաճախում են մզկիթները, գընում են միմեանց այցելութեան, միմեանց մօտ

իֆթարի և, առհասարակ, աւելի ազատութիւն են վայելում ռամազան ամսին։

Կէսօրը նոր էր անցել. մուէզինները նոր էին դադարել իրանց խռպոտ ձայնով հրաւիրել մուսլիմներին վեր կենալ քնից և նամազը կատարել։ Խիաբաններում կամաց-կամաց սկսւում էր անցուդարձը. այս և այն խանութից դուրս էին գալիս քնաթաթախ մարդիկ, լուլէյինը ձեռքին և մտնում խիաբանի ծառերի տակով հոսող ջրանցքին ու պպզելով, կատարում իրանց բնական կարիքը. ապա լցնելով լուլէյինը նոյն ջրանցքի ջրով, վերադառնում խանութը և սաքուի վրա սկսում իրանց նամազը։

Տօթը գնալով-գնալով սաստկանում էր դէպի Դարվազէ-Ղազուին տանող խիաբանի վրա, թէև նրա երկու կողմերով տնկուած ծառերը, որոնց տակով հոսում էր առատ ջուր, բաւական զովութիւն էին տարածում։ Այդ ծառերի մինի տակ, ջրանցքի վրա կռացած, երկու կին, չարսաւներով կիսածածկուած, առանց քօղի, լուանում էին աղտոտ լաթեր չ օ ղ ա ն ո վ[1]. մի քիչ ներքև ջրկիրները լցնում էին իրանց թուլուղները ջրով և ոռոգում խիաբանը՝ փոշին նստացնելու համար, կամ տանում ջուրը իրանց մ ու շ տ ա ր ի ն ե ր ի ն[2]։ Այդ ջրանցքից և գնում էր ջուրը,

[1]) Մի տեսակ բոյս, որ գործ է ածվում սապոնի տեղ։

[2]) Գնողներին։



մանր խողովակների միջով, խիաբանի տների ջրամբարները։ Մուսուլմանների կարծիքով հոսող ջուրը միշտ մաքուր և սուրբ է և նրա մէջ թափուող աղտեղութիւնները չեն կարող պղծել նրան. նոյն իսկ եթէ մի լճացած աւազանի մէջ սատկած կատու կամ շուն ընկնի, նրա ջուրը պիղծ չէ կարող համարուել. եթէ այդ ջրի քանակութիւնը, կչիռը եօթը լիտր է. այդ պատճառով և տան ջրամբարները լցվում են փողոցներով բաց հոսող ջրանցքներից, որոնց մէջ լուացւում են աղտոտ լաթեր, լուացւում են նոյն իսկ մեռածների դիակներ։

—Եասաման,—ասաց լուացք անող կանանցից աւելի տարիքաւորը իր կողքին լուացք անող մի խափշիկ կնոջ, որի ականջներից կախուած էին ստրկութեան յատկանիշ օղերը—ասում են տիրուհիդ, Լէյլա խանըմը, Իմամ-Ջումայի աչքի սիրելին է դարձել, ուղի՞ղ է։

—Այո՛, Սանամ, ուղիղ է. Լէյլա խանըմի գեղեցկութիւնը ո՛ւմ ասես խելքից չի հանի։ Իմամ-Ջուման շատ սիրում է նրան և կատարում է բոլոր նրա խնդիրները։

—Այդ էլ բախտ է. բախկալ մաշադի Քէրիմի աղջիկը Իմամ-Ջումայի կինն է դարձել. մոխիր մեր գլխին, որ այդպիսիներն էլ խանըմ պէտք է դառնան։

—Ի՞նչ մեծ մարդի աղջիկն է քո խանըմը. հողը նրա չէչոտ երեսին. դեռ Լէյլա խանըմին

չե՞ս հաւանում, հօ քո խանըմիդ նման անզգամ չէ։

—Անզգամը, լէրբը քո խանըմն է, մ ո ւ ր դ ա շ ո ւ ր ը[1]) տանի նրան։

—Մուրդաշուրը քո խանըմին, քեզ տանի, քաֆթառ։

—Ե՞ս եմ քաֆթառ․ մէ՛խ դու սև չուն, սպասիր տես քո հախից ինչպէս կը գամ․ դու մոռանում ես որ իմ խանըմը Բէգլար-բէգու կինն է։

—Բէգլար-բէ՛գին։ Ջէնդ կորիր, թէ չէ քո ոտներն էլ այնպէս կը դաղեն, ինչպէս անցեալ օր դաղել են նրա ոտները։ Բէգլար-բէգին ինչ չուն է Իմամ-Ջումայի առաջ...

Խափշիկուհին չը վերջացրեց. Սանամը քաշելով նրա գլխից չարշաւը, կպաւ ծամերից և Եասամանը վայր ընկաւ մէջքի վրա ջրանցքի ափին, թաց փոշու մէջ, ցեխոտուած։

«Վա՜յ, վա՜յ»,—լսուեց խափշիկուհու աղաղակը և նա ձեռները տանելով դէպի Սանամի կողմը, չանգռեց նրա երեսը։

«Հարայ, հուրայ»—լսուեց մի այլ գոռիւն։

Այլահը գիտէր, ինչով կը վերջանար երկու կանանց կռիւը, եթէ այդ միջոցին մի ֆէրրաշ վրա չը հասնէր. «Հ է յ ա ս ը զ ն ե ր[2]), անզգամներ, չէ՞ք ամաչում, փողոցում կռիւ էք սարքում, երեսներդ բաց․ դէ՛, հաւաքեցէք ձեր լաթերը և

---

1) Մեռեալ լուացող։ 2) Անամօթներ։



կորէք այստեղից»։—պոռաց մեր վաղածանօթ Սէլիմ չաթիրը, բայց յանկարծ նկատելով խափշիկուհուն, փոխեց ձայնը և ասաց.

«Այդ դո՞ւ ես, Եասամա՛ն, էլի ինչ կռիւ ես սարքել»։

Սակայն Սանամը հազիւ տեսաւ Սէլիմ չաթիրին, որ ուրախացած կանչեց.

—Հաջի Սէլիմ, տե՛ս այս անզգամը ինչ աղբ է ուտում մեր աղայի մասին. գնա յայտնիր Իմամջումային, թող մի լաւ պատժի սրան, սև չէյթանին.

—Շէյթանը դու ես,—պատասխանեց Եասամանը և պատրաստուեց յարձակուել Սանամի վրա, երբ մօտի տներից մի քանի կանայք դուրս գալով, վրա թափուեցին և սկսեցին խաղաղացնել կռուողներին։

Այդ միջոցին խիաբանի վրա տներից մէկի դուռը բացուեց և մի քանի հոգի 8—10 տարեկան մի երեխայի դիակը դրած ն ա ջ ա ղ ի[1]) վրա, մօտեցան ջրանցքին ու նաջաղը դնելով ափին, սկսեցին լուանալ դիակը. մի ջահել կին, չարշաւի մէջ կիսափաթաթուած, մի քիչ հեռու կանգնած, աղիողորմ լացում էր։

—Խեղճ Արհայեաթ, ասաց կանանցից մինը, մինուճար զաւակին կորցրեց. մէ՜խ, այդ անիծեալ բկացաւը. գնանք մխիթարենք։

---

1) Պատգարակ մեռածների համար.

Եասամանը և Սանամը ջահել մօր վշտի առաջ խսկոյն մոռացան իրանց թշնամութիւնը և նոյնպէս հետևեցին միւսներին։ Սակայն Սէլիմ չաթիրը յարմար րոպէ գտաւ և ասաց խափշիկուհուն։

«Շուտով գնա տուն, ասա Լէյլա խանըմին, որ մի ժամից յետոյ կը լինեմ Ջումա մզկիթում և կը սպասեմ իրան»։

Խափշիկուհին ժպտաց և գլխով համաձայնութեան նշան տուեց։

Սէլիմը մօտեցաւ մուրդաշուրներին, կանգնեց մի քանի րոպէ և սալամ ասելով նրանց, շարունակեց ճանապարհը։

Իսկ աղտոտ լաթերը և դիֆտերիտով մեռած երեխայի դիակը մաքրող ջուրը հոսում էր անդադար կարկաչիւնով դէպի ջրամբարները և աւազանները։

Երբ Սէլիմ չաթիրը հասաւ Ջումա մզկիթը, ուր այն օր պէտք է կատարուէր ուրբաթօրեան հրապարակական աղօթքը—սելաթ ուլ-ջումէ—մզկիթը լի էր արդէն աղօթողներով և հաւատացեալները վաղուց կատարել էին իրանց երկու ռօքէթը[1]), ծերունի փիշնամէզ[2]) մօլլայի ղեկավարութեամբ, բարձր ձայնով։ Մէմբարի[3]) վրա բարձրացել էր մի երիտասարդ

[1]) Ուրբաթօրեան աղօթքը բաղկացած է լինում երկու ռօքէթից—երկրպագութիւնից։ [2]) Նախաաղօթող։ [3]) Ամբիոն։



մօլլա և սկսել քարոզը։ Սէլիմը հանեց դռանը կօշիկները, մտաւ ներս և աչք ածեց ամեն կողմ, անտղեց, մինչև նկատեց մի խումբ կանանց, նստոտած տղամարդկանց մէջ, փաթաթուած չարչաւներում և երեսներին ծածկած քօղով. այդ կանանց մէջ նա նկատեց մինը, որի ուրբանդը պրնդացրած էր չարչաւի վրա ոսկեայ ճարմանդներով, որոնցից կախուած էր մի երկար, կարմիր ժապաւէն։ Սէլիմը մօտեցաւ կամաց-կամաց և նստեց այդ կնոջ կողքին։ Իր միւս կողքին նստած էր մի ուրիշ կին, որը դարձնելով երեսը նրան և կէս-բանալով քօղը, սև, լայն և թանձր շրթունքների արանքից ցոյց տուեց ձիւնափայլ ակռաները և ժպտաց, աչքով անելով։ Սէլիմը միամտուեց, որ կողքին նստածը Լէյլա խանըմն է և, ուշադրութիւն չը դրաւելու համար, սկսեց ինքն էլ միանալ այն լացին և կականին, որ բարձրացրել էին հաւատացեալները, լսելով քարոզիչ մօլլայի պատմութիւնը Իմամ Հուսէյնի և Հասանի մարտիրոսական մահուան մասին։ Լացելով, նա գլուխը տանում բերում էր, կռացնում և բարձրացնում, ինչպէս սովորաբար անում են մուսուլմանները աղօթելիս կամ ղուրա̀ն կարդալիս։

«Առիւծը—բացականչում էր ամբիոնից մօլլան—երբ իջաւ այն դաշտը, ուր ընկած էին իմամները, մարդկային լեզու ստացաւ, թնդացրեց սարերը, ձորերը, անտառները, ամբողջ օդը իր

աղիողորմ ահեղ մունչիւնով. տեսնելով իմամների արիւնաթաթախ մարմինները, դաղանը, գիշատիչը լացեց, մենք ադամորդիներս, ինչ պէտք է անենք»։

—Վա՜յ, վա՜յ, ողբացին կանայք, կոծեցին տղամարդիկ։

«Վա՜յ, վա՜յ», կոծեց Սելիմը և խոնարհեցնելով գլուխը դէպի գետին, ասաց Լէյլա խանըմի ականջին.

—Դո՞ւ ես, Լէյլա-ջան։

—Ես եմ, Սելիմ-ջան, ղուրբա՛ն քեզ։

—Լսիր. հասել է ժամը, որ մեր մուրազին հասնենք. հասել է ժամը, որ ազատուենք Իմամ-ջումայից և իմս լինես։

—Ի՞նչպէս. պատմիր, պատմիր, ղո՛ւրբան։

Եւ Լէյլան բարձրաձայն աղաղակեց. «Վա՜յ, վա՜յ, մաղլում[1] Հուսէյն, վա՜յ»։

—Լսե՞լ ես ջհուդ աղջկայ, Եսթերի մասին։

—Լսել եմ, լսել. բէստ է մտել։

—Ես այնպէս կը սարքեմ բանը, որ Եսթերը ուղարկուի Իմամ-ջումայի հարեմխանէն, քեզ մօտ, և այնտեղ մնայ, մինչև կ'որոշուի թէ մուսուլմա՞ն է նա կամ ոչ և ո՞ւմ կինը պէտք է լինի։ Դու աշխատիր գրգռել Իմամ-ջումայի ցանկութիւնը, տռփանքը դէպի Եսթերը, գովելով նրա գեղեցկութիւնը. այդ տռփոտ ծերուկին ես լաւ

1) Խեղճ։



ճանաչում եմ, նա այդպիսի թանկագին որսը ձեռքից բաց չի թողնի...

—Յետոյ, յետոյ։

«Վա՜յ, վա՜յ, մաղլում Հուսէյն, վա՜յ», նորից ողբաց Սելիմ չաթիրը, և կռանալով շարունակեց.

—Յետոյ, յետոյ այն կը լինի, որ ես Եսթերին յափշտակող սէյիդի նախանձը կը գրգռեմ, աչքը բաց կ'անեմ, թէ ինչի համար է Իմամ-ջուման պաշտպանում իրան և սէյիդը նրա ճաշը լաւ կ'եփի... մենք էլ մեր մուրազին կը հասնենք։

—Բայց սէյիդը ինչպէս կարող է տեսնել այդ բոլորը։

—Այդ ինձ թող, ես գիտեմ ինչպէս. դու ջհուդ աղջկայ հետ լաւ բարեկամացիր, իմ ասածը կատարիր, մնացածը ես գիտեմ։

—Լաւ, ղուրբան լինեմ այդ քեաքուլներիդ[1], Սելիմ-ջան։

—Ղուրբան այդ չինարի բոյիդ, Լէյլա-ջան։

Եւ երկուսը նորից սկսեցին. «վա՜յ, վա՜յ, Հուսէյն ջան»։

Քարոզիչը վերջացրեց ողբը. ապա յայտնեց, որ կարեւոր խորհրդակցութիւն կայ և թող մուսլիմները ուշադրութեամբ լսեն։

«Դուք գիտէք, հաւատացեալներ, որ իսլամը ամէն տեղ և ամէն ժամանակ յաղթող է եղել. դուք գիտէք, որ անհաւատներից միայն երեք ազգի թոյլ է տուած մեր նուիրական շարիաթով

1) Խոպոպիք։

դաւանել իրանց կրօնը, վճարելով որոշ հարկ և կատարելով որոշ պայմաններ. դրանք կոչւում են է հ լ-ո ւ լ-գ ի մ մ է թ—հարկատու անհաւատներ— և դրանք են ջհուդները, քրիստոնեաները և գեբըրները, թէև վերջիններին մի քանի օրէնսգէտներ չեն դասում է հ լ-ո ւ լ-գ ի մ մ է թ ի շ ա ր ք ը. բայց այդ երեքին էլ թոյլատրուած է իրանց կրօնի ազատ դաւանումը միայն այն պայմանով, որ հարկ վճարեն և մուսուլմանների դէմ ոչ մի յանցանք չը գործեն, նրանց տներից բարձր տներ չը կառուցանեն, փողոցով գնալիս նրանց տեղ տան, չը հայհոյեն մարգարէին և նրա սուրբ օրէնքը, չը շնանան մուսուլման կնոջ հետ, հրապարակաբար գինի չը խմեն, խոզի միս չուտեն և իրանց կանանց հետ պոռնկութիւն չը գործեն. եթէ նրանք, անհաւատները, բռնուեն այդ յանցանքների մէջ, արժանի են մահուան։

—Այո, այո, այդպէս է շարիաթը, լսուեցին հարիւրաւոր ձայներ։

—Բայց այդ է հ լ-ո ւ լ-գ ի մ մ է թ ի մէջ ամենաստոր և արհամարհելի մի ժողովուրդ, Իսրայէլի որդիները, ջհուդները, յանդգնեցին այս օրերս մի անլուր յանցանք գործել. իրանց աղջիկներից մինը իր կամքով ընդունել է մեր սուրբ դենը, ամուսնացել է մեր սէյիդներից մէկի հետ, մարգարէի ճէտի հետ, բայց ջհուդները փախցրել են նրան և այժմ բէստ են մտել Շահի ախոռատան մէջ ու նրա հետ բէստ է մտել և մի ջհուդ աղայ,



որ իբր թէ աղջկայ նշանածն է։ Իսլամ կինը այժմ ջհուդի հետ է, և ջհուդը, անհաւատը, նայում է իսլամ կնոջ երեսին, ու մենք ոչինչ անել չենք կարող։ Իսլամի սուրբ օրէնքը ոտնակոխ է լինում և ում ձեռքով, մուրտառ ջհուդների ձեռքով։

—Մահ ջհուդներին, ջհուդ-քուշան անենք, ոռնաց բազմութիւնը. մենք կը ստիպենք բէստ մտածներին դուրս գալ։

Ու մզկիթը դղրդաց խուլ որոտմամբ, չփոթ, դժոխային աղաղակներով։

Երիտասարդ քարոզիչը նշան արեց, որ դեռ չէ վերջացրել։

—Դեռ շուտ է ջհուդ-քուշան սարքել. առաջ առաջարկենք հրէաներին որ տան մեզ աղջկան, ինչպէս և երիտասարդին, որովհետև, եթէ յայտնուեց, որ երիտասարդը խախտել է աղջկայ կուսութիւնը, երկուսն էլ, իբրև պոռնիկներ, քարկոծ պէտք է լինեն։ Եթէ հրէաները չեն կատարի մեր պահանջը, այն ժամանակ կը խնդրենք աղայից, որ ջհուդ-քուշանի ֆիթվա տայ։

—Սալավաթ, սալավաթ, թնդաց մզկիթը։

—Եթէ այդ յանցանքն ես գործած չը լինէին ջհուդները, նրանք արդէն շատ երես են առել. տներ են շինում մուսուլմանների տներից բարձր, փողոցներով գնալիս տեղի չեն տալիս մուսուլմանին, առաջ իրանք են է լ-ս է լ ա մ-ա լ է յ ք ո ւ մ

*տում [1]), նոր տաճարներ են շինում, ձի են նստում, մեծ լապտերներով են ման գալիս գիշերները, բոլոր առևտուրը իրանց ձեռքն են գցել։*

*—Ջհուդ-քուշան, ջհուդ-քուշան, նորից ոռնաց ամբոխը։*

*—Ուրեմն գնացէք, պատրաստ եղէք, յայտնեցէք ամենքին և երբ հրէաները մեր պահանջը չեն կատարի, Ալլահի օգնութեամբ մենք նրանց հախիցը կը գանք։*

*—Սալավաթ, սալավաթ, երգեց ամբոխը և գրոհ տալով, սկսեց դուրս գալ մզկիթից։*

*Դուրս եկաւ և Սէլիմ չաթիրը. նա ուրախ էր և գոհ. նրան աջողուեց լսել իր սիրուհու ձայնը. նա մօտենում էր այն րոպէին, երբ վաղուց սրտի մէջ կուտակուած վրէժխնդրութեան եռ եկող կիրքը պէտք է յագուրդ գտնէր. նա ներկայ եղաւ քարոզին և իմացաւ դաւադրութիւնը, որ ուղղակի պէտք է նպաստէր իր ծրագրի աջողութեան։ Պէտք էր շտապել և ամեն բան յայտնել բէգլար-բէգիին մզկիթում անցած-դարձածի մասին, այլապէս ոչ մի ֆէրրաշ, իբրև բարի մուսլիման, չէր յայտնի նրան։ Բազարները, փողոցները արդէն կենդանութիւն էին*

*[1]) Շէրիաթով ոչ-մուսուլմանները չը պէտք է առաջ ինքեանք ողջոյնի այդ խօսքերն արտասանեն, չը պէտք է նոր եկեղեցի, աղօթարան կառուցանեն, բարձր տներ շինեն։*



*ստացել, տօթը անցել էր. երեկոն մօտենում էր. ամեն մի մարդ մի բան գնած փէշի տակին, թաշկինակի մէջ շտապում էր իր տունը. մրգավաճառը իր միրգն էր գովում, մսավաճառը խանութի առաջ մոմեր էր վառել, հասկացնելու համար, որ մսի գինը էժանացել է. քաղցրավաճառը մի առ մի նկարագրում էր իր քաղցրաւէնների յատկութիւնները. կանաչեղէն ծախողը գոռում էր, որ իր բանջարները թարմ են։ Եւ դրանց բոլորի խժորի, աղմուկի մէջ դէրվիշները իրանց քաշգուլը ձեռքին բռնած, տապարը ուսին դրած, մէջքը ծածկած առիւծի կամ վագրի մորթով, ոտաբոբիկ, կոնաձև գլխարկով, գզգզուած մազերով, «եա հա՛ք», «եա հու՛» աղաղակներով թնդացնում էին օդը, և անցորդի բ ի ս տ ի ն ե ր ը [1]), շահիները թափւում էին նրանց քաշգուլների մէջ։ Մի այլ տեղ, պատի մի որևէ սաքուի վրայ, մի կտոր փսեաթի վրայ նստած մի մօլլա, առաջին դրած մի փոքր սնդուկ, երգելով և գլուխը տանել-բերելով, կարդում է ղուրանը. նա ֆալ բացող է և թալիսման գրող. նրա առաջ չոքում են չբեր կանայք և խնդրում թալիսման անել, որ տղայ զաւակ ծնեն, կամ իրանց ամուսինները իրանց աւելի սիրեն, քան միւս կանանց, կամ ֆալ բաց անէ, արդեօք կը*

*[1]) Հինգ բիստին մի շահի է, իսկ շահին հաւասար է $1\frac{1}{2}$ կոպէկի։*

հասնի իր մուրազին։ Մօլլան հանում է սնդուկից Թալիսմանի Թղթերը և եղեգնէ գրչով ինչ որ մի արիւնագանդ գոյնով նշաններ է խծբծում նրանց վրայ ու տալիս կնոջ, որ տանի կախի վզից կամ կարի Թիքից. ուրախացած կինը՝ կէս, մի, երկու ղրան է գցում մօլլայի սնդուկը։ Մի այլ տեղ, մի հէքեաթարան, գլխին ժողոված քան-երեսուն հոգի, հէքեաթ է պատմում, կամ Ֆիրդուսու Շահնամէից կտորներ է երգում. մի ուրիշը օձեր է պար ածում, Թողում է նրանց այնպէս, որ փաթաթւում են չլինքին, առանց կծելու։ Ահա և հինգ կոյրեր, որոնց առաջնորդում է մի վեցերորդ կոյր. առաջնորդը, գաւազանը շարժելով, առաջ է գնում, սկսում է մի աղօթք, միւսները կրկնում են. նրանց ձեռքում դնում են բիստիներ, և պարկերում գցում են հաց, պտուղ։

Ցանկարծ լսուեց ձայներ. «Հեռու, երեսներդ դարձրէք, կուրացէք», և վայրկենապէս փողոցով անցնողները երեսները դարձրին դէպի պատերը, իսկ խանութներում նստածները ձեռքերով փակեցին աչքերը։ Անցնում էր Շահի հարէմխանայի կանանցից մինը, զարդարուած ջորու վրայ նստած, չարսաւում ծածկուած, բազմաթիւ ծառաներով, աղախիններով և ներքինիներով։ Ընդունուած սովորութեան համեմատ, Շահի կանայքը կամ աղջիկները անցնելիս, տղամարդիկ, ով և լինեն, պէտք է երեսները դարձնեն և կամ աչքերնին փակեն. ով չէ կուրացնում աչքը, կամ երեսը չէ դարձնում, նրա ուսերը դաղւում են ֆէրրաշների ճիպոտներով։



Թէյատներում, ղահվէխանաներում (սրճատուն) արդէն սկսել են ղէյլանները չաղ անել, Թէյը, սուրճը պատրաստել, որ երբ Թնդանօթը նետուի—ծոմը բաց անելու նշանը—իսկոյն յաճախորդները կարողանան ծխել և խմել։ Արդէն ժամանակն է. իսկոյն կը նետուի Թնթանօթը, և փողոցները հետզհետէ դատարկւում են։

Շտապով, *գիվաները* [1]) քաշած, գնում է Սէլիմ չաթիրը. նա աշխատում է Թնդանօթը գցուելուց առաջ հասնել բէգլար-բէգու տունը. նա կարողացել էր ճանապարհին մտնել Շահի ախոռատունը և այցելել հրէաներին ու հաղորդել նրանց մզկիթի մէջ կայացած որոշումը, որի համար ծերունի հրէան դրել էր նրա ափում մի *էշրաֆի*—ոսկի և այժմ նա, ուրախ-ուրախ վազում էր բէգլար-բէգու տունը, նրան ևս գեկուցանելու և նրանից ևս մի *էնամ* [2]) ստանալու։

«Լօթի, շատ ուրախ ես երեւում. հը, ինչ կայ—հնչուեց յանկարծ Սէլիմի ականջին մի ձայն և մի ձեռք դրուեց նրա ուսին։

«Ա՛հ, դու ես, Իբրահիմ—ասաց Սէլիմը,—գնանք բէգլար-բէգու տունը իֆթար անենք»։

---

[1]) Կանեփից պատրաստած սպիտակ կօշիկներ։ [2]) Պարգև, որ տալիս են մեծերը փոքրերին։

—Է՛հ, ինչ կը տան մեզ. այնքան բազմութիւն կը լինի, որ մեզ, ֆէրրաշներիս, կրծելու ոսկր անգամ չի հասնի։

—Դու եկ, կը տեսնես թէ ինչ իֆթար կ'ունենանք։ Բէգլար-բէգին դեռ էնամ էլ կը տայ մեզ։

Երկու չաթիրները հագիւ ոտները դրել էին բէգլար-բէգու դռան շէմքի վրայ, որ թնդանօթը արձակուեց։

Ծոմը բացուեց. ամեն մարդ շտապեց մի ղէյլան ծխել, մի բաժակ թէյ խմել։

Բէգլար-բէգու տան դուռը բացվում էր մի մեծ պարտէզի վրայ, զարդարուած բազմերանգ, անուշաբոյր ծաղիկներով, վարդի թփերով և մի գեղեցիկ մարմարեայ աւազանով։ Մի լայն քարեայ սանդուխ, աւազանի դէմ առ դէմ, տանում էր դէպի պատշգամբը, որից մտնում էր մի ընդարձակ թալարի մէջ, ամբողջովին հայելազարդ։ Թալարի վերին մասում, մի փոքր մետաքսէ գորգի վրայ ծալապատիկ նստած էր Բէգլար-բէգին, հագած Շահի խալաթը, մարգարտեայ ծոպերով և ականակուռ ճարմանդներով, որով նա վերահաստատուել էր բէգլար-բէգութեան պաշտօնի մէջ։ Թալարը լի էր զանազան կարգի մարդկանցով—սէյիդ, մօլլա, դէրվիշ, վաճառական, խան, զինուորական, պաշտօնեայ, ամենքն էլ ակնդէտ՝ իֆթարին։ Ծառաները մատուցանում էին հիւրերին ղէյլան, թէյ, սուրճ։



Բէգլար-բէգու դէմքը խրոխտ էր և սպառնալից. ոչ ոք չէր կարծի, թէ դեռ երեք օր առաջ այդ հպարտ, խրոխտ մարդը փալախկայի հարուածներն էր կերել ամենայն հեզութեամբ։ Փիշքարը, չոքած առաջին, զեկուցումն էր անում, փսփսալով ականջին։

«Մսավաճառները, ասում էր նա, պատրաստ են հազար թուման տալ ձեզ, եթէ թոյլ կը տաք մսի գինը լիտրում երեք շահի աւելացնել։

—Երեքը շատ է, պատասխանում էր բէգլար-բէգին կամացուկ, թող աւելացնեն երկու շահի։

—Ալլաֆները[1]) խնդրում են թեթևացնել տալ իրանց վրա դրուած հարկը. ձեզ թագդիմ[2]) են անում 500 թուման։

—Շատ լաւ, արզ կ'անեմ սադրազամին։

Այստեղ ևս կատարւում էր նոյնը, բայց մանրանկարական ձևով, ինչ որ երեք օր առաջ տեսանք կատարուելիս սադրազամի առանձնասենեակում։

Սէլիմ-չաթիրը պատշգամբի վրա բացւող փէնջարէի առաջ կանգնած, սպասում էր, երբ Բէգլար-բէգու աչքը ընկաւ նրան և ասաց.

—Հը, ինչ կայ, Սէլիմ չաթիր։

—Կարևոր արզ ունեմ, հրաման տուէք զատ յայտնեմ։

—Ե՛կ։

[1]) Փայտ, ածուխ, դարի ծախող։ [2]) Ընծայում են։

Մտնելով թալարը, Սէլիմը չոքեց բէգլար-բէգու առաջ և պատմեց ականջին Ջումա մզկիթում լսածը։

—Աֆէրիմ, Սէլիմ, դու արժանի ես վարձատրութեան. հիմա լսիր. գնա խոհանոց, ասա այնտեղ քեզ լաւ իֆթար տան. ապա վեր առ հետդ ընկերներիցդ մի քաջ տղայ, գնացէք միասին Բէհման-միրզա չահզադէի տան փողոցը և այդտեղ լաւ հսկեցէք ու ինչ որ տեսնէք, եկէք պատմեցէք ինձ։ Զգոյշ կացէք, ձեզ չը նկատեն։

—Աչքիս վրա, ասաց Սէլիմը վերկենալով և խոր գլուխ տալով։

Իբրահիմի հետ իֆթարն վայելելուց յետոյ, երկուսն էլ կէս ժամից յետոյ դիմեցին դէպի այն փողոցը, ուր գտնվում էր չահզադէի տունը։

## VIII

Երիտասարդ չահզադէ Բէհման-միրզան իր բերունիի թալարի առաջ ձգուած մարմարէ աւազանի գլխին չոքած՝ կատարում էր երեկոյեան նամազը։ Աւարտելով, նա նոր էր սկսել կոճկել չափկի թեքերը, նստած սաջադէի վրա ու հագնել թիրմանաման՝ գուլբաները, երբ դրսի բակից դէպի պարտէզը մտնելու դռան վարագոյրը բարձրացաւ և մի կին, ամբողջովին ծածկուած ուրբանդով ու չխչխկացող չախչուրների մէջ չապով ներս մտաւ։ Անցնելով չահզադէի մօտով, և



ուղղելով քայլերը դէպի հարամխանայի դուռն, կինը բարձրացրեց երեսի քօղի մի անկիւնը և չահզադէն նկատելով նրա դէմքը, դողաց։ Սակայն կարողացաւ զսպել իր վրդովմունքը և ժըպիտ երեսին ողջունել իր հօրեղբայր Մէլիք-Գասըմ-միրզին և իր կրտսեր չահզադէ եղբայրներին, որոնք այդ միջոցին նոյնպէս ներս մտան պարտէզը, հրաւիրուած լինելով իֆթարի։

Ի տես իր հօրեղբօր, Բէհման-միրզան շտապեց հագնել թիրմաշալի ջուբբան, ուղղել գլխի բուխարէ մորթու գլխարկը և ոտքի կանգնելով խոր գլուխ տալ նրան, հրաւիրելով բազմել մեծ չինարու հովանու ներքոյ դրուած տախտի վրա. եղբայրները մնացին կանգնած և, ընդհակառակը, իրանք խոր գլուխ տուին իրանց անդրանիկ եղբօր։

—Համարձակութիւն եմ առնում խնդրել, որ թոյլ տաք ինձ մի քանի րոպէ ներս գնալ մի կարևոր թուղթ բերելու համար, ասաց Բէհման-միրզան հօրեղբօրը։

Վերջինս գլխի շարժումով հաւանութիւն տուեց և երբ Բէհման-միրզան հեռացաւ, դիմելով երիտասարդ չահզադէներին, ասաց. «Բիսմիլլահ, նըստեցէք»։ Շահզադէները չը նստեցին տախտի վրա, այլ չոքեցին նրա առաջ, սէջադէի վրա։ Փիշխըդմէթները բերին փոքր ֆինջաններով սուրճ և մատուցին ղէյլան։

Բէհման-միրզան շտապ-շտապ անցաւ պարտէզով,

մտաւ հարամխանան և գնաց ուղղակի չահզադէ խանըմի սենեակը, ուր, քօղը արդէն բարձրացրած, կանգնած էր բամբիշի առաջ մեր ծանօթ Եասաման խափշիկուհին։ Բամբիշը լաց էր լինում և երբ ամուսինը մտաւ, ասաց. «Ջուրը եկել մեզ տարել է, տես ինչ գոյժ է բերել Եասամանը»։

—Հը, ինչ կայ, հարցրեց չահզադէն։

—Այն կայ, լացակումած ասաց Եասամանը, որ Շահը մատանին տուել է քուրթառ Հաջուն և այս գիշեր մ է մ ո ւ ր ն ե ր ը[1]) գալու են։ Աբդուլլան, որ երկու օր առաջ իր աչքով տեսել էր, ղէյլան տալիս, թէ ինչպէս Շահը լացում էր, երբ մատանին յանձնեց Հաջի Միրզա-Աղասուն և անմիջապէս ինձ ուղարկեց այն օրը ձեզ յայտնելու, այսօր իմացաւ, որ Հաջին—թող նա սատանայի և ջինների փայ դառնայ, թող Հազրաթ-Աբբասը խռով կենայ նրա գլխին—այս գիշեր է ուղարկելու մէմուրներին իր դժոխային միտքը իրագործելու։ Աբդուլլան, եղբայրս, որ երբէք ձեր բարութիւնները չի մոռանայ, հազիւ ժամանակ է գտել և վազ տալով եկել Իմամ-ջումի տունը. ես էլ չնչասպառ եկայ ձեզ յայտնելու, որ ձեր գլխի ճարը տեսնէք։

—Փախիր, փախիր, Բէհման, ասաց չահզադէխանըմը և սկսեց բարձրաձայն հեկեկալ։

[1]) Մ է մ ո ւ ր—վճիռ և հրաման կատարող պաշտօնեայ։



—Սուս, սուս, բարկացած ասաց չահզադէն. գիտես, ինչ է. ուզում ես աղախինները և ծառաները իմանան։ Պէտք է ոչ մի կերպով ցոյց չը տալ, որ մենք գիտենք մէմուրների գալը։ Եասամանը մեզ անձնուէր և հաւատարիմ է. նա մեզ կ'օգնի և Ալլահի օգնութեամբ ես ի դերև կը հանեմ չար սատանայ Միրզա-Աղասու ծրագիրը։ Կարո՞ղ եմ, Եասաման, քեզ վրա յոյս դնել։

—Թող իմ տէրը միայն հրամայի իր անարժան աղախնին, պատասխանեց խափշիկուհին և նրա սև դէմքը փայլեց բարի ժպիտով. ես պատրաստ եմ ջանս ղուրբան անել այն մարդին, որ այնքան բարի եղաւ իմ մինուջար եղբօր վերաբերմամբ։

—Ուրեմն լսիր, չահզադէ խանըմ, դարձաւ իշխանը իր կնոջ, լսիր և դու, Եասաման։ Ինձ դուրսը սպասում են իֆթարի հօրեղբայրս և եղբայրներս։ Ես կը գնամ և նրանց հետ իֆթար կ'անեմ, որպէս զի ծառաները ոչ մի կասկած չը տանեն. ապա չահզադէներին կը յայտնեմ եղելութիւնը։ Իֆթարից յետոյ ես կը գամ այստեղ, պատճառ բռնելով, որ չահզադէխանըմը հիւանդացել է։ Երբ մէմուրները կը գան, չահզադէները կը զբաղեցնեն նրանց, մինչև որ ինձ կանչեն հարամխանայից, բայց մինչ ինձ կանչելը մենք կ'իրագործենք մեր ծրագիրը։ Այժմ դուք տեղաւորեցէք փոքր արկղի մէջ բոլոր մեր ունեցած ամենաթանկագին գոհարեղէնը և կարևոր թղթերը, յայտնեցէք աղախիններից երկու-

երեքին, որ իֆթարից յետոյ հիւր էք գնալու չահզադէ-ամուենց[1]) հարամխանէն: Դու այն ասա, Եասաման, դուրսը, փողոցում ֆէրաշներ չը կա՞ն:

—Ես տեսայ միայն Իբրահիմին և Սէլիմին, բէգլար-բէգու ֆէրրաշներին, որոնք փողոցի արճատնում նստած ղէյլան էին քաշում: Սէլիմը իմ բարեկամս է և ինչ ասեմ կը կատարի: Նրա կողմից ոչ մի վտանգ չը կայ:

—Շատ լաւ. ուրեմն ի գործ և թող Ալլահը քաղցր անէ իր նայուածքը այս տան վրա:

Եւ դուրս գալով հարամխանայից, Բէհման-միրզան վերադարձաւ բիրունին, ուր, աւագանի դիմացի թալարում, պատրաստուած էր իֆթարը:

—Ներեցէք հօրեղբայրս, և դուք եղբայրներս, որ ձեզ սպասեցնել տուի, բայց ձեր քոյրը մի քիչ քէյֆ չունէր և ստիպուեցայ ինքս որոնել ինչ որ կամենում էր:

—Ինշալլահ, շուտով կ'անցնի չահզադէխանըմի հիւանդութիւնը:

Եւ չահզադէները, լուանալով ձեռները արծաթէ կոնքի մէջ, որ մատուցին սպասաւորները, նստեցան իֆթար անելու, հրաւիրելով և մի քանի սէյիդների ու մօլլաների, որոնք անկոչ հիւրեր էին:

Խորին լռութեան մէջ կատարուեց իֆթարը. չահզադէները քաջ նկատում էին Բէհման-միր-

1) Ամու—հօրեղբայր:



զայի դէմքի վրա անձկութիւն, մտազբաղ հոգս· նրանք գիտէին, որ ինչ որ մի աղէտ է սպառնում իրանց եղբօրը, բայց չը գիտէին, թէ նրա գլխին կախուած դամոկլեան սրի թելը կտրուելու վրա է: Վերջապէս, օտարների ներկայութեամբ խօսելն ևս անյարմար էր:

Իֆթարը վերջացաւ. պատուարժան անկոչ հիւրերը և չահզադէները, սուրճի և ղէյլանի ակնակալութեամբ, ձեռները լուանալուց յետոյ, սկսեցին միսվակի և զկռտոցի գործածութիւնը. վերջինը անհրաժեշտ էր՝ տանտիրոջ քաղաքավարութիւն ցոյց տալու համար. զկռտոցը նշան է բազմաճոխ սեղանի վայելքի:

—Աղաներ, դիմեց Բէհման-միրզան մօլլաներին, դուք հրամայեցէք այստեղ վայելեցէք ձեր սուրճը և ղէյլանը, իսկ մենք գնանք մի քիչ հանգստանանք պարտէզում:

Պարտէզում, նստած սաղարթախիտ չինարիների հովանու տակ, Բէհման-միրզան պատմեց հօրեղբօրը և եղբայրներին, որ Շահի հրամանով, այդ գիշեր դահիճները պէտք է գան կուրացնելու իրան:

—Անկարելի բան է այդ մեր եղբօր կողմից, գունատուած, յուզուած „բացականչեցին երիտասարդ չահզադէները:

—Դժբախտաբար, ամեն բան կարելի է, նոյն իսկ եղբայրասպանութիւնը, քանի որ Իրանի տէրը ոչ թէ Մահմէդ-Շահն է այլ քաւթառ հաջի

Միրզա-Աղասին. նա խելքից հանել է Շահին, տխրութեամբ ասաց Մելիք-Գասըմ միրզան, խոր թառանչ քաշելով: Ի՞նչ ես մտադիր անել. պէտք է շտապել:

—Ես արդէն գիտէի, թէև չէի հաւատում, ուստի և կազմել եմ իմ ծրագիրս: Պէտք է փախչեմ և ապաստանեմ ռուսաց կայսրի դրօշակի տակ, հետս տանելով գոհարեղէններս և թղթերս. որքան կը կատաղի Հաջին, իմանալով որ որսը ձեռքից թռաւ, մանաւանդ գոհարեղէններս, որոնց վրա տնկել է իր աչքը:

—Բայց ապահո՞վ ես, որ ռուսաց դեսպանը վաղը քեզ չի յանձնի Շահին, երբ սա պահանջէ. այն ժամանակ քեզ համար էլ պրծում չը կայ. քեզ կը մեղադրեն իբրև պետական դաւաճանի և կը գլխատեն:

—Ես միանգամայն վստահ եմ ռուսաց իմփէրաթօրի վեհանձնութեան վրա: Այժմ, լսեցէք եղբայրներս, ժամանակը սուղ է:

Եւ բոլորովին անլսելի ձայնով, նա հասկացրեց չահզադէներին թէ ինչ պէտք էր անել, երբ մէմուրները կը գան: Ապա համբուրուելով հօրեղբօր և եղբայրների հետ, նա դառնապէս լացաւ: Լացին և չահզադէները:

—Եղբայրներս, դիմեց Բէհման-միրզան չահզադէներին, մեծ է Ալլահի զօրութիւնը. Շահը հիւանդոտ մարդ է, երևի Ալլահը շուտով կը կանչի նրան իր դատաստանի առաջ. աշխատե-



ցէք որ նոր Շահը, երիտասարդ Նասրէդդինը հօրը նման չը կործանէ Իրանը և պարսից գահը:

Այդ միջոցին հարամխանան տանող դռան վարագոյրը բարձրացաւ, մի աղախին երևաց շէմքի վրա և ինչ որ մի խօսք ասաց ծառաներին, որոնցից մինը, գալով չահզադէների մօտ, յայտնեց, որ չահզադէխանումի քէյֆը նորից խռովուել է և խնդրում են չահզադէն ներս գնայ:

Բէհման-միրզան վերկացաւ, գլուխ տուեց իշխաններին և ծանր քայլերով ուղղուեց դէպի հարամխանան:

Շահզադէները սրտամորմոք կսկիծով հետևեցին նրան, մինչև որ վարագոյրը ծածկեց նրան իրանց աչքից:

Մելիք-Գասըմ միրզան ծափ տալով, հրամայեց թէյ և ղէյլան բերել և գլգլացնելով ղէյլանի ջուրը ու քթի պնչերից արձակելով մուխը, նա ընկղմուեց խորին մտածողութեան մէջ: Երիտասարդ չահզադէները նոյնպէս լուռ մտախոհ ծխում էին ղէյլանը:

Լուսինը երևաց և նրա մեղմ, արծաթափայլ լոյսով հետզհետէ սկսեցին լուսաւորուել չինարիների կատարները. ապա նրա շողը ցոլացաւ ջինջ աւազանի մէջ. աւազանի ջուրը յորդելով սկսել էր վազել պարտիզի անցքերով և նրա ներդաշնակ կարկաչիւնը, խառնուելով ծաղիկների և վարդերի բուրմունքին, հաճելի զովութիւն և կենարար թարմութիւն էր սփռում ամբողջ պար-

տիղի մէջ. մի քիչ հեռու, վարդի թփերի մէջ ծածկուած սոխակները իրանց դայլայլիկներն էին լսեցնում հերթով. սկսում էր մինը, շարունակում էր երկրորդը, աւարտում էր երրորդը։ Սէր, կեանք էին երգում ծաղիկները, վարդերը, սոխակները. համակ բնութիւնը սէր, կեանք էր բուրում, բայց, զարմանալի հակասութիւն, այդ բնութեան ծոցում նստած երեք չահզադէների սրտի մէջ մահ էր թագաւորում։ Եւ մահը, դարչելի, սոսկալի մահը արդէն մօտենում էր իր ճիւաղ դէմքով, յանձին մէմուրների և դահիճների։ «Զուր չէր բայղուշի[1]) չարագուշակ ձայնը Շահի պալատում, մտածեց Մէլիք-Գասըմ միրզան, ահա այսօր խեղճ Բէհմանի օրը խաւարուում է»։

Անցաւ մի ժամ, անձկալից, սրտամաշ ժամ։ Կորած էր Բէհման-միրզան, եթէ փախուստը չը յաջողուէր, բայց հարամխանան լուռ էր, ոչ մի աղմուկ չէր լսւում։

Յանկարծ պարտիզի դռան վարագոյրը բարձրացաւ. լուսինը արդէն բարձրացել էր երկնակամարի վրա և լուսաւորել ամբողջովին պարտէզը։ Մի աղմուկ բարձրացաւ դռան մօտ և մի սպասաւոր, վազ տալով, սփրթնած, դողահար կանգնեց չահզադէների առաջ։

---

[1]) Բու։



—Շահի արդալբաշիներն[1]) են և ջալլադները[2]), հազիւ կարողացաւ արտասանել նա։ Շահզադէին են ուզում։

—Ասա գան այստեղ, հրամայեց Մէլիք-Գասըմ միրզան։

Բայց մէմուրները, երկու հոգի, արդէն մօտենում էին, առաջնորդուած ճրագները ձեռքին բռնած փիշխըդմէթներով. Աւագը, որ մի կարճահասակ մարդ էր, մօտեցաւ չահզադէներին և խոր գլուխ տալով, ասաց. «Շահից ֆէրման ենք բերել, որտեղ է չահզադէ Բէհման-միրզան»։

—Օրհնեալ է Շահի ֆէրմանը, ասաց Մէլիք-Գասըմ միրզան, առանց հրաւիրելու մէմուրներին նստելու. չահզադէն այստեղ էր, մի քանի րոպէ առաջ կանչեցին հարամխանայից, շուտով կը վերադառնայ, մենք էլ սպասում ենք։ Խէ՞ր է ձեր գալուստը։

—Ալլահը աւելի շառից պաշտպանէ չահզադէին, պատասխանեց մէմուրը, կամենալով արտայայտել այդ խօսքերով, թէ չահզադէն աւելի մեծ դժբախտութեան կարող էր ենթարկուել, բայց Աստուած գթացել է նրա վրա։

—Մի՞թէ Բէհման-միրզային որ և է դժբախտութիւն է սպառնում, խորին զարմանք կեղծելով հարցրեց Մէլիք-Գասըմ միրզան։

Եւ դառնալով սպասաւորներին, հրամայեց.

---

[1]) Պալատական պահակապետ։ [2]) Դահիճ։

«Տուտ սուրճ և ղէյլան բերէք Միրզա-Աբբաս-խանի համար, իսկ ձեզանից մինը թող իմաց տայ ենդէրունին, որ չահզադէին կանչեն. թող ասեն, որ նոր հիւրեր են եկել և չահզադէխանըմին ոչինչ չը յայտնեն»:

Ապա դիմելով աւագ մէմուրին, յարեց. «Բիս-մուլլահ, Աբբաս-խան, նստիր. այդ ինչ վատ լուր ես բերել»։

—Ինչ անեմ, չահզադէ, ամենքս պարտաւոր ենք կատարել Շահի մուբարէք հրամանը։

—Ի հարկէ, ի հարկէ, ասացին չահզադէները, բայց ինչ հրաման է տուել Շահը։

—Աշխարհի աղօթարանը յանձնելով մեզ այս մատանին, հրամայել է մեզ կուրացնել Բէհման-միրզա չահզադէին, իր եղբօրը։

Եւ հանելով գրպանից թիրմա շալից կարած և ուլունքածուպ մի քսակ, Աբբաս խանը հանեց միջից Շահի կնիքը ու համբուրելով ու դնելով գլխին, մատուցեց չահզադէներին:

Շահզադէները նոյնպէս համբուրեցին, դրին գլխների վրա։

—Բայց ինչ է Բէհման-միրզայի յանցանքը, որ արժանացել է այդպիսի մեծ պատժի:

—Նա, չէյթանի դրդմամբ, մտադրուել է զրկել աշխարհիս աղօթարանին կեանքից և ինքն Շահ դառնալ։

—Որպիսի յանդգնութիւն, սարսափելի ոճիր, արդարև, արժանի աւելի մեծ պատժի, միաբե-



րան պոռացին չահզադէները։ Բայց միթէ այդ ճշմարիտ է. միթէ նա ընդունակ է այդպիսի անլուր յանցանք գործելու իր հարազատ եղբօր դէմ։

—Ալլահը միայն գիտէ սուտն ու ճշմարիտը, բայց մենք պարտաւոր ենք կատարել մեզ տուած հրամանը։

—Ի հարկէ, ի հարկէ, ասաց Մէլիք-Գասըմ միրզան, բայց մեր այստեղ ներկայ լինելն անյարմար է. լաւն այն է հեռանանք, գնանք, քանի որ դժբախտին ոչնչով օգնել չենք կարող։ Միայն, Աբբաս-խան, խնդրում ենք այնպէս անել, որ չահզադէն շատ չը տանջուի, եթէ կարելի է, գոնէ միայն մի աչքը խաւարեցնել. Շահը բարկութեան ժամանակ հրաման տուել է, բայց յետոյ անպաճառ կը փոշմանի և քեզանից էլ շատ գոհ կը լինի, որ խնայել ես եղբօրը. հաւատա ինձ, դու դեռ վարձատրութիւն էլ կը ստանաս։

—Հազրաթ-Աբբասը վկայ է, որ ես շատ ցաւում եմ չահզադէի համար և ձեռքիցս եկածը գործ կը դնեմ մեղմացնելու նրա տանջանքը և գոնէ մի աչքը կուրացնելու համար, բայց, դուք շատ լաւ գիտէք, որ այս անիրաւ դահիճները գութ և կարեկցութիւն չունեն և սպասում են, որ դուք մեղմացնէք չահզադէի տանջանքը:

—Հասկացանք, հասկացանք, ասաց Մէլիք-Գասըմ միրզան, դահիճները սպասում են, սովո-

րական ընծային [1]). մենք պատրաստ ենք տալ նրանց առատ ընծայ. այդ նրանց իրաւունքն է:

Եւ հանելով գրպանից լուլա ծալած թուղթ ու գալամդանը նա գրեց 200 թումանի հաւալա իր գանձապահի վրա ու կնքելով, մեկնեց Աբբաս-խանին:

—Ահա նրանց հասնելիքը. այժմ մենք գնանք: Դժբախտ, դժբախտ եղբօրորդի, հառաչելով և արտասուելով ասաց Մելիք-Գասըմ միրզան ու ուղղուեց երիտասարդ շահզադէների հետ դէպի դուռը:

—Շահզադէների երիվարները թող բերեն, պոռաց Աբբաս խանը, երբ դուրս եկան փողոց: Նա բռնեց ձիի ասպանդակը և օգնեց Մելիք-Գասըմ-միրզին հեծնել ձին:

Փողոցում արդէն հաւաքուել էր հետաքրքիր անցորդների մի ստուար խումբ. դահիճների գալը մեծ իրարանցում էր առաջ բերել և ահագին յուզմունք, բայց ոչ ոք դեռ հաստատ չը գիտէր, ում գլուխը պէտք է կտրուի:

Երբ ահզադէնները մեկնեցին, Աբբաս-խանը վերադարձաւ պարտէզ, մի քանի րոպէ փափաց

[1]) Պարսկաստանում սովորութիւն է, որ մեղապարտի ազգականները պէտք է դրամական նուէր տան դահճին, որպէս զի մեղապարտին գլխատելիս, դահիճը չընթարկէ նրան երկար տանջանքի, գլուխը չը կտրէ բութ դանակով, կամ աչքերը չը հանէ բութ գործիքով:



դահիճների հետ և տալ հրամայեց փեշխըդմէթներին գնալ էնդէրուն և իմաց տալ շահզադէին, որ Շահի հրամանով նրանք եկել են մի կարևոր յանձնարարութիւն կատարելու և սպասում են շահզադէին արքայական ֆիրմանը յայտնելու համար:

Բայց որսը արդէն փախել և թռչնիկը ազատուել էր վանդակից:

Մի քառորդ ժամից յետոյ Աբբաս-խանը և դահիճները համոզուեցին, որ պէտք է ձեռնունայն վերադառնան:

## IX

Սրճարանը, ուր մտան Սէլիմը և Իբրահիմը, լի էր ղէյլան ծխողների և թէյ խմողների ահագին բազմութեամբ: Կեղտոտ կարմիր ֆ ո տ ա ն ե ր ը [1]) գոգնոցի տեղը կապած ղէյլանչի սպասաւորները, որոց ճակատից ծորում էր կեղտի հետ շաղախուած քրտինքը անդադար այս ու այն կողմն էին վազում ու տալիս որին մի ղէյլան, որին մի ֆինջան սուրճ. Նոյն կեղտոտ ֆոտայով նրանք մաքրում էին գաւաթները նախապէս մխելով սրճարանի մէջտեղի մեծ աւազանի մէջ, որի ջուրը թէյի բաժակների ու ղէյլանների լուացումից դեղնագոյն տեսք էր ստացել: Այդ

[1]) Բաղնիքներում գործածուող գոգնոց:

աւազանի մէջ մխւում էին և կաւէ լուլէինները առանց որոնց հաւատացեալները ոչ կարող են արտաքնոց գնալ, ոչ էլ նէմազ կատարել:

Երբ երկու չաթիրները ներս մտան, ամենքը ոտքի կանգնեցին՝ «բիսմուլլահ, բիսմուլլահ, ալա ֆէրրաշբաշի[1])» ասելով։ Վերջին խօսքը վերաբերում էր Սէլիմին, որը թէև դեռ ֆէրրաշբաշիութեան աստիճանին չէր արժանացել, բայց արդէն վաղուց այդ տիտղոսը վայելում էր ամբոխից[2]). սակայն երկու ֆէրրաշները գլխի թեթև շարժումով պատասխանելով յաճախորդների բարևին, ասացին. «Ոչ, մենք կ՚անցնենք դուրսը, կը նստենք սաքույի վրա, այնտեղ աւելի զով է»։

Եւ գնալով ու նստելով սաքուի տախտակեայ տախտի վրա, Սէլիմը պոռաց. «Բէչչա, մի լաւ ղէյլան չաղ արա Շիրազի թամբաքուից և երկու դաւաթ դաղ ու չիրին[3]) թէյ բեր մեզ համար»:

Սաքուից կարելի էր նկատել փողոցի անցուդարձը ու դիտել Բէհման-միրզա չահզադէի տունը։

---

1) Համեցէք, համեցէք, տէր ֆէրրաշապետ։ 2) Պարսկաստանում քաղաքավարութիւնը պահանջում է խօսակցին մի աստիճանով բարձր անուանել. եթէ հարիւրապետ է, պէտք է ասել հազարապետ. եթէ գնդապետ է—զօրապետ. եթէ հասարակ զինուոր է—տասնապետ. զուլամ է—զուլամբաշի, ֆէրրաշ է—ֆէրրաշբաշի։ 3) Քաղցր։



Սէլիմը տեսաւ շահզադէների գալը Բէհման-միրզայի տունը և որովհետև իֆթարի ժամանակ էր, ուստի ոչ մի արտակարգ բան չը նկատեց այդ այցելութեան մէջ, բայց երբ երրորդ ղէյլանը ծխելիս նա տեսաւ, որ մի կին, ըստ երևոյթին աղախին, անցաւ սրճարանի առջևից և ուղղեց քայլերը դէպի շահզադէի տունը, նա վեր կացաւ, պատուիրեց Իբրահիմին դիտել և գնաց կնոջ ետևից։ Լսելով իր ետևից ոտնաձայն, կինը յետ դարձաւ ու նկատելով որ փողոցում ուրիշ մարդ չը կայ, բարձրացրեց երեսի քօղը և Սէլիմը ճանաչեց Եասամանին։

—Գնա տեղդ նստիր և մի շարժիր մինչև իմ դուրս գալս. երբ դուրս կը գամ ետևիցս եկ և յարմար տեղում ամեն բան կը պատմեմ քեզ. այս գիշեր շատ բաներ կ՚անցնեն։

Արագ արագ արտասանելով այս խօսքերը խափչիկուհին երեսի քօղն վայր ձգեց ու մտաւ շահզադէի տունը։

Սէլիմը մնաց շուարած կանգնած. նա այժմ հասկացաւ, որ մի խորհրդաւոր բան է կատարուելու այս գիշեր շահզադէի տանը և դրա համար բէգլար-բէգին ուղարկեց իրանց հսկելու, բայց ինչ բան—նա չէր կարողանում գուշակել։ «Այս սատանայ Եասամանը եթէ եկել է այստեղ, զուր չէ եկել, ուրեմն լսենք նրան և տեսնենք ինչ կը տնօրինէ Ալլահը»։

Եւ վերադառնալով ու բռնելով սաքուի վրա

իր առաջուայ տեղը, նա պատուիրեց չորրորդ չաղ ղեյլան ու տասներորդ դաղ ու չիլին թէյի գաւաթ.

Սրճարանում մի դերվիշ հեքիաթ էր պատմում, Րուստամ-Զալի ու Զոհրաբի հեքիաթը. յաճախորդները նստած աւազանի չորս կողմը, ղեյլանների կլկլոցի մէջ, թէյի գաւաթները դատարկելով մէկ մէկու ետևից, լսում էին հեքիաթբանին։

Փողոցում մարդիկ աբաների, ջուբաների մէջ, իսկ կանայք չարշաւների և չախչուրների մէջ փաթաթուած անց ու դարձ էին անում, մեծ լապտերները առաջներից տանել տալով ծառաներին։

Հազիւ անցած կը լինէր գիշերուանից հինգ ժամ[1]) և ահա փողոցի ծայրին, այնտեղ ուր չահզադէի տան պատը անկիւն էր կազմում, երևացին երեք կանայք, որոնցից մինը թևքի տակին մի ջ ա ր բ ա[2]) ունէր պահած, իսկ երկրորդը գլխին դրած մի բօղչա։ Այդ երկու կանայք հետևում էին երրորդին, որի մետաքս չարշաւից, ուրբանդի ոսկէ հանգոյցներից խանըմ լինելն հեշտ իմացվում էր։ Փորձառու աչքը կարող էր սակայն դիտել, որ մի աննշական բան կար խանըմի քայլերի և շարժումների մէջ։ Այդ երեք կանայք, տարակոյս չը կար, դուրս էին գալիս

1) Պարսիկները ժամի հաշիւները եզանից են սկսում, արևամուտքից, ուրեմն եւրոպական մօտ ժամը 11-ին գիշերուայ։ 2) Արկղիկ։



չահզադէի հարեմխանայից, որի դուռն մեծ փողոցի վրա դուրս եկող դ ա ր բ ա ն ա ի ց[1]) էր, որտեղ ուրիշ այլ դուռը չը կար։ Բօխչան տանող կնոջ չարշաւից և քայլուածքից Սէլիմն անմիջապէս ճանաչեց Եասամանին. նա ենթադրեց, որ չահզադէ խանըմը երևի հիւր է գնում Լէյլա խանըմի մօտ և Եասամանը եկել է հրաւիրելու ու առաջնորդելու. զարմանում էր միայն որ իշխանուհին լոկ մի աղախին է վեր առել հետը, հակառակ սովորութեան և ոտքով է գնում, փոխանակ ոսկեսարաս ջորու կամ սպիտակ էշի վրա հեծնելու։

Երբ երեք կանայք մօտեցան սրճարանին, չաթիրները վեր կացան և Սէլիմը խոր գլուխ տուեց առաջից գնացող խանըմին. վերջինս մի տեսակ ցնցուեց, կարծես երկիւղից. բայց Եասամանը մօտենալով նրան ինչ որ փսփսաց ականջին և խանըմը շարունակեց ճանապարհը։ Այդ միջոցին յանկարծ մի իրարանցումն սկսուեց փողոցում. սրճարանից մարդիկ սկսեցին դուրս թափուել և վազել դէպի չահզադէի տան մեծ դուռը. «Ալլահ, Ալլահ, լսում էին ցած ձայնով արտասանուած խօսքեր, դահիճներ են եկել, ինչ է պատահել»։ Խանըմի ծնկները կարծես կըծկուեցին. Նա արձանացած կանգ առաւ սրճարանի մօտ, բայց Եասամանը մօտենալով կամաց մըր-

1) Նեղ, փոքր փողոց, որ մի մուտք ունի։

մնջաց. «Ի սէր Ալլահի, աղա, քեզ մի կորցնի, մեզ ոչ ոք չէ կարող ճանաչել, այս խրախանցումի մէջ կարող ենք աննկատելի կերպով հեռանալ, սիրտ ա՛ռ»: Եւ դառնալով Սէլիմին ասաց նրան. «Եկ մեր ետևից, անհրաժեշտ է, յետոյ կը վերադառնաս այստեղ»։

Եւ երեք կանայք առանց որևէ ուշադրութիւն հրաւիրելու իրանց վրա դուրս եկան փողոցից և մտան մի այլ նեղ փողոց։ Սէլիմը պատուիրելով Իբրահիմին գնալ շահզադէի տունը և հսկել, հետևեց կանանց։

Նրանք դուրս եկան նեղ փողոցից, մտան այն մեծ փողոցը, որ յայտնի է այժմ Ջըրաղ-գաղի անունով և շտապ շտապ գնում էին մինչև հասան այն բազարչէի[1]) առաջ, որ կից է ռուսաց դեսպանատան շինութեան: Այդտեղ փոխանակ շարունակելու ճանապարհը դէպի Իմամ-ջումայի տունը, նրանք մտան բազարչէյի մէջ և երբ երևաց ռուսաց դեսպանատան մեծ դուռը, խանըմը յանկարծ վազեց, իբրև տղամարդ, և մի թռիչքով մտաւ դեսպանատան բակը բաց դռնից —իսկ դուռը բաց էր ռամազանի պատճառով— այնպէս որ դռան առջև իրանց հրացանները չատմա[2]) խփած սարբազները նոյն իսկ ժամա-

[1]) Փոքր բազար։ [2]) Նշանաւոր պաշտօնեաների տան դռան առաջ հրացանները միմեանց կցրած են լինում եռանկիւնաձև, այդ կոչւում է չատմա։



նակ չունեցան տեղից վեր կենալու: Խանըմի ետևից ներս վազեցին երկու աղախինները, որոնցից մինը անմիջապէս ցած դրեց բոխչան և այնտեղից հանեց տղամարդի ջուբբա, գլխարկ և կօշիկներ։ Խանըմը դէն ձգեց չարչաւը, հանեց չախչուրները, ուրբանդը և երբ հագաւ տղամարդի շորերը, ապշած և դուրսը կանգնած Սէլիմի աչքերին երևաց երիտասարդ, գեղեցիկ Բէհման-միրզա շահզադէն։

Ի տես Շահի եղբօր դեսպանատան զինուորները և ղուլամները վեր թռան և հրացանները բռնելով զինուորական պատիւներ տուին շահզադէին, որն, դիմելով ղուլամներից մէկին, բարձրաձայն ասաց. «Գնացէք յայտնեցէք ջանաբ վէզիր-մուխտարին[1]), որ Բէհման-միրզա շահզադէն եկել բէստ է մտել ամենահզօր ռուսաց իմպէրատօրի դրօշակի տակ»։

Եւ անմիջապէս գնաց ու կանգնեց մեծ դռան այն կամարի տակ, որի վրայ ծածանւում էր ռուսական դրօշակը։

Այդտեղ, նա ազատ շունչ քաշեց. նա ապահով էր. նա գիտէր, որ ռուսական հզօր արծուի թևերի տակ գտած ապաստարանը, բէստը այնքան նուիրական է, որ նոյն իսկ ինքը Մահմէդ Շահը եթէ գալու լինի, ոչինչ անել չէ կարող։ Դեսպանն էլ, երկրի նուիրական աւանդութիւնները

[1]) Բարձրապատիւ լիազօր դեսպանին։

խախտել չէ կարող, ուստի և կամայ ակամայ ստիպուած է իր հովանաւորութիւնը շնորհել յանուն ուսաց մեծազօր կայսրի։

Ապա դառնալով իր աղախնին ասաց. «Բէգում, գնա յայտնիր շահզադէ խանըմին, որ կեանքս ապահով է»։

Եւ առնելով Եասամանի ձեռքից ջարբան, որի մէջ էր իր ամբողջ գոհարեղէն գանձը, յուզուած ասաց. «Շնորհակալ եմ, Ալլահը թող օրհնի քեզ, թող Իմամ-Րիզան վարձահատոյց լինի քեզ քո անձնուիրութեան համար, առ այս մատանին յիշատակ»։

Եասամանը չոքեց և համբուրեց շահզադէի փէշերը, և ստացաւ զմրուխտի թանկագին մատանին. խափշիկուհին լացեց. «Թող Ալլահը ս ի ւ ր գ ի ւ ն[1]) անէ քո թշնամիներին»։

—Իսկ դու, Սէլիմ չաթիր, գնա պատմիր անցած-դարձածը բէգլար-բէգուն. թող նա և ք ե օ ս ա[2]) Հաջին կատաղեն բարկութիւնից. ասա որսը թռաւ։

Սէլիմին մնում էր միայն խոր գլուխ տալ և հեռանալ։ Նա գնում էր կոր ի գլուխ. այժմ միայն հասկացաւ թէ որքան մեծ վտանգ է սպառնում իրան. կարող են կարծել, որ ինքը նպաստել է շահզադէի փախստին և այն ժամանակ ոչ ոք նրա գլխին մի բխտի անգամ չէր տայ։ Ի՞նչ անել, ինչպէս ազատուել։

1) Հալածական։ 2) Գօշ։



—Ախ, անիծեալ Եասաման, այս ինչ օյին հանեցիր գլխիս. հիմա ես ի՞նչ անեմ։

—Ես քեզ այդքան յիմար չէի կարծում, աղա Սէլիմ. ի՞նչ պէտք է անես. պէտք է օգուտ քաղես և դեռ ընծայ ստանաս բէգլար-բէգուց։ Վազիր, պատմիր Աբբաս-խանին և բէգլար-բէգուն ինչ որ տեսար աչքովդ և լսեցիր ականջովդ. չէ որ դեռ ոչ ոք չը գիտէ որտեղ է փախել շահզադէն։ Իմ անունս մի տար, իսկ Բէգումի համար ինքը կ'ասի, որ չէր իմանում խանըմը ուր է գնում և կարծել էր, որ խանըմն է, որովհետև շահզադէն խանըմի շորերն էր հագել։ Շուտ արա վազիր, իսկ ես կը գնամ տուն։

Սէլիմը քաշեց կռունկը և սլացաւ։ Երբ նա հասաւ Բէհման-միրզայի տունը, այդտեղ արդէն հասկացել էին փախուստը և մեծ իրարանցումն կար։ Աբբաս-խանը սաստիկ յուսահատ՝ ֆալախկայի էր կապել տուել շահզադէի սպասաւորներին, և պահանջում էր յայտնել, թէ որտեղ է թագնուել շահզադէն. «Ձեզ փայտի տակ սատկացնել կը տամ, գոռում էր նա, ձեզ թիքա-թիքա անել կը տամ, ձեր միսը աքցանով պոկել կը տամ, ձեր լէշը փողոցներով քաշ քաշ անել կը տամ, եթէ չը յայտնէք, որտեղ է թագնուել շահզադէն»։

—Վալլահ, բիլլահ, չը գիտենք, անտեղեակ ենք, լացում էին խարազանի հարուածների տակ սպասաւորները։

Դահիճները նոյնպէս յուսահատ էին. եթէ չահզադէն չը գտնուի, նրանք չեն ստանայ այլ և Մէլիք-Գասըմ միրզայի տուած 200 թումանները։

Այդ րոպէին լեղապատառի նման բակը մտաւ Սէլիմը։

—Խան, ասաց նա, գլուխ տալով Աբբաս-խանին, ես գիտեմ որտեղ է չահզադէն։

Եւ նա պատմեց ինչ որ գիտէր. նա, ի հարկէ, չէր կարող երևակայել, թէ կնոջ հագուստի մէջ չահզադէն է. նրան միայն կասկածելի էր թուացել, որ չահզադէ-խանըմը մի հոգի աղախնու հետ դուրս էր եկել տանից, հետևել էր տեսնելու, թէ որտեղ է գնում, և այդ ձևով իմացել էր պատահածը։

Աբբաս-խանի ուրախութեան սահման չը կար. նա այժմ իր գլուխը ազատուած տեսաւ. նա իսկոյն յղացաւ մտքում ծրագիրը, ինչպէս պէտք է յայտնէր եղելութիւնը Շահին և սադրազամին։ Երբ նա եկաւ, չահզադէն արդէն վաղուց կանացի հագուստով փախած է եղել և ոչ ոք չէր կարող կասկածել ու ըմբռնել, թէ Բէհման-միրզան կանացի հագուստ կը հագնէ։ Նա գիտէր ուրեմն իր գլխի գալիքը և հետն էլ տարել էր իր գոհարեղէնը։

Եւ հրամայելով արձակել սպասաւորներին ֆալախկայից, նա ձի նստեց ու քշեց դէպի սադրազամի տունը։



Սէլիմ չաթիրը վազեց բէգլար-բէգու տունը, որպէս զի ինքն առաջինը յայտնի ոստիկանապետին անցքը։

—

Այդ երեկոյ բէգլար-բէգին իր երանութեան գագաթնակէտին հասած էր կարծում իրան. երկու ամիս առաջ, իբրև հաւատարիմ մուսլիմ, նա չորրորդ քեաբինն էր կատարել և օրինական երեք քեաբինաւոր կանանց թուին աւելացրել էր չորրորդը. նա առել էր չահզադէ Աբգար-միրզայի աղջկան և այդպիսով ունէր չահզադէ-խանըմ կին։ Սակայն յիմարութիւն էր ունեցել մի սխալ գործելու, որ իրան շատ թանգ էր նստել. յոյս դնելով իր գեղեցկութեան, հարստութեան վրա, նա թոյլ էր տուել իրան խախտել աւանդական սովորութիւնը, որի համաձայն ամուսինը, երբ մտնում է անկողին, և կինը չահզադէ-խանըմ է, պէտք է սպասի մինչև կինը մտնի անկողին—առագաստ, ապա ամուսինը պէտք է մտնի անկողին ոչ թէ կողքից, այլ ներքևից, կնոջ ոտքերի կողմից, բարձրացնելով վերմակը և սահեցնելով իր գլխի վրայով։ Դա յարգանք և պատիւ է, որ տրւում է կնոջ ծագումին։ Կնոջից է կախուած ազատ կացուցանել ամուսնուն այդ յարգանքը մատուցանելուց։ Արդ, բէգլար-բէգին մտել էր անկողին ոչ թէ ներքևից, այլ կողքից և սաստիկ գրգռել էր չահզադէ-խանըմի բարկութիւնը. նա վռնդուել էր անմիջապէս և այդ

օրից շահզադէ-խանըմը պլանում էր թոյլ տալ նրան կատարել իր ամուսնական պարտաւորութիւնը։ Վերջապէս ընծաներով և աղաչանքով կարելի էր եղել ողոքել և կակղացնել գեղանի հարսի սիրտը, որն, վերջապէս զիջել էր թոյլ տալու նրան անխափան կատարել իր ամուսնական պարտաւորութիւնը պահպանելով, ի հարկէ, աւանդական ձևականութիւնը։

Այդ երեկոյ, իֆթարից յետոյ, բէգլար-բէգին շտապել էր սովորականից մի քիչ առաջ մտնել հարէմխանէն. Նա արդէն հաշտուել էր շահզադէ խանըմի հետ. աղախինները արդէն փռել էին գորգի վրա անկողինը և բէգլար-բէգին գօտին քակած, գլխարկը՝ հանած և թիրմա արաղչինը[1])՝ դրած, սպիտակ վարտիկով, սառն օշարակի գաւաթը ձեռքին պչրանք էր ցոյց տալիս սէգ և սիւրմայով շպարուած իշխանուհուն, որ հագին ունէր միայն հարէմական զգեստ[2]). Նա շէյր[3]) էր ասում Հաֆիզից, Սադիից. Նա նմանեցնում էր շահզադէ-խանըմի ոտները եղնիկի ոտներին, իրանը՝ նօճի ծառին. Նա գովում էր նրա երեսի խալը. «այդ խալին—ոգևորուած պոռում էր նա, կրկնելով, բանաստեղծի խօսքերը—կը բաշխեմ Սամարղանդը և Բուխարան»։

---

[1]) Թասակ։ [2]) Հարէմում կինը կիսահագնուած պէտք է լինի, մանաւանդ անփոխան։ [3]) Ոտանաւոր։



Հասել էր արդէն րոպէն, և գոռոզ բէգլար-բէգին պատրաստւում էր աւանդական եղանակով առագաստ մտնել, երբ յանկարծ հարէմխանայի դրսի դուռը պինդ կոփուեց։ Որ մահկանացուն էր համարձակւում այդպէս անյարմար րոպէին խանգարել բէգլար-բէգու երանաւէտ հանգստութիւնը. չէ՞ որ խիստ պատուէրներ էր տուել, որ մինչև սհարփի կերակուրը իրան չանհանգստացնեն։ Այդ կոփոցի մէջ նա մի չարագուշակ բան զգալով, սարսուեց. շատ էլ հանգիստ խղճմտանք չունենալով, նա կարծեց, որ գուցէ աշխարհի աղօթարանը նորից բարկացել է իր վրա. Նրա վախեցած երևակայութեան առաջ նորից պատկերացաւ ֆալախկան և գուցէ մետաքսէ պարանը..։

Կոփոցը սաստկանում էր. շուտով լսուեց ոտնաձայն. մի քիչ յետոյ աղախիններից մինը վարագոյրի ետևից կամաց խօսեց. «խան, ֆէրրաշբաշին ասում է, որ իսկոյն պէտք է բիրունին գնաք. ծանր բան է պատահել. Սէլիմ շաթիրը այս րոպէին լեղապատառ, վատ լուր է բերել»։

Բէգլար-բէգին ծլունկ եղաւ տեղից. Նա մոռացաւ և սէրը և շէյրը. Նա շտապով հագնուեց, գօտին կապեց, ջուբան ձգեց և սլացաւ դուրս։ Բիրունիի աւազանի մօտ կանգնած էր Սէլիմը, որ խոր գլուխ տուեց և սպասեց մինչև բէգլար-բէգին կը հարցնէ։ Նա պատմեց թէ ինչպէս Բէհման-միրզա շահզադէն կնոջ ծպտեալ կերպարանքով փախել էր և ապաստանել ռուսաց դես-

պանատունը, ինչպէս Աբբաս-խանը սադրազամի ֆէրրաշբաշին եկել էր չահզադէին կուրացնելու և գոհարեղէնի ջաբբան վեր առնելու, բայց չահզադէն վաղուց անհետացել էր։ Սէլիմը չը մոռացաւ յայտնելու, որ ինքն է եղել չահզադէի փախստի տեղն իմացողը։

—Էֆէրիմ, էֆէրիմ, ասաց բէգլար-բէգին Սէլիմին, ուսը խփելով. քեզ մի լաւ ընծայ կը հրամայեմ տան»։

Բէգլար-բէգին վերստին գտել էր իր լաւ տրամադրութիւնը. սեփական վտանգի երկիւղն անցած լինելով, նա գոհ էր, որ չահզադէն փախել է, որովհետև սադրազամը նրան չէր յայտնել գործի էութիւնը, այլ միայն պատուիրել էր հսկել տալ չահզադէի տունը։ Այժմ նա զգացնել կը տայ ծերունի սադրազամին, որ եթէ գործը յանձնուած լինէր իրան, այդպիսի ելք չէր ունենայ. միւս կողմից նա կարող էր պարծենալ, որ իր ֆէրրաշներն են իմացել առաջինը չահզադէի ապաստարանի տեղը։ Որքան պիտի կատաղէ ծեր աղուէսը տեսնելով, որ որսը փախել էր իր ճիրաններից։

Բէգլար-բէգին հրամայեց անմիջապէս թամբել ձիերը և հետն առնելով ֆէրրաշբաշուն ու Սէլիմին, շտապեց սադրազամի ապարանքը։

—Գնացէք ամենակարճ ճանապարհով, հրամայեց նա իր ձիաւորներին. գնացէք հրէաների թաղի միջով։



Արդէն կէս գիշեր էր. փողոցներում անցուդարձը դեռ շարունակւում էր, բայց հրէական թաղում լռութիւնը արդէն տիրում էր։ Անցնելով սինագոգի առջևից, բէգլար-բէգին նկատեց, որ այնտեղ լոյս կայ և լսւում է աղմկալից խօսակցութիւն։ Նա պատուիրեց Սէլիմին մնալ հրէաների թաղում և իմանալ սինագոգում այդ ժամին գումարուած ժողովի պատճառը։

## X

Հրէական թաղը Թէհրանի ամենակեղտոտ թաղերից մինն է. որ փողոց մտնէք, անմիջապէս զգացւում է այն բնորոշ հոտը, որ յատուկ է հրէական բնակութիւններին։ Կարելի է կարծել, որ այդ թաղի բնակիչները մուրացիկ աղքատներ են. ոչ ունևորն է որոշւում, ոչ աղքատը. ամենքը գրեթէ մի տարազով հագնուած, և հագնուած բուն պարսկական ձևով. միայն ղաղաքի բաճկոնակի վրա կարուած կարմիր նշանը մատնում է հրէային։ Մեր պատմութեան ժամանակ ատելութիւնը և հալածանքը Իսրայէլի զաւակների դէմ դեռ շատ սաստիկ էր և այդ պատճառով հրէաները, միշտ ենթակայ կողոպտուելու վտանգին, աշխատում էին չը գրգռել մուսուլմանների ընչաքաղցութիւնը և ագահութիւնը. Նրանք իրանց ձևացնում էին աղքատ ղազարոսներ, թէև այդպիսիների թիւն ևս իրողապէս քիչ չէր։ Անմաք-

րասիրութիւնը, կեղտոտութիւնը այնքան մեծ էր հրէաների մէջ, որ նոյն իսկ պարսիկները, որոնք, սովորաբար, չեն փայլում առանձին մաքրասիրութեամբ, զզուանքով էին խօսում ք է ս ի ֆ [1]) ջհուդների մասին։

Փողոցները մութ էին և միայն լուսնի աղօտ լոյսով լուսաւորուած, բայց այնու ամենայնիւ կարելի էր նկատել, որ այդ գիշեր մի անսովոր շարժումն և յուզմունք կար հրէաների թաղում։ Դէպի սինագոգը տանող ճանապարհի վրա նկատւում էին ստուերներ, որոնք սահում էին պատերի տակով. դրանք մարդկային ստուերներ էին. երկիւղը ստիպում էր նրանց անդադար յետ նայել, տեսնելու համար, թէ ոչ ոք հետամուտ չէ իրանց և այդ պատճառով այդ ստուերները կծկուեցին պատերի տակ, երբ յանկարծ երևաց բէգլար-բէգին իր ձիաւորներով։ Հրէաները լեղապատառ եղան կարծելով, որ ամբոխը գալիս է ջհուդ-քուշան սարքելու, բայց տեսնելով բէգլար-բէգուն միամտուեցին և մինչև գետին խոնարհութիւն մատուցին նրան։

Շաթիր Սէլիմը, որ ճանաչում էր հրէաներից շատերին, մօտեցաւ նրանց, խօսակցութեան բռնուեց և իմացաւ, որ այդ գիշեր հրէական մզկիթում կամ սինագոգում, որն իր արտաքին ձևով մզկիթից ոչնչով չէր զանազանւում, պէտք է ծե-

1) Կեղտոտ։



րակուտական ժողով գումարուէր հրէայ աղջկայ հարցը վճռելու համար և այդ նպատակով Շահի ախոռատանը բէստ մտած ծերունի հրէան, Եսթերի հայրը, ինքն Եսթերը և նրա նշանած Սաւուղը, միրախոռի թոյլտուութեամբ, ծածուկ եկել են մզկիթը։

Սէլիմը միացաւ հրէաներին, ասելով որ նա պահպանութիւն կ'անի նրանց և ամենքը ուղևորուեցին սինագոգը։

Հրէական մզկիթը անճաշակ և անճոռնի կերպով շինուած փայտածածկ մի մեծ աղօթարան էր. գետնին տարածուած խսիրների վրա ծալապատիկ նստել էին հրէայ ծերունիները. երիտասարդները կանգնած էին լուռ մի կողմում, իսկ դիմացի կողմում նոյնպէս խսիրների վրա, չարշաւներում փաթաթուած նստած էին կանայք։

Մի քանի պղնձեայ մեծ և բարձր եօթնաճիւղեան աշտանակներ, որոնց մէջ տնկուած էին ճարպէ մոմեր, աղօտ կերպով լուսաւորում էին մզկիթը։

Տխուր էր այդ վայրը, տխուր և վշտալից էին նրա մէջ գումարուած Իսրայէլի զաւակները. տխուր էր Իսրայէլը։

Վեր կացաւ տեղից ծերունի խախամբաշին և աղօթողների խորին լռութեան մէջ արտասանեց.

«Լաց, լաց, Իսրայէլ, մոխիր և հող ցանիր գլխիդ, զի ծանրացաւ տիրոջ աջը քո վրա»։

Եւ յանկարծ սկսուեց մի ողբ. սուգ ու չիւան

պատեց ամենքին։ Լացում էին և ծերունիները և երիտասարդները, լացում էին կանայք և ջահել աղջկերքը։

«Տէր Եհովա, Տէր Սաբաւօթ, աղաղակ ենք բարձրացնում քո աթոռին, ունկն դիր քո ծառաներին»—նորից լսուեց բարունապետի լացախառն ձայնը։

«Մենք նստած ենք, Տէր զօրութեանց, խաւարի մէջ. մենք պաշարուած ենք երկիւղով։ Մենք խորտակուած ենք և վիրաւոր, իբրև ծառի ոստը՝ կատաղի փոթորկից. այսօր ճնճղուկի վիճակն անգամ երանելի է մեզ և նախանձելի»։

—Հող և մոխիր մեր գլխին, ողբացին կանայք։

—Հող և մոխիր վախկոտների գլխին, լսուեց երիտասարդների խմբից մի ձայն, թոյլ և անվստահ։

«Տէր զօրութեանց—նորից լսուեց բարունապետի խիստ ձայնը—մինչ ե՞րբ գերի մնանք և պանդուխտ օտար երկրում։ Այն հողը, որ Դու մեզ ապրելու սահմանեցիր, բանտ դարձաւ և ծով արտասուքի։ Մեր տունը սոսկալի բանտ դարձաւ, հացը՝ արիւն, ջուրը՝ դառն քան լեղի։ Ծիծեռնակը երկու հայրենիք, երկու տուն ունի. մենք մէկից անպամ զուրկ ենք։ Թշուառացանք մենք, Տէր, որպէս ծաղիկ պոկուած մայր արմատից։ Ո՞ւր է, Տէր, քո խոստացած Մեսիան։

—Ո՞ւր է Մեսիան, ու՞ր է Մեսիան, աղաղակեցին կանայք։



—Չը կայ Մեսիա, նորից լսուեց մի ձայն, այս անգամ աւելի որոշ և կտրուկ։

—Անօրէնութիւնն և անբարշտութիւնն է խօսում քո բերանով, Իսրայէլի անխոհեմ զաւակ—ասաց քահանան.—լսիր և ունկն դիր. մեծ է Աբրահամի, Իսրայէլի Աստուածը։ Յիշիր Սաղմոսի խօսքերը. «Ես ամբարշտին տեսայ գոռոզ և տեղը հաստատ ինչպէս լայնատարած դալար ծառը. բայց մէկ էլ անցնելիս՝ ահա չը կար նա, ման եկայ նրան և՞չը գտնուեց»։ Այսպէս կը լինի ամբարշտի վերջը.

—Հող և մոխիր մեր գլխին, դարձեալ կոծեցին կանայք,

«Տէր, մինչ ե՞րբ բուերը խայթոց, խոզերը ժանիք ունենան, իսկ մենք վէրքեր։

«Մինչ ե՞րբ երկաթը թշնամու ձեռքում, իսկ մեր ձեռքերը երկաթում»։

—Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ, յանկարծ թնդաց մի զօրեղ ձայն և մի երիտասարդ, դուրս գալով երիտասարդների խմբից, եկաւ կանգնեց մզկիթի մէջտեղ. մինչև այն ժամանակ, երբ ձեր ձեռքերն էլ կը սովորեն երկաթը գործածել, թշնամու երկաթի դէմ՝ երկաթով պատասխանել և յոյսը դարերով Մեսիայի վրա չը դնել։

—Սաւուղ, Սաւուղ, բայց անօրէնութիւնն է խօսում քո շրթունքով։

—Ոչ, արդարութիւնն է խօսում. լսեցէք հայրեր, մայրեր, եղբայրներ և քոյրեր։

Ամենքը յառեցին աչքերը Մաւուղի վրա. դա այն երիտասարդն էր, Եսթերի նշանածը, որին մենք տեսանք մեր պատմութեան սկզբում, երբ մուսուլման ամբոխի հարուածներից շշմած, գըլխիկոր գետին էր ընկել: Նա հազիւ 22 տարեկան կար. չը նայելով նրա հագուստի պարզութեան, նրա գեղեցիկ դէմքը, մանաւանդ այդ դէմքի նուրբ գծագրութիւնը իսկոյն աչքի էին ընկնում. աչքերը սևորակ և մեծ, փայլում էին. ճակատը լայն և բաց էր. զայրոյթի, վշտի բուռն ցնցումը տալիս էր նրա պատանեկական դէմքին առնացի արտայայտութիւն։ Աշտանակների մոմերի արձակած աղօտ լոյսը ընկնելով նրա դէմքի վրա, աւելի շեշտում էր նրա գեղեցկութիւնը գիշերային խաւարի մէջ։

—Լսեցէք հայրեր, մայրեր, եղբայրներ և քոյրեր, կրկնեց նա. թող ձեր որդին և եղբայրը ձեր առաջ շնորհ գտնի. մի բարկանաք յանդգնութեանս վրա և մի դատապարտէք ինձ. եթէ իմ լեզուս պապանձուի, քարերը և ժայռերը կը խօսեն: Ձեզ ամենքին քաջ յայտնի է մեր դրութիւնը. դա ստրուկի, անարգ ստրուկի դրութիւնն է. մենք տէր չենք ոչ մեր գոյքին, ոչ մեր կեանքին, ոչ մեր պատուին. մենք անզօր ենք պաշտպանելու մեր մայրերի, մեր կանանց, մեր քոյրերի պատիւը. մենք վարում ենք անարգ կեանք, արհամարհուած, ատուած ամե՛նքից։ Վերջին մուսուլման գեադան անգամ իրաւունք է



համարում նախատել մեզ, թքել մեր վրա, քեասիֆ ջհուդ անուանել մեզ: Լեղի է այն ջուրը, որ խմում ենք, աղու է այն հացը, որ ուտում ենք. շունը մեզանից աւելի պատիւ ունի և այս անարգ, ստրկական, անասնական վիճակը մենք համբերութեամբ տանում ենք, կրում ենք սերընդից սերունդ, հարիւրաւոր դարերից ի վեր. Մեր մէջ անհետացել է զգացումը, ամօթի, բարկութեան, վրէժխնդրութեան զգացումը. մենք ինքներս դէմ ենք անում մեր պարանոցները մեր թշնամիների սրին, մենք մուկնից աւելի վախկոտ ենք դարձել, մենք մեր սեփական ստուերից վախում ենք: Եւ այս ամբողջ անարգութիւնը մենք տանում ենք, որովհետև 2000 տարուց ի վեր սպասում ենք, որ կը գայ Եհովայի խոստացած Մեսիան, որը կ'առաջնորդէ մեզ նորից Աւետեաց երկիրը, մեր անձկալի հայրենիքը, կը նուաճէ ամբողջ աշխարհը, Իսրայէլի լծին կ'ենթարկէ մեզ հարստահարող, ճնշող ազգերը, մեր ոխերիմ թշնամիներին և թոյլ կը տայ մեզ յագեցնել մեր վրէժխնդրութեան ծարաւը, լուանալ, սրբել դարերով մեր վրա կուտակուած անարգական արատը: Աւաղ, 2000 տարի մենք սպասում ենք այդ Մեսիային, բայց նա չը կայ ու չը կայ: Տէրը, Աբրահամի, Մովսէսի, Դաւթի, Սողոմոնի Աստուածը մոռացել է մեզ: Ժամանակ է ուրեմն, որ մենք մտածե՛նք վերջ դնել այս անարգ վիճակին, մարդավայել կեանք ունենալ ուրիշների

պէս, եթէ ոչ մահը հազարապատիկ գովելի է այսպիսի ստորաքարշ կեանքից։

Մզկիթի մէջ տիրել էր այնպիսի խորին լռութիւն, որ դրսից անցնողը երբէք չէր կարող գուշակել, թէ այդտեղ բազմամարդ ժողով կայ. այդ չարաշուք լռութեան մէջ Սաւուղի ձայնը թնդում էր որոտաձայն։

—Դու հայհոյում ես, տղայ, քո հայրերի Աստծուն, կասկածելով նրա խոստման մասին, ասաց խախամներից մինը. դու մոռանում ես, որ Տէր Եհովան խոստացել է մարգարէների բերանով մեր հայրերին ուղարկել Մէսիային։ Եւ այն Աստուածը, որ նկուն արեց եգիպտացիներին, որ տուեց Սինա սարի վրա հրեղէն բոցի մէջ Մովսէսին տասը պատգամները, այն Աստուածը, որ յարուցեց Սաւուղին, Դաւթին և Սողոմոնին, չէ կարող դրժել իր խոստման։ Եթէ Տէր Սաբաւօթը դեռ այց չէ ելանում մեզ, եթէ Մէսիան դեռ չէ յայտնւում և Իսրայէլը դեռ դատապարտուած է ստրկութեան ու անարգութեան, պատճառը մեր ծովացած մեղքերն են, որ մեր գլխի մազերից շատ են։ Ուրեմն պահիր լեզուդ չարութիւնից և թող քո շրթունքները նենգութիւն չը խօսեն. լռիր և մի վրդովիր Իսրայէլի հաւատը։

—Ոչ, լռեցէք դուք, մեռել թաղողներ, դուք որ քարոզեցիք ստրկութիւն, սովորեցրիք մեզ ստրկութիւն, լռեցէք, երկչոտ կրծողներ, դուք, որ կոչում էք համբերութիւն, համբերութիւն.



լռեցէք, դուք հաստակաշի անդեղջիւրներ, դուք որ անզգայ էք հարուածներին, դուք որ ունիք ժանիք, եղջիւրներ ոչ թշնամուն, այլ միմեանց հարուածելու։ Դուք հասցրիք մեզ երիտասարդներիս այն դրութեան, որ մենք մի հաւ մորթել անգամ վախենում ենք և պարսիկը ծաղր ու նշաւակ է շինել մեզ, ասելով «վախկոտ իբրև ջհուդ», երբ կամենում է մէկին նախատել։ Դուք այսօր հաւաքուել էք այստեղ մի անարգ գործ կատարելու, գործ արժանի ստրկին. դուք, կամենալով ազատել ձեր անձը, ուզում էք զոհել մի անմեղ աղջկան, մատնել նրան անպատիւ, անարգ կեանքի, բայց վկայ է Տէրը, որ ես թոյլ չեմ տայ այդ, այլ բաւական է այն նախատինքը և տանջանքը, որ ես կրեցի. ես թոյլ չեմ տայ որ նշանածս զոհուի. միայն իմ դիակի գնով կարող էք կատարել ձեր անարգ գործը։

Ամբողջ ժողովը խոր յուզմունքի մէջ լսում էր Սաւուղի խօսքերը. վաղուց նա այդպիսի համարձակ և յանդուգն ճառ չէր լսել։

Սաւուղը, որ մի քանի օր առաջ, ինչպէս տեսանք, ոչխարի հեզութեամբ տանում էր ֆանատիկոս մահմեդական ամբոխի հարուածները, թուքը ու մուրը, այժմ բոլորովին կերպարանափոխուել էր. յուսահատութիւնը, սիրած նշանածին, գեղեցիկ Եսթերին կորցնելու վտանգը բոլորական մի նոր յեղափոխութիւն էր առաջ բերել նրա սրտի և հոգու մէջ. Նա վճռել էր իր սեպա-

կան արեան գնով ազատել իր նշանածին և նրա պատիւը։ Նրա ճառը ոչ միայն ազդեցութիւն գործեց հանդիսականների վրա, այլ գրգռեց նրանց համակրութիւնը դէպի Սաւուղը և Եսթերը։

Խախամները զգացին այդ և շտապեցին հակազդեցութիւն առաջ բերել ժողովի վրա։

—Քո խօսքերը, Սաւուղ, բղխում են յուսահատութիւնից և երիտասարդական անզուսպ կրքերից, իսկ յուսահատութիւնը և կիրքը վատ խորհրդատուներ են։ Յիշիր Սաղմոսի խօսքերը. «Սպասելով սպասեցի Տիրոջը և նա նայեց ինձ և լսեց աղաղակս։ Եւ ինձ հանեց կորստի հորիցը, տիղմոտ ցեխիցը, և վէմի վրա կանգնացրեց ոտներս և գնացքս հաստատեց։ Երանի այն մարդուն, որ իր յոյսը իր Տիրոջ վրա է դնում»։ Մենք ոչ մի զօրութիւն չունենք կռուելու, դէմ դնելու, մենք պէտք է սպասենք, մինչև Տէրը մեր օգնութեան հասնէ։ Եթէ մենք չենք զոհի մեր մի աղջիկը, կը կորչեն մեր բոլոր աղջիկները. կը կորչի ժողովուրդը. մահ է սպառնում ամենքիս, մահ է սպառնում մեր բոլոր տղաներին, աղջիկներին։ Թող Իսրայէլը, ծերակոյտը խօսէ, որովհետև ծերունիների բերանով իմաստութիւնն է խօսում։

«Լսիր ժողովուրդ, մահմեդականները այս պահանջն են անում մեզանից. տալ Եսթերին այն սէյիդին, որի հետ քեաբին են կապել. եթէ մերժենք «չհուդ-քուչանը» անխուսափելի է։ Մենք շատ լաւ գիտենք, որ կառավարութիւնը անզօր է



մօլլաներին դիմադրելու. Ճակատագիրը այնպէս է տնօրինել, որ Եսթերը մահմեդականի կին լինի. նա պէտք է հնազանդէ իրան վիճակ ընկած բաժնին և փրկէ Իսրայէլը, որ կորստի է մատնուած։

—Թող խօսէ ծերակոյտը, թող վճռէ ծերակոյտը, պոռաց ժողովուրդը.

Եւ արդէն այդ խօսքերի չեշտից նկատելի էր, որ հանդիսականների տրամադրութիւնը փոխուել է։ Այդպէս է ամբոխի հոգեբանութիւնը. նա մի րոպէ առաջ խղճում էր Եսթերին, նրա մէջ խօսում էր մարդասիրական զգացմունքը. բայց երբ իմացաւ, որ այդ զգացմունքը կարող է վնասել իր սեպական կաշուին. իւրայիններին, գութը անհետացաւ, զգացումը լռեց և նրան փոխարինեց եսասիրական ցանկութիւնը—աւելի լաւ է նա կորչի, քան ես. աւելի լաւ է մինը զոհուի, քան շատերը.

Սաւուղը զգաց այդ հոգեբանական փոփոխութիւնը և, դառնացած, անէծք մրմնջալով, լռեց։

Ծերունիները սկսեցին խորհրդակցել կամաց. Ապա րաբունապետը հանդիսաւոր ձայնով ասաց. «Մեծ է Իսրայէլի Աստուածը, մեր հայրերի Աստուածը, բայց Իսրայէլը կորստեան վտանգի ենթարկուած՝ զոհ է պահանջում. սինեդրոնը վճռում է որ Եսթերը, Բէնիամինի դուստրը, ազատէ ժողովուրդը այդ վերահաս վտանգից. ի՞նչ է Բէնիամինի կարծիքը»։

Ամենքի նայուածքը ուղղուեց ծերունուն, սա

վեր կացաւ և արտասուքը թափելով, հեկեկալով ասաց.

—Ես բազմաթիւ զաւակների տէր էի, Տէրը առաւ ինձանից. ես հարուստ էի, Տէրը խլեց հարստութիւնս. մնացել է մինուճար զաւակս, որ ծերութեան մխիթարիչս, նեցուկս է. այդ էլ էք ուզում խլել։ Վա՜յ ինձ, վա՜յ ինձ։

—Բէնիամին, ասաց խստաբար խախամբաշին, Յոբը ունէր եօթը որդիք, երեք աղջիկ, եօթը հազար ոչխար, երեք հազար ուղտ, հինգ հարիւր լուծ եզ և հինգ հարիւր՝ մատակ էշ. Եհօվան խլեց այդ ամենը և նա սակայն չը թերահաւատեց ինչպէս դու։

Ծերունին գլուխը քաշ գցեց, ապա մի խոր հառաչ արձակելով, ֆատալիստի հեզութեամբ ասաց.

—Թող օրհնուի Տիրոջ կամքը։

Եւ հեծկլտաց նա դառնագին։ Իբրև գազան մունչեց Սաւուղը և ամբողջովին բոց ու կրակ կտրած, մի ոստումով անցաւ կանանց կողմը ու կանգնելով գետնին նստած Եսթերի առաջ, պոռաց.

—Ես համաձայն չեմ, ես իմ նշանածիս չեմ տայ. տեսնեմ ով է համարձակում մօտենալ։

Եւ օդի մէջ շողացրեց մի փոքրիկ դաշոյն, որ հանեց գօտու միջից։

—Զէնք Տիրոջ տաճարի մէջ. ամբարշտութիւն, ամբարշտութիւն, գոռացին խախամները։



—Նա խելագարուել է, պոռացին միքանի անձինք։

—Տեսնենք ինչ է ասում ինքն Եսթերը, ասաց ռաբբին. Եսթեր, զաւակս, ասա, կամենո՞ւմ ես փրկել ժողովուրդը։ Իսրայէլի փրկութիւնը քեզանից է կախուած։

Տիրեց խորին լռութիւն։

Կանանց դասից բարձրացաւ մի կին և մի քանի քայլ առաջ գնալով կանգնեց մզկիթի մէջտեղ, սինեդրոնի առաջ։ Նա դէն գցեց չարչաւը և երիտասարդները չը կարողացան զսպել հիացման և սքանչացման բացագանչութիւններ։

Նազելի և գեղեցիկ էր Եսթերը, Բէնիամինի աղջիկը։ Բեհեզեայ փոքրիկ թասակի տակից թափւում էին ուսերի վրա սև սաթեայ վարսերը և հասնում մինչև ոտները. մարգարտեայ մի մանեակ, ձգուած պարանոցին, աւելի գունատ էր դարձնում նրա գաղտակրեայ մորթը. աչքերը խորունկ և սև՝ արտայայտում էին կուսական անմեղութիւն. բոյը՝ բարձր և մէջքը սեղմուած ոսկեայ կամարով և առ հասարակ ամբողջ կերպարանքից բուրում էր թարմութիւն, երիտասարդութիւն և գարնան կենարար աշխոյժութիւն։ Նա ամենայն իրաւամբ կարող էր ասել. «Ես Սարօնի ծաղիկն եմ, հովիտների շուշանն եմ»։ Նրա շըրթունքները որդան կարմրի թելի նման, ցոյց էին տալիս իրանց արանքից մարգարտանման ատամները, իսկ այտերը կարմրած էին կիսած նռնի նման։

Սաուղը, շլացած՝ աչքերով ուտում էր իր նշանածին և աղերսագին նայուածքը յառել էր նրա երեսին։

Նորից թնդաց ծերունի րաբբիի ձայնը.

«Եսթեր զաւակս, կամենու՞մ ես փրկել Իսրայէլը»։

—Այո, կամենում եմ, կտրուկ չեշտով պատասխանեց աղջիկը։

—Թող օրհնեալ լինի այն արգանդը, որ ծնեց քեզ. հայր Աբրահամի օրհնութիւնը լինի Բէնիամինի տան վրա։

Դաշոյնը ընկաւ Սաուղի ձեռքից. դողդոջուն՝ ուշագնացի պէս, նա մօտեցաւ Եսթերին և պինդ սեղմելով ձեռքը, ասաց.

—Դու, դու կամենում ես, թշուառական, գնալ սէյիդին։ Ես քեզ տեղն ու տեղն կը սպանեմ։ Անիծեալ լինես դու։

Եւ թուլացած՝ նա ընկաւ գետնի վրա։

Եսթերը մոռացած կուսական ամօթխածութիւնը, չոքեց Սաուղի առաջ և փսփսաց ականջին.

«Սաուղ, երդւում եմ մօրս գերեզմանով, երդւում եմ մօրս սիրով, որ երբէք անձնատուր չեմ լինի սէյիդին և ոչ ոքի, բայց թող տուր ազատեմ ժողովուրդը և վստահ եղիր իմ վրա։

Եւ չարշաւը գցելով, մտաւ կանանց դասը.

—Սաղմոս երգենք, եղբայրներ, ասաց ծերունի րաբբունապետը։



«Հակառակիր, Տէր, մեր հակառակողների հետ, կռուիր, Տէր, մեզ դէմ կռուողների հետ։ Վեր առ զէնքդ ու ասպարդ և եկ մեզ օգնելու։ Թող ամաչեն և ամօթ լինեն մեր անձը որոնողները. Թող յետ դառնան և ամօթ լինեն մեզ դէմ չար խորհողները. Նրանք քամու առջև մղեղի պէս լինեն և Տիրոջ հրեշտակը հալածէ նրանց»։

Կէս գիշերից արդէն երկու ժամ էր անցել, երբ Բէնիամինը, Եսթերը Մէլիմ չաթիրի ղեկավարութեամբ դիմեցին Իմամ-Ջումայի տունը։ Այդտեղ Եսթերը պէտք է մնար, մինչև Իմամ-Ջուման կը քննէր գործը, թէ հրեայ աղջիկը յօժարութեամբ թէ բռնութեամբ է քեաբին կապել սէյիդի հետ։

Վտանգը, գոնէ ժամանակաւորապէս, անցած էր հրեաների համար։

Սաուղին տարան տուն սաստիկ ջերմի մէջ և մայրը ալբուխարու ջուր խմցնելով, սկսեց աղօթքներ կարդալ։

## XI

Չը նայելով որ ռամազան ամիսն էր և իսկական, բարեպաշտ մուսլիմները պարտաւոր են այդ նուիրական ամսում կատարեալ ողջախոհութիւն պահել, այնուամենայնիւ բաղնիքների բուր-

դ ո ւ ն [1]) իր սովորական ժամանակին սկսեց փչել գրեթէ բոլոր թաղերում մեր նկարագրած դէպքերի գիշերը, արշալոյսից առաջ: Բուրղուն հրաւէր և ազդարարութիւն է հաւատացեալներին. ով գիշերը անցրել է սիրոյ ծոցում և հերկել է կենդանի արտը, բարի և առատ պտուղ հասնելու համար ի փառս Ալլահի և մեծ Մարգարէի [2]), նա պարտաւոր է մաքրուել, սրբուել առաւօտեան նամազը կատարելուց առաջ:

Արշալոյսը դեռ նոր էր սկսել ծագել. առաւօտեան էզանը, որից սկսւում էր ծոմապահութիւնը, դեռ մինարէթներից չէր հնչուել: Շահի պալատի կողմից, հարէմխանայի ետեւի փոքրիկ բաղնիքի տանիքից հնչեց բուրղուն. այդ նշան էր, որ Աշխարհի Բևեռը բաղնիք պէտք է գնայ: Հարէմխանայի փոքր դուռը բացուեց և մի կարճահասակ ներքինի դուրս եկաւ ձեռքին բռնած մի մետաքսէ բոխչա, մի արծաթեայ ս ա թ ի լ [3]) և մի ոսկէ ջ ա մ [4]). մի այլ մանչ—ներքինի ետե-

---

1) Մի երկար շեփոր, որ փչում են բաղնիքների տանիքից և որից ժողովուրդը իմանում է թէ բաղնիքը պատրաստ է արդէն, տաքացրած է: 2) Ղուրանում ասուած է. «կինը արտ է, որ պէտք է հերկել, սերմանել»: Շարիաթը պարտաւորեցնում է մուսուլմանին ամեն անգամ կնոջ հետ յարաբերութիւն ունենալիս բաղնիք գնալ և լուացուել, մաքրուել: Ռամազան ամսում կնոջ մօտենալը թէև արգելուած չէ, բայց առաքինութիւն է չը մօտենալը: 3) Ջրաման: 4) Սկաւառակ:



ւից տանում էր գ ո ւ լ ա բ դ ա ն ը [1]) և խինայի ամանը: Շահը սովորութիւն ունէր բաղնիքում խինայ դնել մօրուքին և խինայել ոտքի ու ձեռների եղունգները: Ներքինիները ուղղուեցին դէպի բաղնիքը:

Երկու րոպէից յետոյ հարէմխանայի դուռը նորից բացուեց և փոքրիկ բակը մտաւ ծերունի ներքինապետը, սպիտակ փոխանով, անդուլպայ և չապկի թիքերը կոճկելով: Նրա խորշոմած, թառամած դէմքը խոր յուզմունք էր արտայայտում. փոքր կլորիկ աչքերը, փայլելով ֆոսֆորական կրակով, կատաղի գայրոյթ էին ցոյց տալիս: Նա ինքն իրան խօսում էր, ձեռներով տարօրինակ շարժումներ անելով. «Նահլաթ քեզ չար չ է յ թ ա ն [2]), գլխիս ինչ բ ա լ ա [3]), ինչ կրակ բերեցիր. ով Ալլահ, դու ինձ ողորմիր, ի սէր քո առաքեալի»: Նա շտապով մօտեցաւ բակի երկրորդ դռան, որ բացւում էր բիրունիի փոքր պարտիզի վրա և տնտղեց արդեօք նիգերը լաւ ամրացրած են: Ապա վերադառնալով դէպի հարէմխանէն տանող դուռը, նա բացեց և ձեռներով նշաններ արեց: Երկու խափշիկ ներքիններ դուրս եկան հարէմխանայից, բռնած մի մեծ բրդէ շուալի ծայրերից. այդ շուալը, որ դրին բակի մէջ տեղ, տուգած էր և նրա ծակերից ա-

---

1) Վարդեջրի սրուակ: 2) Անիծեալ լինիս, չար սատանայ: 3) Պատուհաս:

րիւն էր հոսում. երբեմն երբեմն չան խուլ ոռնոց և կատուի մլաւիւն էր լսւում։ Դնելով չուալը ներքինապետի առաջ, բակի մէջ տեղ, խափշիկները հեռացան և մտնելով հարէմխանէն մի երկու րոպէից յետոյ դուրս բերին մի երկրորդ չուալ, որի ծակերից նոյնպէս կաթում էր արիւն. այս չուալը ևս դրին առաջինի կողքին, որ չարժւում էր և որից լսւում էր չան կաղկանձիւն ու կատուի մլաւիւն։ Խափշիկները, վայր դնելով չուալները, կանգնեցին, ձեռները դրին կրծքի վրայ և խոր գլուխ տալով ներքինապետին, լուռ մնացին, սպասելով նրա հրամանին։ Նրանք այնպէս անշարժ, արձանացած կանգնած էին, որ ոչ մի մկանունք չէր շարժւում նրանց երեսին և կիսամթութեան մէջ նրանց սև կերպարանքները աւելի ահռելի էին դարձել։

Խոր երկնքի մէջ դեռ փայլում էին հեռաւոր աստղերը, միակ վկաները այդ սոսկալի տեսարանի։

Այդ միջոցին հնչեց մինարէթից մուազզինի ձայնը. ներքինապետը, որ մտածմունքների մէջ խորասուզուած, վերին աստիճանի չուալուած մարդու դէմք ունէր, գլուխը դարձրեց դէպի խափշիկները և միմիկայով ինչ որ մի բան պատուիրեց. Անմիջապէս խափշիկներից մինը մտաւ հարէմխանէն և մի քանի րոպէից յետոյ մի ղէյլան ձեռքին վերադարձաւ։ Ծերունին չտապով բռնեց ղէյլանը, պպզեց չուալների առաջ և սկսեց



ագահաբար ղղլացնել ղէյլանը, մինչև որ էզանը չէր վերջացել։

Երկու խափշիկները լուռ, անտարբեր, կանգնած էին, առանց որ նրանց դէմքի վրա կարելի լինէր որևէ յուզմունք, անձկութիւն կարդալ։

Կատուի աղիողորմ մլաւիւնը, չան խուլոտ կաղկանձիւնը նորից լսուեց չուալից։

Յանկարծ բիրունիի կողմից դուռը կոփեցին։

Ներքինապետը վեր կացաւ, սաստիկ զարմացած և զայրացած. այդ ո՞ր մահկանացուն է յանդգնում վրդովել այս ժամին հարէմխանայի խաղաղութիւնը։ Նա մեկնեց ղէյլանը խափշիկին և ասաց. «հարցրու, տես ով է՞»։ Բայց նկատելով խափշիկի երեսին ժպիտ, նա ուշքի եկաւ և ասաց ինքն իրան։

—Ես մոռանում եմ, որ նրանք խուլ ու համր են։

Եւ թփթփալով իր կարճ ոտներով, նա մօտեցաւ դռան։

—Ո՞վ է համարձակւում այս ժամին խփել դուռը, սպառնալից գոչեց նա։

—Այդ դուք էք, Խօջա-բաշի, լսելի եղաւ մի բարակ, տկար ձայն։

—Սադրազամը, հաջի Միրզա-Աղասին, վախեցած և ապշած ձայն տուեց ներքինապետը և, չտապով, սկսեց քաշել դռան նիգերը։

—Այո, ես եմ, Խօջա-բաշի. մեծ դժբախտութիւն է պատահել, որտեղ է Շահը. հարկաւոր է

իսկոյն տեսնել նրան։ Բայց ինչու ես այստեղ այս ժամին, ինչո՞ւ է դէմքդ այլայլուած.

—Ուրեմն երկրորդ դժբախտութիւն։ Ալլահը ազատէ մեզ երրորդից։

—Ի՞նչ, հարէմխանայում դժբախտութիւն է պատահել, ե՞րբ և ի՞նչպէս։ Արդեօ՞ք Աշխարհիս Աղօթարանի նուիրական ստամոքսը խանգարուել է։

Եւ յանկարծ նկատելով բակի մէջ տեղ ցցուած երկու տուղած չուալները ու խափշիկների անտարբեր, անկարեկից դէմքերը, ծերունի սադրազամը հասկացաւ թէ ինչ դժբախտութիւն է պատահել...։

—Դարձեա՞լ, հարցրեց նա միայն. ո՞վ է այդ դժբախտը։

Ներքինապետը ձեռացի շարժում արեց և խափշիկները մօտենալով բացեցին չուալների բերանները։

Քստմնելի տեսարանը, որ ներկայացաւ ծերունի սադրազամի աչքերին, ցնցեց նրան, որ վաղուց սովոր էր այդ տեսակ տեսարաններին։ Չուալների մէջից դուրս թռան մի շուն և մի կատու. ամբողջովին արիւնոտած, մազերնին գզգզուած, շնչասպառ, խածոտուած։ Իսկ չուալի մէջ մի ջահիլ կին, մերկ, անկենդան, երեսի, կրծքի, ստամոքսի, թեւերի վրայ անհուելի խացերով, որ անշուշտ, գործել էին շան և կատուի խածոտմունքը։ Սոսկալի էր թշուառ կնոջ արիւնաթաթախ դէմքը, նրա երկար վարսերը փռթաթուած պարանոցով և ներկուած արիւնով. կոկորդը կրծոտուած։ Աչքերը միայն մնացել էին անարատ, բայց ապակիացած և չռուած զարհուրանքից։



Խափշիկները քակեցին երկրորդ չուալի կապը և սադրազամը, տեսնելով լճացած արեան մէջ մի մարմին և նրանից բաժանուած մի գլուխ, կարողացաւ միայն արտասանել.

—Դժբախտ Սելիմ-խան, դժբախտ քո հայր. ահա որտեղ է հասցնում մարդուս ջահիլութիւնը։ Բայց ինչպէ՞ս պատահեց այդ։

—Ես ինքս դեռ լաւ չը գիտեմ, թէ այս անգամը—և նա ոտքով հրեց կնոջ դիակը—ինչպէս յանդգնել և կարողացել էր թագցնել Սելիմխանին իր սենեակում, եօրղան-դեօշակի ծալքում։ Բանից դուրս է գալիս, որ երեք ամսից ի վեր այդ յանցանքը գործում էին նրանք և սա նոյն իսկ յղիացել էր այդ լակոտից։ Քիչ էր մնում այդ լրբերի պատճառով ես էլ ենթարկուեմ Շահի արդար բարկութեան և դահճի ձեռքն ընկնեմ։ Թո՛ւ ձեր երեսին, աւարտեց ներքինապետը մի պինդ թքելով երկու դիակների վրայ։

Գլխատուած տղամարդը մի երիտասարդ էր՝ հազիւ 20—22 տարեկան։

Այդ գիշեր հարէմխանայում կատարուել էր մինը այն արիւնուշտ և ողբերգական տեսարաններից, որ սովորական երեւոյթ է կազմում արեւելեան, մուսուլման բռնակալների պալատա-

կան կեանքում։ Վեց ամիս առաջ կուսակալ խաներից մինը նուէր էր ուղարկել Շահին մի գեղեցիկ, 16 տարեկան աղջիկ։ Շահը սիրա էր արել և նա մտել էր հարէմխանայի կանանց շարքը, այն գերուհիների շարքը, որոնց կեանքը անցնում է չորս պատերի մէջ, տաղտկալի ձանձրութեան մէջ, որոնք ծաղկում են, իբրև ծաղիկներ, բայց ոչ ազատ օդում, կենսատու արևի ազդեցութեան տակ, այլ ջերմանոցում, հեռու սիրելիներից, հայրենի հողից, հայրենի օդից, ջրից։ Նրանք սահմանուած են երբեմն երբեմն, երեք-չորս-վեց ամիսը մի անգամ գոհացնել Շահի վաւաչոտ ցանկութիւնը։ Ոչ թանկագին զարդերը, ոչ գոհարեղէնները, ոչ պարերը, զուարճութիւնները, որ առատութեամբ չռայլւում է նրանց հարէմխանայում, չեն կարողանում մեռցնել նրանց մէջ այն բնական ցանկութիւնը, որ ունի ամեն մի դեռափթիթ էակ—սիրել և սիրուել, զգուել և զգուանք ստանալ, իր հոգին խառնել իր սիրեցեալի հոգու հետ։ Եւ պատահում է այն՝ ինչ որ անխուսափելի է. չը նայելով բանտի ամուր պատերին, չը նայելով վայրագ և անսիրտ ներքինիների հսկողութեան, չը նայելով սոսկալի պատիժներին, որ սպասւում է անհաւատարմութեան համար, ջահիլ և գեղեցիկ գերուհիները հնարք են գտնում հասնել իրանց մուրազին, սիրել ու սիրուել։ Սէրը կոյր է, ասել է պարսիկ բանաստեղծը, նա սահման, խոչընդոտ չը գիտէ.



մահը քաղցր է նրա համար, եթէ սիրեցեալի համար է։

Ընկնելով Շահի հարէմխանէն, դեռատի և գեղանի Այիշէն, այժմ Այիշէ խանըմ, չէր կարող մոռանալ սիրուն Սէլիմին, որ իրանց դրացի էր, որի հետ երեխայութեան ժամանակ խաղացել էր և որը վառել էր նրա մէջ դեռ մի տարի առաջ սիրոյ կրակը, երբ մի օր, իրանց քաղաքում, պատահմամբ, ուրբանդի տակից, թ ա ք ի ա յ ո ւ մ[1]) կարողացել էր տեսնել նրան։

Որքան գեղեցկացել էր Սէլիմը. Թաղի բոլոր աղջիկների երազն նրա հետ քեաբին կապելն էր։ Բայց մի քանի ժամանակից յետոյ հայրը տարաւ Սէլիմին Թէհրան և շուտով իմացուեց, որ նա դարձել է Շահի փիշխըդմէթ՝ Սէլիմ-խան անունով։ Սակայն Սէլիմի մայրը խօսք էր կապել Այիշայի մօր հետ, որ անպատճառ սիրուն Այիշային իր մինուճար տղի համար կ'ուզէ, իր տունը հարսն կը բերի. «այդպիսի նազելի աղջիկ, ասել էր նա, միայն իմ Սէլիմին է լ ա յ ե ղ»[2])։ Այդ պատճառով Այիշայի ծնողները մերժեցին իրանց Թաղի չատ տղաների առաջարկը և չը կամեցան նրան տալ նոյն իսկ իրանց քաղաքի խանի որդուն, սպասելով Սէլիմ-խանի վերադարձին։ Եւ ահա մի օր խանը կանչեց Այիշայի հօրը և յայտ-

---

[1]) Թատրոն, ուր կատարում են կրօնական միստերիաներ։ [2]) Արժանի։

նեց, որ Ալլահը—թող յաւիտեան փառաւորուի նրա անունը—իր ողորմած աչքը դարձրել է նրա տան վրա և աշխարհի աղօթարանը, Մէհմադ Շահը, լսելով Այիշայի աննման գեղեցկութիւնը, հաճել է նրան իրան սիղա[1]) կին առնել, ուստի պէտք է հէնց այս գիշեր քաջավաները[2]) պատրաստուեն և հայրը տանի աղջկան Թէհրան հարէմխանայի ներքինապետին յանձնելու։ Խեղճ հայրը ստիպուած էր, ի հարկէ, հազար ու մի տեսակ շնորհակալութիւններ անել խանին, մի այդպիսի մեծ պատուի համար, որին Շահը արժանացնում է նրան. Նա լաւ հասկացաւ, որ այդ խանի սարքած բանն է, իբրև վրէժխնդրութիւն։

Այդպէս Այիշան ընկաւ Շահի հարէմխանան. դարձաւ Շահի սիղա կանանց չորս հարիւր քսաներորդը և կոչուեց Այիշա խանըմ, տիտղոսով՝ Շէմս-ուլ-Դօվլէ[3])։ Ծերունի, հիւանդոտ Շահը նրան մի հրէշ երևաց և նա գիշեր ցերեկ լաց ու վախ էր քաշում իր հոգու հատորի, սիրելի Սէլիմ-խանի ետևից։ Մայրը, որ եկել էր Թէհրան, մխիթարում էր նրան, յոյս տալով, որ մի քանի ժամանակից յետոյ, Այիշան կարող է խնդրել Շահին, որ սա իր ձեռքով քեաբինի կնու-

[1]) Օրինաւոր կամ քեաբինաւոր կանանցից բացի, որոնց թիւը եօթն է, մահմեդականը կարող է սիղա, կամ ժամանակաւոր կին ևս ունել, որքան կամենայ։
[2]) Պատգարակ։ [3]) Արեգակ տէրութեան, մականուն։



թեան տայ իրան Սէլիմ-խանին և փիշխըդմէթը, ի հարկէ, մեծ պատիւ կը համարէ իր համար ընդունել Շահից մի այդպիսի ընծայ, բայց խեղճ Այիշա խանըմի սիրտը անդադար հալ ու մաշ էր լինում, չը լինի Սէլիմ-խանը Թէհրանի մեծամեծների մինի աղջկան ուզի և ինքն մնայ յուսահատ, մուրազին չը հասած։ Վերջապէս հարէմի փակ կեանքը, տաղտկութիւնը, երիտասարդական վառ ցանկութիւնները իրանց գործը կատարեցին. Այիշան դալալ[1]) կանանց միջնորդութեամբ կարողացաւ նամակ հասցնել Սէլիմ-խանին և մի քանի հաւատարիմ, առատ վարձատրուած աղախինների շնորհիւ, վերջապէս Սէլիմ-խանը մի երեկոյ, դալալ կնոջ ծպտեալ կերպարանքով, իրան գտաւ Այիշա խանըմի սենեակում, և այդ գիշեր սիրահարները հասան իրանց մուրազին։ Ի հարկէ, անկարելի էր, որ ընդարձակ հարէմխանայի մէջ մի քանի կանայք չիմանային Այիշա խանըմի գաղտնիքը, բայց որովհետև այդպիսի գաղտնիք միայն սա չունէր, ուստի և չէր մերկացնում։ Սէլիմը և Այիշան որոշեցին իրագործել իրանց ծրագիրը։ Այիշան, երբ որ Շահը այցելէր իրան, պէտք է ընկնէր Շահի ոտները և խնդրէր որ իրան քեաբինը կապի Սէլիմ խանի հետ։ Սիրով արբշիռ երիտասարդը հետզհետէ

[1]) Միջնորդ. դալալ կանայք ազատ մուտք ունեն հարէմխանաներում, ուր ծախում են զանազան կանացի իրեր։

ուելի յանդուգն դարձաւ և զգուշութիւնները բաց թողեց ձեռքից. Ներքինապետը իմացաւ և զարհուրած, դողալով իր կեանքի համար, պատմեց Շահին։ Հիւանդոտ, տկար Շահը, որին արդէն մի անգամ Ախչան յայտնել էր իր ցանկութիւնը, չը կամեցաւ երիտասարդների արիւնը թափել տալ, տրամադիր էր նոյն իսկ արձակել նրան սիղայութիւնից և տալ Սէլիմ-խանին, բայց ներքինապետը, տիկնանց տիկիններին[1]) հետ այնպիսի մռայլ, սև գոյներով նկարագրեցին այդպիսի թուլութեան և ներողամտութեան աղետալի հետևանքները ամբողջ հարէմխանայի համար, որ Շահը ստիպուեց հրաման տալ, որ գործադրուի սովորական պատիժը—գլխատել տղամարդին, իսկ կնոջ ձգել չուալի մէջ, դնել նրա հետ շուն և կատու և չուալի բերանը փակելով, փայտով այնքան խփել, որ կենդանիները կատաղելով կրծեն խեղճ զոհին։

Եւ անողոքելի, անգութ, գազանային օրէնքը գործադրուեց խեղճ երիտասարդ ամոլների վրա, ճիշտ այն րոպէին, երբ նրանք սիրոյ գրկախառնութեան մէջ, հազար ու մի տեսակ երջանիկ ծրագիրներ էին կազմում ապագայի մասին։ Նոյն իսկ յղիութիւնը չազատեց խեղճ Ախչային զարհուրելի ճակատագրից:

---

[2]) Շահի կանանց մէջ մինը, տարիքով աւելի երէցը, աւագը, տիկնանց տիկին է համարւում։



Այդ պատիժը պէտք է սարսափ տարածէր ամբողջ հարէմխանայի վրա և նրա մէջ փակուած գեղեցիկ գերուհիները պէտք է կենդանի օրինակով համոզուէին, թէ ինչ է նշանակում մտածել ապօրէն սիրոյ մասին... Նոյն իսկ զոհերի մասին խօսելը սաստիկ արգելուած էր. ոչ ոք չը պէտք է գիտենար ինչ են եղել նրանք, որտեղ են թաղուել։ Նրանց գերեզմանը անգամ անյայտ պէտք է մնար: Սովորաբար խեղճ զոհերը թաղւում են ընդարձակ պալատի խուլ պարտէզներից մէկի ծառերի տակ պեղուած փոսերի մէջ և դրա համար, գործադրւում են խուլ ու համր ներքինի խափշիկներ, որոնք նոյնպէս մի մի գերեզմաններ են ամեն մի գաղտնիքի համար:

Ներքինապետը աչքով արեց և խափշիկները նորից կապեցին չուալների բերանը. շունը ու կատուն դեռ աղիողորմ ձայներ էին հանում։

—Բայց ինչ դժբախտութիւն է ձեզ պատահած, աղա սադրազամ.

—Էլ մի հարցնի. Բէհման-միրզան փախել բէստ է մտել ռուսաց դեսպանատանը։

—Վայ, վայ, վայ, բացագանչեց ներքինապետը. ուրեմն այդ անիծեալ ռուսները պաշտպանում են նրան. ուրեմն նրանք չար դիտաւորութիւն ունեն. ախր, ես քեզ ասացի, աղա սադրազամ, որ աղեղը շատ մի լարիր, նետը դուրս կը պրծնի և կը վիրաւորի քեզ. դու ինձ չը լսեցիր. հիմա ինչ ես անելու:

—Ամենից առաջ պէտք է իմաց տալ Շահին։

—Մտքովդ անգամ մի անցրու, այժմ նա սաստիկ զբաղուած է և վատ տրամադրութեան մէջ այս անիծեալների պատճառով—և ներքինապետը նորից թքեց չուալների վրա—այսօր չը պէտք է նրան ոչինչ յայտնել։ Լաւ կը լինի որ այստեղից ես հեռանաք, որ ձեզ Շահը չը տեսնի, որովհետև նա շուտով կը գայ բաղնիք գնալու։ Ես ես ազատուելով գործերից, բաղնիքից յետոյ, երբ Շահը քնանայ, կը գամ՝ խորհրդակցենք միասին թէ ինչ անենք։ Այժմ պէտք է այս լէշերը[1] պարտըկեմ։

—Շատ լաւ, ես կը գնամ կը սպասեմ ձեզ սադարաթի[2] խորհրդարանում։ Իսկ այս խեղճերի դիակները ինչ պէտք է անէք։

—Այժմ արդէն ուշ է, արեգակը շուտով դուրս կը գայ. կ'ուղարկեմ սառցատանը պահեն մինչև այս գիշեր։

Եւ ներքինապետը ձեռքի շարժումներ արեց խափշիկներին, որոնք հասկացան նրա նշաններն ու չուալները մէկ մէկ բռնելով տարան ձգեցին սառցատան խորքը։ Գիշերը, յարմար ժամանակ, խեղճ Սելիմ-խանի և Այիշա խանըմի մարմինները յաւիտեան հանգիստ պէտք է գտնէին դալարաւոր ծառերի շուաքի տակ և ոչ ոք չը պէտք է կարողանար իմանալ թէ ինչ եղան նրանք։ Լուռ

1) Դիակ։ 2 Նախարարապետութիւն։



կը մնան ծառերը, լուռ կը մնան համր ու խուլ խափշիկները…։

—

Ծերունի սադրազամը, ի մեծ զարմանս արդէն քնելու պատրաստուող սպասաւորների, մտաւ նախարարապետութեան առանձնասենեակը և պատուիրեց առաջնորդել ներքինապետին, հէնց որ սա կը գայ, ու ոչ ոքի ներս չը թողնել։ Արևն արդէն սկսել էր ծագել. պալատում ամեն տեղ խոր լռութիւն էր թագաւորում. ամեն տեղ քուն էին մտել ռամազանի պատճառով։

Մի ժամից յետոյ առանձնասենեակի վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ ներքինապետը, որի խաշած խնձորի նման խորշոմած, կնճռոտած դէմքը աւելի ես զզուելի էր թւում ցերեկի լոյսով։ Սադրազամը ոտքի կանգնեց և իրանից բարձր նստացրեց։ Նստելով, ըստ ընդունուած սովորութեան երկուսն նորից ոտքի կանգնեցին և նորից նստեցին։

—Փառք Ալլահին, Շահը բաղնիքից փոքր ինչ զուարթ դուրս եկաւ. նա գնաց քնելու և ասաց, որ այսօր միայն իֆթարին դուրս կը գայ բիրունին։ Մենք բաւական ժամանակ ունենք, Հաջի, պատրաստուելու և մեր կարգադրութիւններն անելու։

Եւ նա իր փոքրիկ սուր աչքերով նայեց սադրազամին ու աւելացրեց.

—Բայց դուք մոռացաք ինձ ասել, ձեր մարդիկը կարողացե՞լ են ձեռք դնել չահզադէի գոհարեղէնի վրա:

—Ո՛չ, հառաչեց սադրազամը, անիծեալը իր քարեղէնն ևս հետը թռցրել է:

Ջայրոյթի, կատաղութեան կայծակներ ցայտեցին ներքինապետի փոքրիկ կլորակ աչքերից:

—Ուրեմն մեր ձեռքը դատարկ մնաց. բայց ոսկիները, փողերը հօ հետը տանել չէր կարող:

—Փողերը, ի հարկէ, հետը տանել չէր կարող. երևի մի որևէ սարրաֆի[1]) մօտ են կամ մի վաճառականի մօտ պահ տրուած, բայց այժմ, քանի որ նա իր մէջքը խփել է ռուսներին, ոչինչ անել չենք կարող. Նրա գոյքն ևս ռուսների պաշտպանութեան տակ է:

—Այդ ճիշտ է, բայց պէտք է անմիջապէս բանտարկել նրա հաշուապահին և գանձապահին. եթէ չը կամենան ցոյց տալ որտեղ է պահուած չահզադէի հարստութիւնը, և լուռ մնան՝ տանջանքներով կարելի է բանալ նրանց լեզուն: Ախ, հաջի, հաջի, ինչքան վատ տարիր գործը, ոչ Շահի ջիբը մի բան ընկաւ, ոչ մերը:

Եւ ներքինապետը չափեց սադրազամին մի ակնարկով, որի մէջ պարզ արհամարհանք էր կարդացվում դէպի Իրանի առաջին պաշտօնեան:

Երկու ծերունիները մի քանի րոպէ լուռ մնա-

1) Սեղանաւոր:



ցին: Սկսեցին համրիչների հատիկները չխչխկացնել, աղօթքներ շշնջալ, երբեմն երբեմն աչքի տակից միմեանց վրա անվստահ ակնարկներ ձգելով:

Այդ երկու զառամեալ ծերունիների ձեռքի մէջ էր կենդրոնացած իսկապէս ամբողջ կայսրութեան՝ Իրան-Թուրանի կառավարութիւնը, միլիօնաւոր ժողովուրդների բախտն ու ճակատագիրը: Շահը, թոյլ, հիւանդոտ, խաղալիք էր դրանց ձեռքում և ամեն բան վճռւում, իրագործւում էր այդ երկուսի կամքի և հրամանի համաձայն: Նրանց միացնում էր այն հանգամանքը, որ երկուսն ևս համահաւասար ազդեցութիւն ունէին Շահի վրա: Խօջա-բաշու կամ ղզլար-աղասու պաշտօնը սադրազամի պաշտօնի չափ կարևոր է, երբ Շահը զուրկ է ինքնուրոյնութիւնից և անձնատուր է հարէմական զուարճութիւններին: Շատ կարելի է որ ներքինապետը չը յօժարէր իր պաշտօնը փոխել սադրազամութեան հետ, եթէ առաջարկէին նրան, բայց սադրազամը, յամենայն դէպս, շարունակ վախ ու երկիւղի մէջ էր, որ ներքինապետը կարող էր իր տեղն բռնել, մինչ ինքն նրա տեղն բռնելու կարող չէ: Սադրազամի մէջ դեռ անհետացած չէին մարդկային զգացումները, մանաւանդ որ նա ընտանիքի հայր էր. շատ անգամ ագահութիւնն և ընչաքաղցութիւնը չէին նրա մէջ միակ շարժառիթները անգութ և անարդար գործողութիւնների,

այլ մոլեռանդութիւնը, վրէժխնդրութիւնը, ինչպէս Բէհման-միրզայի դէպքում և տգիտութիւնը. երբեմն երբեմն նա ցոյց էր տալիս և արդարադատութեան, կարեկցութեան զարմանալի գործողութիւններ, որով և ընդհանուր առմամբ, ժողովրդական համբաւ ունէր։ Նա ունէր և մի անգնահատելի առաքինութիւն. անկեղծ կերպով սիրում էր Մահմէդ Շահին և հաւատարիմ էր նրան, ինչպէս շունը իր տիրոջ։

Բայց այդպէս չէր ներքինապետը. Նրա հոգին, սիրտը, միտքը բոլոր զգացումները ընկալարողը՝ մի չարժառիթ էր—ոսկին։ Նա սարսափելի ժլատ էր և ագահ. մարդկային ամեն զգացումն, ամեն կարեկցութիւն մեռած էր նրա մէջ այն օրից, երբ մարդիկ այնքան անգութ և անկարեկից էին գտնուել դէպի նա, զրկել էին նրան սիրելու և սիրուելու զգացումից, ընտանիքի, զաւակների տէր լինելու իրաւունքից։ Ում համար էր դիզում նա դեղին ոսկիները—նա այդ հարցն չէր տալիս իրան, բայց անդադար դիզում էր։ Նա նոյնչափ հեշտութեամբ հրաման տուեց դահճին՝ գլխատել պատանի Սէլիմին, որքան հեշտութեամբ և զուարճանքով ծխում էր ղէյլանը։ Ներկայ դէպքում նրա զայրոյթը գրգռողն, նրան վշտացնողն ոչ թէ այն հետևանքներն էին, որ կարող էին առաջ գալ Շահի և երկրի համար Բէհման-միրզայի փախստից, որքան նրա հռչակաւոր գոհարեղէնին տիրանալու անկարողութիւնը։ Եւ ոչ միայն չորս



հարիւր և աւելի դեռափթիթ, նազելի էակների կեանքը, ճակատագիրը այդ անբնականացած ծերունուց էր կախուած, այլ և շատ անգամ ամբողջ նահանգների բախտը նա էր տնօրինում, ստանալով Շահից ուղղակի կամ սիրեցեալ կանանց միջնորդութեամբ այս և այն նահանգի կուսակալութեան պաշտօնը նրա համար, ով ամենից շատ դեղին ոսկիներ էր ներկայացնում իրան։

—Մեր դրութիւնը շատ ծանր է, խզելով լռութիւնը ասաց ներքինապետը։ Ես վախում եմ, որ այդ քաֆիր[1]) ռուսները մեր գլխին մի օյին չը խաղան։ Բացի դրանից, քաղաքում ևս կարող են խռովութիւններ ծագել. նահանգներում, մանաւանդ Սպահանում և Թաւրիզում կարող են գլուխ բարձրացնել։ Ժողովուրդը սիրում է Բէհման-միրզային։ Պէտք է ազդու և խիստ միջոցներ ձեռք առնել, սարսափեցնել ամենքին։ Ամենից առաջ պէտք է Շահը պահանջէ ռուսաց դեսպանից որ Բէհման-միրզային յանձնեն իրան և երբ յանձնեցին, պէտք է իսկոյն խեղդել տալ նրան։

—Իսկ եթէ ռուսները չը յանձնեցին, ինչ անենք։

—Ինչպէս կը համարձակեն քաֆիրները ընդդիմանալ աշխարհի աղօթարանի հրամանին. մենք այն ժամանակ պատերազմ կը հրատարակենք. մեզ ինգլիզները կ'օգնեն։

---

1) Անհաւատ

—Ախ, Խօջա-բաշի, ես զարմանում եմ որ դու քո այնքան փորձառութեամբ և խելքով այդպիսի բաներ ես ասում. բաս ինչո՞ւ ինգլիզը չօգնեց մեզ Ղարաբաղի, Երևանի, Նախիջևանի խանութիւնները յետ առնելու։ Ինգլիզն էլ հօ իր հօր վարձքի համար մեզ չի օգնի, նա էլ կը պահանջի որ մի բան տանք։ Վերջապէս, ինչի պէտք է Բէհման-միրզայի համար մեր Շահի թագը և գահը վտանգի ենթարկենք։ Ես ուրիշ խորհուրդ ունեմ։

—Ասա տեսնեմ ինչ է։

—Ռուսները չեն կարող Բէհման-միրզային մեզ յանձնել. առաջին նրանք դրանով խախտած կը լինեն բէսատի նուիրական օրէնքը և իրանց համարումը կը ձգեն բոլոր ազգերի աչքում. միւս կողմից նրանք չեն կամենայ Բէհման-միրզայի պատճառով լարել մեզ հետ իրանց յարաբերութիւնները և թշնամացնել Շահին. ես կը սպառնամ որ կը դիմենք ինգլիզների օգնութեան, իսկ այդ ամենևին 'ձեռնտու չէ նրանց, որ մենք բարեկամանանք ինգլիզի հետ։

Ես խորհուրդ կը տամ նրանց որ Բէհման-միրզային ուղարկեն Ռուսաստան և այնտեղ պահեն միշտ, թոյլ չը տալով երբէք Պարսկաստան վերադառնալ։ Դրանով թէ նրանք ապաստարանի օրէնքը յարգած կը լինեն, թէ մեզ գոհացրած. Շահն էլ կ'ազատուի իր փառասէր եղբօրից և վախից՝ թագը կորցնելու։ Ժողովուրդն էլ տեսնելով որ մուսուլմանը գնաց քաֆիրի պաշտպանու-



թեան տակը մտաւ, սիրելու փոխարէն կ'անիծէ նրան։

—Լաւ միտք է, բայց կը կատարե՞ն ռուսները։

—Կը կատարեն. ես դեռ չեմ ստորագրել Կասպից ծովի մասին մեր արած զիջողութեան թուղթը. դրանով և անգլացիների երկիւղով կը ստիպեմ նրանց իրագործել այդ միտքը։ Շահն էլ վախենալու ոչինչ չի ունենայ և կը հանգստանայ։

—Բայց դարձեալ դու քաֆիր ինգլիզներին ձեռքից մի թող. խօսիր նրանց դեսպանի հետ։

—Միամիտ մնա, նրանք հէնց իրանք կը գան այսօր մեզ մօտ և կ'առաջարկեն իրանց բարեկամութիւնը ու աջակցութիւնը։

Եւ խփելով ներքինապետի ուսին, սադրազամն ասաց.

—Յիշում ես, ես մի քանի անգամ Շահի ներկայութեամբ յայտնել եմ, այժմ էլ կրկնում եմ, իբրև կտակ, որ Իրանը ոչ ինգլիզի, ոչ ռուսի հետ ճակատ ճակատի գնել չէ կարող, բայց նա կարող է երկար հաստատ մնալ, օգուտ քաղելով այդ երկու քաֆիրների մրցութիւնից, թշնամութիւնից։ Մենք պէտք է միշտ երկուսին էլ մեր ձեռքումն պահենք, առանձին առանձին բարեկամ ցոյց տանք մեզ և ինգլիզով ռուսին վախեցնենք, ռուսով՝ ինգլիզին։

—Ինձ համար երկուսն էլ քաֆիր են, երկուսն էլ անիծեալ լինեն, դժոխքի փայ դառնան, պա-

տասխանեց ներքինապետը և յարեց. «Երբ Մէհ-տին կ'երևայ, դրանք ամէնքն էլ չանսատակ կը լինեն. բայց ափսոս, որ մենք չենք տեսնի. մեծ է Ալլահի զօրութիւնը»։

—Այո, մեծ է Ալլահի զօրութիւնը, բայց Ալ-լահն ես կարծես մեզ թողել է քաֆիրների ձեռ-քում։ Ո՞ւր է Իրանի նախկին զօրութիւնը։ Այսօր, քաֆիր ռուսից, ինգլիզից ենք վախենում։

—Լաւ, թողնենք այդ. ինչ որ մեր ն ա ս ի բ ն[1]) է, այն կը լինի։ Երբ է լինելու ջհուդ-քուշան։

—Ի՞նչ. ջհուդ-քուշան. ամենևին, մանաւանդ այժմ, երբ մենք չը պէտք է գրգռենք ռուսաց և ինգլիզի դեսպանների բարկութիւնը. նրանք չէ որ յայտնեցին անցեալ տարի, որ պէտք է այլ ևս ջհուդ-քուշան չը լինի. այդ խնդրում նրանք միացած են։ Եւ վերջապէս, ինչի պէտք է ջհուդ-քուշան լինի քանի որ ջհուդ աղջկայ խնդիրը կարգադրուելու վրայ է։

—Ինչպէ՞ս։

—Չը գիտե՞ս. ես կարողացայ համոզել ջհուդ-ներին, որ մի աղջկայ համար ամբողջ իրանց ժողովուրդը վտանգի չենթարկեն և աղջկայ գործի քննութիւնը յանձնեն Իմամ-Ջումին. ինչ որ նա վճռի, այնպէս էլ լինի։ Այժմ աղջիկն Իմամ-Ջումի տանն է։

---

1) Ճակատագիր։



—Բայց այդ բոլորովին առանձին գործ է, ասաց ներքինապետը. ես խօսում եմ սովորական ջհուդ-քուշանի մասին. մեր ժողովրդի նախաւանդ սովորութիւնն է տարին մի անգամ ջհուդ-քուշան սարքել, այդ անիծեալ ցեղի բազմանալը արգելելու համար, նրանից մի քիչ արիւն բաց թողնելու և նրանց կուտակած հարստութիւնը մի քիչ նուազեցնելու համար։ Ինչ գործ ունեն ռսի և ինգլիզի դեսպանները որ խառնւում են. մենք գիտենք մեր հպատակները։ Վերջապէս, ես ամեն տարի բաւական մեծ բաժին էին ստանում կողոպուտից. ինչի՞ պէտք է զրկուեմ։

—Ես կ'ասեմ ջհուդներին քեզ հասնելիքը բերեն տան, միայն, ի սէր Ալլահի, այդ խորհուրդը թող։ Ես այսօր իսկ կը տեսնեմ Իմամ-Ջումին և կը համոզեմ, որ հրապարակական աղօթքի ժամանակ մեծ մզկիթում յորդորէ ժողովրդին հանդարտ կենալ և բացատրէ ջհուհ-քուշանի վտանգը։ Գալով միւս խռովութիւններին, ես ևս համաձայն եմ, որ պէտք է ժողովրդի վրա սարսափ տարածելու համար խիստ միջոցներ գործադրել։ Սպահանից արդէն մի քանի օր է բերել են այն նոր քաֆիրներին, որ իրանց բաբի են կոչում. այստեղ բանտում ևս շատ յանցաւորներ կան։ Հէնց որ ռամազանի այս մի քանի նուիրական օրերն էլ անցնեն, պէտք է դրանց ամենքի պատիժը տալ ժողովրդի առաջ։ Այժմ գնացէք մի քիչ քնեցէք մինչև կէսօր, ես էլ այստեղ կը քնեմ մի քիչ։

Ճանապարհ դնելով ներքինապետին, սադրազամը հրամայեց ֆէրրաշին անմիջապէս կանչել ֆէրրաշբաշուն։ Վերջինս մի երկու րոպէից յետոյ երևաց քնաթաթախ և դժգոհ դէմքով, բայց խոնարհ գլուխ տալով, կանգնեց։

—Ֆէրրաշ-բաշի, ասաց սադրազամը, իսկոյն կը գնաս կը բանտարկես Բէհման-միրզայի գանձապահին, միրզաներին, ծառաներին և շղթայակապ բանտը կը ձգես, պատուիրելով պահապաններին, որ խիստ հսկողութիւն ունենան։

—Չէշմ, գլուխ տալով դուրս եկաւ պաշտօնեան։ Հաջի Միրզա-Աղասին հէնց այդտեղ էլ, աբան գլխին քաշելով, պառկեց քնելու։

Պալատում տիրում էր խորին լռութիւն. լռութիւն տիրում էր և փողոցներում։

## XII

Միջօրէի էզանները թնդում էին մինարէթներից. փոշոտ փողոցները սկսել էին կենդանութիւն ստանալ. բազարներում, թիմչաններում խանութները հետզհետէ բացւում էին և հանդիպելով միմեանց, դրացիների ու ծանօթների առաջին խօսքը, սէլամ տալուց յետոյ, այս էր. «Լսե՞լ էք, ինչ է պատահել։ Բէհման-միրզան փախել բէստ է մտել ռուսաց դեսպանատանը. Շահը հրամայել էր նրան կուրացնել. ջհուդները տուել են իրանց աղջիկը Իմամ-Ջումայի դատաստանին»։



Ամբողջ Թեհրանը ծայրէ ծայր այդ լուրերով էր զբաղուած, ամենքը շտապում էին դէպի Շահի մզկիթը, ուր փիշ-նամէզ էր Իմամ-Ջուման, նոր տեղեկութիւններ ստանալու յոյսով։ Սէլիմշաթիրը հազիւ իր բազուկների և շաթիրական նշանի շնորհիւ կարողացաւ ճանապարհ հարթել իր համար և մտնել մզկիթը, որտեղ ասեղ գցելու տեղ չը կար։ Նա կամաց կամաց մօտեցաւ կանանց բաժնին և ծալապատիկ նստեց խսիրի վրա, սիւներից մէկի մօտ, ուր մօտ նստած էր և մի կին ոսկէ չափրասա ունեցող ուրբանդով։ Նա արդէն նկատել էր Եասամանի սև դէմքը և նրա խորամանկ ժպիտը։

Իմամ-Ջուման սկսել էր հրապարակական աղօթքը. նրան հետևեց Թագիա, և մի երիտասարդ մօլլա բարձրանալով ամբիոնի վրա իր գէլ ձայնով սկսեց ողբը. կանայք արդէն անհամբեր սպասում էին այդ րոպէին և ամեն անգամ, երբ երգիչը աւարտում էր ողբը, շարունակում էին կանայք, առատ արտասուք թափելով։

—Վայ, վույ, լսւում էր մզկիթում։

Գլուխը յետ ու առաջ տանելով, Սէլիմը լսեց Լէյլա խանըմի այս խօսքերը. «Գիտե՞ս, ջհուդի աղջիկը այժմ ինձ մօտ է»։—Ինչպէս, քեզ մօտ։ —Իմամ-Ջուման յանձնել է ինձ, որ ինձ մօտ մնայ մինչև քննութիւնը կը վերջանայ. ախ, անիծած աղջիկը որքան գեղեցիկ է, Սէլիմ ջան. աղան տեսաւ նրան թէ չէ, խելքը գլխից թռաւ, իսկ

աղջիկը շարունակ լացում է, իր նշանածին՝ Սաւուղին է յիշում։

«Վայ, վույ, դարձեալ թնդացին մզկիթում ողբալի ձայները։

—Լսիր, Լէյլա-ջան, դու ամեն կերպ աշխատիր որ ջհուդ աղջիկը աղային դուր գայ. դու ասա նրան, որ եթէ ուզում է իր Սաւուղին, իր հրէաներին ազատէ, սէյիդի կինը չը դառնայ, թող այնպէս ցոյց տայ, որ ինքը պատրաստ է աղայի բոլոր ցանկութիւնները կատարել։

—Նա ասում է որ երբ ստիպուած լինի սէյիդի կինը կամ մուսուլման դառնալ, իրան կը սպանի. նա երբէք ձեր Իմամ-Ջումայի կամքը չի կատարի։

—Ես չեմ ասում որ նա կատարի, բայց թող իրան այնպէս ձեւացնէ, որ պատրաստ է կատարելու և աղայից ստանայ ֆիթվա, թէ հրէաները ոչ մի բանում մեղաւոր չեն, սէյիդը բռնութեամբ է իրան յափշտակել։ Մնացածն ես ինձ վրա եմ առնում։ Մենք շուտով մեր մուրազին կը հասնենք։

«Վայ, վույ», շարունակւում էր ողբը։

Սէլիմը մի քանի րոպէ էլ փսփսաց Եասամանի ականջին. խափշիկուհին գլխով նշան արեց որ հասկացաւ և կը կատարէ։

Երգիչը աւարտեց ողբը և իջաւ ամբիոնից։

Նրա վրա բարձրացաւ նորից Իմամ-Ջուման, իր ձիւնի պէս ճերմակ շալի ջուբբայի մէջ փաթաթուած։



—Մուսուլմաններ, ասաց նա, դուք գիտէք այն վարմունքը, որ ունեցել է Բէհման-միրզա չահզադէն, Շահի եղբայրը. վարմունք անարժան մուսուլմանի. նա թողնելով իմամ Շահ-Աբդուլ-ազիմի նուիրական դուռը և դրօշակը, բէստ է մտել անհաւատների, քաֆիրների դրօշակի տակ։ Թող անիծեալ լինի այդպիսի մուսուլմանը։

—Բայց Շահը ուզում էր իր հարազատ եղբօր աչքերը կուրացնել, լսուեց ամբոխի միջից մի վախկոտ ձայն։

—Նա կարող էր ազատուել այդ պատժից նոյնպէս Շահ-Աբդուլ-ազիմի կամ մեր այս մզկիթի մէջ բէստ մտնելով։ Շահը չէր կարող նրան հանել այստեղից։

Տիրեց խորին լռութիւն։ Ոչ ոք չը համարձակեց այլ ևս պաշտպանել դժբախտ չահզադէին։ Նա անարգել էր հայրենի կրօնը, հայրենի սրբութիւնը և պատսպարուել էր օտարի, անհաւատների սրբարանում. նա նախատել էր իսլամը և իսլամը երեսը շուռ էր տալիս նրանից։

—Մենք ինքներս նախատում ենք մեր սուրբ դինը, մենք ինչ մուսուլմաններ ենք, պոռաց դէպի ամբիոնը մօտենալով մի երիտասարդ սէյիդ։ Ո՞ւր է իմ կինը. ինչու ինձ չեն տալիս, միթէ այն օրին հասանք, որ մուրտառ ջհուդներն անգամ խլեն մեր կանանց մեր ձեռքից։

—Ջհուդ-քուշան, ջհուդ-քուշան, թնդաց ամբողջ մզկիթը հազարաւոր աղաղակներով, մահ ջհուդներին. տուէք մեզ ֆիթվա, տուէք մեզ։

Սարսափելի ժխոր տիրեց. կանայք նոյն իսկ սկսեցին գոչել. «մահ ջհուդներին»

Բայց Իմամ-Ջումայի ձեռքով արած մի շարժումը վերջ դրեց ժխորին և աղմուկը քիչ քիչ դադարեց ու դարձաւ խոր լռութիւն տիրեց։

—Մուսուլմաններ, ասաց նա, ջհուդները ա մ ա ն[1]) են բերել մեզ. Նրանք յանձնել են ինձ աղջկան, որ ես քննեմ և ինչ որ շարիաթը կը հրամայի, այնպէս էլ լինի։ Ես շուտով կը քննեմ գործը և եթէ աղա սէյիդի ասածները կը հաստատուեն՝ ջհուդ աղջիկն, ի հարկէ, նրա օրինաւոր կինը կը դառնայ։ Ես չեմ կարող փիթվա տալ ջհուդ-քուչանի համար, որովհետև այդպիսի փիթվան հակառակ կը լինի սուրբ խօսքին—ղուրանին։ Ղուրանում ասուած է, որ այն ազգերը, որոնք գիրք ունեն—Իսրայելի որդիները ունեն Թ ո վ ր ա թ ը[2])—եթէ հպատակութիւն յայտնեն, հարկ վճարեն Իսլամին, նրանք կարող են ազատ ապրել և իրանց կրօնը դաւանել։ Ջհուդները հարկ են վճարում...

—Հարկ վճարում են ղաջարներին և ոչ մեզ, ասաց մի ծերունի սէյիդ։

—Նրանք հարկ են վճարում իսլամ թագաւորին, պատասխանեց Իմամ-Ջուման։

Եւ օրհնութիւն տալով արձակեց ամբոխը, որ

---

1) Աման բերել—ապաստանել, պաշտպանութիւն հայցել։ 2) Աստուածաշունչ։



սկսեց դուրս գալ մզկիթից, տրտնջալով։ Այդ չարգելեց նրան այնուամենայնիւ համբուրել Իմամ-Ջումայի հանդերձների քղանցքը, երբ վերջինս անցաւ ամբոխի միջով և դուրս գալով մզկիթի բակը, նստեց սպիտակ էշի վրա ու բազմաթիւ մօլլաններից, սէյիդներից հետևուած, գնաց իր տունը։

Այն րոպէին, երբ երիտասարդ սէյիդը դուրս էր գալիս մզկիթից, մի ձեռք դիպաւ նրա ուսին և մի ձայն փսփսաց նրա ականջին. «Զգուշացիր, աղա սէյիդ, ջհուդ աղջիկը այնքան գեղեցիկ է, որ գուցէ էլ դուրս չը գայ Իմամ-Ջումայի տնից. Իմամ-Ջուման սիրում է գ ե օ զ ա լ ն ե ր ի ն»[1])։ Սէյիդը յետ դարձաւ տեսնելու ով էր շշնջում իրան այդ խօսքերը, բայց ամբոխի մէջ նա չը կարողացաւ իմանալ։

Կասկածը, խանդը մտաւ նրա սրտի մէջ։ «Շէյթանը կամենում է ինձ փորձել», ասաց նա, և մռայլ, յուսահատ հետևեց ամբոխին ու շուտով միացաւ Իմամ-Ջումայի հետևորդներին։

—

Ճանապարհին, Իմամ-Ջումայի հետևորդները հետզհետէ աւելանում էին։ Կէսօրից արդէն երեք ժամ անցել էր, երբ Իմամ-Ջուման հասաւ իր տունը։ Ընդարձակ բակը, թալարը լի էր անհագին բազմութեամբ. դրանք ամենքը խնդրարկուներ էին, զանազան պահանջատէրեր, պարտա-

---

1) Գեղեցկուհիներին։

պաններ, կալուածական, ժառանգական վէճեր վարողներ, ամուսնութիւն կնքողներ, ամուսնալուծութիւն պահանջողներ կամ թալաղ տուողներ, մարդիկ, որոնք եկել էին դատուելու, վկայութիւն տալու, ամբաստանելու կամ արդարացնելու իրանց ամբաստանութիւններից։ Շարիաթը լինելով միակ հաստատուն օրէնքը Պարսկաստանում, հոգևորականութեան ներկայացուցիչները դատում և վճռում են ոչ միայն կրօնական, այլ և քաղաքացիական գործերը, դատերը, վէճերը։

Ընդարձակ թալարի մէջ, որի երկու կողմից ևս փէնջարաները բացւում էին երկու բակերի վրա, գետնին, գորգի վրա, չոքած էին բազմաթիւ գրագիրներ, որոնք անդադար գրում էին զանազան ղ ա բ ա լ ա ն ե ր[1], ի ջ ա ր ա ն ա մ է ն ե ր[2], ա գ ո ն ա մ է ն ե ր[3], վկայականներ և հրամաններ, Ամեն մի գրագրի առաջ հինգ վեց հոգի խնդրարկուներ էին չոքած, որոնք զանազան խոստումներ, ընծաներ, վարձատրութիւններ փափալով գրագիրների ականջին աշխատում էին արագացնել գործը կամ իրանց ցանկութեան համաձայն վճիռ կայացնել տալ Իմամ-ջումային։ Այդ բոլոր թղթերը, վկայագրերը օրէնքի զօրութիւն էին ստանում միայն այն ժամանակ, երբ Իմամ-ջուման թղթի ներքև կամ գլխին կամ կողքին դրոշմում էր իր կնիքը, երբեմն ևս ա-

[1]) Կալուածագիր։ [2]) Կապալագիր։ [3]) Ամուսնագիր։



րաբերէն մի քանի բառ աւելացնելով կնիքի վերև իր ձեռագրով։

Իմամ-ջուման մտնելով թալարը, ուր ամենքը ոտքի կանգնելով, պատկառանքով գլուխ տուին «սալամ-ալէքիւմ» ասելով, որին նա պատասխանում էր «ալէքիւմ-սալամ»,—գնաց և նստեց թալարի վերևում։ Անմիջապէս աւագ գրագիրը չոքեց նրա առաջ և թղթերի մի ամբողջ կոյտ հանելով գրպանից, սկսեց կռացած, կամացուկ խօսել նրա ականջին։ Ամեն մի զեկուցումից յետոյ Իմամ-ջուման հանում էր չալի փոքրիկ քսակից մեծ կամ փոքր կնիքը, մատի ծայրը թաթախում էր ղալամդանի թանաքի մէջ և լեզուով թրջելով թուղթը, դրոշմում էր թրջած տեղի վրա ու տալիս աւագ գրագրին։

—Աղա, ասացին երկու վաճառական, գլուխ տալով և չոքելով առջևը, խնդրում ենք սիղա կարդա[1]), ես զիջել եմ այս ընկերիս մեր ընկերական առևտրի մէջ ունեցած իմ բոլոր իրաւունքները մի ս ի ր[2]) նարաթով։

[1]) Ամեն տեսակ թուղթ, պայմանագիր օրինաւոր է միայն այն ժամանակ, երբ մօլլան կարդացել է սիղայ. այդ ասւում է „սիղա ճարի շօդ“։ [2]) Մի սիրը հաւասար է 5 մսխալի։ Կարելի է մի ամբողջ տուն, այգի. գիւղ ծախել մի սիր նարաթով կամ մի հատ խնձորով, կամ մի հատ թաշկինակով։ Բաւական է որ տէրը, վաճառողը յայտնի, թէ գոհ է այդ վարձատրութեամբ։

—Ճշմարի՞տ է, Հաջի, գիջե՞լ է նա քեզ և դու ընդունե՞լ ես։ Տուե՞լ ես սիր Նաբաթը։

—Այո, աղա, ընդունել և տուել եմ։

—Ստացե՞լ ես դու, սիր Նաբաթը։

—Այո, ստացել եմ։

Իմամ-Ջուման միացրեց երկու վաճառականների ձեռները և ասաց. «սիղան կատարուեց»։ Դէ գնացէք, գրագրին ասէք, թուղթը գրի։

Այդ միջոցին Թալարը մտաւ բէգլար-բէգու պաշտօնեաներից մինը և մօտենալով սէլամ տուեց։ Իմամ-Ջուման պատասխանելով սէլամին ասաց. «բիսմուլլահ, նստեցէք»։ Պաշտօնեան յայտնեց, որ բէգլար-բէգին իր խոնարհ ողջոյնները յիշելով, խնդրում է որ աղան, շարիաթի համաձայն, վճիռ տայ մի կռուի մասին, որ երէկ պատահել է։ Երկու կալուածատէր կռիւ են արել մի ա ր խ ի [1]) վրայ. Նրանցից ամեն մէկը պնդում է, որ արխը իր գիւղինն է, թոյլ չէ տալիս միւսին ջրել արտերը։ Խօսքից անցնելով կռուի, երկու կալուածատէրերի օգնութեան են վազել գիւղացիները. կռիւը սաստկացել է, զէնք են գործածել և երկու կողմից սպանուել են չորս հոգի, որոնց մէջ մի կին. վիրաւորուել են հինգ հոգի։ Այժմ պէտք է որոշել ումն է պատկանում ջրի արխը և ապա որոշել, թէ յանցաւոր կողմը ինչքան դ ի յ ա [2]) պէտք է վճարի սպանուածների և վիրաւորուածների արեան գնի համար։

[1]) Առու, ջրանցք։ [2]) Հատուցումն։



—Ովքե՞ր են վկաները։ հարցրեց Իմամ-Ջուման։

—Տասը հոգի, որոնցից երկուսը հրէայ, երկուսը հայ և երկուսն էլ կին։

—Ձեզ յայտնի է, որ ամեն երկու ոչ-մուսուլմանի վկայութիւնը հաւասար է մի մուսուլմանի վկայութեան. նոյնպէս երկու կնոջ վկայութիւնը հաւասար է մի տղամարդի վկայութեան։ Կնոջ դ ի յ ա ն ևս տղամարդի դիյայի կէսն է։

—Շատ լաւ, աղա, այդ ինչպէս հրամայում է շարիաթը, վճռեցէք դուք, մենք կը գործադրենք վճիռը։

—Մի խնդիրք ես բերել եմ բէգլար-բէգու կողմից, աղա, շարունակեց պաշտօնեան։ Այս մարդը, հաջի Ահադը, մի մուրհակով հինգ հարիւր թուման է պարտ այս մարդուն, մաշադի Իբրահիմին—և մատով ցոյց տուեց Թալարի մէջ տեղ կանգնած երկու վաճառականի—բայց պարտապանը չէ վճարում, ասելով որ մուրհակը խ ա լ ի է գ-վ ա ջ [1]) է։ Ի՞նչ է հրամայում շարիաթը։

—Ստացական կամ վկայ ունե՞ս, հաջի Ահադ, դիմեց Իմամ-Ջուման պարտապանին, որ փողը վճարել ես։

—Ոչ, աղա, բայց հաղրաթ Աբբասը վկայ վճարել եմ։

—Ոչ, ասաց Իմամ-Ջուման. կամ պէտք է երդումն ուտես որ պարտքդ վճարել ես կամ պէտք է վճարես։ Այսպէս է հրամայում շարիաթը։

[1]) Այն մուրհակներն են կոչւում այդպէս, որոնք վճարուած են կամ որոնց արժէքը չէ ստացուած։

—Խնդրում եմ իմ գործս ևս վճռիր, աղա, թընդաց յանկարծ մի ձայն թալարի մէջ և մեզ ծանօթ երիտասարդ սէյիդը կանգնեց Իմամ-Ջումայի առաջ։

Վերջինս բարձրացնելով նայուածքը և նկատելով սէյիդին, ունքերը կիտեց, բայց շուտով անտարբեր դէմք ընդունելով, ասաց.

—Ի՞նչ է քո գործդ, աղա սէյիդ. այժմ ժամանակն ուշ է, երեկոյ է արդէն, բայց ասա տեսնեմ։

—Ես ջհուդ աղջկայ ամուսինն եմ. դուք այսօր հրամայեցիք մզկիթում, որ պէտք է քննէք. քննեցէք շուտով և կինս ինձ յանձնեցէք, երկար սպասել չեմ կարող։

Վերջին խօսքերը սէյիդը արտասանեց սպառնողական շեշտով։

—Ջհուդները պնդում են, աղա սէյիդ, ասաց մեղմ ձայնով կրօնապետը, որ դու փախցրել ես աղջկան և քեաբինը զօռով, առանց աղջկայ հաւանութեան ես կատարել տուել։

—Քաֆիրների խօսքը ինչ նշանակութիւն ունի, աղա, ես քեաբինի թուղթ ունեմ։

—Տուր տեսնեմ։

Սէյիդը հանեց ծոցից մի երկար թուղթ և երկու ձեռքերով յարգանքով մօտեցրեց կրօնապետին, որ ուշադրութեամբ կարդաց։

—Ո՞վ է գրել այս քեաբինագիրը։

—Մօլլա Քեազիմը։



—Ինչո՞ւ վկաններ չը կան։

—Մի՞թէ մօլլա Քեազիմը սուտ է գրել։ Միղան նա է կարդացել։

Իմամ-Ջուման մտածմունքի մէջ ընկղմուեց։ Նա դեռ գտնւում էր այն շլացուցիչ տպաւորութեան տակ, որ նրա վրա գործել էր Եսթերի հիանալի գեղեցկութիւնը. «Այսքան տարի ապրել եմ, մտածում էր նա, հարիւրաւոր կանայք եմ տեսել, իմ հարէմում ամենագեղեցիկ կանայքն եմ ունեցել, բայց այդ ջհուդի քածի պէս գեղեցիկը դեռ չեմ տեսել։ Ափսոս է այդպիսի չքնաղ որսը այսպիսի գռեհիկին տալ։ Պէտք է մի հնարք մտածել...»։

Եւ բարձրացնելով գլուխը, նա մեղմ և կարեկցական ձայնով ասաց.

—Որդիս, դու ջահիլ ես. ես հասկանում եմ քո ցաւդ, բայց համբերութիւն ունեցիր. թող ռամազանի այս նուիրական օրերն անցնեն և յետոյ իսկոյն ես քո գործդ կը վերջացնեմ։ Աղջիկը այժմ մեր ձեռքին է, էլ փախչել չէ կարող։ Եթէ մենք կարողացանք համոզել նրան, որ իր անարգ կրօնը դէն ձգէ ու մեր ճշմարիտ դենը ընդունէ, որքան մեծ փառք քեզ համար։

—Եա՛ ամին, միաբերան ասացին հանդիսականները։

Եւ վեր կենալով Իմամ-Ջուման մտաւ իր առանձնասենեակը։

Բազմութիւնը սկսեց քիչ քիչ ցրուել։

## XIII

Արեգակը արդէն միջօրէի բարձրութեան վրայ էր և նրա կիզիչ ճառագայթները վանել էին փողոցներից բոլոր բանւոր արարածներին ու միայն անբան արարածները, գլխաւորապէս շները, լեզուները կախ, հեալով չանգռում էին հողը, որ և է մի խոնաւ փոս գտնելու համար։ Տների աղիւսները, իբրև հնոցի մէջ, կարծես նորից թրծւում էին արևի կիզիչ շողերի տակ. ամեն բան՝ շարժումն, կեանք դադարել էր փողոցներում, բազարներում, թիմչաներում։ Մարդիկ թմրած կամ կիսաքուն, թափուած էին խանութի, բազարչաների, մզկիթների խսիրների վրա, յարդեայ հովհարներով քշում էին ճանճերը կամ հով էին բերում։ Երբեմն երբեմն փողոցի ծայրում, խանութների կամ մզկիթների առաջ լսւում էր արդուղ[1] և կամ իսքանջիրի[2] ծախողների զիլ ձայնը և պապակուած լեզուները ամեն կողմից կանչում էին. ա՛յ դուղի, ա՛յ դուղի[5]։ Կէս կամ մի շահով սառն դուղը մի քիչ զովացնում էր պապակուածներին, նորից գլուխները ընկնում էին խսիրների վրա և ամեն տեղ դարձեալ տիրում էր մեռելային անշարժութիւն։ Փոշին, կեղտոտութիւնները, գարշահոտութիւնները պատերի տակ, տարածում էին մի այնպիսի հեղ-

1) Թան։ 2) Քաղցրախառն մեղրաջուր։ 3) Ո՛վ թան ծախող։



ձուցիչ մթնոլորտ, որ անցնողը քիչ էր մնում չնչասպառ լինէր։

Անտանելի է Թէհրանը ամառուայ ժամանակ. ով կարողութիւն ունի, փախչում է ամարանոց. Շիմրանի հովասուն բարձունքը, Դէմավէնդի ստորոտները։ Հարուստների տներում, ապարանքներում առանձին սարդափխանաներ[1] կան շինուած, ուր պատսպարւում են տօթի ժամանակ, բայց միջակ և չքաւոր դասակարգի վիճակը ամառը սարսափելի է, մանաւանդ եթէ ջրի պակասութիւն է լինում, ինչպէս յաճախ պատահում է։ Զանազան վարակիչ հիւանդութիւններ, որոնք առաջ են գալիս կեղտոտութիւնից, անմաքրութիւնից, խակ պտուղներ ուտելուց, հոտած, պղշնած ջուր խմելուց, առատ հունձ են կատարում։

Մեր պատմութեան տարին, այդ սովորական աղէտների թուին աւելացել էր և մի այլ նոր աղէտ, ամենասարսափելին՝ աղքատ դասակարգի համար. հացի, հասարակ սանկեագ[2] հացի պակասութիւն էր և թանգութիւն, այն միակ սննդի, որով այդ դասակարգը մի կերպ քաշ է տալիս իր ողորմելի, թշուառ գոյութիւնը։ Սանկեագի բաթմանը[3], որ հազար դինար[4] էր

1) Նկուղ, որի մէջ տեղ ջրի աւազան կայ և որ միշտ զով է լինում, կամ որի ներքև սառցարան է շինուած։ 2) Պարսկաստանի սովորական հացը, երկար, լաւաշի նման, բայց հաստ և խմորալի։ 3) Լիտր—7 ֆունտ։ 4) Հազար դինարը հաւասար է քսան շահու կամ մի ղռանի, ղռանը=30 կ.։

լինում ամենաթանգ ժամանակ, իսկ սովորաբար եօթնհարիւր դինար կամ 14 չահի, այժմ ծախւում էր երկու ղւան, որը չատ դժուար էր ձեռք բերելը, այն էլ ինչ հաց—խառն աւազի, հողի և թեփի հետ։ Հացի թանգութեան և պակասութեան պատճառը ոչ թէ այն էր, որ ցորենի, ալիւրի պակասութիւն կար, ոչ, այլ այն, որ մի քանի հարուստ կալուածատէր խաներ, ամբարելով ցորենը չտեմարանների մէջ, չէին ծախում, այլ պինդ պահում էին աւելի թանգ ծախելու համար։ Նրանք կաչառել էին քաղաքապետին, որի պարտաւորութիւնն էր հսկել բազարների վրա և այդպէս արուեստական թանգութիւն ու գրեթէ սով էին առաջ բերել։ Հացագործների մեծ մասը փակել էին խանութները. մնացել էին մի քանիսը, որոնք ցորենավաճառ կալուածատէրերի գործակալներն էին կամ ձեռք ձեռքի տուած էին գործում։ Դրանց խանութների կամ փուռերի առաջ ամեն օր առաւօտ և երեկոյ հաւաքւում էր ժողովրդի ահագին բազմութիւն, մանաւանդ կանանց խուռն բազմութիւն. ամենքը հաց, հաց էին պոռում, բայց ստանում էին միայն նրանք, որոնք կարողանում էին մի լիտր աւազի փոխարէն երկու ղւան վճարել։ Հայհոյանք, անէծք, լաց, աղաղակ բարձրանում էին ամեն կողմից. կանայք կատաղած, բարձրացնելով և ցոյց տալով մերկ, նիհար, կմախք դարձած մանկիկներին, սպառնում էին հացագործին Ալլահի,



մարգարէի, իմամների անէծքը թափել տալ նրա գլխին, եթէ անմիջապէս հաց չը տայ. հացագործը, իր անկարեկից, անտարբեր դէմքով կամ գլուխն էր չարժում, կամ ինքն ևս հայհոյում և երբ տեսնում էր, որ հայհոյանքը, անէծքը քարկոծութեան փոխուելու վրա էր, խոհեմաբար ներս էր մտնում և փակում հացարանի դուռը։ Ամբոխը կատաղեալ ոռնոց էր բարձրացնում, և հայհոյանք ու լուտանք թափելով կամաց կամաց ցրւում էր։ Հետզհետէ ցերեկուայ տօթը քշում էր ամենքին, այնպէս որ կէսօրուայ մօտ և մինչև տօթը անցնելը, փողոցներում տիրում էր մեռելութիւն և միայն սոված չներն էին հևալով, լեզուները կախ կամ թաւալւում առուների թաց փոսերի մէջ, կամ վնգվնգալով, այստեղ այնտեղ թափառում։ Երեկոյեան դէմ փուռերի առաջ կրկնւում էր նոյն տեսարանը։

Անկարգութիւնները, ժողովրդի տրտունջները հետզհետէ սաստկանում էին։ Բռնութեան, փայտի, խարազանի տակ դարերով մեծացած, ճընշուած, հարստահարուած ժողովուրդը, որքան որ ստրկական յատկութիւններ ունենայ, որքան էլ վեհերոտ, թոյլ լինի, բայց երբ նա զրկւում է և այն միակ միջոցից, որով պահպանում է իր եղկելի գոյութիւնը—հացի կտորից, նա այլևս մոռանում է ամեն բան և քաղցած գազանի նման յարձակւում է, ջարդ ու փշուր անելով իր առաջ ամեն բան, կործանելով, տապալելով, վրէժխնդիր լինելով

իր կրած բազմամեայ տառապանքների, անարգանքների համար։ Սակայն բռնկուելով հրաբուխի պէս, կատարելով իր աւերմունքները, ամբոխը, հէնց որ մի քիչ յագուրդ է տալիս իր գազանային հակումներին, նոյնպիսի արագութեամբ պաղում է, յետ է կենում և նրա վրա տիրում է ահ ու սարսափ. ստրկական յատկութիւնը նորից երևան է գալիս և նա ստրկի հլու, անմռունչ խոնարհութեամբ տանում է սոսկալի պատիժները։ Քանի քանի անգամ Թէհրանում կատարուել էին այդպիսի դէպքեր. ինչպիսի զարհուրելի պատիժներով ամբոխը քաւել էր իր րոպէական բռնկման յանցանքը, և, սակայն, այդ սոսկալի պատիժները երբէք նրան յետ չէին կասեցրել նորից բռնկուելու ամեն անգամ, երբ անխիղճ հարստահարողները հացի արուեստական թանգութիւն սարքելով, քաղցածութեան էին ենթարկում նրան։ Այդ հանգամանքը քաջ գիտէին Թէհրանի իշխանութիւնները, ուստի և զգալով, որ հրաբուխը կարող է յանկարծ ժայթքել, սկսեցին մտածել ձեռք առնելի միջոցների մասին։

Շահը քաղաքում չէր. ռամազանը վերջացաւ թէ չէ, երբ նա քիչ քիչ անդորրութիւն ստացաւ և միամտուեց, որ Բէհման-միրզայի փախուստը վտանգ չէ սպառնում իր գահին և երիտասարդ շահզադէն տարուեց Կովկաս ու փակուեց Շուշի քաղաքում, այլ ևս Պարսկաստան չը վերադառնալու պայմանով, Մահմէդ Շահը շունչ առաւ և



ցանկութիւն յայտնեց ամառը անցկացնել Լառի դաշտերի վրա։ Պալատը և հարեմխանէն քոչեցին։ Շահի հետ քոչեցին աւագանին, վեզիրները, մեծամեծները։ Քաղաքում մնաց սակայն մեծ վեզիր հաջի Միրզա-Աղասին, որ շարունակ ահ ու վախ էր քաշում Բէհման-միրզայի գոհարեղէնը ձեռքից թռցնելու համար. քաղաքում մնաց բէգլար-բէգին, ըստ պաշտաման, քաղաքապետը, որ խիստ չաղ թիքաներ և առատ ընծաներ էր ստանում ամբարդարներից[1]), ցորենի և գարու մաղանդան[2]) չ'իջացնելու համար։ Ի հարկէ, քաղաքապետը, փորձառութեամբ, չէր մոռանում այս և այն կերպով քաղցրացնել բէգլար-բէգու քիմքը, և նրա միջոցով նաև մեծ վեզիրի քիմքը, այլապէս վաղուց նա փորձած կը լինէր իր գարշապարների վրա ֆալախկայի հարուածները, բայց երբ ժողովրդական զայրոյթի արտայայտութիւնները սկսեցին սպառնալից կերպարանք ստանալ, բէգլար-բէգին շտապեց զեկուցանել ծերունի եպարքոսին իրերի վիճակը։

Հաջի Միրզա-Աղասին, նստելով իր սիրելի ջորու վրա, մի քանի ֆէրրաշների, ղուլամների և մունշիների[3]) ընկերակցութեամբ գնաց Լառ, Շահի մօտ, հրամայելով բէգլար-բէգուն սպասել իր հրամաններին։

Գիշերելով Շիմրանի գիւղերից մէկում, նա

---

1) Շտեմարանատէր, ամբարող։ 2) Սակագին։ 3) Դիւանատան պաշտօնեաներ, քարտուղարներ։

տեսաւ որ գիւղը գրեթէ ամայի է և իր բեռների համար ֆէրրաշները չեն կարողանում ոչ միայն գրաստ գտնել, այլ և յարդ, գարի ձիերի և ջորիների համար։ Շրջակայ գիւղերն էլ գրեթէ ամայի էին. ոչ յարդ կար, ոչ գարի, ոչ ցորեն, չը նայելով որ չատ տեղ հունձը արդէն արուած էր։ Ծերունի եպարքոսը չը զարմացաւ. Նա գիտէր, որ այդ գիւղերը փոքր ինչ առաջ ենթարկուել էին ս ի ւ ր ս ա թ ի[1]), իսկ սիւրսաթը Պարսկաստանի գիւղական ազգաբնակութեան համար աւելի մեծ պատուհաս է, քան մորեխը, երաշտութիւնը, մուկը. Նա խանձում, այրում, ոչնչաց-

[1]) Երբ պարսից Շահը ճանապարհորդում է, ճանապարհի վրա ընկած երկու կողմերի գիւղերը պարտաւոր են հայթայթել պալատի, հարէմխանայի և զօրքի համար հարկաւոր գրաստը և ուտելիքը թէ մարդկանց և թէ անասունների համար. այդ տուրքը կոչւում է ս ի ւ ր ս ա թ։ Հազիւ բանակը իջեանում է մի գիւղի մօտ, որ զինուորները, ֆէրրաշները թափւում են գիւղը և ում մօտ ձի, էշ, ջորի են գտնում, բռնում բերում են բանակը, ում մօտ յարդ, գարի, խոտ են գտնում խըլում են։ Թէև օրէնքով սահմանուած է, որ սիւրսաթի փոխարէնը դուրս կան հարկերից, բայց այդ օրէնքը չէ գործադրւում. այդ պատճառով, հէնց որ գիւղացիները լսում են որ Շահը և իր բանակը պէտք է անցնեն իրանց երկրով, նրանք շտապում են վերցնել իրանց գրաստները և փախչել հեռու տեղեր, որ ձեռք չընկնեն. գիւղերը ամայանում են բնակիչներից և մնում են միայն մի քանի ծերեր ու պառաւ կանայք։ Երբ պատուհասը անցնում է և բանակը հեռանում է, նորից վերադառնում են։



նում է ամեն բան իր առաջ իբրև Սահարայ անապատից փչող տօթակէզ քամի։

Ֆէրրաշները գտել էին գիւղում մի պառաւ կին, որին բռնելով, բերին մեծ վեզիրի մօտ։ Հաջի-Մ՚իր զա-Աղասին, ի բնէ զուարճախօս լինելով, խօսակցութեան բռնուեց պառաւի հետ, որ գանգատւում էր, թէ ֆէրրաշները զօռով իրան բռնել են, երբ ինքն կամենում էր փախչել։

—Լաւ, ն է ն ա[1]), ասաց մեծ վեզիրը, ինչո՞ւ էիր փախչում։

—Բիզ ղուրբան, պատասխանեց պառաւը, ախր չէ որ ս ի ւ ր ս ա թ է։

—Էհ, քեզ ինչ, դու կին ես, քեզ հօ չէին բռնելու, որ Շահի բեռները տանես։

—Թօյլ կը տաս, ղո՞ւրբան, մի առակ պատմեմ։

—Շա՜տ լաւ, չա՜տ լաւ, պատմիր, ասաց մեծ վեզիրը, եթէ լաւ առակ եղաւ, քեզ մի լաւ խալաթ կը տամ։

«Մ՚ի օր, սկսեց պառաւը, դաշտում մի աղուէս թունդ փախչում էր։ Պատահեց նրան նապաստակը և հարցրեց. դըրա՛ցի, դըրա՛ցի, ինչ կայ, ինչո՞ւ ես լեղապատառ փախչում։—Չես լսել, ասաց աղուէսը, որ ս ի ւ ր ս ա թ է, և հրամայուած է բռնել բոլոր ջորիներին։—Լա՛ւ, քեզ ինչ, դու հօ ջո՞րի չես, որ բռնեն քեզ։—Աղուէսը ժպտաց և ասաց. օրհնած, այս չուլուղի մէջ ո՞վ է նկատում

[1]) Մայր։

որ ես ջուր չեմ, այլ աղուէս. ում վրա են հասնում, բռնում են. մինչև ես կ'ապացուցանեմ որ ջուր չեմ, այլ աղուէս, ոտքերս նալած կը լինեն»։

Ծերունի եպարքոսը ըմբռնեց պառաւի առակի դառն ճշմարտութիւնը. նա չը բարկացաւ, այլ հաւատարիմ իր խոստման՝ հրամայեց իր տնտեսին մի լաւ խալաթ տալ պառաւին և բաց թողնել ու այլ ևս սիւրսաթի համեց չընկնել։ Հասնելով Լառ, նա պատմեց Մահմէդ Շահին պառաւի առակը և Շահը քահ քահ խնդաց ու մեծարեց Հաջուն Սպահանի ընտիր սեխով, որին այնքան սիրահար էր։

Երկու օրից յետոյ Լառից մի ղասիդ[1]) հասաւ Թէհրան, չոքեց բէգլար-բէգու դռան առաջ. նա յանձնեց նրան մեծ վեզիրի կնիքով դրոշմուած մի թումար[2]) ու Շահի երկու ֆիրման։

. . . . . . . . . .

Տօթը սկսում էր քիչ քիչ անցնել. փողոցները սկսում էին կենդանանալ. Ջրկիրները կաշուէ տիկերի մէջ լցրած ջրով սրսկում և ոռոգում էին տների գաւիթները, փողոցները, կամ առաջարկում էին անցորդներին զովացնել իրանց պապակը սառցախառն ջրով։ Թալխաման անող և ֆալ բացող մօլաններ պատերի խորշերի մէջ ծալապատիկ նստած, աղօթք մրմնջալով, սպասում էին չըերք կանանց, կամ դժբախտ սիրահարներին,

---

[1]) Հետիոտն սուրհանդակ, հին արևելքի միակ նամակատար ու նամակաբեր։ [2]) Տումար, գիր։



որ նրանց դարդին դարման անեն։ Պողալաճառները, թարաղները գլխին դրած, կշիռը ուսին ձգած, գովում էին իրանց պտուղները։ Այդ միջոցին մի համալ, ձեռքին բռնած մի հատ սեանկագ հաց, որի գոյնը դժուար էր որոշել, ուրախ ուրախ անցնում էր այն փողոցով, որ տանում է դէպի Սէբզ-Մէյդան։ «Եզիդի, Շիմրի[1]) ընկեր դառնան այդ հացագործները, ասում էր նա բարձրաձայն. հազիւ կարողացայ երկու ղռան տալով, երկու օրուայ աշխատանքս՝ ստանալ այս հացը, և ինչ հաց, Ալլահ, կէսը հող, մոխիր ու կաւիճ. այս էլ տէրութիւն է, այս էլ մուսուլմանութիւն է. հաւատա՝ որ մօլթանին, էրմանին, ջհուդը[2]) աւելի խղճմտանք կունենան, քան այս անիծած ամբարդարները»։

Մշակին շրջապատեցին անցւորները և տեղեկութիւններ հարցրին թէ ո՞ր փուռն է բաց, ապա բազմութիւնը սկսեց շտապով դէպի ցոյց տուած կողմն գնալ, մինչև հասաւ այնտեղ։ Այն փողոցը, Սաբզի-Մէյդանին մօտ, Շահի պալատի ետևը, ուր գտնւում էր փուռը և հացագործի խանութը, վխտում էր արդէն խառնիճաղանճ ամբոխով, որի

---

[1]) Եզիդն այն խալիֆն էր, որի ժամանակ Ալու որդիները՝ Հիւսէյն և Հասան նահատակւեցին, իսկ Շիմրը՝ նրանց գլխատող դահիճն էր։ Այդ պատճառով, շիա մուսուլմանի համար Եզիդից և Շիմրից աւելի անիծեալ մարդ չը կայ աշխարհում։ [2]) Մուսուլմանի կարծիքով մօլթանին, հայը, հրէան խղճմտանք չունեն։

մեծամասնութիւնը կազմում էին կանայք, իսկ մնացածը համալներ, սէյիդներ, դերվիշներ, զինւորներ և առհասարակ բանւոր դասակարգի մարդիկ։ Խանութի թեք մակարդակի վրա, ուր ցցուած էին մեխեր, հազիւ 5—6 հաց էր երեւում այդ մեխերից կախուած. դուան կողքին, կշիռքի առաջ նստած հացագործը, մօրուքը ու եղունգները խինայած մօտ 50 տարեկան մի մարդ, որի ճակատից ծորում էր քրտինքը, պարզում էր ձեռքը դէպի առաջ, ստանում էր փողը և ապա կշռելով հացը, տալիս գնողին։ «Ինձ ևս տուր կէս լիտր հաց, պոռում էր ամբոխից մի երկրորդը. ինձ մի լիտր, ինձ մի քառորդ, առ փողն, աչքդ կոխիր, չէյթանի փայ լինի, գլխիդ հարամ լինի», գոռում էին զանազան կողմերից։ Հացավաճառը երդում, հաւատ էր անում, իմամներին վկայ կանչում, որ հաց չը կայ և առաջարկում էր ամբոխին գնալ ուրիշ հացագործների խանութից գնել հաց։ Երեխաները իրանց մօր գրկերում կամ շալակներին այնպէս աղէխարշ կերպով լացում էին «մա՛յրիկ, հաց, հաց, սոված եմ» պոռալով, որ օդը լցուած էր սուգ ու շիւանով։ Ամբոխը սպառնալիքներ էր կարդում, յուսահատութեան և անհամբերութեան նշաններ էր ցոյց տալիս և ամեն անգամ, երբ յուսահատութեան մղուած կանանց մինը բացականչում էր «այ քանդուի այսպիսի տէրութիւնը, կործանուի Մահմէդ Շահի գահը», նա, ամբոխը «ամեն» էր պոռում։



Ամբոխը մոռացել էր որ ֆէրրաշները կարող են լսել Աշխարհի Ապօթարանի հասցէին ուղղուած այդ անէծքները և այն ժամանակ կը լինէր «լալ և կրճտալ ատամանց», բայց յուսահատութիւնը, քաղցը մի այնպիսի սոսկալի հրէշ է, որ քանդում է պատնէշները. վտանգաւոր է ամբոխի այդպիսի տրամադրութեան ժամանակ նրա ակռաների տակ ընկել։

—Մա՛յրիկ, հաց, հաց եմ ուզում, լսուեց դարձեալ մի երեխայի աղիողորմ ձայն, տես, նա ունի, ինչ սպիտակ, լաւ հաց է ուտում։

Բնազդմամբ ամենքի աչքերը ուղղուեցին դէպի երեխայի ցոյց տուած կողմը։ Մի ջահել կին, գրկին ունէր 4 տարեկան մի աղջիկ, լացակումած, որ այժմ ուրախ ուրախ և ագահաբար ուտում էր մի կտոր սպիտակ լաւաշ։ Ջահել մայրը, դիմելով մի քիչ հեռու կանգնած երկու կանանց, որոնց մինը խափշիկուհի էր, ասաց միւսին. «Թէև դու եահուդի[1] ես, բայց Ալլահը և հազրաթ Մուսան[2] օրհնեն քեզ, որ խղճացիր իմ երեխային»։

—Ինձ էլ, ինձ էլ տուր մի թիքա, ճչվացին ամեն կողմից սովալլուկ երեխաներ, մեկնելով նիհար ձեռները դէպի բարեսիրտ հրէայ կինը։

—Տո՛ւր, տո՛ւր, եա՛հուդի աղջիկ, տո՛ւր մեզ հաց։

---

1) Հրէայ։ 2) Մովսէս մարգարէն։

—Ի՞նչ, թնդաց յանկարծ մի խռպոտ ձայն, մուսուլմանը այստեղ գարու հաց անգամ չէ գտնում ուտելու, իսկ մուռտառ ջհուդը ցորենի պատուական լաւաշ է ուտում. խլենք նրանից այդ հացը, ջհուդը կարող է առանց հացի էլ մնալ

—Տուր, տուր, եահուդի, հացը, ռռնայ ամբոխը, որ արդէն էլեկտրականացած, մի առիթ էր որոնում ժայթքելու իր պայրոյթը և թափելու իր դառնացած հոգու մաղձը:

Եւ հարիւրաւոր բռունցքներ՝ սպառնալից ուղղուեցին դէպի հրէայ կինը, որ, զարհուրած, ափրթնած, առելի պինդ սեղմեց կռնատակի բոխչան, որից հանել էր մի երկու կտոր հաց և տուել երեխաններին։

—Այս հացը իմը չէ, աղաղակեց նա, տանում եմ Իմամ-Ջումայի տունը տիրուհուս համար:

—Սուտ է խօսում անզգամը, ինչ էք նայում, խլէք ձեռնից, ռռնաց դարձեալ գազանացած ամբոխը։

Եւ Ալլահը գիտէ ինչ պէտք է լինէր խեղճ հրէայ աղջկայ հալը, եթէ նրա ընկերուհի խափշիկուհին, որ մեզ ծանօթ Եասամանն էր, տեսնելով վերահաս վտանգը, չը խլէր աղջկայ կռնատակից բոխչան և չը նետէր ամբոխի մէջ, ասելով.

—Հա՛, առէք, առէք հացը, մէջը հալուայ ես կայ, կերէք։

Կայծակի արագութեամբ ամբոխը վրա տուեց



և ինչպէս քաղցած շները թափւում են կրծած ոսկրի վրա և միմեանց բզքտում, այնպէս էլ սովալլուկ բազմութիւնը մէկ մէկու հրելով, ոտնակոխ անելով, քիթ ու պռունգ ջարդելով, մի րոպէում բզքտեց բոխչայի բովանդակութիւնը: «Վայ ոտքս, վայ մէջքս, անիրաւներ ջարդեցիք ինձ, թեւս կոտրեցիք»—ահա աղաղակներ, հայհոյախառն, որ լսւում էին:

Եասամանը քաշ տալով իր ետեւից հրէայ աղջկան, մի կերպ հանեց նրան ամբոխի միջից և ազատեց իր այդ ճարպիկութեան շնորհիւ: Հրէայ աղջիկը, սարսափած, մի և նոյն ժամանակ չէր դադարում լացել, ասելով. հիմա ինչ պէտք է տանեմ տիրուհուս, ինչ պատասխան պէտք է տամ Սաւուղի մօրը։

—Փառք տուր Ալլահին, աղջիկ, որ կեանքդ ազատեցիր, չես տեսնում ամբոխը քաղցածութիւնից գազան է դարձել. քեզ բզիկ բզիկ կանէին, եթէ բոխչան չը նետէի նրանց: Եւ ո՞ր չէյթանը դրդեց քեզ հաց տալ այն երեխային։

—Ինչ անեմ, սիրտս չը դիմացաւ, երբ լսեցի երեխայի աղիողորմ ձայնը:

Ամբոխը դեռ շարունակում էր մէկ մէկուց խլել ծեծով, հայհոյանքով հացի փշրանքները. հացագործը, տեսնելով նրա կատաղութիւնը, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ ամբոխը մի րոպէ մոռացաւ իրան, աննկատելի կերպով ծլկուել և փակել էր խանութի դուռը ներսից,

թողնելով մեխերի վրայ մի քանի հաց։ Հէնց որ ամբոխը այդ նկատեց, նորից յարձակուեց հացերի վրա և կտոր կտոր անելով, սարսափելի ժխոր բարձրացրեց. նորից չատերը ոտնակոխ եղան, երեխաներ ճմլուեցին մայրերի գրկում, կանայք ուշաթափ եղան։

—Մուսուլմաններ, գոռաց յանկարծ մի ձայն, եկէք բռնենք ջհուտ աղջկան և թող նա տանի ցոյց տայ մեզ, թէ որտեղ այդ մուռտառ ջհուդները թագցրած ունեն սպիտակ հաց։

— Բռնեցէք, բռնեցէք ջհուդ աղջկան, ոռնաց ամբոխը։

—Ահա, ահա փախչում են խափշիկուհու հետ, լսելի եղաւ մի ձայն, նրանք մտան փոքր փողոցը։

Եւ մի քանի հոգի վազեցին Եասամանի ու հրէայ աղջկայ ետևից, բայց հազիւ մի քանի քայլ առաջ էին գնացել, որ մի նոր հարայ հուրոց բարձրացաւ և ճիպոտի մի քանի հարուածներ ստիպեցին վազողներին կանգ առնել։

—Ի՞նչ խաբար է, փէդէր-սուխտաներ, հարամզադէներ, ինչ կուիւ է, յետ քաշուեցէք, լսուեց Բէգլար-բէգու խրոխտ ձայնը և ֆէրրաշների ճիպոտների հարուածները սկսեցին դաղել սրա նրա մէջքը։

Ամբոխը, մի քանի րոպէ առաջ գազանացած, ապառնալից, սկսեց վախկոտութեամբ տեղի տալ, բայց կանայք վայնասուն բարձրացրին, «հաց, հաց ենք ուզում, Բէգլար-բէգի, դուք Աստուած չունէք, դուք մուսուլման չէք, մեզ կոտորելու էք սովից, դուք որ հրամայէք, հաց կը լինի»։



—Կը լինի, կը լինի, ասաց Բէգլար-բէգին. լսեցէք, այժմ կը տեսնէք, ահա ճառ[1] են կանչում. էյ ճառչի[2], առաջ եկ։

Շաթիրի հագուստով մի մարդ, ձեռքին բռնած մի թումար, իջաւ էշից և կանգնելով ամբոխի մէջ, աղաղակեց.

«Հրաման է մեծ Շահնշահին, ալ-խագան, ալ-խագան Մէհմադ Շահին—թող Ալլահը յաւերժացնէ նրա թագաւորութիւնը և տէրութիւնը։ Աշխարհի Ազօթարանը իմանալով, որ ժողովուրդը նեղութիւն է քաշում հացի պատճառով, որ քաղաքում ցորեն չէ ծախւում, հրամայել է աղա Բէգլար-բէգուն պաշտօնանկ անել քաղաքապետին, ֆալախկայի երկու հարիւր հարուած տալ նրա ոտներին և նոր քաղաքապետ կարգել շահզադէ Աբգար-միրզային։ Այսուհետև ով հացի հետ գարի, հող, թեփ խառնի, նրա ձեռքը կամ ականջը պէտք է կտրուի. հացի լիտրը պէտք է հազար դինարով ծախուի, ով այդ մազանդայով չը ծախէ, նրա ականջը պէտք է մեխուի սիւնից։ Բոլոր ամբարդարները պէտք է ցորենը հանեն շտեմարաններից և ծախեն ղափանի[3] տակ առաջուայ գնով, եթէ ոչ նրանց ամբարած ցորենը պէտք է թալաչ[4] լինի։

1) Ճառ կանչել—ճառ խօսել, յայտարարել հրապարակաւ։ 2) Ճառչի—ճառ կանչող, մունետիկ. 3) Հասարակական կշիռ։ 4) Աւար անել.

«Հրաման է Շահնշահին, ալ-սուլթան, ալ-սուլթան Մէհմադ Շահին—թող Ալլահը յաւերժացնէ նրա թագաւորութիւնը և տէրութիւնը.—վաղը, մեծ հրապարակի վրայ պէտք է պատժուեն Սպահանից բերուած խռովարարները, գողերը, ղալբզանները[1]), լութիները, ինչպէս և Շիրազի և Մազանդարանի կողմերում երևցած հերետիկոսները, որոնք բ ա բ ի անունով ոտնակոխ են անում չէրիաթի նուիրական օրէնքը, արհամարհում են ղուրանը և մեծ մարգարէի պատուիրանները»:

—Սալավաթ, սալավաթ, պոռաց ամբոխը: Ալլահը երկար կեանք տայ մեր Շահին:

Ամբոխը, բարի լուրի քաղցր տպաւորութեան տակ, մոռանալով հացը, քաղցը, սկսեց գնալ մունետիկի ետևից, որ հեծնելով էշը, շարունակեց իր ճառ կանչելը ամեն մի հացագործարանի առաջ կանգ առնելով. այդպիսով ամբողջ քաղաքում նոյն երեկոյեան տարածուեց Շահից ստացուած ֆէրմանների բովանդակութիւնը և գրգռուած ամբոխը սկսեց քիչ քիչ հանդարտուել ու վաղուան տեսարանի հրճուանքի յոյսով օրօրել իրան: Մայրերը հանգստացնում ու քնացնում էին իրանց քաղցած մանուկներին այս խօսքերով. «տես էգուց որքան սեանկազ և լաւաշ կ'ունենանք«: Եւ լացից յոգնած երեխաները քնում էին:

[1]) Կեղծ դրամ կտրող, կեղծող.



Սակայն կային մարդիկ, ծերունիներ, որոնք գլուխները թափ էին տալիս, երեկոյեան, իրանց տների դռան սաքուների վրայ նստած ղէյլան ծխելիս. «մեզ խաբում, քնացնում են. այս գիշեր ամբարդարները և հացագործները կը տեսնեն նոր քաղաքապետին ու դարձեալ ամեն բան իրանց քէֆով կը լինի, բ ա ճ ա խ լ ո ւ ն ե ր ը [1]) ում չեն կուրացնում:

—Ո՛չ, հաջի Աբբաս, պատասխանում էր հարևանը. ասում են նոր քաղաքապետը շատ խիստ մարդ է և Շահը ևս շատ խիստ հրամաններ է արձակել:

Կը լուսանայ, կը տեսնենք. առանց Ալլահի կամքի մեր գլխից մի մազ անգամ չի ընկնի:

Մենք հետևենք Եասամանին և հրէայ աղջկան:

## XIV

Եասամանը, խորամանկ, ինչպէս լինում են առհասարակ խափշիկները, գործադրեց ամբոխի վերաբերմամբ այն, ինչ որ ճանապարհորդները գործադրում են շների վերաբերմամբ. երբ ճանապարհորդի վրայ յարձակւում են կատաղի շներ և նա պաշտպանուելու հնարաւորութիւն չունի,

[1]) Ոսկիները:

Նա հանում է պարկից իր պաշարը և ձգում նրանց առաջ. շները, թողնելով ճանապարհորդին հանգիստ, սկսում են իրար խեղդոտել, բզգտել մի ոսկրի համար, իսկ ճանապարհորդը անցնում է անվնաս։ Եթէ Եսասմանը չունենար գործելու այդ պաղարիւնութիւնը, հրէայ աղջկայ բուրդը ամբոխը վաղուց գզել էր։ Նա քաշեց նրա թևից և տարաւ նեղ փողոցը, ապա ստիպեց արագացնել քայլերը։ Մի փոքր տեղ գնալուց յետոյ, հրէայ աղջիկը, որ յուզմունքից և վախից դեռ վրա չէր եկել, ծնկները կծկուած զգալով, պպզեց պատի տակ մի քիչ շունչ առնելու, բայց Եսասմանը լսելով այդ րոպէին ամբոխի նոր ոռնոցը և սպառնալիքները հրէաների վերաբերմամբ, յետ նայեց և տեսաւ, որ վազում են իրանց ետևից։ Նա կոպտութեամբ բարձրացրեց հրէայ աղջկան և առաջը ձգելով «փախիր, փախիր», գոռաց. ինքն էլ սկսեց վազել։ Փախչելիս, նա նորից յետ նայեց և տեսաւ, որ այլ ևս ոչ ոք հետամուտ չէ իրանց, բայց գալիս է Սէլիմ չաթիրը մի բարձրահասակ սէյիդի հետ։ Նա մի քիչ միամտուեց, ձայն տուեց հրէայ աղջկան կանգնել, մինչև հասաւ Սէլիմը, պատմեց մունետիկի հրապարակածը և բոլորովին միամտացրեց, որ այլ ևս ոչ մի վախ չը կայ։

Սէլիմը աչքով նշան արեց Եսասմանին դէպի սէյիդը, որ կանաչ չալմայով և կանաչ գօտիով էր այս անգամ, ու մռայլ, ունքերը կիտած, քայլում էր նրա կողքին, խէթ խէթ նայելով հրէայ աղջկան։ Վերջինս, նոր վախից բռնուած, կպչեց Եսասմանին և պինդ բռնեց նրա թևը, պաշտպանութիւն որոնելով։ Նա ճանաչեց նրան. Եսթերին՝ իր տիրուհուն յափշտակող սէյիդն էր։



Սէյիդի համբերութիւնը այլ ևս հատել էր. Իմամ-Ջուման ձգձգում էր գործը. նա պահանջել էր վկաներ, որոնց սէյիդը ներկայացրել էր։ Վկաները իր թաղի բնակիչներ և հարևաններ, ցոյց էին տուել, որ հրէայ աղջիկը իր յօժար կամքով էր մտել սէյիդի տունը, բայց Իմամ-Ջուման յայտնել էր, որ պէտք է հրէաների ցոյց տուած վկաներին էլ հարցաքննէ. այդ վկաները, աւելի բազմաթիւ քան սէյիդինը, որոնց մէջ և երկու մուսուլման ցոյց էին տուել, որ սէյիդը զօռով յափշտակել է Եսթերին և քեաբինը մօլլան կատարել է առանց Եսթերի գիտութեան ու համաձայնութեան։ Սէյիդը բնազդմամբ զգում էր, որ Իմամ-Ջուման իր գլխին խաղ է խաղում, դիտմամբ ձգձգում է գործը։ Միւս կողմից էլ Սէլիմի երկմտի քսու խօսքերը կասկած էին ձգել նրա սրտի մէջ Իմամ-Ջումայի վերաբերմամբ և գրգռել նրա խանդոտութիւնը։ Նա գլխի էր ընկել, որ իրան մի թակարդ են լարում, բայց այդ բոլոր արգելքները, մանաւանդ հրէայ աղջկայ աննման գեղեցկութիւնը աւելի էլ բորբոքել էին նրա մէջ Եսթերին տիրելու ցանկութիւնը և նա որոշել էր վերջնական բացատրութիւն պահան-

ջել Իմամ-Ջումայից, և եթէ Եսթերին իրան չը վերադարձնեն, նորից գրգռել ամբոխը ու ջհուդ-քուչան սաքել։ Այդ մտքերով տոգորուած, նա գնում էր այժմ Իմամ-Ջումայի տունը և այժմ իսկ հրէաների սիրտը վախ գցելու համար, հրէայ աղախնից լսուելու նպատակով, նա դիմեց Եասամանին, ասելով. «աֆէրիմ, այդ էր պակաս. հիմա էլ սկսել էք մուրտառ ջհուդ կանանց հետ բարեկամութիւն անել, նրանց հետ նստել վեր կենալ։ Ասա այդ շուն ջհուդ աղջկան, թող իմաց տայ միւս շներին, եթէ այսօր իմ կնոջս ինձ չը տան, էգուց ջհուդների թաղում քար քարի վրայ չի մնայ»։

Հրէայ աղախինը պինդ սեղմեց Եասամանի թեւը և շշնջաց. «ի սէր Աստուծու, պաշտպանիր ինձ, ես վախում եմ»։

—Ամօթ չէ՞, աղա, ուրբանդի տակից խօսեց Եասամանը, որ այդպիսի խօսքեր էք ասում մեզ. մենք աղախիններ ենք, մեզ ինչ հրամայում են այն ենք անում. սա էլ Եսթերի հօր աղախինն է, նրա համար հաց էր տանում, սովածները խլեցին։ Դուք եթէ խօսք ունէք, Իմամ-Ջումային դիմեցէք. ձեր գործը նրա հետ է և ոչ մեզ հետ։

—Ի՞նչ, իմ կինս, մուսուլմանի կինը, ջհուդի հաց է ուտում։ Ալլահ, Ալլահ, հողն իմ գլխին։ Եւ Իմամ-Ջուման այդ թոյլ է՞ տալիս։

Եւ նա արագացրեց քայլերը. Սէլիմը հետեւեց նրան, ժպտալով Եասամանին։



Երկու կանայք կամաց կամաց քայլեցին մինչև հասան Իմամ-Ջումայի տունը։ Դռնապանը, ծերունի հաջի Բաբան, սաքուի վրայ չոքած ղէյլան էր ծխում, տմբտըմբացնելով խինայած մօրուքը։ Տեսնելով Եասամանին մի անծանօթ կնոջ հետ, նա հարցրեց.

—Ո՞վ է այս կինը։

—Ջհուդ խանումի աղախինը. մեր խանումը ինձ ուղարկեց սրան բերելու. մեզ հետ վերցրել էինք ընտիր սպիտակ լաւաշ. մի ինչ լաւն էր, ամու[1], բայց ճանապարհին վրայ թափուեցին և խլեցին, քիչ էր մնում մեզ էլ բզիկ բզիկ անէին, մի կերպ ազատուեցինք եկանք։

—Ախր ի՞նչ կը լինի, Եասաման, որ այդ ջհուդները թողնեն իրանց քաֆիր դենը և ընդունեն մեր սուրբ, ճշմարիտ հաւատը և ուղղակի դրախտ գնան։

Եւ դառնալով հրէայ աղախնուն, ծերունին յարեց։

—Է՛յ աղջիկ, եկ ինձ փորձառու աղսախկալիս[2] լսիր. ես քո վատը չեմ ուզում. թող այդ մոլար, ծուռ հաւատդ, ընդունիր մեր ճշմարիտ մուսուլման հաւատը. ես քեզ կ'առնեմ կին իմ տղիս համար, այն կեանքումն էլ հրեշտակների կին կը լինես։

Հրէայ աղջիկը նորից մօտեցաւ Եասամանին։

---

1) Հօրեղբայր։ 2) Ծերունի։

—Լաւ, լաւ, ասաց ծերունի դռնապանը, ներս մտէք։ Եւ նա քաշեց հարէմխանեան տանող դռան չուանը։

Եասամանը և հրէայ աղջիկը մտան կանանոցը, չարշաւները վեր առին, երեսի քօղերը յետ ձգեցին։ Փոքր բակից, նրանք մտան մի ընդարձակ պարտէզ, որի մէջ տեղ մի մեծ աւազան կար և շատրուանը կարկաչելով ջուր էր ցայտեցնում. ծառուղիները նոր ջրուած էին. աւազանի չորս կողմը տարածուած էին ծաղկանոցներ, որոնք անուշահոտութիւն էին տարածում, իսկ սաղարթախիտ ծառերը, շարժուելով երեկոյեան հովից, զովութիւն էին տարածում։ Մի քանի կանայք, բոլորովին մերկ լողանում էին աւազանում, միմեանց երեսին ջուր խփում և ուրախ ուրախ քրքիջ արձակելով, սուզում ջրի տակը ու նորից երեսը դուրս գալիս։ Աւազանի գլխին մի մեծ նոճիի տակ փռուած էր մի երկար գործ, մի քանի մութաքէներ դրած. այդտեղ դրուած էր մէջմահիների մէջ զանազան պտուղներ—տանձ, խնձոր, սալոր, դեղձ. մի այլ մէջմահու մէջ դարսուած էին զանազան օշարակներով սրուակներ, մէջտեղը մի մեծ շ ա ք ա ս ա յ [1]) շ ա ր բ ա թ [2]) սառուցի կտորներով և երկար եղևնէ փայտէ նախշած գդալներով։ Երկու աղախին ևս գ ո ւ լ ա բ դ ա ն ն ե ր ը [3]) ձեռքին բռնած կանգնած

[1]) Սկաւառակ։ [2]) Շաքարաջուր, քաղցր ջուր։ [3]) Վարդեջրի սրուակ։



էին, երկու ուրիշ աղախին հոտաւէտ ծաղիկների փնջեր բռնած նոյնպէս սպասում էին լողացող խանըմներին, իսկ գեղանի, տկլոր խանըմները երբեմն երբեմն նայուածքները ուղղում էին դէպի գունաւոր ապակեզարդ փոքր սենեակը, որ շինուած էր դիմացի թալարի գլխին և որտեղ կարող էր նստած լինել հարէմխանի տէրը—Իմամ-Ջուման, թէև անտեսանելի գունաւոր ապակիների միջից։ Լողացող խանումները դուրս էին գալիս աւազանից և թափահարւում. ջրի կաթիլները, լուսաւորուելով վերջալոյսի շողերով, փայլում էին նրանց սպիտակ մարմնի վրա ադամանդի նման։ Աղախինը ածում էր խանըմի ափը վարդաջուր, որով նա սրսկում էր սև վարսերը, որոնք երկար թափուած էին ուսերի վրա. ապա փաթաթուելով բարակ շղարշանման սփածանելիքի մէջ, խանըմը նստում էր, թիկն տալիս մութաքին և միւս աղախինը անմիջապէս դնում էր նրա առաջ մի փունջ ծաղիկ ու մատուցանում էր մի գաւաթ սառն օշարակ։ Օշարակից յետոյ աղախինը տալիս էր մի ֆինջան սուրճ և մի լաւ չաղ արած ղէյլան։ Երեք խանըմները—Իմամ-Ջումայի երեք քեաբինաւոր ամուսինները, թիկն տուած մութաքէներին, սև սաթի նման վարսերը տարածած մերկ վզերի վրա, ժպտալից, և լուսաւորուած մայր մտնող արևի շողով, արդարև, նմանում էին հուրի-փէրիներին։ Ծխելով ղէյլանը, նրանք սկսեցին հագնուել, բայց ա-

մենից առաջ սկսուեց ս ի ւ ր մ է յ ի [1]) գործողութիւնը. ոչխարի ոտի կճպեղի մէջ ածած սիւրմէյով յօնքերը խիտ քաշելուց յետոյ, նրանք վարդագոյն սնգուրով վարդի գոյն տուին իրանց այտերին և նռնի գոյն իրանց շրթունքներին։

Նկատելով ներս մտնող Եասամանին հրէայ աղախնու հետ, խանըմներից տարիքաւորը, Գիւլսանէմը, չանկ անելով, ասաց.

—Մոխիր գլխիդ, սեւուկ, էլի ծրտեղերանք ես թրև գալիս, էլի ինչ օյիններ ես սարքում, ո՞վ է այդ աղջիկը։

Խափշիկուհին խորամանկաբար ժպտաց.

—Ձեռ ասի, Գիւլսանէմ խանըմ, մինչև չը հրամայես մեզ մի մի գաւաթ սառն օշարակ տան բերաններս զովացնելու։

Խանըմը նշան արեց և աղախինը երկու մեծ գաւաթ սառն շարբաթ լցնելով տուեց մինը Եասամանին, մինը հրէայ աղջկան։ Գաւաթը մի ումպով գլխին քաշելուց յետոյ, Եասամանը ասաց.

—Ջհուդների թաղից եմ գալիս. այս աղջիկը, Ռեբեկան, իմ տիրուհուս Լէյլա խանըմի հիւր հրէայ օրիորդի, Եսթերի աղախինն է, որին Եսթերը կամենում է տեսնել և տիրուհիս թոյլ է տուել։

Խանըմները հետաքրքրութեամբ նայեցին հրէայ

[1]) Սիւրմէ՝ արևելքում գործածւող սնգոյր։



աղջկան և նրա հագուստներին. «մօտ եկ, տեսնենք, ջհուդ աղջիկ, ցոյց տուր մեզ շրջազգեստդ, տեսնենք մերինի նման է կարուած, բայց մեզ չի դիպչես, կը մուռտառես»։

Օշարակ տուող աղախինը հէնց որ իմացաւ աղջիկը հրէայ է, բաժակը աւազանում ջրի քաշեց և առանձին կողմն դրեց, որ յետոյ տաք ջրով ես լուանայ, որովհետև գաւաթը պղծուել էր։

Հրէայ աղջկայ աչքերում արտասուք երևացին։

—Գնանք, ասաց խափշիկուհին, նրա ձեռքից բռնելով։

—Լսիր, Եասաման, խանըմիդ ասա մեր երեքիս կողմից, թող գայ այստեղ մեզ հետ մի բաժակ օշարակ խմէ և քիչ զրոյց անենք. թող հրէայ աղջկան էլ հետը բերէ. ասա, թող շատ էլ նազ չանէ։

—Նազ էլ կանի, սազ էլ, պատասխանեց խափշիկուհին. ումի՞ց է պակաս, որ նազ չանի։

Եւ բռնելով հրէայ աղջկայ ձեռքից, սկսեցին բարձրանալ սանդուխներով, որ տանում էր դէպի թալարը, որի վրայ բացւում էին մի քանի սենեակների դռներ, որոնց մէկը Լէյլա խանըմի, Իմամ-Ջումայի չորրորդ քիարինաւոր և ամենասիրելի կնոջ սենեակն էր տանում։

Սենեակը, ուր մտան խափշիկուհին և Ռեբեկան, ամբողջովին կահաւորուած էր պարսկական ճաշակով, ուր եւրոպական ոչ մի ձեռակերտ չէր կարելի տեսնել։ Իմամ-Ջումայի տունը չէր կարող

մուտք գործել պիղծ որ և է առարկայ, չինուած քաֆիրի, անհաւատի ձեռքով։

Մի մեծ Ֆարահանի ընտիր գործ ծածկում էր ամբողջովին յատակը, իսկ տեղ տեղ փէնջէրէների [1]) առաջ, որոնք բացւում էին մի փոքրիկ պարտէզի վրա, ձգուած էին Քիւրդստանի և Քիրմանի սաջադաներ [2]). Լուսամուտների վարագոյրները Րաշտի մետաքսեայ գործուածներից էին. մեծ փէնջէրէի առաջ, պատի երկու կողմերին դրուած էին երկու մինդարէներ և պատի տակով շարուած մութաքաներ Քեաշանի մախմարից։ Թախչաներում [3]) ինչպէս և առաստաղի րահտիներում [4]) շարուած էին պարսկական հին կաւեայ անօթներ, ափսէներ, ջրամաններ, շաքարաներ, խաթամի [5]) հայելիներ, վարդամաններ, սրուակներ, ղէլյաններ, ֆինջաններ, մարգարտով ընդելուզուած, սադենկար փոքր ջաբբաներ [6])։ Մի այլ պատի տակին դարսուած էին վերմակ, դեօշակ, բարձ և ծածկուած մետաքսէ չարշաւով։

Լէյլա խանըմը, Սէլիմ շաթիրի նախկին հարսնացուն, յօնքերը սուրմայած, մատերը խինայած հարէմական հագստով, գլխին դրած մախմարէ մի թասագ, որի առջևից կարուած էր խոշոր

[1]) Լուսամուտ։ [2]) Փոքր գորգեր։ [3]) Պատի մէջ բաց դարաններ, պատուհաններ։ [4]) Պատի և առաստաղի մէջ տեղ դուրս ցցուած հարթութիւն։ [5]) Պարսկական մօզայիկ։ [6]) Արկղիկ։



մարգարիտների մի շարք և նրանց տակից Ֆաթալի Շահի ոսկիների միերկրորդ շարք, վարսերը փռած ուսի վրա, թիկն տուած մութաքային ղէլյան էր ծխում։ Կլոր, լայն շրջազգեստը, կարմիր նուրբ ղանաւուզից [1]), փոխանի տեղ, սկսած փորից հասնում էր մինչև սրունքը, այնպէս որ պորտը բաց էր մնում, իսկ նրա տակից, շրջազգեստի չորս կողմով շարուած էին խառն ոսկիներ և յուլունք, այնպէս որ ամեն անգամ որ և է շարժում անելիս այդ ոսկիները և յուլունքը փորի վրա չխկչխկում էին. շրջազգեստի վերև հագած ունէր, կապոյտ նուրբ ղանաւուզէ շապիկ, զանջիրաներով [2]) որ չէր ծածկում փորն և որի թևքերը հասնում էին մինչև արմունկները. դաստակներին ձգած ունէր, բազպաների տեղ, ոսկէ ծանր ապարանջաններ։ Հասակով հազիւ 25 տարեկան լինէր. դէմքը վերին աստիճանի բարի և ժպտուն արտայայտութիւն ունէր, միայն սուրման տալիս էր աչքերին անբնական փայլ։ Սենեակի մէջ տեղ մէջմահիների մէջ դարսուած էին ծաղիկներ, պտուղներ, օշարակներ։

Դէմ առ դէմ, միւս մինդարէի վրա նստած էր գեղանի Նաթերը, որի հագուստը Լէյլայի հարեմական հագուստի հակապատկերն էր կազմում. միայն երեսը և ձեռները կարելի էր տեսնել։ Կարելի էր նկատել, որ հրէայ օրիորդը ամե-

[1]) Մետաքսէ կերպաս, որ գործում են Պարսկաստանում։ [2]) Ոսկէթել կրուժօվա։

նեին չէ հետաքրքրւում հարեմական այն փարթամութեամբ, որով շրջապատուած էր. Նրա դէմքը թախծալի էր, մի քիչ գունատուած և արտօսրի կաթիլները, սահելով այտերի վրա, ցոյց էին տալիս, որ նա նոր լաց էր եղել։

—Ես քեզ ասում եմ, քոյրիկ, վեր կաց գնա, երեսդ լուայ սառն ջրով, մի քիչ պտուղ կեր. մարդ այդքան էլ կը խրուի՞ տխրութեան մէջ, չէ ,որ Ալլահը գթած և ողորմած է, յուսադրում էր Լէյլա խանըմը։

—Ախ, քոյրիկ, ինձ համար մահից բացի փրկութիւն չը կայ. աւելի լաւ է մեռնեմ, քան սէյիդի կինը դառնամ և կամ..։

—Սուս, աղջիկ, սուս. դու կատարիր այն, ինչ որ ես պատուիրեցի քեզ. դու առ երես հաճութիւն և հաւանութիւն ցոյց տուր Իմամ-Ջումային. դրանով միայն կարող ես փրկել քո ցեղակիցներին և քեզ, գրեթէ անլսելի ձայնով խօսեց Լէյլան, լսելով ոտնաձայն թալարում։

Եւ կռանալով դէպի Եսթերը կամացուկ աւելացրեց.

—Սէլիմը խելօք, խորագէտ, հնարագէտ է. ինչ որ նա ասում է պէտք է անել, երևի մի բան գիտէ։ Ահա և Եասամանը ու քո աղախինը, ասաց նա բարձրաձայն, երբ վարագոյրը բարձրացաւ և խափշիկուհին ու Ռեբեկան ներս մտան։

—Ռեբեկա!

—Եսթեր!



Եւ տիրուհի ու աղախին իրար փարելով, սկսեցին լացել։

Լացելով, Եսթերը չէր դադարում իրար ետեւից հարցմունքներ անել Ռեբեկային. ինչպէ՞ս է հայրը, ողջ առողջ են ամենքը, ինչպէս են եղբայրները, քոյրերը, ո՞վ է հագցնում փոքրիկներին, լուանում, սանդրում նրանց մազերը. ինչպէս է պառաւ տատը։ Նրա սիրտը տրաքում էր. նա կամենում էր մի րոպէ առաջ իմանալ և լուր Սաւուղի մասին, բայց ամօթխածութիւնը թոյլ չէր տալիս որ առաջինը ինքն հարցնէ։ Ռեբեկան պատասխանում էր կցկտուր. նրան աւելի տանջում էր այն միտքը որ Սաւուղի մօր եփած լաւաշները և հալուան չը կարողացաւ հասցնել իր տիրուհուն։

—Ախ, խանըմ, ասաց նա, դու պէտք է բարկանաս իմ վրա, շատ բարկանաս։

Եւ նա պատմեց իր գլխի անցածը, յայտնեց ամբոխի արած սպառնալիքը՝ ջհուդ-քուչան սարքել։

Եսթերը սփրթնեց. արտասուքը հեղեղի նման թափուեցին նրա գեղեցիկ աչքերից. նա յանկարծ ցատկեց և պոռաց. «չուտ, չուտ, Ռեբեկա, գընանք, մենք էլ մեռնենք մերոնց հետ»։ Սակայն խափշիկուհին հանդարտեցրեց նրան, պատմելով ինչ որ տեղի էր ունեցել և պատմել էր իրան Սէլիմը. նա պատմեց նոյնպէս թէ ինչ մեծ թամաշայ է լինելու վաղը։ Իր ասածները Եասամա-

նը ամենամեծ երդումներով հաստատեց, մինչև կարողացաւ համոզել Եսթերին։ Եւ երբ Ռեբեկան, Սաւուղի մօր կողմից բարև հաղորդեց և օրհնութիւն, Եսթերը, շառագունելով, հարցրեց եբրայեցերէն.

—Իսկ Սաւո՞ւղը։

—Սաւուղը սաստիկ հիւանդ էր, ամբողջ ժամանակ զառանցում էր, քո անունն էր տալիս չարունակ, այժմ մի քանի օր է լաւացել է, քեզ շատ բարև է անում և ասում է, որ չը մոռանաս իրան. Նա ասում է, որ իրան կը սպանի, եթէ դու սէյիդի կինը դառնաս։

—Լսիր, Ռեբեկա, ասա Սաւուղին. վկայ է Եհովան, որ ես երբէք մուսուլմանի կին չեմ լինի. ես կամ Սաւուղի կինը կը լինեմ, կամ կը մեռնեմ. երբ մեռնեմ, թող չը մոռանայ գերեզմանս զարդարել ծաղիկներով։

—Բայց ինչպէս կ'անես, հարցրեց Ռեբեկան. եթէ սէյիդի կինը չը դառնաս մեզ բոլորիս կը կոտորեն։

—Մեծ է Եհովան. ես ինքս դեռ չը գիտեմ ինչպէս կ'անեմ, բայց ես կ'ազատեմ ձեզ ամենքիդ։ Այժմ գնա, մութն ընկնում է, Եսամանը քեզ ճանապարհ կը դնի. հօրս ասա նրան լաւ վարձատրի։ Բարևիր և համբուրիր ամենքին իմ կողմից։

Եւ նրանք նորից իրար փարելով, լաց եղան։

—Դէ բաւական է, ինչ վայնասուն էք սարքել, մայրական քնքշութեամբ ասաց Լէյլան. գնա, քոյրիկս, լուացիր երեսդ, թող Ռեբեկան էլ գնայ, ուշ է։ Շատ կարելի է աղան այժմ կանչէ քեզ, Եսամանը ասում է սէյիդը դարձել եկաւ.



—Սէյի՞դը, հարցրեց և ամբողջ մարմնով դողաց Եսթերը։

—Մի վախենար, ասում եմ քեզ, Եսթեր, մի յուսահատիր. դու արա ինչ քեզ խորհուրդ եմ տալիս և կ'ազատուես սէյիդից։

Եսամանը և Ռեբեկան դուրս գնացին. մի ազախին ներս բերեց արծաթէ շամդաններ, ճարպի մոմերով և մաղալով. դնելով գետնին, նա գնաց բերեց երկու մեծ մարդեանկի[1]) և դրեց մոմակալների վրա, որ քամին չը հանգցնէ ճրագները։

Եսթերը թիկն տալով մութաքէներին, խորասոյզ եղաւ մտածմունքի մէջ։ Սև և մռայլ էին այդ մտածմունքները։ Երիտասարդ աղջկայ առաջ մի սոսկալի դիլեմմա էր դրուած. կամ ուրանալ հաւատը, ատելի մարդու կին դառնալ և հրաժարուել իր հոգու հատոր Սաւուղից, կամ թոյլ տալ, որ իր հայրը, իր նշանածը, իր դաւանակիցները մուսուլման ամբոխի կատաղութեան մատնուեն։ Ի՞նչ անել, ո՞ր ճանապարհն ընտրել, ո՞ր ջուրն ընկնել։ Լինելով հարուստ հրէայի դուստր, նա գրագէտ էր, նա գիտէր հրէական

---

1) Ապակեայ կամ շղարշից շինած մեծ խողովակ։

ազգի պատմութիւնը, մանաւանդ սքանչելի առասպելական աւանդութիւնները այն բոլոր հրաշքների մասին, որոնցով Եհովան փրկել է միշտ իր ընտրեալ ազգին նեղութիւններից և փորձանքից։ Նա գիտէր Եսթերի պատմութիւնը և դեռ մանուկ ժամանակ, երբ իր հանգուցեալ մայրը զանազան պատմութիւններ էր անում, նրա սրտի մէջ ծագում էր փափագ մի մեծ բանով հռչակուելու, ամենքի գովասանութեան արժանանալու, Եհովայի և հրեշտակների օրհնութեան տիրանալու։ Նա այժմ հասած էր համարում այդ րոպէն, բայց, արարիչ Տէր, ինչ գնով. պէտք է ջարդ ու փշուր լինէր այն երջանկութիւնը, որ նա զգում, փայփայում էր իր սրտում. դեռ երկու ամիս առաջ նա անբաւ երանուէտ էր զգում իրան. ամուսնանալ Սաւուղի հետ, ումին նա դեռ երեխայ, երբ միասին խաղում էին, բոլոր հոգով սիրում էր, Սաւուղի, որ թոյլ չէր տալիս ոչ ոքի նեղացնել իրան, վիրաւորել, միշտ վարդի փունջեր էր տալիս իրան—կազմում էր նրա բոլոր անուրջների կատարումն։ Ճիշտ է, երբ երկուսն էլ մեծացան, նրանց բաժանեցին, այլ ևս թոյլ չէին տալիս միասին խաղալ, բայց նա գիտէր, որ Սաւուղը դարձել է մի գեղեցիկ Երիտասարդ, որ նա թաղի բոլոր երիտասարդների մէջ ցոյց է տրւում ծերերի կողմից իբրև առաքինութեան, ժրաջանութեան, աշխատասիրութեան օրինակ. Նա գիտէր, որ բոլոր



մայրերը փափագում էին այդպիսի փեսայ ունենալու. Նա գիտէր, այսինքն նրա սիրտը զգում էր և այն, որ Սաւուղը սիրում է իրան, ինչպէս ինքն է սիրում նրան, որ նա ոչ մի աղջկայ վրա աչք չէ տնկում բացի իրանից։ Եւ ահա երբ նա կարծում էր ժամը հասած՝ սեղմելու Սաւուղին իր կրծքին, նա պէտք է ոչ միայն զրկուի նրանից, ոչ միայն նրա երեսը չը տեսնէ այլ ևս, այլ և մի զզուելի, գարշելի մարդի համբոյրները, գգուանքը ընդունէ և իր հայրերի, իր մօր պաշտած կրօնը ուրանայ։ Ոչ, ոչ, հազար անգամ աւելի լաւ է մեռնել, գոնէ այնտեղ, արքայութեան մէջ—իսկ արքայութիւնը, Եսթերի հաւատով, միայն հրէաների համար է պահուած—նա կը տեսնէ մօրը, նա կը սպասէ և կը միանայ Սաւուղի հետ։ Այժմ նա պարտաւոր է մի կողմ թողնել անձնական, երկրային երջանկութեան միտքը և զոհել իրան իր հօր, նշանածի և դաւանակիցների կեանքը փրկելու համար։ Բայց նա չէ կամենում զոհել իր անմեղութիւնը, իր կուսութիւնը. Նա չէ կամենում դաւաճանել իր նախնիքների կրօնին, նահապետներին և մարգարէներին։ Եւ նա որոշեց ոչ թէ անձնատուր լինել, այլ իր մահով փրկել ամենքին. Եթէ, մտածում էր նա, հայրս և րաբբիները կարողացան հաստատել, որ ինձ զոռով են տարել, շատ լաւ, այն ժամանակ բոլորս ազատուած ենք, եթէ ոչ, ես առերես ցոյց կը տամ, որ համաձայն եմ մուսուլման լի-

նել, մուսուլմանի կին դառնալ, միայն որ իմ ազգակիցներին ձեռք չը տան ու յետոյ, երբ ազատութեան փիթվան ստորագրուի, ինձ տան սէյիդին և նա ինձ տանի իր տունը, թոյն կընդունեմ կամ դաշոյնը կը խրեմ սրտիս մէջ։ Եւ այդ նպատակով, դեռ սինագօգում գումարուած ժողովի օրը, երբ նա եկաւ այդ որոշման, նա թագցրեց իր շորերի մէջ թոյն և փոքր դաշոյն։ Բարեբախտաբար, Իմամ-ջուման յանձնեց նրան Լէյլա խանըմի պաշտպանութեան և Եսթերը նրա մէջ գտաւ մի բարեսիրտ կարեկից մարդ։ Սկզբում, Լէյլա խանըմը, իբրև բարի մուսուլմանուհի, խորշում էր հրէայ աղջկանից, երբ սա յայտնեց, որ ինքն ամենևին մուսուլմանութիւն չէ ընդունել և մուսուլմանի կին չէ, և չփումն նրա հետ համարում էր պիղծ, մաքրել սրբել էր տալիս ջրով նրա դիպած անօթները, բայց Եսթերի չքնաղ գեղեցկութիւնը, համակրելի դէմքը, խելօք խօսակցութիւնը, մանաւանդ անկեղծ և անհուն վիշտը շարժեցին ի բնէ գթած կնոջ սիրտը և նա շուտով մօտեցաւ նրան, քրոջ համակրութիւն զգաց դէպի նրան և երկու կանանց մէջ հաստատուեց մտերմական յարաբերութիւն մինչև այն աստիճան, որ Եսթերը խոստովանեց նրան իր սէրը առ Սաւուղը և իր ծով վիշտը։ Լէյլան, որ նոյնպէս համակուած էր նոյնպիսի վշտով, խոստովանեց նրան իր սէրն առ Սէլիմը, իր յոյսերը, որ կը յաջողուի իրան ազատուել ա-



ռելի Իմամ-ջումայից ու միանալ իր սիրելի Սէլիմի հետ, նա յայտնեց, թէ որքան ատում է Իմամ-ջումային և լաւ ճանաչելով վերջինիս վաւաշոտութիւնը, զգուշացրեց Եսթերին։ Սակայն, մենք տեսանք որ Սէլիմը այլ հրահանգ տուաւ Լէյլային, ունենալով իր սեպհական ծրագիրը, որի իրագործումը պէտք է հասցնէր նրան իր նպատակին։ Միւս կողմից Իմամ-ջումայի վարմունքը ոչ միայն զարմացրեց Եսթերին, այլ և միանգամայն շշկլացրեց նրան և Եսթերը տեսաւ, որ այժմ վտանգը թէ իր համար և թէ իր դաւանակիցների համար աւելի մեծ է։ Յուսահատութիւնը պատեց խեղճ աղջկան, բայց Լէյլա խանըմը շարունակ համոզում էր նրան առերես հաճութիւն ցոյց տալ Իմամ-ջումայի ասածներին, և այդ ձևով, ստանալ նրանից ազատութեան փիթվան։

Սէլիմը չէր սխալուել իր կարծիքի մէջ. Իմամ-ջուման, թէև ալևոր, բայց ագահութիւնից բացի տոչորւում էր մի ուրիշ կրքով—վաւաշոտութեամբ։ Նա նոյնչափ ժամանակ էր նուիրում հարէմական զուարճութիւններին, որչափ ղուրանի այաներ կարդալուն. Նրա չորս քեաբինաւոր ամուսիններն էլ 20—25 տարեկան ջահել կանայք էին։ Նա ստիպուած էր այդ պատճառով յաճախ դիմել մ է ջ ո ւ ն ի[1]) օգնութեան։ Եսթերի հիանալի

1) Մէջուն, մի դեղ է կամ հատիկներ, որ Շահերը և ծերունիները ուտում են իրանց առնական կարողու-

գեղեցկութիւնը, կուսական թարմութիւնը սաստիկ տռփանք գրգռեցին նրա մէջ և, որովհետև, իբրև փորձուած մարդ, նա շատ լաւ գիտէր, որ սէյիդի աստծները բոլորը սուտ են, հնարուած ու սարքուած են պարզապէս այդպիսի համեղ պատառը կլանելու համար, ուստի և վճռեց այդ պատառն եթէ ոչ ինքը կլանէ, գոնէ առաջ ինքը ճաշակէ։ Այդ ուղղութեամբ և սկսեց գործել։ Առաջին հարցաքննութեան ժամանակ նա երկար յորդորեց Եսթերին թողնել մովսիսական կրօնը, ընդունել լոյս հաւատ Մահմէդի կրօնը, նկարագրելով նրան սպասող անբաւ երանութիւնները այս և հանդերձեալ աշխարհում. նա խոստացաւ մինչև անգամ լուծել սէյիդի քեաբինը և նրան ամուսնացնել մի խանզադէի, շահզադէի հետ, բայց Եսթերը չը յօժարեց և մերժեց ու երբ ահ ու դողով սպասում էր, որ Իմամ-Ջուման կը բարկանայ, իր մահուան դատավճիռը կարձակէ, նա շատ զարմացաւ տեսնելով, որ Իմամ-Ջուման մեղմացաւ և ասաց. «շատ լաւ, քանի որ չես կամենում, ես պէտք է վկաների միջոցով քննեմ գործը. այս էլ ասեմ, որ ամեն բան քեզանից կը լինի կախուած. եթէ կանես ինչ որ ես քեզ կասեմ, կազատուես և կազատես քո դաւանակիցներին»։ Չը հասկանալով այդ խօսքերի իսկական

---

թիւնը վերականգնելու և ստանկացնելու համար։ Ասում են, ամենազօրեղ միջոցը գոհարեղէնի փոշիից պատրաստածն է։



իմաստը, շլացած այդքան անակնկալ բարութիւնից, Եսթերը ընկաւ ծերունու ոտները և համբուրեց ձեռքը, խոստանալով ամեն բան անել, ինչ կը հրամայէ նա։ Քանի որ խնդիրը վկաների ցուցմունքից էր կախուած, նա յոյս ունէր, որ իր հայրը և ռաբբինները կը կարողանան վկաներ գտնել և ճշմարտութիւնը յայտնել տալ։ Եւ նորից յոյսը մտաւ Եսթերի սիրտը. նորից վերակենդանացան նրա փայփայած, գգուած երազները ընտանեկան երջանկութեան մասին. նորից կեանքը ժպտաց նրան։ Նա ուշադրութիւն չը դարձրեց, թէ որքան կեղտոտ կիրք, պղծութիւն կար այն համբոյրի մէջ, որ Իմամ-Ջուման դրոշմեց նրա ճակատին, երբ ինքը համբուրեց նրա ձեռքը, չը խորշելով ամենևին որ ինքը մուրտառ ջհուդ է։ Վերադառնալով Լէյլա խանըմի մօտ, որի բարեխօսութիւնը արդէն կարողացել էր գնահատել, և պահանջ զգալով մէկի առաջ թափ տալ իր սիրտն ուռչեցնող ուրախութիւնը, Եսթերը պատմեց նրան Իմամ-Ջումայի մօտ անցածը։ Երիտասարդ կինը, որ լաւ ճանաչում էր իր ամուսնու սև հոգին, խղճաց Եսթերին և նրա բարի սիրտը դրդեց նրան բանալ հրէայ աղջկայ աչքերը ու զգուշացնել նրան։ Եսթերը շուտով ինքն էլ համոզուեց, միւս հարցաքննութիւնների ժամանակ. Իմամ-Ջումայի երկմտի խօսքերը, անուղղակի առաջարկները և պղծոտ նայուածքները այլ ևս ոչ մի կասկած չէին թողնում նրա անարգ դի-

տաւորութիւնների մասին։ Յուսահատութիւնը նորից պատեց անթափանցելի խաւարով խեղճ Եսթերի սիրտը. նա տեսաւ, որ իր վիճակը աւելի անելանելի է. դեռ առաջ յոյս ունէր, որ իր մահով կազատէր և իրայիններին և իր պատիւը, սէրը. այժմ այդ յոյսն էլ չքանում է. Նա կարող է իրայինների ազատութիւնը ձեռք բերել միայն իր անարգանքով, խայտառակութեամբ, իր անմեղութիւնը, կուսութիւնը և սէրը զոհելով։ Եթէ նա չը համաձայնէր կատարել Իմամ-Ջումայի ցանկութիւնը, այն է յագեցնել իր անմեղութեան գնով նրա անասնական կիրքը, նա կը մատնէր իրան և իր դաւանակիցներին կորստի. իսկ եթէ յօժարէր լինել Իմամ-Ջումայի սիղան, ինչպէս սա ցանկանում էր, մի քանի ժամանակուայ համար, ճիշտ է, նա կազատէր հրէական թաղը, բայց նա դրանով կը սպանէր Սաւուղին, կ'արժանանար նրա ատելութեան և ինքն ևս բարոյապէս մեռած կը լինէր, իբրև մի անարգուած, լկտուած արարած. դրանից յետոյ իր մահն ոչ մի նշանակութիւն չունէր. դրանից յետոյ ինչ երեսով նա կը համարձակէր բաղխել դրախտի դուռը, տեսնել այնտեղ իր մօրը և սպասել Սաւուղին, որից նա արհամարհուած, ատուած պէտք է լինէր։ Եսթերը տեսնում էր, որ Տիրոջ աջը սաստիկ ծանրացել է իր վրա. նա իրան արդէն կորսուած էր համարում. ո՞վ պէտք է հասնէր իրա պէս մի խեղճ աղջկայ օգնութեան Իմամ-Ջումայի տանը և



ո՞վ կը համարձակէր. գառը պահ էին տուել գայլին, որ արդէն սրել էր ժանիքները։ Աղի արտասուք էր թափում գիշեր ցերեկ Եսթերը և մտածում էր նոյն իսկ այժմ վերջ դնել իր թշուառ մատաղ կեանքին և ազատուել անպատուութիւնից, գուցէ իր մահով ևս լուծուէր խնդիրը և հրէաները ազատուէին վտանգից. յամենայն դէպս Սաւուղի սէրը, յարգանքը պահպանուած կը լինէին և իր սիրեցեալը կը զարդարէր իր գերեզմանը սիրահարների ծաղիկներով։ Սակայն Լէյլա խանըմի յուսադրութիւնները և տուած նոր խորհուրդը փրկեցին նրան վերջնական յուսահատութիւնից. «Դու առ երես հաւանութիւն ցոյց տուր Իմամ-Ջումայի ասածներին, համոզիր նրան, որ պատրաստ ես կատարել նրա ցանկութիւնը և աշխատիր ստանալ ֆիթվա, որով նա քեզ և քո ազգակիցներին անմեղ հրատարակէ. մնացածը թող տուր ինձ և Սէլիմին, մենք քեզ կ'ազատենք նրա ճիրաններից»։ Եսթերը թէև չէր կարողանում հասկանալ, ինչպէս կ'ազատեն իրան, բայց որոշեց հետևել Լէյլայի խորհրդին. եթէ չազատուէր, դարձեալ կարող էր թոյնով կամ դաշոյնով վերջ դնել իր կեանքին, բայց գոնէ ձեռք բերած կը լինէր իր ժողովրդի, իր սիրելիների փրկութեան վճիռը։

Այժմ ևս նա խորասուզուած էր այդ սրտամաշ մտածողութիւնների մէջ. նա գիտէր, որ շատ շուտով, վաղը կամ նոյն իսկ այսօր, իր ճակա-

տագիրը պէտք է վճռուի. Նա դողաց, լսելով որ սէյիդը եկել է Իմամ-Ջումայի մօտ. Նա շուտ շուտ նայում էր թէ ահա կը բացուի վարագոյրը այն դռան, որ միացնում էր Լէյլա խանըմի սենեակը Իմամ-Ջումայի առանձնասենեակի հետ, և Իմամ-Ջուման կը կանչէ իրան. մետաքսէ վարագոյրի չխչխկոցը, որ առաջ էր բերում լուսամուտից փչող երեկոյեան հովը, դողահար էր անում նրան:

Նշանը վաղուց ասել պրծել էին և ընթրիքը արդէն պատրաստուած էր սենեակի մէջ տեղ ու մի քանի անգամ Լէյլա խանըմը, որ նոյնպէս ընկղմուած էր քաղցր անուրջների մէջ ու մտքով համբոյրներ էր ուղարկում իր սրտի հատոր Սէլիմին, հրաւիրել էր Եսթերին մօտենալ սուփրին [1]), բայց Եսթերը ոչինչ չէր լսում. Նրա խռոված հոգին հեռու, շատ հեռու էր սաւառնում: Յանկարծ սենեակի աղօտ լուսաւորութեան մէջ, դիմացի պատի վրա, նկարուեց Իմամ-Ջումայի ստուերը, որ թուաց Եսթերին սատանայի դէմք, այնքան անճոռնի էր. բայց նրա զզուելի ձայնը ուշքի բերեց հրէայ աղջկան. «Ո՞վ կայ այդտեղ, թող ասեն ջհուդ աղջկան գայ ինձ մօտ»: Եսթերը ծլունկ եղաւ, և զարմանալի է, որ վտանգի րոպէն մօտեցած լինելը նրան ոչ թէ սարսափեցրեց, այլ արիացրեց. վերջապէս թող կատարուի ինչ որ Եհովան տնօրինել է և

1) Սփռոց:



ճակատիս գրուած է, մտածեց նա: Նա տնտղեց իր շորերի ծալքերը, տեսնելու համար այնտեղ են թոյնը և դաշոյնը և չարշաւը ձգելով գլխին, դիմեց դէպի դուռը, որտեղից լսել էր ձայնը և բարձրացրեց վարագոյրը:

Սենեակը, ուր մտաւ Եսթերը, երկար էր և բացի գորգերից ու րու-փարշերից [2]) ուրիշ ոչինչ չը կար, և ոչ ոք էլ չը կար այդ սենեակում, որի մի դուռը բացւում էր արդէն այն նրբանցքի վրա, որ բաժանում էր Իմամ-Ջումայի էնդէրունը [3]) բիրունից [4]): Մի հատ շամդան դրած թախչայում աղօտ լուսաւորում էր այդ սենեակը: Բայց Իմամ-Ջումայի ձայնը լսուեց սենեակի միւս ծայրին գտնուող մի դռնից, որ տանում էր մի ուրիշ փոքր սենեակ: Եսթերը մտաւ այդտեղ. բարձր մինդարէյի վրա, թիկն տուած մութաքաներին, քղանցքաւոր պարեգօտի կապերը արձակած, գլխին թիրմա արախչին դրած, մէջքի շալ սպիտակ գօտին քակած, նստած էր Թէհրանի քահանայապետը և ղալյան էր ծխում ու ծուխը քուլա քուլա արձակում: Ոչ ոք չը կար սենեակում:

Եսթերը գլուխ տուեց ու կանգնեց դռան առաջ:

—Մօտ եկ, նստիր մօտս, ասաց Իմամ-Ջուման:

1) Գորգի երես: 2) Կանանոց: 3) Տան տղամարդկանց մասը:

Եւ իր պաղշոտ նայուածքը յառելով հրէայ աղջկայ վրա, շարունակեց.

—Լսիր, ջհուդի աղջիկ. վերջին անգամ եմ յորդորում քեզ։ Քիչ առաջ սէյիդը եկել էր, գանգատւում էր, որ վճիռ չեմ արձակում. ես խոստացայ վճիռը վաղը տալ։ Այդ վճռից կախուած կը լինի ազատութիւն կամ մահ քո և ջհուդների համար, իսկ թէ ո՛ր վճիռը լինի, այդ էլ բոլորովին քեզանից կը լինի կախուած։ Վերջին անգամ եմ առաջարկում քեզ, կամենո՞ւմ ես կատարել ցանկութիւնս։

Եսթերի սիրտը այնպէս էր թռթռում, որ քիչ էր մնում կուրծքը պատռէր ու դուրս գայ։ Նա կարողացաւ այնուամենայնիւ պատասխանել.

—Եթէ կատարեմ աղայի հրամանը, կը տա՞ք փիթվա, որ սէյիդը ոչ մի իրաւունք չունի ինձ վրա, որ յափշտակել են ինձ զօռով և հրէաները ոչ մի բանում մեղաւոր չեն։

—Կը տամ, կը տամ, հոգիս, կեանքս էլ կը տամ այդ նազանի սև աչքերիդ, սաթեայ վարսերիդ համար։

—Ինձ մի քանի ժամանակ սիրա պահելուց յետոյ կարձակէք և կը վերադարձնէք ծնողներիս։

—Երդւում եմ հազրաթ Ֆաթմայով, որ այո. Համաձա՞յն ես ուրեմն։

Տիրեց խորին լռութիւն. Իմամ-Ջումայի թշերը կարմրել էին, աչքերը փայլատակում էին գիշատիչ գազանի աչքերի նման, նա մօտեցաւ Եսթերին և սա արդէն զգում էր իր երեսին նրա անատամ բերանի խոռոչից փչող գաղրալի հոտը և տաք շունչը։



—Համաձայն եմ, շշնչաց Եսթերը։

—Ախ, հոգեակս, տուր մի համբուրեմ այդ աննման աչքերդ, շոյեմ այդ գեղեցիկ վարսերդ։

Բայց նապաստակի արագութեամբ Եսթերը ցատկեց և մի ոստիւնով դռան մօտ կանգնեց.

—Ոչ, աղա, ոչ. կատարիր առաջ խոստումդ. գրիր, կնքիր, տուր ինձ փիթվան և ապա պատրաստ եմ կատարել կամքդ։ Ես հօ փախչել չեմ կարող քո ձեռքից։

—Լաւ, վաղը առաւօտեան կը՜ ստանաս փիթվան, վաղը երեկոյ էլ այստեղ կը լինես։

—Աչքիս վրա, պատասխանեց Եսթերը և դուրս նետուեց սենեակից ու մի գլուխ վազեց Լէյլա խանըմի սենեակը։ Այստեղ, այլ ևս չը կարողանալով բռնել իրան խեղդող հեծկլտանքը, նա ընկաւ գետնին, սուփրայի առաջ և դառնապէս լացեց։

## XV

Արեգակի շողը նոր էր ընկել Շիմրանի սարերի ձիւնապատ գագաթի վրա և սա նոր էր ըսկսել կանաչ-կարմրին տալ, ամպերը նոր էին քուլայ-քուլայ բարձրանում Դէմավենդի վրայից, աջ ու ձախ փռւում, բայց Թէհրանի սոված, հա-

ցի կարօտով քնաթաթախ արթնացած ժողովուրդը արդէն ոտքի էր կանգնել։ Շտապ շտապ կատարելով վաղորդեան նամազը, ամեն մարդ աշխատում էր գնալ և շուտով գնել տան հանապազօրեայ հացը ու ժամ առաջ վազել մեծ հրապարակը, ուր պէտք է տեղի ունենար մեծ թամաշան, ինչպէս նախընթաց օրը յայտարարել էր արքունի մունետիկը։ Դէպի հացագործների խանութները և փուռերը տանող փողոցները և բազարները լի էին ծերերի, կանանց, երեխաների անհագին բազմութեամբ, խուժան ամբոխով, մանաւանդ մշակներով, արհեստաւորներով, որոնց սննդեան գլխաւոր նիւթը՝ ցամաք հացն է։ Հաց, իսկական հաց և ոչ աւազի, թեփի, գարու չաղախ ստանալու յոյսը լցրել էր ամենքի սիրտը ուրախութեամբ. երեխաներ իրանց մայրերի չալակին, այլ ևս չէին լացում աղիողորմ ձայնով, այլ միայն հարցնում էին, «Նէնա (մայրիկ), շուտով հաց կը տա՞ս»։—Բալա՜ս, մի քիչ էլ համբերիր և տես ինչ նախշուն լաւաշ սանկեադ կը տամ քեզ։

Երեկուայ մեր տեսած գլխաւոր հացագործարանի առաջ խռնուել էր անհագին բազմութիւն։ Մօրուքը և եղունգները խինայած հաջի Հասան հացագործը դարձեալ ծալապատիկ չոքել էր կչեռքի առաջ և երեսը շփելով ձեռներով «եա Ալլահ» էր մրմնջում։ Բայց, ո՜վ մեծի զարմանաց. թեք մակարդակի վրա հազիւ 10—20 հաց կար



մեխերից կախուած, այն ևս դարձեալ հաջին այդ չաղախի լիտրի համար պահանջում էր երկու ղռան կամ երկու հազար դենար։ Հացագործարանը տանող դուռը բաց էր և նրա դէմ առ դէմ տեսնւում էր մեծ փուռը, որի մէջ կրակը շատ թոյլ պլպլում էր։

Ամբոխի հիասթափութիւնը, յուսահատութիւնը կատարեալ էր. մարդիկ ամբողջ գիշեր օրօրել էին իրանց այն յոյսով, թէ, վերջապէս, այսօր հաց կը ստանան, մի կուշտ փորով կուտեն այդ թանկագին հացը, իսկ այժմ, նորից նրանց առաջարկում են թեփի, աւազի, գարու չաղախը։ Զայրոյթը, կատաղութիւնը նորից տիրեց ամբոխին. խուլ տրտունջը սկսեց պայթել. սպառնական աղաղակներ և բռունցքներ ուղղուեցին հաջի Հասանին. «Չը լսեցի՞ր երէկ ինչ յայտարարեց ճաուշին, անիրաւ, իմանսըզ», պոռում էին ամեն կողմից։

—Վալլահ, բիլլահ, ես մեղաւոր չեմ. մենք, հաց թխողներս, մեղաւոր չենք. մենք ի՞նչ անենք, որ ամբարդարները ցորեն, ալիւր, չեն տալիս մեզ. թող նրանք ցորեն տան մազանդայով, մենք էլ ձեզ հաց տանք յայտարարուած գնով։

—Էհ, ասաց ծերունի հաջի Աբբասը, ձուկը գլխից է հոտած. ես երէկ ասում էի, որ մեզ քնացնում են, խաբում, որ ամբարդարները գիշերանց կը տեսնեն նոր քաղաքապետին, կը քաղցրացնեն նրա քիմքը, կոկորդը կը լցնեն ոս-

կիններով և ոչ ոք այլ ևս չի անսայ Շահի հրամանին: Լաւն այն է. որ մենք ինքներս մեր գլխի ճարը տեսնենք, մեր ձեռքով մեր դատաստանն անենք։

—Այո, այո, գրոհ տանք, քանդենք քաղաքապետի տունը իր գլխին, և հարամ անենք իր կերած կաշառը, պոռացին հազարաւոր ձայներ։

—Սալաւաթ, սալաւաթ, թնդաց օդը ամբոխի ունոցով։

Եւ ամբոխը գրոհ տուեց դէպի միւս փողոցը, որ տանում էր նոր քաղաքապետ Աբգար-միրզայ չահզադէի տունը, բայց այդ միջոցին փողոցի ծայրին երևաց ֆէրրաշների մի խումբ, որ յետ մղեց ամբոխը, գոռալով. «Տեղ տուէք, ճանապարհ բացէք Աբգար-միրզայ չահզադէի համար»։ Ֆէրրաշների ճիպոտները, Աբգար-միրզայի վէս և խրոխտ դէմքը, որ այդ միջոցին երևաց, մանաւանդ նրա նստած ոսկեհուռ սարքով արաբական նժոյգի տեսքը սթափեցրին ամբոխը, որ սկսեց յետ քաշուել և միայն խուլ տրտունջներով յայտնել իր դժգոհութիւնը։ Այդ տրտունջը նկատեց նոր քաղաքապետը, որ շատ լաւ գիտէր և տրտունջի պատճառը, բայց չիմանալուն դնելով, հարցրեց. «Ի՞նչ էք հաւաքուել, ի՞նչ աղմուկ է»։ Ինչպէս միշտ, այս անգամ ևս կանայք առաջ ընկան և համարձակ պոռացին։

—Հաց, հաց ենք ուզում. թող մեծ մարգարէի և տասներկու իմամների անէծքը թափուի ձեր



գլխին, որ մեզ սովածութիւնից կոտորել էք տալիս։

Կանանց անէծքը համարձակութիւն ներշնչեց տղամարդկանց, որոնք սկսեցին նոյնպէս բարձրաձայն յայտնել իրանց տրտունջը։

—Դուք չէք կատարում Շահի հրամանը, ինչ քաղաքապետ էք, աղաղակում էին ամեն կողմից։

Եւ սպառնալիքները, առաջ զալուած, հետզհետէ աւելի սանձարձակ, տեղացին խուժանի կողմից։ Բարձրացաւ սարսափելի ժխոր, որ սաստկացաւ երեխաների լացով ու վայնասունով. ‹Նէնա, հաց ենք ուզում›:

—Լսեցէք, լսեցէք, գոռացին ֆէրրաշները. չահզադէն կամենում է խօսել։

Աբգար-միրզայի դէմքը բարկութիւնից պղնձի գոյն էր ստացել. լինել չահզադէ և հայհոյանք ստանալ ամբոխից—այդպիսի վիրաւորանք չէր կարող տանել նրա ղաջարական հպարտութիւնը։ Այդ բարկութիւնը շատ լաւ նշան համարեց իր համար հացագործ հաջի Հասանը, որ վախից լեղապատառ եղած, կամենում էր չահզադէի դէմքի արտայայտութիւնից գուշակել իր ճակատագիրը։ Կարծելով որ քաղաքապետի բարկութիւնը ամբոխի դէմ է, նա ենթադրեց, որ խնդիրը նպաստաւոր կերպարանք է ստացել հացագործների և ամբարդարների համար, որոնք գիշերանց շտապել էին առատ ընծաներով դիմել նոր քաղաքապետին, որպէս զի նոր հրամանը չը գործա-

դրուխ։ Հաջի Հասանը սպասում էր բանակցութիւնների ելքին և նա շատ ուրախացաւ, երբ ամբոխը գրգռեց շահզադէի բարկութիւնը իր հայհոյանքներով և սպառնալիքներով։ Գոնէ նա այդ հանգամանքին էր վերագրում շահզադէի զայրոյթը, ուստի սիրտ առնելով, աղերսակուի ձայնով դիմեց նրան և ասաց.

—Ղուրբան, ինչ են ուզում ինձանից այս մարդիկ. պաշտպանեցէք ինձ. նրանք քիչ էր մնում ինձ քարկոծէին։

Բայց խեղճ հաջին սխալուել էր իր ենթադրութիւնների մէջ...։

Աբգար-միրզան խրոխտ և հրամայողական ձայնով պոռաց.

—Թէհրանի ժողովուրդ, վկայ է Ալլահը, որ Շահի նուիրական հրամանը պէտք է կատարուի. վա՜յ նրան ով համարձակի Աշխարհի Ազօթարանի հրամանին չ՚անսալ. երկու-երեք ժամից յետոյ դուք կունենաք առատ հաց, երդւում եմ Մահմէդ-Շահի ջիգգայով[1]։

Հացագործի լեզուն փորն ընկաւ. նրա վարդագոյն յոյսերը չքացան, բայց դեռ բոլորովին յոյսը չէր կտրել։

Քաղաքապետը դիմելով նրան, շարունակեց.

—Հաջի, լսեցի՞ր երէկ Շահի հրամանը ճառչուբերանով։

—Այո, ղուրբան։

1) Պաշտօնեաների ամենամեծ երդումն է։



—Ինչի՞ համար այսօր չես կատարում այդ հրամանը։

—Ծառադ ում չունն է, որ համարձակի չը կատարել Շահի նուիրական հրամանը, բայց հաց չկարողացայ թխել և էժան ծախել, որովհետև ցորեն չը կարողացայ գնել, ամբարդարները մերժեցին յայտարարուած գնով ցորեն տալ։

—Ո՞ր ամբարդարին դիմեցիր։

—Մուրթուզա խանին։

—Երբ ամբարդարները մերժեցին ցորեն տալ, ինչո՞ւ չեկար անմիջապէս չը յայտնեցիր, որ մենք ցորենը առնէինք և տայինք քեզ։

Հացագործը լուռ մնաց. լսել էր և ամբոխը, ակնդէտ սպասում էր թէ ինչ պէտք է անէ շահզադէն և ինչպէս պէտք է հաց ստեղծէ։

—Բաց գործարանիդ դուռը մի թամաշայ անենք, հրամայեց շահզադէն հացագործին։

Հաջին բոլորովին գունատուեց և սկսեց դողալ։

—Ղուրբան, կմկմաց նա, ձեզ լայեղ ոչինչ չը կայ, կեղտոտ է, դատարկ։

—Վնաս չունի, վնաս չունի, պատասխանեց Աբգար-միրզան և հրաւիրելով ամբոխի միջից մի քանի ծերունիներ՝ հետևել իրան, ներս մտաւ։

Գործարանի մէջ փուռի ետև գտնուած ամբարում դարսուած էին ալիւրի բազմաթիւ քսակներ և մի քանի հացթուխի աշակերտներ, թևերը ծալած, դաշտակների մէջ հունցում էին խմոր խ ա ս ա[1]) սեանկագի համար։

1) Ընտիր տեսակ։

—Օհօ, ասաց չահզադէն, հապա դու ասում էիր ալիւր չունեմ։

—Ղուրբան, դողահար պատասխանեց հաջի Հասանը, ախր այդ ալիւրը գնել եմ թանգ գնով, ինչպէ՞ս կարող եմ էժան ծախել. ես էլ քուլֆաթի [1]) տէր եմ, խեղճ եմ. հիմա որ հրամայում ես, իսկոյն լաւ հաց թխել կը տամ, ինչքան կամենաս։

—Էֆէրիմ, հաջի Հասան. դէ շուտ վառիր փուռը, մի լաւ տաքացրու, ես էլ իմ աչքով տեսնեմ. դէ, շուտ արա, ցախ բերել տուր։

Միամտուած, ուրախացած, որ այդպէս հեշտ պրծաւ, հաջին բարձրաձայն հրամայեց աշակերտներին ալիւրի քսակները իջեցնել, խմոր հունցել և ինքն էլ վազելով, մի մեծ խուրձ ցախ բերեց ու նետեց փուռի մէջ, որ սկսեց վառուել ու բորբոքուել։

—Դէ, ֆէրրաշներ, օգնեցէք հաջուն, գոռաց չահզադէն, դուք էլ ցախ բերէք. փայտ էլ բերէք, բորբոքեցէք հուրը։

—Բայց, ղուրբան, ասաց հացագործը, փայտ պէտք չէ, սեանկագի համար ցախն էլ բաւական է, արդէն փուռը բորբոքուած է, հացերը կարող են այրուել շատ տաքութիւնից։

—Չէ, չէ, առաջ մի լաւ խորոված էլ կ'անենք, միսը ես կը տամ, յետոյ հացը կը թխես։

1) Ընտանիք։



Ֆէրրաշները սկսեցին փայտ նետել փուռի մէջ, որ կատարեալ հնոցի վերածուեց։

Ամբոխը, որ բնազդմամբ սպասում էր մի սարսափելի բան տեսնելու, շուարած, առանց համարձակելու իր միտքը յայտնելու, խոր լռութեամբ հանդիսատես էր. ծերունիները, որոնց գլխով շատ փորձանքներ էին անցել, որոնք իրանց կեանքի մէջ շատ անցքերի էին ականատես եղել, յօշում էին գլուխները, մրմնջալով. «բարերար Ալլահ, դու ողորմիր, մեծ է քո զօրութիւնը, առանց քո կամքի ադամորդու գլխից մի մազ անգամ չէ կարող ընկնել»։

Փուռը ճարճատում էր բոցերից և իր տաքութեամբ խանձում էր մօտ կանգնածներին։

Հացագործը, որի սրտէ մէջ նորից ծագել էր կասկած, այնպէս սփրթնել էր, որ երեսի գոյնը պատի գաճի գոյնից չէր զանազանւում։ Ամբոխի խոր լռութիւնը, չարագուշակ լռութիւնը, շուարած դէմքերը, չահզադէի սարդոնական ժպիտը— նշաններ էին, որ պատրաստւում է, այն էլ շատ շուտով, մի սոսկալի եղեռն, բայց ինչ եղեռն, ո՞ւմ համար, նա չէր կամենում մտածել, այնքան այդ միտքը զարհուրելի էր։ Պաղ քրտինքով ողողուել էր նրա ամբողջ մարմինը, ոտները կծկուեցին և սարսափահար, կարողացաւ միայն կակազել։

—Ղուրբան, ուղարկեմ ոչխար բերեն խորովածի համար։

—Ոչ, ես ինքս ոչխարը կը տամ, պատասխանեց չահզադէն, որի դէմքը նոյնպէս գունատ էր։

—Ալլահ, Ալլահ, դու ողորմիր խեղճին, լսուեցին ամբոխի միջից ձայներ։

Թշուառ հացագործը, լսելով այդ խօսքերը, հասկացաւ սոսկալի, քստմնելի խկութիւնը. Նա փշաքաղուեց, նրա լեզուն պապանձուեց, աչքերը խելագար մարդու պէս չռեց և վերջապէս արտասանեց աղեկտուր ձայնով.

—Ո՜, գթացէք, գթացէք, մուսուլման եմ։

Հնոցը աւելի և աւելի բորբոքւում էր և նրա բոցերը, հարիւրաւոր լեզուներով դուրս ժայթքերով կարծես կլանելու զոհ էին պահանջում։

—Գթացէք, գթացէք, մուսուլման եմ, նորից հեկեկաց հացագործը։

Նրա աղեխարշ ձայնը, հնոցի սոսկալի տեսքը յուզեց, շարժեց արձանացած ամբոխին, որն, քիչ առաջ պատրաստ էր բզքտել գազանի նման հացագործին և հարիւրաւոր բերաններ բացուեցին պոռալու համար.

—Մենք հաց չենք ուզում, չահզադէ, գթացէք նրան, ձեռք մի տաք, մենք հաց չենք ուզում։

Հացագործը դատապարտուած մեղապարտի նման, որի հոգեկան և բարոյական բոլոր կարողութիւնները թմրացել, ընդարմացել են ի տես կախաղանի, միայն աչքերով էր գթութիւն հայցում։



Բայց թշուառի ժամը հնչել էր. չահզադէի մի ակնարկով ֆէրրաշները յանկարծ վրա պրծան, գրկեցին նրան և սարսափահար եղած ամբոխը լսեց միայն մի ոչ-մարդկային ձայն, որ ցնցեց, փշաքաղեց ամենքին և յանկարծ պատկերացաւ սոսկալի տեսարան, երբ հացագործին, որ ոտքով, ձեռքով, ատամներով ընդդիմանում էր, խածնում էր, կռւում էր մոլեգին յուսահատութեամբ, հրեցին հնոցի մէջ, որի հրաշէկ պատերը և բազմալեզուեան բոցերը մի րոպէում չրջապատեցին, պինդ սեղմեցին իրանց զոհին և մարդկային մսի, ճարպի, մազերի ճենճերահոտը տարածուելով, ստիպեց սոսկացած ամբոխին յետ յետ գնալ։ Փուռի բերանը փակեցին թիթեղեայ ծածկոցով և թշուառ հաջին անհետացաւ ամբոխի տեսքից հնոցի բոցերի մէջ [1])...։

Շահզադէն, բեխերը չոյելով, նորից իր խրոխտ և վէս կերպարանքը ընդունելով, նստեց իր ոսկեհուռ սարքով արաբական նժոյգի վրա և դառնալով ամբոխին, ասաց.

—Այժմ այստեղ գտնուած բոլոր ալիւրը թաուաչ է. թաուաչ կարող էք տանել և Մուրթուզա խանի ցորենի ամբարը։

---

[1]) Արուեստական կերպով սով տալ բերող և հացը խարդախող հացագործներին այդպիսի պատիժ տալը անսովոր բան չէր Պարսկաստանի համար 50 տա[illegible] առաջ, և նոյն իսկ այժմ, թէև շատ բացառիկ դէպքերում, գործադրւում է այդ պատիժը։

Արձանացած ամբոխը ցնցուեց, սթափուեց իր թմրութիւնից «թառաչ» խօսքը լսելով. սոսկալի տեսարանը մոռացուեց և խուժանը գրոհ տալով գործարանը, սկսեց թառաչ անել ալիւրի պաշարը. քաղցածութիւնը նորից յարուցեց մարդ-գազանի մէջ աւարառութեան, յափշտակութեան կիրքը և նա մտածում էր այժմ միայն այդ կրքին յագուրդ տալ։ Ամէն ով աշխատում էր իր բաժինը տանել. մինը ջիբն էր լցնում ալիւրով, միւսը գոգնոցը, երրորդը թաշկինակը, կանայք իրանց չարչաները։ Ամբոխի մի մասն էլ դիմեց դէպի Մուրթուզա խանի տունը և մի ժամից յետոյ խանի բոլոր ամբարները դատարկուած, աւերուած, քանդուած էին։

Ճարպիկ Աբգար-միրզան մեկնելիս բարձրաձայն գոռաց. «Մի երկու ժամից յետոյ միւս ըմբոստ հացագործները և ամբարդարները էլ իրանց արժանաւոր պատիժը կը կրեն»։

Սակայն նա չը դիմեց դէպի բազար, այլ վերադարձաւ իր տունը։ Եւ չէր անցել մի ժամ, երբ բոլոր հացագործները և ամբարդարները մտան նրա բակը և ծնկաչոք, առատ նուէրներ ներկայացնելով, աղաչում, պաղատում էին ներել իրանց, խոստանալով թխել լաւ հաց և ծախել յայտարարուած գնով։ Չէր անցել երկու ժամ և արդէն մաքուր, լաւ սանկեադ հացը առատութեամբ ծախւում էր լէտրը մի ղռանով և մէյդաններում, ղափանի տակ, ցորենի բեռները կուտակուել էին։



Ուրախ էր նոր քաղաքապետ շահզադէ Աբգար-միրզան, որովհետև մի հարուածով նա բազմապատիկ արդիւնք էր ստացել. կատարել էր տուել Շահի հրամանը, ահ ու սարսափ էր տարածել այդ հրամանը չ'անսացողների վրա, առատ և լաւ հաց էր հայթայթել քաղցած ժողովրդին և, որ աւելի կարևորն է, առատօրէն լցրել էր դեղին ոսկիներով իր քսակը։ Ի հարկէ, նրա պարտքն էր մասն և բաժին հանել այդ ոսկիներից իր պաշտպան բէգլար-բէգուն և սադրազամին. Նա համոզուած էր և գիտէր, որ կ'արժանանայ ոչ միայն սադրազամի շնորհներին, այլ արքաների արքայի, Աշխարհի Բևեռի իլթիֆաթին էլ կ'արժանանայ իր այդպիսի եռանդուն ծառայութեան համար։

Եւ քաղաքապետը շտապեց գնալ բէգլար-բէգուապարանքը, որտեղից մի ժամ յետոյ դուրս եկաւ ու դիմեց պետական բանտը՝ յանցաւորներին դէպի կառափնարան և մեծ հրապարակը առաջնորդելու համար։

Պետական բանտերը Պարսկաստանում ամեն տեղ միատեսակ են, և Թէհրանինը էլ ոչ մի տարբերութիւն չէր ներկայացնում միւս քաղաքների բանտերից կամ զնդաններից։ Բանտապետի առաջնորդութեամբ քաղաքապետը մտաւ մի գետնափոր նկուղ, խոնաւ, զուրկ լոյսից և օդից, յատակը ցեխոտ. մի փոքր ծակ, բացուած պատի մէջ, ծառայում էր իբրև լուսամուտ։

Նկուղի պատերի երկարութեամբ դրուած էին հաստ գերաններ կամ կոճղեր, որոնց մէջ ցցուած էին երկաթեայ հաստ օղեր և այդ օղերից շղթաների միջոցով կապուած էին բանտարկեալները և նրանց ոտներին ամրացրած էր բ խ օ վ ն ե ր [1]), ինչպէս ամրացնում են ձիի ոտները ու կողպած՝ կողպէքով։ Յանցաւոր թէ մեղադրուող, նոյն իսկ արդէն դատապարտուածները, ամենքն էլ միատեղ էին պահւում այդտեղ. Նրանք այդտեղ էլ կատարում էին իրանց բնական կարիքները. Նրանց երեսին ջուր չէր դիպչում և մազերին՝ սանր. Նրանք գրեթէ մերկ էին, գունատուած, դալուկ, յոգնած, հիւծուած, մաշուած։ Ապականուած, նեխուած օդի զզուելի հոտը իսկոյն դիպչում էր մտնողի քթին։ Բանտարկեալների համար կերակուր բերում էին կամ իրանց ազգականները, ծանօթները, եթէ հարուստ էին, կամ պատահական անցորդները, իբրև ողորմութիւն։ Բանտարկեալին կերակրելը ս ա ւ ա բ, վարձք է համարւում շարիաթով, ուստի և իսկական մուսլիմները չեն զլանում երբեմն երբեմն հաց, մի կտոր միս, հալուա, պտուղ բերել աղքատ բանտարկեալների համար, երբեմն էլ ձգել պատի ծակից։ Ի հարկէ, համեղ կերակուրների մեծ բաժինը անցնում է բանտապետին, որից, բացառապէս, կախուած է բանտարկեալ-

1) Գեյարան։



ների բախտը և վիճակը։ Եթէ բանտարկեալը ինքն կամ նրա ազգականները հարուստ են, նրա վիճակը շատ լաւ տնօրինւում է. բախշիշի միջոցով նա հնարաւորութիւն է ստանում ապրել բանտապետի սենեակում, օդ շնչել, լոյս տեսնել, լաւ կերակրուել, չը շղթայուել և յաճախ էլ փախչել։ Բայց վայը եկել տարել է այն բանտարկեալին, որ աղքատ է. նա կարող է փտել, քաղցից մեռնել, միշտ շղթայակապ մնալ, նոյն իսկ անմեղ, եթէ որ և է միջնորդ կամ պաշտպան չունի և եթէ կարեկից, գթած մարդիկ չը խղճան նրան ու չը կերակրեն։ Շատ անգամ էլ այդ անտէր, անօգնական բանտարկեալները, թէև անմեղ, պատժի են ենթարկւում կամ գլխատւում իսկական, բայց հարուստ ոճրագործների տեղ։

Գրեթէ փորսուղի տալով, քաղաքապետը մտաւ բանտը, բայց գարշահոտութիւնը ստիպեց նրան անմիջապէս դուրս վազել. Նա հրամայեց բանտապետին՝ բերել բանտի ետևի ծածուկ բակը այն ամբաստանեալներին, որոնք մեղադրւում են երեք օր առաջ կատարուած մի յանդուգն գողութեան մէջ, բերել նոյնպէս Բէհման-միրզայի գրագրին ու գանձապահին։ Ծերունի սադրազամը և ներքինապետը դեռ յոյս ունէին իմանալ թէ որտեղ և ում մօտ են պահուած Բէհման-միրզայի գանձափողերը և որովհետև նրա գրագիրը ու գանձապահը չէին խոստովանում, ոչինչ չէին յայտնում, ուստի նրանք վճռեցին ենթարկել նրանց ի ս-

քանջայի[1]), որ սովորաբար, գործադրւում է Պարսկաստանում յանցանքը խոստովանեցնել տալու համար։ Այդ մտքով և հարկաւոր հրահանգը տուել էին նոր քաղաքապետին։

Շահզադէն բազմեց բակի մի անկիւնում դրուած տախտի վրա. Ֆէրրաշները մի փոքր սենեակից դուրս բերեցին տանջանքի գործիքները և խարազանները, ու լախտերը ձեռներին, կանգնեցին նրա առաջ։

—Բերէք գողութեան մէջ ամբաստանուածներին, հրամայեց շահզադէն։

Բացուեց բակի դուռը և երկու երիտասարդ, գզգզուած շորերով, շղթայակապ, դալուկ դէմքով, ահ ու դողով կանգնեցին բակի մէջ տեղ։

—Ո՞րտեղ էք թագցրել մէշէդի Քէրիմ սարրաֆի խանութից գողացած փողերը. ասացէք, եթէ ոչ Ալլահը վկայ, ձեր եղունգները թափել կը տամ։

—Վալլահ, բիլլահ, մենք տեղեկութիւն չունենք, մենք չենք գողացել, պատասխանեցին մեղադրեալները, որոնց արդէն նախորդ օրը ենթարկել էին ֆալախկայի հարուածներին։

—Քանի՞ հատ խարազան էք խփել երէկ ֆալախկայի մէջ, հարցրեց շահզադէն ֆէրրաշներին։

—Յիսուն։

—Երևում է քիչ է, բերէք շիկացրած երկաթը։

1) Ինկվիզիցիոնական տանջանքի։



Պղնձէ մի մեծ մանղալի[1]) մէջ կրակը փուքսով բորբոքեցին և մի լայն կտոր երկաթ դրին մէջը ու սկսեցին շիկացնել։ Քառորդ ժամից յետոյ երկաթը կաս կարմիր էր կտրել։

—Դաղեցէք սրա մէջքը, ասաց շահզադէն, ցոյց տալով աւելի հասակաւոր երիտասարդին, որ ըսկսեց «աման, աման» պոռալ։

Բռնելով ունելիքով շիկացած երկաթը և գետնին տապալելով ամբաստանեալին, դաղեցին նըրանով նրա մէջքը. խանձահոտի հետ միասին մի կովի բառաչիւնի պէս ձայն բարձրացաւ օդում.

—Ես անմեղ եմ, անմեղ եմ, դուք Աստուած չունէք, հեկեկում էր դաղուածը։

Միւս ընկերը սփրթնած, ամբողջ մարմնով դողդողում էր։

—Բերէք եռացրած ջուր, հրամայեց քաղաքապետը, տկլորացրէք սրան։

Ֆէրրաշները տկլորացրին միւս երիտասարդին և մինը մի աման լի եռուն ջրով ողողեց թշուառի մարմինը[1])։

1) Կրակարան։ 2) Ձմեռը՝ մերկացնում են ամբաստանեալին, տփլում են կանգնել դրսում սառուցի կամ ձիւնի վրա, ածում են վրան սառն ջուր, մինչև որ նա թմրում և ուշաթափ է լինում. կամ ամբաստանեալին թաղում են ձիւնի մէջ ամբողջ մարմնով մինչև գլուխը և վրան ջուր ածում։

—Վայ, խաչուեցի, մեռայ, գոռաց Թշուառը և ոստոստելով գետին փռուեց։

Նրա ամբողջ մարմինը ծածկուեց փշտիկներով և մորթը ուռեց, փքուեց։

—Գթացէք, խնայեցէք, մենք անմեղ ենք, Աստուծու արարած ենք, լացում էին դառն կերպով տանջուածները։

—Երդւում եմ Շահի գլխով, պոռաց չահզադէն, որ եթէ վաղը չը խոստովանէք ձեր յանցանքը, աւելի սոսկալի պատժի կենթարկուէք։ Տար սրանց բանտապետ և այս գիշեր մի ֆէրրաշ դիր դրանց գլխին, թող մախաթով ծակոտէ դրանց մարմինը և թոյլ չը տայ քնել, մինչև խոստովանեն իրանց յանցանքը։

Ֆէրրաշները քարշ տալով գետնի վրայով դուրս տարան ամբաստանեալներին, որոնք ցաւից, կսկիծից աղիողորմ հեկեկում էին։ Աւելի երիտասարդ կալանաւորը, որի մարմինը խաչուել էր, ուշաթափ եղաւ և մեռելային դալկութիւնը սպատեց նրա դէմքը։

—Շուտ արէք բերէք այժմ գանձապահին և գրագրին։

Բանտապետի առաջնորդութեամբ ներս մտան երկու տարիքաւոր, ալեխառն մօրուքով և բաւական լաւ հագնուած տղամարդիկ, որոնք կարծես ծանր դժնդակ հիւանդութիւնից նոր էին վերկացել։ Նրանք արդէն մի քանի չարաթ առաջ ենթարկուել էին ֆալախկայի, ջրի, ամրձիքի



սեղման տանջանքներին և գլեթէ հաշմանդամ էին դարձած։ Սակայն բանտապետին տուած բախշիշների շնորհիւ նրանք կարողացել էին գոնէ ազատուել գետնափոր նկուղում ապրելու տանջանքից։

Թոյլ, դողդոջուն ձայնով նրանցից առաջինը ասաց.

—Աբգար-միրզա, մինչև երբ այդ իմանալդ, անխղճմտանք քաւթառը չարչարելու է մեզ։

—Դու համարձակւում ես այդպիսի անվայել լեզու բանեցնել սադրազամի դէմ. ես կը հրամայեմ իսկոյն լեզուդ բնից պոկել,

—Սադրազամը ինձ արդէն մեռցրել է. ինձանում միթէ կեանք է մնացել. ես այլ ես ինչից պէտք է վախենամ. թող Ալլահը անիծէ նրան, դժոխքի փայ անէ, անիծեալ լինես և դու, որ կատարում ես անօրէնի անիրաւ, անխղճմտանք հրամանները։

—Թշուառական, հարէմզադէ, ես քեզ ցոյց կը տամ այս րոպէիս։ Ասա իսկոյն որտեղ և ում մօտ են պահուած Բէհման-միրզայի փողերը, եթէ ոչ չարաչար մահով կը սատկես։

—Ես հազար անգամ ասացի, որ Բէհման-միրզան իր փողերն առաջուց ստացել է սէրրաֆներից, ես ձեզ տետրակները ցոյց տուեցի, բայց դուք չէք հաւատում, զուր տեղ տանջում, չարչարում էք մեզ։ Ալլահը ձեզ համար էլ այսպիսի մի օր կը պատրաստէ։

—Ուրեմն դու յամառում ես, չես ուզում յայտնել։

—Ես ոչինչ չունեմ յայտնելու. դուք քաֆիրներ էք և ոչ մուսուլման։

—Ֆէրրաշներ, պոռաց կատաղած չահզադէն, վայր ձգէք այս անզգամին։

Ծերունի գանձապահը տապալուեց գետնի վրա և կապկպուեց։

—Բերէք սեպերը և մուրճը։ Ֆէրրաշները բերին փայտեայ փոքր սեպեր և կոխելով գետին թաւալուած դժբախտի ձեռքի և ոտների մատերի եղունգների տակ, սկսեցին մուրճով խփել սեպերին. արիւնը սկսեց հոսել, ծերունին թէև ցաւից դալարւում էր, ստոյիկաբար տանում էր և միայն դէմքի կսկծալի արտայայտութիւնը ցոյց էր տալիս տանջանքի սաստկութիւնը։ Յանկարծ, նա թեքեց գլուխը դէպի չահզադէն և ասաց.

—Թողէք, ես այս րոպէիս կը յայտնեմ ձեզ Բէհման-միրզայի գանձի մասին։

—Վերջապէս. փառք Ալլահին, ուրախացած՝ ոստոստեց չահզադէն և հրամայեց դադարեցնել տանջանքը, հանել սեպերը ու մի դէյլան բերել տալ ծերունուն. ապա յարեց.

—Դէ շուտ, շուտ ասա գանձի տեղը, մի լաւ խալաթ կը ստանաս, մեծ խլթիֆաններ [1]) կը ստանաս։

---

[1]) Շնորհ.



Ծերունին ցոյց տուեց իր արիւնոտած ոտները և ձեռները։

—Այո, ասաց նա, մեծ գանձ կայ, այնքան մեծ, որ եթէ սադրազամի և խօջաբաշու կոկորդները լցնելու լինենք, էլի չի սպառուի։

Ծերունու ընկերը, գրագիրը, որ սոսկալով սպասում էր իր հերթին՝ տանջուելու, կարծեց թէ իր ընկերը խելագարուել է. նա շարժեց գլուխը և մրմնջաց.

—Ով Ալլահ, և դու տանում ես այսքան անիրաւութիւն. նա խելագարուեց ցաւից, տանջանքից։

—Բայց այդ գանձի տեղը, տեղն ասա, պոռաց նորից քաղաքապետը, որ արդէն մտքում հաշւում էր, թէ որքան բաժին կընկնի իրան։

—Տե՞ղը, չարախնդաց ժպիտով հարցրեց ծերունի գանձապահը։

—Այո, տեղը, որտե՞ղ է պահուած։

—Ահ, տեղը, որ սատկէք էլ, տրաքէք, չեմ ասի։ Թող կորչի, գետնի տակ թաղուած մնայ գանձը, չուն հաջի Միրզա-Աղասին չը ստանայ։

Շահզադէն կատաղութիւնից գլխի մազերն էր փետում։

—Ահ, քեօփակ, ես բանալ կը տամ լեզուդ. դու կասես տեղը։

—Շահզադէ, ասաց գրագիրը, երդւում եմ իմամ Մուրթուզայով, հայրաթ Ալիով, Աստուծու սուրբ խօսքերով, նա այդ սուտը հնարել է յատ-

կապէս սադրաղամին կատաղեցնելու համար. ոչ մի գանձ չը կայ, նա խելագարուած է, գթացէք, նա կը մեռնի։

—Թող չանսատակ լինի, դու էլ հետը, դուք պէտք է յայտնէք գանձի տեղը։ Բերէք թասը, հրամայեց նա ֆէրրաշներին. ածիլեցէք առաջ այս շան գլուխը, ասացէք բանտապետին ոջիլները բերի։

Պատի տակ կծկուած մի փոքրիկ մարդ մօտեցաւ ծերունուն իր վարսավիրական գործիքներով և իր պաշտօնին լաւ ծանօթ արհեստաւորի հմտութեամբ սկսեց ածիլել ամբաստանեալի գլխի գագաթը, բոլորակաձև։ Բանտապետը բերաւ մի փոքր թիթեղեայ տուփ, որից հանեց մի առ մի քսան հատ տուգած ոջիլներ և դրեց ածիլուած գագաթի վրա։ Միջատները շարժուեցին. ծերունու դէմքի մկանունքները կծկուեցին [1]), բայց նա ոչինչ չէր խօսում, չէր հեկեկում, չէր աղաչում. խորին ատելութիւն էին արտայայտում նրա աչքերը և նա միայն ասաց.

—Ջուր է, անգութ քաղաքապետ, ջանքդ. անհագին գանձը պէտք է թաղուած մնայ հողի տակ, որ ինձ թիքայ թիքայ էլ անես, չեմ ասելու տեղն։

—Դրէք թասը գլխին, նորից պոռաց չահգաղէն։

1) Այդ ձևով, ոջիլները, ինչպէս ասում են, սաստիկ տանջանք են պատճառում։



Պղնձէ թասը դրին մաղալի մէջ և նորից փուքսով արծարծեցին կրակը ու երբ բորբոքուեց, թասը հրաշէկ դարձաւ, ունելիքով դրին թշուառ ծերունու ածիլուած գլխին։ Սոսկալի ճիչը, որ արձակեց ծերունին, յուզեց նոյն իսկ անկարեկից և քարասիրտ ֆէրրաշներին և ինքն չահգաղէն խլացրեց ականջները մատներով։ Երբ թասը բարձրացրին, նրա հետ բարձրացաւ և գլխի կաշին ու մի սոսկալի տեսարան ներկայացաւ ամենքի աչքին։ Ծերունին մի վերջին անգամ կըծկուեց և թէև նուաղած, բայց շատ մեկին և որոշ ձայնով արտասանեց.

—Անիծեալ լինես դու, չահգաղէ. անիծեալ լինի քո սերունդը եօթն պորտ, անիծեալ լինի Հաջին։

—Նա մեռնում է, ասաց ֆէրրաշներից մինը։

—Հեռացրէք, հեռացրէք աչքիցս, պոռաց չահգաղէն, որ յանկարծ բռնուել էր ծերունու անէծքի վախով և սիրտը դող էր ընկել։

Բայց մի վերջին ճիգն ևս կամեցաւ թափել ու դիմելով սարսափահար եղած գրագրին, ասաց.

—Միթէ դու ես չես խղճում քեզ, ընտանիքիդ։

—Աղա, ես դժոխքի կրակի մէջ այրուեմ, Եզիդ Շիմր լինեմ եթէ սուտ խօսեմ. սա ջիգրու այդ բոլորն ասաց. ոչ մի գանձ չը կայ. Բէհման-միրզան բոլորն առաջուց հաւաքել է. ինչու մենք պէտք է նրա պատճառով մեր տունը քանդենք, մեզ տանջել տանք։

Շահզադէն ինքն ևս զգալով, որ թշուառները անմեղ զոհեր են և զուր տեղ են տանջւում, մեռնող ծերունի գանձապահի անէծքի ազդեցութեան տակ, հրամայեց արձակել երկուսին էլ, բայց ծերունին արդէն փչել էր վերջին շունչը...։

Արդէն կէսօր էր. պէտք էր շտապել առաջնորդելու դատապարտեալներին մեծ հրապարակը, ուր պէտք է տեղի ունենար երկու ժամ յետոյ հրապարակական պատիժը, որ սահմանուած էր ահաբեկելու ժողովուրդը։ Աբգար-միրզան շտապով կատարեց միջօրէի նամազը, կերաւ բազարից բերել տուած չիլաւ-քեաբաբը և դուրս եկաւ բանտի մեծ բակը՝ հարկաւոր կարգադրութիւններն անելու։

Ժողովուրդը արդէն վաղուց խռնուել էր մեծ հրապարակի վրա տեսնելու մեծ թամաշան։ Ահագին հրապարակի չորս կողմը, պատերի վրա, պատերի տակ, ծառերի վրա, խանութների առաջ, ասեղ ձգելու տեղ չը կար։ Հրապարակի վերին ծայրում մի քանի վրաններ էին խփուած մեծամեծների, վեզիրների և եւրոպական դեսպանների համար։ Ֆէրրաշների ճիպոտները արդէն գործում էին. պողավաճառները, թանավաճառները, օշարակավաճառները զիլ ձայնով գովում էին իրանց ապրանքը և հրաւիրում հանդիսականներին զովացնել թանով, օշարակով, սառը ջրով իրանց ծարաւը։ Հրապարակի մէջտեղ կարմիր հագուստներով և խայտաճամուկ գլխարկներով դահիճները, դահճապետի ղեկավարութեամբ, պատրաստութիւններ էին տեսնում առաջիկայ կարևոր գործողութիւնների համար։ Դահճապետը մի գերանի վրայ խրոխտաբար բազմած երբեմն ժպտում էր, երբեմն զայրանում, երբեմն քրքիջ արձակում և երբեմն էլ արհամարհական նայուածք նետում, ամեն անգամ, երբ մի որ և է անձն մօտենում էր նրան և կամացուկ, փսփսալով խօսում. այդ մօտեցողները դատապարտուածների ծնողները, ազգականները, բարեկամներն էին, որոնք սակարկում էին դահճապետի հետ այն գումարը, որն պէտք էր տալ, որպէս զի դահիճները բութ դանակով չը կտրեն մահապարտների գլուխները և տանջանքի չենթարկեն կամ ձեռքը, ոտքը, քիթը, ականջը վտանգաւոր կերպով չը կտրեն։ Նայելով առաջարկուած գումարին, դահճապետի դէմքը կամ ժպտում էր, կամ փայլում էր և կամ զայրոյթ էր արտայայտում։

Հրապարակի մէջ մի քանի տեղ փոսեր էին փորուած, գրեթէ մարդաբոյ խորութեամբ. մի քանի տեղ ժայռեր էին դրուած միմեանցից հեռու. ուրիշ տեղեր փայտեայ սիւներ էին տրնկուած. մեծ մաղալների վրա մի քանի կաթսաների մէջ իւղ էին տաքացնում և եռ տալիս։ Բազմաթիւ մշակներ և որմնադիրներ ես հրապարակի արևելեան մեծ պատը տեղ տեղ քանդելով, մեծ ճեղքեր էին բանում, ճեղքեր, որոնց մէջ մի մարդ, ոտքի կանգնած, ազատ կարող էր

տեղաւորուել։ Դահիճները սրում էին դանակներ, դնում սրածները մի կողմ, իսկ բութ ժանգոտած դանակները՝ այլ կողմ։

—Ափիոն և չիբուխներն ևս պատրաստեցէք, կարգադրեց դահճապետը։

—Գալիս են, գալիս են, լսուեց յանկարծ մի աղաղակ և բազմութիւնը ալեկոծուեց, ցնցուեց ու ընդհանուր շփոթութիւն առաջ եկաւ. Փէրրաշները իրանց ճիպոտներով սկսեցին կարգ պահպանել և հանդարտեցնել ամբոխը։

Լսուեց զուռնա—նաղարայի [1]) հնչիւնը. մի խումբ զինուորներ բերում էին մի քանի հատ զամբուրակ [2]), ուղտերի վրայ բարձած։ Իրանք զուռնաչիներն ևս նստած էին ուղտերի վրա. թնդանօթները իջեցրին, չոքեցնելով ուղտերին. շարեցին հրապարակի վրա մէկ մէկու կողքին և զուռնա-նաղարան գնաց տեղաւորուեց իր համար յատուկ պատրաստուած սաքուի վրա։

Երկու փէրրաշ քշելով բերին նոյնպէս մի զոյգ եզ և մի զոյգ գոմէշ ու կապեցին սիւներից։ Հրապարակի զանազան կողմերում, կենտրոնից հեռու, այնտեղ, ուր հանդիսատես ժողովուրդն էր խռնուած, կանգնեցրուած էին երկար փայտեայ հաստ ձողեր։

Վրանները հետզհետէ լցւում էին բարձրաս-

1) Երաժշտական գործիքներ—թմբուկ, փող։ 2) Փոքր թնդանօթ։



տիճան պաշտօնեաներով և հրաւիրեալներով։ Փչուեց շեփորը և այդ նշան էր, որ եկան մեծ վեզիրը ու շահզադէները։

Հնչեց զուռնա-նաղարան.

—Գալիս են, գալիս են, դարձեալ աղմկուեց ամբոխը տենդոտ յուզմունքով. ամենքը նայեցին դէպի այն կողմը, որտեղից պէտք է երևար դատապարտեալների գնացքը։

Ամենից առաջ գալիս էին մի խումբ սարբազներ [1]), չախմախի հրացաններով և երկար սուիններով, չարուխ [2]) հագած կամ ոտաբոբիկ։ Ապա գալիս էին շաթիրներ և փէրրաշներ, որոնց հետևում էին մեր տեսած դահիճները և դահճապետը։ Դրանցից յետոյ գալիս էին մահապարտները և զանազան պատիժների դատապարտուածները, երկու շարքով, թւով 30 հոգի և այդ շարքի պոչին մի կին, գլխաբաց, մազերը ոչ միայն կտրած, այլ և գլուխը ածիլած, էշի վրա թարս նստեցրած, այսինքն երեսը դէպի պոչը, այդ պոչն էլ ձեռքին տուած և երեսն մուր քսած։ Գնացքը փակում էր ձիաւոր ղարափափախների [3]) մի գունդ։

Դատապարտեալների մէջ տասը հոգի իրանց արտասովոր վարմունքով ընդհանուր ուշադրութիւն գրաւեցին։ Մինչ մնացածները գունա-

1) Զինուոր։ 2) Տրեխ։ 3) Թիւրք մի ցեղ, որից կազմում է պարսից ձիաւոր զօրքը։

տուած, դալկահար, դողդոջուն, համարեա կիսամեռ քայլում էին, շատերը աղիողորմ հառաչելով և դառնապէս լացելով, այդ տասը հոգին միայն մի սպիտակ վարտիկ հագած, ընթանում էին ուրախ, զուարթ, պայծառ դէմքով, կարծէք գնում էին ի խրախճան և ոչ ի կառափնարան և երգում էին հոգևոր բովանդակութեան երգեր, չը նայելով, որ նրանց մարմինը ներկայացնում էր մի համատարած վէրք և արիւնը ծորում էր ամեն կողմից։ Նրանց մարմինը ծակոտել էին տէգերով, նիզակներով և ամեն մի ծակի մէջ խրել մի մի ճարպէ վառուած մոմ. ճարպը, հալելով, թափւում էր մարմնի մորթու վրա։ Նրանցից մինը, 18 տարեկան մի պատանի, չը կարողանալով դիմանալ ցաւերին, լացում էր և հեկեկում, բայց մի ծերունի, բռնած նրա թևից, խրախուսում էր, ասելով. «Արիացիր, զաւակս, սրանք միայն մեր մարմինը կարող են սպանել. շուտով մենք կ'անցնենք յաւիտենականութիւն, ուր մենք յաւիտեան կ'ապրենք երջանիկ»։

—Բաբինները, բաբինները, ոռնաց մուսուլման ամբոխը։

Եւ այդ ամբոխը վայրկենապէս ելեկտրականացաւ, կատաղեց ու ամեն մէկը շտապեց իր ատելութիւնը արտայայտել այդ քաֆիրներին, իսլամ կրօնը անարգողներին և նախատել նրանց։

—Ախ, դուք անօրէններ, ամբարիշտներ, շներ, դուք անարգում էք իսլամ սուրբ կրօնը, դուք



անարգում էք մեծ մարգարէին, դուք պղծում էք մեր հողը։

Եւ ամեն մէկը շտապեց գործով ցոյց տալ իր խօսածը։ Մի քանիսը կում անելով թքում էին նրանց երեսին, մօրուքին. ոմանք ապտակ էին խփում. մի պառաւ ևս, մօտենալով նրանցից մէկին, ծերունու, հանեց մարմնի մէջ տնկուած մոմերից մինը և մօտեցնելով մօրուքին, վառեց։ Ընդհանուր քրքիջ բարձրացաւ ամբոխի մէջ, երբ ծերունին աշխատում էր հանգցնել վառուած մազերը, իսկ նա, որին նախատում էին, արտասանեց միայն։

—Մայր իմ, ինչ եմ արել քեզ, ինչո՞ւ բարկացել ես ինձ դէմ։

—Ի՞նչ ես արել, պոռաց պառաւը. դու քաֆիր ես, ուզում ես մեզ, մուսուլմաններիս, խելքից հանել։ Դու չէյթանի սպասաւորն ես։

—Թող Ալլահը դատէ ձեզ ամենքիդ, պատասխանեց ծերունի բաբին։

—Լռեցէք, շներ, քաֆիրներ, խարազանի հարուածներ տեղալով նրանց գլխին, գոռաց դահճապետը։

Բոլոր դատապարտեալներին պտտեցնելով ամբոխի առջև, բերին շարքով կանգնեցրին հրապարակի մէջ տեղ։

Զուռնա-նաղարան լռեց, տիրեց խորին լռութիւն, առաջ եկաւ, հրապարակի մէջ տեղ, մու-

նետիկը, ձիու վրայ նստած, տէգը ձեռքին, մի թիրմա չալ ուսին ձգած։

—Մուսուլմաններ, ժողովուրդ, պոռաց նա, ուռցնելով թշերը և որքան ույժ ունէր պոռալով. հրաման է Շահն-Շահի, ալ-սուլթան, ալ-սուլթան Մահմէդ Շահի—Թող Ալլահը յաւերժացնէ նրա թագաւորութիւնը. — մի քանի խռովարարներ Սպահանում համարձակեցին անգոսնել իշխանութիւնը Աշխարհի Աղօթարանի, որից երկրի բոլոր թագաւորները սարսում են, իսկ մի քանի հերետիկոսներ համարձակեցին անարգել մեծ մարգարէի օրէնքը և գնալ մի սուտ Մահտիի ետևից, արհամարհել իսլամի նուիրական օրէնքը, իսլամի, որ լոյսն և կատարելութիւն է բոլոր կրօնների և դէների. դրանով նրանք բարկացնելով Ալլահին, կարող են մեծ չարիքներ և պատուհասներ բերել մեր օրհնեալ Իրանի գլխին։ Շահն-Շահը, որի փառքի առաջ արեգակի ճառագայթները պատրաստ են նսեմանալ, հրամայեց պատժել այդ խռովարարներին և հերետիկոսներին, ի խրատ և ի զգուշութիւն ժողովրդի։ Հերետիկոսները, որ իրանց բաբի են կոչում, իրանց սուտ մարգարէ Բաբի անունով, եթէ չը զղջան, յետ չը կանգնեն իրանց մոլորութիւնից, կը գլխատուեն. նրանց գլուխը կը ջախջախուի, նրանց պարանոցը կը պոկուի եզերի և ցուլերի ույժով. իսկ խռովարար-ըմբոստները կենդանի կը թաղուեն այս հրապարակի պարիսպների մէջ։



Արժանի պատիժ կը ստանան և նրանք, որոնք մոռանալով նամուս ու աբրու [1], անառակութիւն են գործել, որոնք կշեռքի մէջ խարդախութիւն են գործել։ Թող նրանց պատիժը ձեզ ամենքիդ խրատ և զգուշութիւն լինի և թող Ալլահը Էմին-ուլ-Մօյմընի [2] բարեխօսութեամբ երկարացնէ մեր խագանի կեանքը»։

Ապա մունետիկը սկսեց տալ մի առ մի դատապարտեալների անունները։ Երբ նա տուեց բախտիարցի ապստամբ Հէյդար խանի անունը, յանկարծ դատապարտեալներից մինը աղաղակեց.

—Ով մուսուլմաններ, ինձ խեղճիս, որ ոչ մի բանի մէջ մեղաւոր չեմ, գրել են Հէյդար խանի տեղը, իսկ նրան ազատել են...

—Խփէք դրա բերանին, պոռաց մի աստիճանաւոր, որ գտնւում էր դատապարտեալների մօտ։

Դահիճները վրա պրծան, բայց դատապարտեալը կարողացաւ այնուամենայնիւ շարունակել.

—Ազատել են մեծ փող ստանալով և փախցրել, իսկ ինձ...

Աստիճանաւորի տուած նշանով զուռնան հընչեց և խլացրեց դատապարտեալի ձայնը, բայց

---

[1] Աբրու, կամ ինչպէս մեր ժողովուրդն է ասում «աբրուս», նշանակում է «երեսի ջուր», իսկ այլապէս՝ պարկեշտութիւն, համեստութիւն։

[2] Ալի խալիֆայի տիտղոսներից մինն է։

ժողովրդից աւելի մօտ կանգնածները լսեցին նրա խօսքի վերջը․

—… դրել են նրա տեղ։

Դահիճներից մինը մի րոպէում ձեռքը կոխեց գետնին տապալած դատապարտեալի բերանը և քաշելով լեզուն, դանակի մի հարուածով կտրեց ու նետեց աստիճանաւորի առաջ, որ վերցնելով այդ արիւնաթաթախ լեզուն, դիմեց դէպի վրանները և այնտեղ խոր գլուխ տալով բէգլար-բէգուն,

—Անպիտան Հէյդար խանը հայհոյեց Շահին, հրամայեցի լեզուն կտրել, ասաց նա, աչքով որոշ շարժում անելով։

—Էֆէրիմ, էֆէրիմ, ասաց բէգլար-բէգին, որ հասկացաւ իսկոյն անցքի էութիւնը։

Ամբոխի վրա սարսափը սկսել էր տիրել․ ոչ ոք չէր համարձակւում ծպտուն հանել։

Վրանների կողմից դէպի կենտրոնը առաջացաւ ձիի վրա նստած բէգլար-բէգին և հանելով թուրը պատեանից, գոռաց․

—Դահճապետ, կատարիր արքայական հրամանը։

Հնչեց զուռնա-նաղարան, հնչեցին չեփորները, խփուեց թմբուկը։

Դահճապետը մօտենալով դատապարտեալների շարքին, կոպտաբար հրեց առաջ երեքին և տալով երեք դահիճների ձեռքը, մատով ցոյց տուեց երեք սիւն, հրապարակի երեք կողմերում։ Դա-



հիճները բռնեցին նրանց ականջներից և սկսեցին վազ տալ դէպի սիւները։ Ընդհանուր քրքիջ բարձրացաւ ամբոխի մէջ, երբ դատապարտեալները, չը կարողանալով դահիճների հետ վազել, ոստոստում էին։ Կարեկցութեան զգացումը հեռու էր փախել ամբոխից։ Հասնելով սիւների մօտ, դահիճները կանգ առան և հանելով գօտիների մէջ խրուած մուրճ ու բևեռ, պատրաստուեցին գամել սիւներին դատապարտեալների ականջները։ Վերջիններս աղաչում պաղատում էին գամել ականջի փափուկ մասից, բայց դահիճները պահանջում էին դրա համար փող։

—Ալլահը վկայ, յետոյ կը տանք, տեսնում ես այժմ բացի մի փոխանից մեզ վրա ոչինչ չկայ։

—Ոչ, ոչ, այժմ պէտք է տաք․ որտեղից ուզում էք գտէք․ թող ձեր ազգականները, բարեկամները տան։

Դատապարտեալները պաղատական նայուածք ձգեցին հանդիսականների վրա։

—Ով բարի մուսուլմաններ, Իմամ-Րիզայի սու-
-արի համար օգնեցէք մեզ։

Երկու հոգի ամբոխի միջից շտապեցին մի քանի զուռն տալ դահիճներին, բայց երրորդը չը գտնուեց և երրորդ դատապարտեալի ականջը մեխուեց սիւնին կոշտ մասից։

—Այսպէս կը պատժուեն բոլոր նրանք, որոնք կշեռքի խարդախութիւն կանեն, գոռաց մունետիկը։

Թնդաց զուռնա-նաղարան։

Դահճապետը նորից մօտեցաւ և չարքից դուրս հանեց երեք դատապարտեալի ու կանգնեցրեց մաղալի առաջ, որի վրա կաթսայի մէջ եռում էր իւղը։ Ապա դահիճները բերին մի մեծ կոճղ և դրին դահճապետի առաջ, որ սկսել էր սրել մի մեծ կացին։

Դատապարտեալները մեռելի գոյն առած, հազիւ կարողանում էին կցկտուր խօսքերով արտասանել. «աման, աման, էլ չէնք անի, գթացէք մեզ»։

Դահիճները պինդ բռնեցին դատապարտեալների բազուկները և մէկ մէկ դրին կոճղի վրա. կացնի մի հարուածով դահճապետը կտրեց նրանց դաստակները, իսկ բազուկը խոթեց եռացող իւղի մէջ, որպէսզի արիւնահոսութիւնը դադարէ անմիջապէս։

Ձեռնազուրկ դատապարտեալները ուշաթափ եղան, իսկ մունետիկը գոչում էր դառնալով ամբոխին, որի առաջ դահիճները պտտցնում էին կտրուած դաստակները.

—Այսպէս կը պատժուին նրանք, որոնք գողութիւն կանեն։

Նորից հնչեց զուռնա-նաղարան։

Դահճապետը մօտեցաւ մի երիտասարդ դատապարտեալի, գեղեցիկ դիմագծերով, սևորակ աչերով և խարտեաշ մազերով։ Նա կտրեց դանակով նրա ձախ ականջը և խարազանը բարձրա-



ցնելով հրամայեց ծամել և ուտել այդ ականջը։

Երբ այդ հրամանը կատարուեց, դահճապետը մի ղազիլ[1] անցկացրեց երիտասարդի քթածակերով, երեսը սև մուր քսեց և ղազիլը տալով դահճի ձեռքը հրամայեց պտտցնել նրան. մի այլ դահիճ բռնեց էշի սանձը, որի վրա թարս նստած էր կինը, երեսը նոյնպէս մուր քսած և երկուսն միասին սկսեցին պտտցնել երիտասարդին և կնոջ հանդիսականների առաջ, որոնք «մաշալլահ, մաշալլահ» կոչելով մի մի սև փող էին տալիս դահիճներին կամ թքելով երիտասարդի և կնոջ երեսին, ասում էին. «այ դուք անզգամներ, անառակներ, չէ՞ք ամաչում, շնութիւն էք անում»։

Երիտասարդը ամօթից ոչ ոքի չէր նայում, իսկ կինը, որ հազիւ 18—20 տարեկան կար, այլ ևս ամօթը կորցրած, ասում էր. «ինչ յանցանք եմ արել, որ այսպէս գեղեցիկ ջահիլին սիրել եմ. ինչ անեմ հապա, քանի որ մարդս 60 տարեկան է»։

—Թիւ քո աննամուս երեսիդ, թքում էին ամէն կողմից։

Մի կին, չարչաւում փաթաթուած, երեսի քօղն յետ տանելով և մի մեծ կում թուք շպրտելով դատապարտեալուհու վրա.

—Այ դու լաչառ[2], գետինը մտնես, ասաց և երկու ձեռքով չանգ[3] արեց։

1) Բարակ չուան, ձիի մազից։ 2) Անզգամ։ 3) Ճանկ անել։

—Լաչառը դու ես, պոռաց Թշուառ կինը, ճանաչելով իր դրացուհուն. ամեն օր քո մարդի դուքանի աշակերտի հետ սիլի-բիլի ես անում, հիմա ինձ ես չանդ անում։

Կինը չտալով երեսի քօղը իջեցրեց։ Դահիճները հետզհետէ հաւաքում էին սև փողեր, մինչև հասան վրանների առաջ։ Այդտեղ բէգլար-բէգին իջաւ իր ոսկեսար երեվարից և ձեռացի նշանով հրամայեց կնոջ իջեցնել էշի վրայից ու նրա տեղ նրա սիրեկանին դնել։ Երիտասարդին նստեցրին երեսը Թարս դէպի պոչը, և պոչի ծայրը տուին ձեռքը և սկսեցին պտտեցնել։ Ջահիլ կինը մնաց կանգնած։

—Բերէք խաչան [1]), շունը և կատուն։

Թշուառ կինը գունաթափուեց, վազեց դէպի այն վրանը, ուր նստած էին մեծ վեզիրը և Ներքինապետը, ընկաւ գետնին ծնկաչոք և աղիողորմ աղաղակեց.

—Գթութիւն, գթութիւն, չէյթանը ինձ փորձանքի մէջ ձգեց. էլ այդպիսի ղալաթ [2]) չեմ անի։

Ներքինապետի խորշոմած կնճիռները կծկուեցին և նրա դէմքը զայրոյթից կապտեց.

—Քաշ տուէք այս անամօթին, պոռաց նա։

Դահիճները բռնելով Թշուառ կնոջ, խօթեցին տոպրակի մէջ, ձգեցին այնտեղ շանը և կատուին և տոպրակի բերանը պինդ կապեցին ու մի մի

1) Տոպրակ, քրձեայ քսակ. 2) Սխալ։



փայտ վերցնելով, սկսեցին խփել տոպրակին։ Աղիողորմ ճիչ, շան կաղկանձիւն և կատուի մլաւոց—մի քանի րոպէ լսուեց տոպրակից, ապա արիւնը սկսեց ծորել նրա անկիւններից և երբ, բէգլար-բէգու նշանով, փայտի հարուածները դադարեցին, տոպրակի բերանը բացուեց ու Թշուառ կինը ձգուեց գետնին, միայն մի տձև, այլանդակ ղանգուած կարելի էր տեսնել։

—Այսպէս կը պատժուեն նրանք, որոնք անառակութիւն կը գործեն և կը չնանան, պոռաց մունետիկը։

Զուռնա-նաղարան խլացրեց ամենքի լսելիքը, խփուեց Թմբուկը և ամբոխը նորից աղմկուեց, նորից յուզուեց։ Երկինքը ամպամած, կարծես կամենում էր ծածկել լուսաւոր արեգակից քըստըմնելի տեսարանը, որը մարդիկ դիտում էին անկարեկից, առանց զայրոյթի, բողոքի նշաններ ցոյց տալու։ Սարսափը անդամալուծել, ահաբեկել էր ամենքին. իսկ անհաւատարիմ կնոջ տրուած սոսկալի պատիժը շատ սովորական և բնական էր նկատւում և ոչ ոքի մտքից չէր անցնում բողոքել։

Լռութիւն, համատարած, չարագուշակ լռութիւն տիրեց ամեն տեղ. ամենքը զգում էին որ հասել է ժամը աւելի սոսկալի պատիժների, բայց ոչ ոք չէր կամենում հեռանալ, ականատես չը լինել, ոչ ոք չէր ուզում բաց Թողնել Թամաշան. այդ Թամաշային ականատես էին և երեխաները, այդ որպէս զի ապագայում, երբ կը ծերանան, այդ

սոսկալի անցքերի թուականով պատմեն իրանց պատմութիւնները, «երբ եաղիներին [1]) պատժեցին, ես ութ տարեկան էի», ասելով։

—Առաջ բերէք եաղիներին, ջէրութեան խայիներին [2]), աղաղակեց բէգլար-բէգին։

Դահիճները քշեցին վրանների առաջ խարազաններով տասն և երեք դատապարտեալների, որոնց մէջ աչքի էր ընկնում մօտ 50 տարեկան վիթխարի հասակով մի տղամարդ, հաստ, երկար բեխերով և ալեխառն մօրուքով. նրա դէմքն վէս էր և խրոխտ և թէև ձեռները շղթայակապ, բայց նա քայլում էր այնպէս, որպէս թէ իր Լօրստանի սարերումն լինէր, արհամարհական նայուածք ածելով իր չուրջը և չը խոնարհեցնելով գլուխը շահզադէների և սադրազամի ու ներքինապետի առաջ, որոնք վրանի տակ նստած էին, թիկն տուած մութաքաներին։ Դա՝ Լօրստանի Ֆրէյդուն խանն էր, որ երկար ժամանակ հարկ չէր վճարում Շահին, ըմբոստացած, արհամարհում էր Շահի իշխանութիւնը, փախցնում էր իր դէմ ուղարկած զօրքը իր քաջ ձիաւորների օգնութեամբ, և ահ ու սարսափ էր տարածել այդ զօրքի վրա. նա ձերբակալուել էր միայն խաբէութեամբ, հիւր հրաւիրուելով Սպահանի կուսակալից, որ երդուել էր ղուրանի վրա, թէ նրա մազին ոչ ոք չի դիպչի։ Քաջ, պարզամիտ, վայրենի լեռնցին

1) Ապստամբ։ 2) Դաւաճան, անհաւատարիմ։



հաւատացել էր երդման, հաւատացել էր այն ղուրանին, որի վրա երդուել էր կուսակալը և մօլլաների ձեռքով ուղարկել էր նրան. նա եկել էր Սպահան իր քաջ այրուձիով, ստանալով մեծ պատիւներ. կուսակալն առաջարկել էր նրան որոշ պայմաններով հնազանդել Շահին և խոստացել էր, երդուել, ներումն ստանալ, նշանակել տալ նրան ֆիրմանով Լօրստանի կառավարիչ և խնդրել էր սպասել մի քանի օր, մինչև կ'ստանայ Թէհրանից ֆիրմանը։ Մի օր նա հրաւիրեց Ֆրէյդուն խանին գնալ հռչակաւոր բաղնիքը, որ կառուցել է Շահ-Աբաս Մեծը, ինքն ևս նրա հետ գնալով. այդտեղ, երբ տկլոր խանին լողացնում էին, առաջուց դարանակալ ֆէրրաշները նրա վրայ պրծան, կապոտեցին և շղթայեցին։ Նրա ձիաւորների մի մասը փախաւ, մի մասը, որ կամենում էր ազատել իր տիրոջ, սպանուեց. իսկ տասներկու հոգի ձերբակալուեցին և նոյնպէս շղթայակապ ուղարկուեցին Թէհրան խանի հետ։

Ֆրէյդուն խանը կանգնեց շահզադէների վրանի առաջ հրացայտ աչքերով, գլուխը բարձր պահած։

—Գլուխ տուր, փէդէր սուխտա [1]), շահզադէներին, մի ապտակ տալով նրա երեսին, գոռաց բէգլար-բէգին.

1) Հայրդ այրուած։

—Փառք քեզ Ալլահ, աղաղակեց լոռեցին, մուստառ մկները խրոխտում են չղթայակապ առիւծի առաջ. տօ, անիծից արմատ, ես քո կնամարդի Շահից չէի վախենում, այս լակոտներին պէտք է գլուխ տամ: Ղաջարները մարդ ե՞ն, նրանք կարող են միայն կնոջ փոխան հագնել, դրժել ղուրանի վրա արած իրանց երդման:

—Խփէք այդ շան բերանին, լսուեց ներքինապետի սուր, բարակ ձայնը:

Բէգլար-բէգին մօտեցան, բայց Ֆրէյդուն խանի աչքերից կայծեր էին ցայտում և մի ակնթարթում ոտքով այնպիսի աքացի տուեց բէգլար-բէգու փորին, որ սա թաւալգլոր, մի քանի քայլ հեռու, ընկաւ փոշու մէջ:

Ընդհանուր ծիծաղ բարձրացաւ ամբոխի մէջ:

Փոշոտ, գլխիկոր, զայրացած, ատամները կրճտելով վեր կացաւ բէգլար-բէգին և բարկութիւնից կատաղած ձայնով հայհոյեց ֆէրրաշներին և դահիճներին:

—Ի՞նչ էք կանգնել. ինչու շան սատակ չէք անում:

Բայց լոռեցին օգուտ քաղեց ընդհանուր շփոթութիւնից և որքան ոյժ ունէր պոռաց.

—Էյ դու կնամարդի ղաջար, էյ դու բիղէյրաթ [1]) Մահմադ-Շահ, ով դու անհայր և ան-

[1]) Ղէյրաթ նշանակում է իսկապէս եռանդ, արիասրտութիւն, վեհութիւն. փոխաբերական մտքով բ ի ղ է յ ր ա թ նշանակում է վատահոգի, lâche.



մայր, քո կինը, քո քոյրը... ինչ ես թաք կացել. եթէ մարդ ես դուրս եկ մի երեսիդ թքեմ, ղուրանով սուտ երդում ուտող... [1]):

Ջուռնայի և թմբուկների ձայնը թոյլ չը տուեց որ այդ հայհոյանքների շարունակութիւնը լսուի ամբոխից:

Փրփրած, կատաղած բէգլար-բէգին գոռում էր շարունակ.

—Դահճապետ, սատկեցրու այս շներին, շուտ, շուտ:

Ֆրէյդուն խանին և իր ընկերներին նորից քշեցին դէպի հրապարակի կենտրոնը: Այդտեղ նրանց մերկացրին հագուստներից և ընդունուած աւանդական սովորութեան համաձայն, ներկայացրին նրանց ղէյլան և մի մի ֆինջան սուրճ. մի քանիսը, որոնք կորցրել էին արիութիւնը, պահանջեցին ափիոնի չիբուխ, որպէս զի ինքնամոռացութեան մէջ ընկնեն և տանջանք չը զգան:

Ֆրէյդուն խանը դէն շպրտեց և ղէյլանը և սուրճը:

—Ես կարօտ չեմ երդմնադրուժ և կնամարդի ղաջարի ղալյանին, պոռաց նա. կատարեցէք ձեր գործը:

[1]) Մինչև այժմ էլ երբ մահուան դատապարտուածները իրանց յոյսը կտրում են ներումն ստանալուց, գլխատման ժամանակ սկսում են հայհոյել ցիշոցներով Շահին:

Ամբոխը, որ սրտում յարգանք էր զգում դէպի այդ բուի, յանդուգն ու անվեհեր տղամարդը, էլ չը կարողացաւ պահել հիացմունքը և մի ընդհանուր չչուկ տարածուեց՝ «մաշալլահ, մաշալլահ, ափսոս տղամարդ»։

Դահիճները կապեցին լուեցի խանին և նրա աջակից ընկերին թնդանօթների բերանին. նրանք շարունակ հայհոյում էին Շահին, նրա որդիներին, բայց զուռնան և թմբուկը խլացնում էին նրանց ձայնը։ Այն միջոցին, երբ դահիճը մօտեցաւ մոմը ձեռին վառելու թնդանօթների պատրոյգը, շատերը փակեցին իրանց աչքերը. որոտաց թնդանօթը և օդի մէջ մարդկային մարմնի կտորներ, արիւնաշաղախ մսի հատուածներ, ուղեղի կոյտեր պտոյտներ գործելով, սկսեցին թափուել հրապարակի վրա և նոյն իսկ հանդիսականների գլխին։

«Քո մօր աչքը կուրանայ», ողբացին մի քանի պառաւ կանայք։

Դէմավանդի ձիւնափայլ գագաթը այդ միջոցին ծածկուեց թանձր և պղնձա-կարմրագոյն ամպերով և արեգակը թագնուելով նրանց ետև, կարծես չէր կամենում լուսաւորել այդ սոսկալի տեսարանը. բարձրացաւ մի տաք, հեղձուցիչ քամի, որ առատ փոշի բարձրացրեց և ծածկեց հրապարակի տեսարանը ամբոխի աչքից։ Այդ մռայլ օդի մէջ լսուեց մունետիկի ձայնը.

—Այսպէս կը կորչեն նրանք, որոնք կը քա-



մահրեն Շահնշահի զօրութիւնը, որից դողում է համայն աշխարհը։

Տեսնելով իրանց պետի սոսկալի մահը, լուեցիները, կորցնելով իրանց քաջութիւնը, սկսեցին գթութիւն պոռալ, բայց դահիճները նրանցից երկուսին ցիցերի վրա բարձրացրին, իսկ վեցին դրին դիք դիք պարսպի մէջ բացուած ճեղքերում. որմնադիրները աղիւսով և կրախառն ցեխով լցրին ճեղքերը և ապա դատապարտեալների գլուխների վրայով բարձրացնելով պարիսպը, կենդանի թաղեցին նրանց պարսպի մէջ։ Ցից հանուած դատապարտեալները սոսկալի տանջանքներով չարչարուելով աղաչում էին սպանել իրանց. շահզադէների մէկի հրամանով զինուորները գնդակահար արին նրանց հրացաններով։ Մէկի գլուխը դրին կոճղի վրա. ափիոնի չիբուխից նա արդէն անզգայացել էլ. դահիճը երկաթեայ մեծ տապարով ջախջախեց գլուխը և ուղեղը ցայտելով տարածուեց ամեն կողմ։

—Ալլահ, Ալլահ, լսւում էին միայն թոյլ մրմունջներ ամբոխի միջից։

Զուռնա-նաղարան շարունակ թնդում էր, դադարելով միայն երբ մունետիկը գոռում էր.— այսպէս կը սատակեն նրանք, որոնք կընդդիմանան Աշխարհիս Ագօթարանի իշխանութեան, որից դողում են սարերը և ձորերը։

Ապստամբներից մնում էին երկու հոգի, որոնց պէտքէ գլխատէին։ Երբ դահիճները սկսեցին սրել

բուլթ դանակներ նրանց աչքի առաջ, նրանք կովի պէս բառաչեցին և նրանց աղիողորմ լացը մինչև երկինք բարձրացաւ։ Նրանք դիմեցին ամբոխին, աղաչելով.

—Ով մուսուլմաններ, թոյլ մի տաք մեզ կովի, ոչխարի պէս մորթեն. սաւաբ արէք, որ դահիճները մեզ առանց տանջելու մորթեն։

Ամբոխը սկսեց սև, նոյն իսկ սպիտակ դրամներ նետել դահիճներին, պոռալով «արեցէք, լաւ արեցէք»։ Դատապարտեալները խնդրեցին նորից ղալյան և սուրճ, ափիոնի չիբուխ ու ագահաբար ծխեցին։ Վերջապէս դահիճները չոքեցրին նրանց. ետևից բռնեցին գլուխը, մատներնին խօթեցին քթածակերի մէջ և դանակը դնելով կոկորդին, սկսեցին քաշել. «շուտ, շուտ կտրիր», պոռում էին ամեն կողմից։ Արիւնը սկսեց առուի պէս հոսել և երկու գլուխները նետուեցին հրապարակի վրա։ Անմիջապէս մի քանի կանայք վազ տալով ամբոխի միջից, թաթախեցին իրանց թաշկինակները լճացած արեան մէջ։ Մարմինների ջղաձգութիւնները դեռ շարունակւում էին, իսկ գլխատուածների աչքերը չռուած՝ նայում էին։

Այդ միջոցին մի սոսկալի որոտում դղրդեց երկինքը և երկիրը. կուտակուած ամպերը միանգամայն մթնացրին օդը, կայծակը փայլատակեց և ճեղքելով ամպերը խփեց սարերի գլխին. քամին նորից բարձրացրեց սոսկալի փոշի, որ աւելի մթնացրեց օդը և դրեթէ խաւար տիրեց.



սոսկած, ահաբեկուած ամբոխը կարծում էր որ ահա կայծակնահար կը լինի և չէր համարձակւում տեղից շարժուել։ Ամպերի խորքում նորից թնդաց որոտումն, այս անգամ աւելի դղրդալից, աւելի խլացուցիչ. մի հսկայական կայծակ պատռելով թանձր ամպերը յանկարծ լուսաւորեց և սարի գագաթը, և հրապարակը, և ցից հանուած ու գնդակահար եղած դիակները, և աչքերը դէպի երկինք չռած գլուխները, և ահաբեկուած ամբոխը. նորից տիրեց մթութիւն։ Մի նոր քամի, սարսափելի շռինդով փչելով պոկեց վրանների պարանները, կանանց գլխից չարչաւները և տղամարդկանց աբաները, բայց նա վանեց և մի քանի ամպեր, ու երկնքի մի մասը պարզուեց։ Ամբոխը մի քիչ շունչ առաւ և լսուեցին ձայներ.

—Երևի անմեղների արիւն թափուեց և Ալլահը կամեցաւ իր բարկութիւնը յայտնել։

—Ոչ, լսուեց յանկարծ մի այլ ձայն, Ալլահը բարկացել է, որ քաֆիր բաբիները դեռ կենդանի են աշխարհիս երեսին։

Ճիշտ այդ րոպէին հնչուեց մի հոգևոր երգ, որ դատապարտեալ բաբիները սկսեցին խմբովին երգել։

—Անիծեալներ, անիծեալներ, ոռնաց ամբոխը, որի ֆանատիկոսական զգացումները զարթեցին աւելի մեծ ուժգնութեամբ։

Մունետիկը գոռաց։

—Մուսուլմաններ. դուք տեսաք, թէ ինչ ահուելի պատիժների ենթարկուեցին գողերը, անա-

ռակները, ապստամբները. բայց դրանք մուսուլմաններ էին. կան այստեղ աւելի մեծ յանցաւորներ, որոնք ապստամբել են մեր սուրբ ղուրանի, մեծ մարգարէի և մեր պաշտելի իմամների դէմ և քուֆր[1]) են ասում, սուտ Մէհտի են ստեղծել և նրան հաւատում. դրանք բաբիներն են, որոնցից տասը հոգի պարագլուխներ բռնուել բերուել են. դրանցից երկուսը պէտք է կենդանի այրուեն, երկուսի գլուխները պէտք է ցուլերը պոկեն, իսկ վեցը պէտք է գլխատուեն։

—Արժանի են, արժանի, ոռնաց ամբոխը. դրանց արմատը պէտք է ջնջել։

—Սակայն, շարունակեց մունետիկը, պատիժը տալուց առաջ Իմամ-ջուման և Շէյխ-ուլ-իսլամը կամենում են վերջին անգամ յորդորել որ ձեռք քաշեն, ուրանան իրանց մոլար դենը և դառնան մարգարէի լոյս հաւատին. Ալլահը թող այդ քաֆիրների խաւար սիրտը լուսաւորէ։

—Ամէն, ոռաց ամբոխը։

Բաբիներին խարազանով քշեցին դէպի վրանը, ուր բազմած էին երկու կրօնապետները, սադրազամը և ներքինապետը։ Խաղաղ անդորրութիւն տիրում էր բաբիների դէմքի վրա. վախի, սարսափի հետքն անգամ չէր նկատուում. միայն երիտասարդ բաբին, որ գնում էր պարագլուխ ծերունու ետևից, գունաթափուած էր և անդադար կրկնում էր։

[1]) Հայհոյանք։



—Չեմ կարող, հայր, չեմ կարող տանել այդ տանջանքները և, վերջապէս, ով պէտք է պահէ մօրս քեզանից յետոյ.

—Զաւակս, կանգ առնելով և անհուն գթով նայելով որդու վրա ասաց ծերունին. քո ժամը դեռ չէ հասած, քեզ բռնադատել չեմ կարող, հետևիր սրտիդ թելադրութեան և աղօթիր հօրդ համար։

Երիտասարդը չոքեց, հայրը ձեռները դրաւ գլխին և օրհնեց, ապա շտապ շտապ առաջ անցաւ ու կանգնեց վրանի առաջ միւս ընկերների հետ։ Երիտասարդը մի քիչ հեռու առանձին կանգնեց և գլուխ տալով կրօնապետներին, ասաց.

—Ես բաբի չեմ այլ ևս, ես մուսուլման եմ, ազատեցէք ինձ պատժից։

Եւ արտասանեց բարձրաձայն իսլամի հաւատոյ հանգանակն—«Չը կայ Աստուած բացի Ալլահից և Մահմէդ նրա մարգարէն»։

Ներքինապետը ծլունկ եղաւ տեղից, համբուրեց երիտասարդի ճակատը և ամենքն ոռացին.

—Օրհնեալ է Ալլահը, մարգարէն իր հրաշքը ցոյց տուեց։

Երիտասարդին տարան վրանը։

—Սալաւաթ, սալաւաթ, ոռաց ամբոխը։

Ծերունի բաբիի դէմքը համակուեց տխրութեամբ. Նա նայեց իր ընկերներին և ասաց նրանց.

—Եթէ ձեր ժամն եւս չէ հասել, եթէ ձեզ պատրաստ և կազմ չէք գտնում անանցաւոր և յաւիտենական արքայութեան համար, կարող էք հետևել որդուս։

—Քաւ լիցի, քաւ լիցի, միաբերան աղաղակեցին ինը բաբինները:

Եւ ծունկ չոքելով, ամենքը բարձրաձայն կարդացին.

«Դաւանում ենք և խոստովանում, ով Աստուած, որ դու յայտնեցիր մեզ ճշմարտութեան արևը. վկայում ենք, որ չը կայ ուրիշ հ ա գ գ—ճշմարտութիւն—բացի նրանից, որ դու յայտնագործեցիր մեզ. դաւանում ենք, որ ոչ ոք չէ կարող ոչ գովել քեզ, ոչ երևակայել։ Ով մեր Աստուած, մի յետ մղիր մեզ, որ կարչել ենք Քո կրծքից յոյսի մատերով»։

Ամբոխը, որ շրջապատել էր խալամի այդ հաւատուրացեալներին, նոյն իսկ կրօնապետները և դահիճները, թմրած և շլացած այն վեհութեան ազդեցութեամբ, որ տպաւորուած էր բաբինների դէմքերի վրա, լուռ լսում էին և ոչ ոք չը խանգարեց այդ աղօթքը: Առաջինը թմրութիւնից սթափեց ներքինապետը, որ իր կանացի, սուր, անհաճոյ ձայնով սուլեց.

—Սրանք ք ո ւ ֆ ր են կարդում, սրանց լեզուն պէտք է կտրել տակից և շներին ձգել։

Դահիճները վրա պրծան։



—Սպասեցէք, ասաց Շէյխ-ուլ-իսլամը, գուցէ, այս մոլորեալներին խելքի բերենք։

Եւ դառնալով բաբիներին, հրամայեց.—Վեր կացէք:

Բաբինները անմռունչ հնազանդեցին։

—Դուք ընդունում էք, որ Ալլահը մի է, որ Նա հ ա գ գ—ճշմարտութիւն է։

—Ընդունում ենք և հաւատում:

Ամենքի դէմքի վրա խորին զարմացք արտայայտուեց։

Շէյխ-ուլ-իսլամը շարունակեց.

—Ընդունում էք, որ Մահտին պէտք է գայ։

—Ընդունում ենք:

—Ուրեմն էլ ինչի մէջն է ձեր և մեր զանազանութիւնը, ինչի համար ձեզ դահճի ձեռքն էք տալիս։

—Ոչ, ասաց ծերունի բաբին, զանազանութիւնը մեծ է։ Ալլահը նոյն ինքն հագգն է, ճշմարտութիւնը. Մահմէդը նոյնպիսի մարգարէ և առաքեալ է, ինչպէս Աբրահամը, Մովսէսը, Յիսուսը, որոնց բերանով Աստուած յայտնագործել է մարդկանց ճշմարտութիւններ, բայց ոչ վերջնական, յաւիտենական ճշմարտութիւնը. վերջնական, յաւիտենական ճշմարտութիւնը նա պէտք է աւանդէ Մահտիի բերանով, դռնով և այդ դուռը, բ ա բ ը, այդ Մահտին այսօր եկել է և բերել մեզ վերջնական ճշմարտութիւնը։

—Դու սուտ ես խօսում, գոչեց ծերունին. Մահտին երբ գայ, պէտք է նուաճէ իր զօրքով

բոլոր աշխարհը և հպատակեցնէ իսլամին. ո՞ւր է նրա զօրքը, ո՞ւր է նրա զօրութիւնը. ինչո՞ւ բոլոր աշխարհը չը նուաճեց և իսլամի ոտքի տակ չը դրեց։

—Հէնց այդտեղ է ձեր մոլորութիւնը. Մահտին չը պէտք է իր թագաւորութիւնը, իր զօրութիւնը հաստատէ դիակների վրա, այլ մարդկանց սրտերի մէջ. Նա պէտք է նուաճէ սրտերը։

—Ուրեմն, ձեր կարծիքով, մուսուլմանը ոչ մի առաւելութիւն չունի։

—Ոչ. մուսուլման, հրէայ, քրիստոնեայ, մօլթանի ամենքը մի են և հաւասար, ամենքը եղբայրներ են. չը կայ ընտրեալ. ի հ թ ի հ ա դ և ի թ թ ի ֆ ա գ — համերաշխութիւն և միութիւն մարդկային բոլոր ցեղերի մէջ—ահա մեր հաւատը, ահա վերջնական ճշմարտութիւնը։

—Անէծք, անէծք, քուֆր է խօսում այս անիծեալը, պոռացին կրօնապետները և ներքինապետը, տարէք սրանց և սատակեցրէք։

—Ձեր սուրը՝ մեր պարանոցը, յարեց ծերունին, դուք կարող էք սպանել միայն մեր մարմինը, բայց ոչ մեր հոգին. մենք այսօր տասն ենք, հարիւր, վաղն կը դառնանք հազար, տասն հազար, միլիօն. կը գայ ժամանակ երբ ոչ մեծ կը լինի, ոչ փոքր, ոչ ազնուական, ոչ ռամիկ, ոչ աղքատ, ոչ հարուստ, ոչ իշխող, ոչ հպատակ, ոչ տէր, ոչ ծառայ. ամենքը մի կը լինեն, ամենքը Ալլահի որդիք կը կոչուեն։



Ամբոխը չնչասպառ լսում էր ծերունու խօսքերը. ամենքի դէմքի վրա խորին զարմանք էր կարդացւում. միթէ՞ սրանք քաֆիրներ են. սրանք կատարեալ, ճշմարիտ մուսլիմներ են։ Ոչ մեծ կը լինի, ոչ փոքր, ոչ աղքատ, ոչ հարուստ—որպիսի երանութիւն. ուրեմն այլ ևս քաղցած չենք քնի ոչ մենք, ոչ մեր երեխաները. ուրեմն մեզ այլ ևս ճիպոտներով չեն ծեծի, մեզ չեն հարստահարի։ Հոգեբանը, անշուշտ, կը կարդար այս մտածմունքը այն բազմաթիւ մշակների, համալների, կիսաքաղցած և կիսամերկ արհեստաւորների դէմքի վրա, որոնք մի քանի րոպէ առաջ, պատրաստ էին կտոր կտոր անել այդ բաբիներին, համարելով նրանց թշնամի Ալլահի, ընկեր սատանայի և բաժին դժոխքի։ Նա, այդ ամբոխը, այլ ևս չէր ոռնում, անէծք չէր կարդում. սերմը, բարի սերմը ընկել էր պարարտ հողի վրա և ապագայում առատ հունձ պէտք է տար...

Տեսնելով բաբի ծերունու խօսքերի ազդեցութիւնը ամբոխի վրա, կրօնապետները և ներքինապետը շտապեցին հրամայել դահճապետին գործադրել պատիժը։

—Սրանք հայհոյում են Ալլահին և մեծ մարգարէին, պոռացին նրանք. սրանց շունչը պղծում է երկիրը։

Հնչեց զուռնա նաղարան. դատապարտեալները տարուեցան հրապարակի կենտրոնը, երկուսին դահիճները կապեցին սիւներից, երկաթէ շղթա-

ներ անցրին նրանց պարանոցով և այդ շղթաները կապեցին մի զոյգ գոմեշի և մի զոյգ եզների լծից. երկուսին նստացրին գետնի վրա, նրանց վրա ու չորս կողմը թափեցին սև նաւթ ու դիզեցին ցախ ու փայտ։ Մնացած հինգին չոքեցրին և դահիճները հանելով իրանց բութ, ժանգոտած դանակները, սկսեցին պոռալ.

—Դէ տուէք մեր վարձը, որ սրենք, եթէ ոչ ոչխարի պէս կը մորթենք։

Բաբիները սկսեցին աղօթել և երգել:

—Ուրեմն ոչ ոք այս շների համար ոչինչ չէ տալիս, ասացին դահիճները և դառնալով բաբիներին. «ձեր գլուխը մի բլատի [1]) անգամ չարժէ, անհաւատ շներ»։

Յանկարծ ամբոխի միջից դուրս եկան մի քանի հոգի և ձգեցին դահիճների առաջ մի բուռ սպիտակ ղռաններ։ Դրանք հայեր էին և հրէաներ:

—Ահ, էրմանի, եահուդի, դուք էլ ախր սրանց նման քաֆիրներ էք, ծիծաղեցին դահիճները և հաւաքելով դրամները, սկսեցին սրել դանակները։

Ամբոխը պահպանում էր խորին, մեռելային լռութիւն, նրա սրտի մէջ մտել էր արդէն կասկածը. «այս մարդիկ արդար են և անմեղ, սրանք մեր բարեկամներն են»։ Եւ այն արիութիւնը, որով այդ մարդիկ պատրաստւում էին մեռնելու,

1) Կէս կոպէկ։



դիտում էին, անտարբեր, դահիճների պատրաստութիւնները և տանջանքի գործիքները՝ զարմացրել, ապշեցրել էին ամբոխին: Միթէ չար, ամբարիշտ կարող են լինել այն մարդիկ, որոնք քարոզում են սէր, գթութիւն, եղբայրսիրութիւն, որոնք ողորմում են աղքատներին, տնանկներին, նրանց եղբայր, ընկեր են անուանում։

Յանկարծ մի սարսափելի բոց բռնկեց. դահիճները վառել էին կենդանի ջահերին. մուխը, կրակը բարձրանալով օդի մէջ, ծածկեցին նահատակներին։ Վախեցած այդ կրակից և անհանգստացած տաքութիւնից գոմեշները և եզները մանաւանդ զգացին խարազանի հարուածները իրանց մէջքին, կատաղած, այնպիսի ուժգին շարժումն գործեցին և ձգեցին շղթաները, որ բաբիների գլուխները մի ակնթարթում պոկուեցին և տաք արիւնը վշվշաց ու ողողեց շըրջապատողներին։

Թանձր, մռայլ, սև ամպերը, որոնք նորից կուտակուել և բռնել էին ամբողջ երկնակամարը, այդ միջոցին թնդացին այնպիսի սաստիկ որոտումով, որ ամբոխը ցնցուեց և սարսափած «Ալլահ, Ալլահ» աղաղակեց. որոտը սաստկացաւ, կայծակները փայլատակեցին, և խաւարը գրեթէ պատեց. վախը մտաւ ամենքի սիրտը. թւում էր, թէ ահա մի սարսափելի բան պէտք է պատահի, երկինքը փուլ պէտք է գայ, երկիրը պէտք է պատռուի և համատարած լռութեան մէջ լսում

էին միայն մի քանի զարհուրած ձայներ. Վա՜յ մեզ, վայ մեզ. արդար արիւն թափուեց»։ Յանկարծ մի ահեղ կայծակ նորից փայլատակեց, պատռեց ամպերը և գնաց խփեց Շահի մզկիթի գլխին և երբ դրանից յետոյ խաւարը սկսեց քիչ քիչ ցրուել, փոթորիկը հանդարտուեց, երկինքը բացուեց, սարսափած ամբոխի առաջ պատկերացան հինգ բաբիների գլուխները, որոնք դահիճները շարել էին իրար կողքի, դիակների մօտ, իսկ խարոյկից բարձրանում էր դեռ մուխ և ճենճերահոտ։

Անձրևը սկսեց տեղալ. ամենքը սկսեցին փախչել և մի քանի րոպէից յետոյ ահագին հրապարակը սկսեց դատարկուել. դահիճները սկսեցին երկար կարթերով քաշել դիակները և նետել հրապարակի ներքևի ծայրում գտնուած խանդաքը [1]։

Վրանների առաջ խռնուել էին ֆէրրաշները, չաթիրները. չահզադէները նստեցին իրանց ոսկեսար ձիերի վրա։ Դուրս եկաւ և Իմամ-Ջուման սադրազամի ու ներքինապետի ընկերակցութեամբ և երբ վերջինս համբուրում էր նրա քղանցքները, կրօնապետը նստելով իր սպիտակ էշի վրա, ասաց. «Ադա սադրազամ, ջհուդների խնդիրը վերջացաւ. հաստատուեց իմ առաջ, որ ջհուդ աղջկան սէյիդը բռնի կերպով տարել է, ուստի և ես ազատութեան ֆիթվայ տուի այսօր առաւօտեան,

1) Խրամատ։



բայց աղջիկը առժամանակ կը մնայ իմ տանը, գուցէ կարողանանք մեր սուրբ հաւատին բերել նրան»։

Սադրազամը շնորհակալութիւն յայտնեց և կրօնապետը, իր թալաբաներից հետևուած, մեկնեց իր տունը,

Մի սէյիդ, որ լաւ լսել էր Իմամ-Ջումայի խօսքերը, գունաթափուած, բռունցքը շարժեց կրօնապետի ետևից և աղաղակեց։

—Ես վրէժս կառնեմ, ես այդպէս չեմ թողնի, ես ցոյց կը տամ ամենքին։

—Ես զգուշացրի ձեզ, աղա սէյիդ, որ Իմամ-Ջուման սիրում է գեօզալներին—ձեռքը դնելով սէյիդի ուսին ասաց Սէլիմ չաթիրը, որ վաղուց հետևում էր սէյիդի շարժումներին։

—Այդ դու ես, հաջի Սէլիմ. Իմամ-Րիզան վկայ, որ ես վրէժս կը հանեմ, բայց ինձ պէտք է ապացոյց...

—Ապացո՞յց. ես ձեզ կը տամ. եկէք միայն այս երեկոյ Իմամ-Ջումայի տունը, շշնջաց Սէլիմը սէյիդի ականջին և արագ քայլերով հեռացաւ։

## XVI

Մինարէներից հնչում էին երեկոյեան էզանները, հրաւիրելով բարեպաշտ մուսլիմներին աղօթքի կանգնել և հանգստանալ ցերեկուայ աշխատութիւններից։ Թէհրանի անհարեկուած ժողո-

վուրդը չտապել էր փակուել իր տների մէջ և փողոցներում շատ քիչ անցուդարձ կար։ Միայն Իմամ-Ջումայի տան առաջ կանգնած էին մի քանի հոգի և դռնապանը երդում հաւատ էր անում, որ աղան, յոգնած, եկել պառկել է, պատուիրելով ոչ ոքի ներս չը թողնել ու արձակել է բոլոր գրագիրներին։ Եւ մինչ դռնապանը քշելով այդ անժամանակ եկած խնդրատուներին, կամենում էր մեծ դուռն փակել, նրա առաջ յայտնուեց Սէլիմ չաթիրը և սալամ տալով խնդրեց կանչել հարամխանից Եասաման աղախնուն, ասելով որ բէգլար-բէգու կինը, շահզադէ խանըմը մի յանձնարարութիւն է արել Լէյլա խանըմին և պէտք է անպատճառ իսկոյն հաղորդել։

—Դէ որ այդպէս է, ասաց ծերունի դռնապանը, դու մի ղէյլան չաղ արա, ես գնամ կանչեմ Եասամանին։

Եւ ծերունին, բարձրացնելով վարագոյրը մտաւ հարամխանի պարտէզը։

Սէլիմը անմիջապէս բացեց մեծ դուռը և շուացրեց. մի րոպէից յետոյ փողոցի ծայրին կանգնած երիտասարդ սէյիդը ներս մտաւ նախագաւիթը։ Սէլիմը բարձրացրեց բիրունին տանող դռան վարագոյրը և ասաց սէյիդին. «շուտ մտիր. ոչ ոք չը կայ. կը գնաս կը մտնես մեծ թալարը. այնտեղ ականջ կը դնես, թէ ինչ է անցնում կողքի սենեակում և կարող ես տեսնել թէ ինչ է անում աղան. դէպի առանձնարանը տանող սենեակի



դուռը փակուած չի լինի. ի սէր Ալլահի այնպէս արա, որ աղան ոտքիդ ձայնը չը լսի. երբ դուրս գաս, կամաց եկ, դուռը հանդարտ բաց, ծերունին խոր քնացող է, չի լսի, և գնա։

—Միամիտ մնայ, պատասխանեց սէյիդը։

Եւ վարագոյրը ընկաւ նրա ետևից։ Այդ միջոցին եկաւ ծերունի դռնապանը, ասելով. «ահա և գեղեցիկ Եասամանը»։

Խափշիկուհին զայրացաւ.

—Տես, տես, այս քաֆթառն ես գեղեցկութեան մասին է խօսում։

—Ինչո՞ւ չեմ խօսի, ես ումից պակաս եմ. Ալլահը վկայ, որ պէտք է այն ջհուդ աղախնին մուսուլման շինեմ և ինձ կին առնեմ. ոհ, Սէլիմ, որքան գեղեցիկ էր անիծեալը, երբ էյվանից մի քիչ առաջ անցկացաւ առաջիցս ուրախ ուրախ. այնքան ուրախ էր, որ կարծես աշխարհիս թագաւորութիւնը իրան էին տուել։

—Ի հարկէ ուրախ կը լինէր, ասաց Եասամանը, աղան այսօր փիթվայ արձակեց, որ ջհուդները արդար են և Եսթերը սէյիդի կինը չէ. ահա այդ փիթվան աղան տուեց Եսթերին, նա էլ տուեց իր աղախնին, որ տանի տայ ջհուդներին. հիմա ինչքան ուրախացած կը լինեն։

—Այդ լաւ բան չի արել աղան. շատ զարմանում եմ. ինչո՞ւ հապա ջհուդ աղջկան, Եսթերին բաց չի թողնում։

—Որովհետև կամենում է համոզել նրան մուսուլմանութիւն ընդունել. ադան ասում է՝ ափսոս է այդպիսի նազանի, գեղեցիկ աղջիկը ջհուդ լինի:

—Ահ, ինչ լաւ կը լինի. այն ժամանակ նրա ադախին Ռեբեկան էս մուսուլման կը դառնայ և էս նրան կուզեմ. ոհ, անիծեալ աղջիկը խելքս հետն տարաւ։

—Լաւ, ամու, բարով մուրազիդ հասնես, դու ղէյլանդ ծխիր, ես Եասամանին ասեմ ինչ որ խանըմըս հրամայել է:

Եւ երկուսն էլ դուրս եկան փողոց։

—Ահ, աղա Սէլիմ, ասաց խափչիկուհին, խեղճ Եսթերը յոյս ունէր, որ դու կ'ազատես նրան. Լէյլա խանըմը սաստիկ բարկացած է քեզ դէմ. Եսթերն արդէն պատրաստւում է աղայի մօտ գնալ և մի երկու ժամից յետոյ նրա բանը պըրծած կը լինի. խեղճը ցաւից կը մեռնի, բայց Լէյլա խանըմը որոշել է խափանել և թոյլ չը տալ։

—Դու ասա երկուսին էլ, որ միամիտ մնան, ես ինչ ասել եմ, կը կատարեմ. Լէյլա խանըմը թող տեղն հանդարտ նստի. կատարե՞լ ես, ինչ որ պատուիրել եմ. հօ չես փակել աղայի սենեակից դէպի թալարը տանող դուռը։

—Ոչ, բայց ինչի՞ համար ես կամենում որ դուռը բաց մնայ, քանի որ թալարում ոչ ոք չը կայ. ադան ճամբել է ամենքին.



—Այդ յետոյ կ'իմանաս, այժմ մնաս բարև. մնաս բարև, ամու, ասաց Սէլիմը դռնապանին և դուրս գնաց։

Մութը արդէն կոխել էր, փողոցում ոչ մի ձայն չէր լսւում, երկինքը ամպամած էր. ոչ մի աստղ չէր փայլում և գիշերուայ խաւարը աւելի սաստկացել էր։ Սէլիմը նստեց դռան դրսի սաքուի վրա և հանելով ջիբից չիբուխը, ծխախոտի քսակը, լցրեց չիբուխը ու սկսեց ծխել։ Նա սաստիկ յուզուած էր. իր մտքի մէջ վաղուց երկնած և յղացած վրէժխնդրութեան ժամը մօտեցած տեսնելով, նա սաստիկ երկիւղ էր կրում, որ չը յաջողուի. սէյիդի մէջ նա տեսնում էր Ալլահից ուղարկուած այն ձեռքը, որ պէտք է կատարէր արդար վրէժխնդրութեան ակտը. նրան սկզբում տանջում էր այն միտքը, թէ մեղաւոր խամ-ջումայի հետ նա զոհւում է և անմեղ հրէայ աղջկան. Եսթերին, որովհետև սէյիդը դժուար թէ խնայէ նրան, բայց, նա շատ էլ հոգս չէր անում այդ մասին. նախ՝ ինչ մեծ բան է, եթէ մի ջհուդ աղջիկ զոհուի. երկրորդ, առանց Ալլահի կամքի, ադամորդու գլխից մի մազ անգամ չի ընկնի և Եսթերի ճակատին երևի այդպէս է գրուած ի վերուստ, որ նա սէյիդի ձեռքով սպանուի... Այդ մտածմունքները հանդարտացրին Սէլիմին և նա, կծկուած սալքուի խորքում, սպասում էր։ Ներսից ոչ մի ձայն, աղմուկ չէր լսւում։

Ծերունի դռնապանը փակելով դուռը Սելիմի ետևից և բանալին կախելով գաւթի պատից, ծխեց ղէյլանը, ապա գրպանից հանեց փոքրիկ տուփը, կլլեց ափիոնի երկու դեղհատ և շուտով նա խռմփացրեց, քնում անոյշ երազներ տեսնելով և գրկելով հրէայ աղախնին...։

Երիտասարդ սէյիդը իրան միայնակ գտաւ ընդարձակ բակի մէջ. Նա շատ լաւ ծանօթ էր իմամ-ջումայի արտաքին կացարանի տեղագրութեան, ուստի և վստահ, առանց վարանելու, մթութեան մէջ նա դիմեց նախասենեակը, ուր ցերեկը նստում էին երկրորդական գրագիրները, թալաբաները. ըստ սովորութեան, բոլոր դռները բաց էին, ուստի նա հեշտութեամբ մտաւ ընդարձակ թալարը և նստելով վարագոյրի մօտ, սրեց ականջը։ Նա արդէն որոշել էր ինչ անել, եթէ մէկը վրա հասնէր. «Աղան իրան հրամայել է երկու օր առաջ՝ գալ իր գործի վճիռն իմանալ, և նա եկել սպասում է»։ Սկզբում մթութեան մէջ նա ոչինչ չը նկատեց, բայց երբ աչքերը հետզհետէ վարժուեցին, նա նկատեց մի աղօտ լոյս թալարի վերին ծայրի դռնի ճեղքից. Նա գիտէր, որ այդ դուռը տանում է աղայի առանձնասենեակը, հարամխանան. ուրեմն այնտեղ մարդ կայ, գուցէ ինքն աղան, և Եսթերը նրա գրկումն է։ Այս մտքից նա յանկարծ ծլունկ եղաւ և քայլեց թալարում. կօշիկները նախասենեակում հանած լինելով, նա քայլում էր միայն գուլպա հագած



փափուկ գորգերի վրա ուստի և ոտնաձայնը չէր կարող լսուել։ Անշշուկ, լուռ, նա հասաւ դռան, որի կիսաբաց ճեղքից ներս էր մտնում աղօտ լոյսը։ Նրա սիրտը այնպէս էր բաբախում սաստիկ, որ քիչ էր մնում կուրծքը պատռի դուրս պրծնի։ Խանդոտութիւնը, կասկածը այրում, տոչորում էին նրան և սակայն, նա դեռ չէր կամենում հաւատալ, որ իմամ-ջուման, սրբութեամբ և առաքինութեամբ հռչակուած ծերունին, այն խստակրօն և խստապահանջ քահանայապետը շլանար մի ջհուդ աղջկանից և ոտնակոխ անէր իսլամի նուիրական պատուիրանները։ «Ով գիտէ, մտածում էր նա, այդ անիրաւ չաթիր Սելիմը խաբեց ինձ և կամեցաւ թակարդի մէջ ձգել»։ Կիսաբաց դռան ճեղքը թոյլ էր տալիս լաւ նկատել սենեակի մէջ անցած դարձածը։ Նա նայեց. սենեակի գլխին, ճիշտ դռան հանդէպ, սաջադայի վրա նստած էր իմամ-ջուման, առանց չալմայի, ճաղատ գլխով, պարեգօտը հանած, գօտին քակած. Նա միայն մի երկար սպիտակ շապիկ ունէր հագած և մի փոխան, ու շապկի վրայից մի թիրմա քուլաջէ։ Նրա դէմքը կարծես երիտասարդական աշխոյժ էր արտայայտում. աչքերը, կատուի բիբերի պէս փայլում էին. անհանդարտ շարժումներ էր անում և ծխում էր ղէյլան. այդ նշաններից սէյիդը հասկացաւ. որ աղան մէջուն է կուլ տուել. «ահ, ուրեմն ճիշտ է, ջհուդ աղջկայ համար է», մտածեց նա և արիւնը խփեց

նրա գլխին. զայրոյթից ձեռները, ոտները դողացին և քիչ էր մնում ընկնի։

Իմամ-Ջուման ղէյլան էր ծխում. սենեակի մէջ տեղ, կաշուէ սփռոցի վրա դարսուած էին զանազան օշարակների սրուակներ, պտուղներ, քաղցրաւենիք, չաքարեղէն և խմորեղէն, սակայն ուրիշ ոչ ոք չը կար. պարզ էր, որ աղան սպասում էր մէկին. սաջադայի կողքին ձգուած էր անկողին. «Իսկ եթէ իր կանանց մէկին է սպասում և ոչ Եսթերին», անցաւ յանկարծ Սէյիդի մտքով։ Եւ նա մի տեսակ թեթեւութիւն զգաց. կարծես մի ծանր քար բարձուեց նրա կրծքից։

Յանկարծ իմամ-Ջուման ծափ տուեց. մի քիչ յետոյ ներս մտաւ մի կին, որի ձայնից Սէյիդը ճանաչեց Եասամանին, որ ասաց. «Ինչ էք հրամայում»։

—Ես չասացի՞ ջհուդ աղջկան կանչիր այստեղ, ինչու է ուշանում։

Սէյիդի աչքերը արիւնով լցուեցան. «անիծեալ», մրմնջաց նա։

—Այս րոպէին կը գայ, լսուեց Եասամանի ձայնը. նա հագնւում է։

—Ուրեմն ճիշտ է Սէլիմի ասածը, ուրեմն այս անիծեալը խաբեբայի մէկն է եղել և ջհուդ աղջկայ գեղեցկութեան համար այնպիսի փիթվայ է տուել։ Ա՜հ, դու՛ կամենում ես իմ որսը ձեռքիցս խլել, աղա իմամ-Ջումա, քեզ թանգ կը նստի այդ։



Եւ Սէյիդը ձեռքը տարաւ մէջքը ու գօտու մէջ թաքցրած մի կէս խանչալ հանեց և կոխեց գօտու մէջ, առաջից։ «Ուրեմն այդ անիծեալ ջհուդ աղջիկն ևս համաձայնել է սրա հարճը դառնալ, որպէս զի ազատի իր մուռտառ ջհուդներին և արձակուի ինձանից։ Քեզ էլ ցոյց կը տամ, անըզգամ աղջիկ»—մտքում որոտում էր Սէյիդը։

Վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ Եսթերը. Սէյիդը տեսաւ նրան, որովհետև նա կանգնեց սենեակի մէջ տեղ, սփռոցի գլխին ու խոր գլուխ տուեց աղային։ Նա հագել էր զարդարուն շորեր, ձգել էր ապարանջաններ և օղեր, սանդրել էր յօնքերը և այնպէս գեղեցկացել էր, որ նմանւում էր քաշած պատկերի։ Դէմքը սակայն վըշտահար էր, մի քիչ դալուկ, որ աւելի ուժեղացնում էր գեղեցկութիւնը։

Հոգեկան ծանր տանջանքներից, իր սրտի մէջ մղուած յուսահատ պայքարից յետոյ, նա եկել էր այն որոշման, որ պէտք է հրաժարուել անձնական երջանկութիւնից և զոհել իրան, բայց այդ զոհը նա չէր կամենում անել, ծախելով իրան։ Երբ առաւօտը, իմամ-Ջուման յանձնեց իրան փիթվան, որ ապացուցանում էր հրէաների անմեղութիւնը, նա յայտնեց, որ եթէ Եսթերը կամենայ խաբել իրան, խոստումը չը կատարել, նա փիթվան կեղծ կը հրատարակէ և հրէաները չեն ազատուի ջհուդ-քուշանից։ Եսթերը հաստատեց խոստումը, Ռեբեկայի ձեռքով ուղարկեց բաբի-

ներին ազատութեան թուղթը, պատուիրելով նրան ծածուկ տանել Սաւուղին, որ նա չը կասկածի իր նշանածի անմեղութեան, հաւատարմութեան մասին և նախ քան նրան անիծելը, սպասէ մի քանի ժամանակ։ Զոհել իր կուսութիւնը վաւաշոտ ատելի ծերունուն—նա սոսկում էր այդ մտքից և գերադաս էր համարում մեռնել, սպանել իրան։ Որքա՜ն նա լացեց, երբ հասաւ ժամը գնալու իմամ-Ջումայի մօտ. նրա հետ լալում էր և Լէյլա-խանըմը, որ նոյնպէս զոհել էր իր կուսական տարիները, թարմութիւնը այդ զզուելի ծերունուն։ Լէյլա-խանըմը չատ լաւ գիտէր, թէ ինչու իմամ-Ջուման այնպէս էր կարգադրել, որ այդ օրը ճամբել էր բոլոր սպասաւորներին, հարէմի կանանց պատուիրել էր, որ կարող են գնալ իրանց ծնողների և ազգականների տները և միայն ծեր դռնապանն էր մնացել, որին պատուիրել էր ոչ ոքի չընդունել։ Իրան ևս իմամ-Ջուման առաջարկել էր հիւր գնալ հօրը տունը, բայց նա, հիւանդութիւնը պատրուակ բերելով, մնացել էր. այն ժամանակ ծերունի վաւաշոտը յայտնել էր նրան որ մտադիր է սիգայ անել Եսթերին և դրանով ջհուդ աղջկան դժոխքից ազատել։ Իբրև բարի մուսուլմանուհի, Լէյլա խանըմը պարտաւոր էր միայն ուրախանալ, որ սուրբ մարդը, բարի նախանձախնդրութեամբ, աշխատում է աւելացնել մուսուլմանների թիւը և գանգատուել էր միայն, որ երևի աղան ձանձրացել է իրանից, երևի պառաւել է ինքն։



—Ոչ, իմ սիրուն, նազելի Լէյլա, դու իմ աչքի լոյսն ես, պատասխանել էր աղան. մի բարկացիր, էգուց գիշեր անպատճառ քեզ հետ կ'անցնեմ, քո նախշուն աչքերդ կը համբուրեմ։

«Երանի թէ այսօր իսկ մեռնէիր, մտածել էր Լէյլա խանըմը. ես էլ, խեղճ Եսթերն էլ կ'ազատուէինք քո ճիրաններից»։

Իմամ-Ջուման պատուիրել էր, որ Եասամանը լաւ սեղան պատրաստի իր սենեակում։ Լէյլա խանըմը, տեսնելով Եսթերի աղի արտասուքը, աշխատում էր մխիթարել նրան. «ինչ արած, Ալլահը այսպէս է ստեղծել կնոջ. մենք պէտք է տղամարդկանց ստրկուհին, հաճոյքի առարկան դառնանք. մենք չենք կարող մեր եարի [1]) հետ ամուսնանալ։ Աստուած ողորմած է. ով գիտէ դեռ ինչեր կարող են պատահել»։

Լէյլա խանըմը դեռ սրտում մի անորոշ յոյս ունէր, թէ Սելիմը կ'ազատի խեղճ Եսթերին։ Նա ոչինչ չը գիտէր Սելիմի ծրագրի մասին. վերջինս, որքան էլ սիրում էր նրան, բայց այն համոզմունքով, թէ «կինը, իբրև երկար մազեր ունեցող, կարճամիտ է և կնոջ չը պէտք է գաղտնիք հաւատալ», թագցրել էր նրանից իր գաղտնիքը։

—Ոչ, ոչ, ասաց Եսթերը, ինձ միայն մահը կարող է ազատել. ես միայն խնդրում եմ քեզանից, Լէյլա, շուտ իմաց տալ հօրս և նշանածիս, եթէ ինձ հետ մի բան պատահի։

---

[1]) Եար—ընկեր, սիրական. պարսից բանաստեղծութիւնների մէջ յաճախ գործադրուող բառ։

—Բայց ի՞նչ կարող է պատահել։

—Ով գիտէ, ցաւից, վախից կամ զզուանքից սիրտս կարող է պատռուել։

Եւ ծածուկ թաքցնելով փոքրիկ խէնջարը ու թոյնի տուփը ծոցում, շալկի մէջ, նա համբուրեց Լէյլային ու մտաւ խամ-ջումայի առանձնասենեակը։ Ծերունու աչքերը փայլեցին ուրախութեամբ. մէջունը, որ նրա վաղածանօթ դէրվիշը պատրաստել էր գոհարեղէնից, սկսել էր իր ազդեցութիւնը գործել։ Եսթերի գեղեցկութիւնը շլացրեց նրան։

—Ո՛հ, հրեշտակս, մօտ, մօտ եկ, համբուրեմ այդ նռնի նման կարմիր շրթունքդ, ուտեմ այդ համեղ թշերդ, արտասանեց նա բանաստեղծի ոտանաւորներով։ Տես, ինչ ընծայ եմ պատրաստել քեզ համար։

Եսթերը քարացած կանգնել էր. խամ-ջուման վեր կացաւ. աղջիկը ձեռքը տարաւ ծոցը և հանելով խէնջարը, մտքում կարդաց աղօթք ու տարաւ սուր ծայրը դէպի կուրծքը. յանկարծ մի զօրեղ հարուած տապալեց նրան պատի տակ և մի սոսկալի ձայն «այ դուք անամօթներ, ես ձեզ ցոյց կը տամ» հնչեց նրա ականջին։ Եսթերը միայն այս նկատեց, որ մի խէնջար խրուեց խամ-ջումայի կուրծքը, արիւնը փչչաց և երկու կատաղի, վայրագ աչքեր նայեցին նրան։ Խամ-ջուման ժամանակ չունեցաւ նոյն իսկ ախ քաշելու և փռուեց գետնին։ Սոսկումը ցնցեց Եսթերին. Նա սթափեց, ցատկեց և իր փոքրիկ խէնջարը ու թոյնի տուփը ձեռքից բաց թողնելով, սկսեց փախչել, ու հարայ տալ։ «Այ, անզգամ, դու կարծում ես քեզ սաղ կը թողնեմ», լսեց ետևից սէյիդի ձայնը, որ խէնջարը հանելով արդէն մեռած խամ-ջումայի սրտից, վազեց Եսթերի ետևից, բայց երբ մտաւ երկրորդ սենեակը, որ բաժանում էր հարէմխանայի մասը առանձնասենեակից, նա յանկարծ կանգ առաւ. այդ սենեակի դռան կանգնած էր մի այլ կին. դա Լէյլան էր, որ, անհանգիստ՝ Եսթերի մասին, ուղարկել էր Եասամանին քնելու, իսկ ինքն դռան ետևից դարանամուտ՝ հսկում էր։ Սէյիդի աղաղակը, երբ սա սլացել էր իր խէնջարով խամ-ջումայի վրա, նա լսելով, բացել էր դուռը. տեսնելով Եսթերին լեղապատառ վազելիս, նրա ետևից սէյիդին՝ արիւնաթաթախ խէնջարը ձեռքին, նա հասկացել էր Սէլիմի արածը։ Նրա երեսը փրկեց Եսթերին. հէնց որ սէյիդը կանգ առաւ, Լէյլան քաշեց Եսթերի ձեռքից և դուռն անմիջապէս փակեց։ Նրա առաջին շարժումն, առաջին դրդումն եղաւ հարայ տալ, օգնութիւն կանչել։ Եսթերն փռուել էր գորգի վրա ուշաթափ ու կեանքի նշոյլ չէր ցոյց տալիս։ Բայց մի սոսկալի միտք յանկարծ կայծակի նման անցաւ Լէյլայի գլխում. աղմուկ հանել, ցոյց տալ և յայտնել որ մարդասպանը սէյիդն է, միթէ դրանով նա վտանգի չի ենթարկի և Սէլիմին. չէ՞ որ կարող է հպատատուել, վերջապէս սէյիդն ինքը

տանջանքներից ստիպուած կարող է խոստովանել, որ իրան ճանապարհ ցոյց տուողն եղել է Սէլիմը։ Այդ միտքը այնքան սոսկում պատճառեց Լէյլային, որ նա մոռացաւ ամեն բան, մոռացաւ գետնի վրա փռուած Եսթերին, մոռացաւ վախը և նորից բանալով դուռը, ներս վազեց։ Սէյիդը, աչքերը արիւնոտած, ձեռքերը արիւնաթաթախ, դեռ կանգնած էր սենեակի մէջ տեղ և խելագարի նման պտտցնում էր ձեռքում խէնջարը։

—Շուտ, շուտ փախիր, աղա, ասաց Լէյլան, թափ տալով նրա ուսը. տանը ոչ ոք չը կայ, ոչ ոք չը գիտէ, ոչ ոք չէ տեսել. անցիր, դռնապանը քնած է, բանալին պատից կախուած է, բաց դուռը և փախիր. ես ոչ ոքի չեմ ասի։

Արտասանելով այս խօսքերը Լէյլան յետ վազեց և մտնելով սենեակը, փակեց դուռը։ Այդտեղ տեսնելով Եսթերին ընկած, նա կռացաւ, ականջը դրեց սրտին և լսելով բաբախումը, վազեց ջուր բերելու։

Սէյիդն սթափուելով Լէյլայի խօսքերից, սկսեց քիչ քիչ վրա գալ և գտնել իր պաղարիւնութիւնը։ Նա մտաւ առանձնասենեակը, ուր լճացած արեան մէջ ընկած էր իմամ-ջուման. երբ նա վերցրեց մոմակալը նրան լաւ նայելու, նա յանկարծ նկատեց Եսթերի վայր ձգած խէնջարը, տուփը և չարչաւը, որ անկման ժամանակ վրայից սլուել էր։ Նրա դէմքը փայլեց ուրախութեամբ. «այժմ ազատուած եմ», շշնջաց նա, և վերցնելով



փոքրիկ խէնջարը, որի փղոսկրեայ կոթը զարդարուած էր եբրայական նշանագրերով, նա կոխեց իմամ-ջումայի վէրքի մէջ. ապա սրբեց իր խէնջարը ընկած չարչաւով և դուրս գնաց։ Թալարի մէջ նա կանգ առաւ, ականջ դրեց. ոչ մի ձայն, աղմուկ չէր լսւում. Նա առաջացաւ, դուրս եկաւ նախասենեակը, մթութեան մէջ որոնեց կօշիկները, բայց չը գտաւ, գուլբայած՝ վազեց բակը և կամացուկ մտաւ դռան գաւիթը, ուր խռմփացնում էր անուշ քնի մէջ ընկղմուած ծեր դռնապանը. ճրագէ մոմը մոմակալի մէջ, թախչայի վրա դեռ չէր հանգած։ Նա վերցրեց պատից կախուած բանալին, բացեց կամացուկ դուռը և ետևից ծածկելով, իրան գտաւ փողոցի մէջ ու ազատ շունչ քաշեց։ Մի րոպէ էլ ականջ դրեց դռան, դեռ ոչ մի աղմուկ, ոչ մի շշուկ չը կար. «ուրեմն ոչ ոք ինձ չը տեսաւ, բացի այն սիրուն կնոջից. անշուշտ նա իմամ-ջումայի կանանց մինն էր, բարկացել էր, իբրև մուսուլմանուհի, որ իմամ-ջուման մուրտառ ջհուդ աղջկան է սիրում. այդ պատճառով նա չի մատնի ինձ, ամենքը կը կարծեն, որ սպանողը ջհուդի աղջիկն է, ջհուդները դարձեալ կը կրեն իրանց պատիժը, Եսթերն էլ կը գլխատուի։ Աչքը դուրս, չը կամեցաւ իմ կինս լինել, այժմ թող սատկի. ես վրէժս երկուսից էլ լուծեցի»—մտածում էր նա և հրճուանքից իրար քսում ձեռները։

Ապա շտապ քայլերով նա աներևոյթ եղաւ

թաղի ծուռ ու մուռ փողոցներում։ Բայց նա սխալւում էր. դարանամուտ եղած Սէլիմը տեսաւ, կամ աւելի շուտ, զգաց դռան բացուելը, նրա դուրս գալը, սակայն զարմացաւ, որ ոչ մի ձայն, ոչ մի չչուկ և ոչ մի աղմուկ չը լսուեց անից։ «Ուրեմն նա սիրտ չարաւ սպանել նրան, անի-ծեալ վախկոտ և վատ հոգի», մրմնջաց նա։ Նա հաւատացած էր, որ Լէյլան և Եասամանը, լսելով աղմուկ կը վազեն իմամ-ջումայի սենեակը, կը տեսնեն նրան և Եսթերին սպանուած ու աղաղակ կը բարձրացնեն, դռնապանը կը զարթնի, դրացիները նոյնպէս կը զարթնեն և սպանութիւնը կը յայտնուի։ Զայրացած, յուզուած, որ իր վրէժխնդրութեան փափագը չը կատարուեց, նա իջաւ սաքուից ու քալեց դէպի դուռը, բայց յանկարծ յետ ընդգրկեց. դուռը նորից բացուեց փոքր ճռնչիւնով և մի նոր մարդ դուրս եկաւ. կիսաբաց դռնից մոմի աղօտ լոյսը ընկնելով փողոցի մէջ, Սէլիմը կարողացաւ նկատել, որ դուրս եկողը Ալի-Հէյդար դերվիշն էր, յայտնի կախարդը և բժիշկը. ոտաբոբիկ, գզգզուած մազերով, մի երկար մաշուած խալաթ հագին, նա կանգ առաւ փողոցում, դէս ու դէն նայեց և գողի նման պատերի տակով սկսեց գնալ։ Սէլիմը կամեցաւ վազել և բռնել նրան, բայց մի այլ մտածմունք նրան զամուած պահեց իր տեղում և նա կուչ եկաւ պատի տակին, որ դէրվիշը իրան չը տեսնի, թէև մթութեան մէջ անհնարին էր որ նա



տեսնուէր։ «Ուրեմն հասկանալի է, սէյիդը այս անիծեալ դերվիշին տեսել է թալարում, կամ բակում և այլ ևս չի համարձակել ներս մտնել, ինչու ուրեմն այսքան երկար ժամանակ մնաց նա ներսում», մտածեց նա. այդ միտքը թոյլ չը տուեց նրան դերվիշի ետևից ընկնել. ինչ հարկ կար դերվիշն իմանար, որ ինքը գիշերուայ այդ ժամին այդտեղ է եղել. չէ՞ որ պէտք կը լինէր բացատրել, թէ ինչու է եղել այդտեղ։

Եւ սակայն դերվիշն ականատես էր եղել իմամ-ջումայի սպանութեան։ Երեկոյեան, բերելով իր պատրաստած մէջունը իմամ-ջումայի համար, նա ստացել էր առատ վարձատրութիւն և դուրս գալով առանձնասենեակից թալարը, նա, յոգնած՝ քաշուել էր թալարի խցերից մէկը, վարագոյրով ծածկուած և այդտեղ պառկուել գորգի վրա ու քնացել։ Սէյիդի արձակած աղաղակն և Եսթերի հարայ տալն արթնացրել էին նրան. քնաթաթախ, մթութեան մէջ նա առաջ ոչինչ չը հասկացաւ, բայց մի խռնչոց լսելով իմամ-ջումայի սենեակից, նա վեր կացաւ և կամացուկ դիմեց դէպի այն կողմն. կիսաբաց դռնից լոյս նկատելով, նա առաջացաւ, հրեց մի քիչ դուռը և սարսափահար եղաւ. նա տեսաւ իմամ-ջումային սպանուած, իսկ միւս սենեակում մի սէյիդ արիւնաթաթախ խէնջարը ձեռքին, վայրենի և զարհուրելի դէմքով։ Ինչ անել, եթէ ձայն տայ, մարդասպանը կարող է իրան ևս սպանել. վա-

խեցած, չփոթուած, միայն ինքնապաշտպանութեան բնազդմամբ, նա կամաց, առանց շշուկի յետ դարձաւ ու նորից կծկուեց իր խուցում, աբան գլխին քաշելով. անցան մի քանի րոպէներ և երբ նա համոզուեց, որ ոչ մի ձայն չէր լսւում, ոչ մի վտանգ չէ սպառնում իրան, նա նորից դուրս եկաւ, նորից նայեց առանձնասենեակը և տեսաւ, որ սոսկալի սէյիդը չը կայ. նա վազեց բակը. այդտեղ ևս ոչ մի շշուկ. հասաւ գաւիթը, տեսաւ դռնապանին քնած և դուռը կիսաբաց. նա հասկացաւ, որ մարդասպանը փախել է. աղաղակել, օգնութիւն կանչել՝ կը նշանակէր իրան փորձանքի մէջ ձգել. կարող էին իրան համարել մարդասպան և ոչ ոք չէր հաւատայ նրան, թէ առատ ոսկիները աղան ինքն է տուել նրան մէջլունի համար. վերջապէս, ինչպէս բացատրել, թէ ինչու նա քնած է եղել թալարում։ Դէրվիշն լաւ համարեց անշշուկ հեռանալ և ամեն բան թողնել Նախախնամութեան կամքին։

Երբ նա անհետացաւ, Սէլիմը առաջ գնաց. կամացուկ հրելով դուռն, մտաւ գաւիթը։ Ծերունին չարունակում էր իր խռմփոցը։ Սէլիմը բարձրացրեց հարէմխանայի պարտէզը տանող մուտքի վարագոյրը. նա մտածում էր մտնել պարտէզը, բայց չէ՞ որ պարտէզից հարէմխանան տանող դուռը փակուած կը լինի. ինչպէս կանչել Եասամանին մի բան իմանալու, սոսկալի անորոշութիւնից դուրս գալու համար. բաղխել դուռը, կը նշանակէ արթնացնել և ուրիշներին ու վայը եկել նրան տարել է, եթէ նրան բռնեն իմամջումայի հարէմխանայի պարտիզում։ Նա կամենում էր դուրս գնալ, երբ յանկարծ նրա ականջին դիպաւ ոտնաքայլերի ձայն. երկու-երեք հոգի գալիս էին, մինը նոյն իսկ լացում էր. նրա սուր ականջը ճանաչեց Լէյլայի ձայնը. նա իսկոյն հանգցրեց մոմը և վարագոյրը բարձրացնելով առաջացաւ պարտէզի մէջ, ու կանգնեց մի ծառի տակ։ Շուտով նա նկատեց Եասամանին մի մոմ ձեռքին, Լէյլային, որ Եսթերի թևից բռնած՝ գալիս էին. վերջինս մեռելային գոյն ունէր. նա կարծում էր, որ սէյիդը դեռ վազ է տալիս իր ետևից և կամենում է սպանել։ Լէյլան շատ հեշտութեամբ կարողացաւ համոզել նրան, որ պէտք է փախչել, գնալ իր հրէաների մօտ, որտեղ նա ապահով կը լինի։

—Այդ դուք էք, Լէյլա, Եասաման, առաջ գալով կամացուկ ձայնեց Սէլիմը։

Եսթերը զարհուրած, ուզում էր պոռալ, բայց Լէյլան ձեռքով փակեց բերանը,

—Սուս, սուս, մի վախիր, Սէլիմն է, Սէլիմ չաթիրը։

Ապա Լէյլան մօտեցաւ Սէլիմին, քաշեց մի այլ ծառի տակ և յուզուած, ասաց.

—Այս ինչ արիր, Սէլիմ, սէյիդը սպանեց աղային։

—Սպանե՞ց, կէս-ուրախ, կէս-զարհուրած, գրեթէ պոռաց Սէլիմը։ Իսկ Եսթերը մնաց կենդանի՞. մենք կորած ենք։

—Ոչ, մենք փրկուած ենք, Սէլիմ, փառք տուր Աստծուն, որ Եսթերն չէ սպանուած։

—Ինչպէս. չէ՞ որ նա կը պատմի թէ ով սպանեց խմամ-ջումին և այն ժամանակ կարող է բացուել որ ես եմ ղրկել նրան, ճանապարհ ցոյց տուել։

—Չէ, դու լսիր ինձ. Ալլահն երևի այսպէս է կամեցել, որ այս խեղճ աղջիկը զոհ գնայ. դու նրան տար հրէաների թաղն, ես նրան համոզել եմ փախչել. ոչ ոք չէ տեսել սէյիդին. երբ Եսթերը կը փախչի, մի քիչ յետոյ մենք հարա հուրայ կը գցենք, կը թափուեն, կը տեսնեն աղային սպանուած և ամենքն էլ կը կարծեն թէ սպանողն Եսթերն է եղել։ Գուցէ նրան ներեն, երբ իմանան, որ աղան կամենում է եղել նրան զրկել կուսութիւնից. ես, Եասամանն էլ կը վկայենք. այդպիսով ոչ ոք չի իմանայ, որ սպանողը սէյիդն է, դու էլ ապահով կը լինես։ Եսթերի և ջհուդների խօսքին ոչ ոք չի հաւատայ։

—Էֆէրիմ, Լէյլաս. ես չէի կարծում այդքան խելօքն ես, միայն խեղճ Եսթեր. լաւ աղջիկ էր, բայց երևի այդպէս է նրա ճակատին գրուած. թող օրհնեալ լինի Ալլահի կամքը։

—Դէ շուտ արա, տար նրան ջհուդների թաղը. ես նրան երդումն կը տամ որ ոչ ոքի չասի, որ դու ես նրան տարել։



—Գնում եմ գնում, բայց մինչև չը թողնես այդ կարմիր շրթունքներիցդ մի տաք համբոյր քաղեմ, չեմ գնա։ Ո՜հ, իմ աննման, նազանի Լէյլա, վերջապէս, մենք հասանք մեր մուրազին, վերջապէս, ես կը տիրանամ հօրս կալուածներին և հարստութեան և դու իմս կը լինես։

Եւ սիրահարների շրթունքները միացան ջերմ համբոյրի մէջ։

Մի քանի րոպէից յետոյ Եսթերը, Եասամանի չարչաւն ձգած, Սէլիմի առաջնորդութեամբ, դուրս եկաւ դռնից և դիմեց հրէաների թաղը։ Կէս ժամ յետոյ, Եասամանը և Լէյլա խանըմը մոմեր բըռնած ձեռներին, դուրս վազեցին հարէմխանայից և հարայ տալով զարթնեցրին ծեր դռնապանին ու ոտքի կանգնեցրին բոլոր դրացիներին։

—Ալլահ, Ալլահ, պոռացին դրացիները. խմամջուման սպանուել է և ո՞վ է սպանել. մի մուռտառ, ջհուդ աղջիկ։ Մա՜հ ջհուդներին։

Եսթերի խէնջարը և չարչաւը յայտնի ապացոյցներ էին։

—

Գիշերից չորս ժամ[1] անցել էր, երբ Եսթերը, անվտանգ. Սէլիմի առաջնորդութեամբ, հասաւ հրէական թաղը։ Հասնելով սինագոգի առաջ, Սէլիմը երդուեցնել տուեց աղջկան, որ ոչ ոքի չի յայտնի, թէ ինքն առաջնորդել է նրան խմամ-

1) ժամը 11-ին.

ջումայի տնից։ Սինագոգում լոյս էր երևում. այդ նշան էր, որ ժողով կայ և հրապարակական աղօթք, ուրեմն իր հայր Բենիամինը և նշանած Սաւուղն էլ այդտեղ կը լինեն։ Եւ արդարև, հրէաները ստանալով Ռեբեկայի բերած ֆիթվան, որով իմամ-ջուման անպարտ էր կացուցանում հրէաներին, ժողովել էին ցնծութեան տօն կատարելու, նրանք երգում էին սաղմոս. «Ցնծացէք, արդարներ, ի Տէր, ուղիղներին է վայելում օրհնութիւն. Խոստովան եղէք Տիրոջ օրհնութեամբ, տասնամեայ սաղմոսարանով սաղմոս երգեցէք նրան։

«Ամբարիշտները սուր հանեցին և լարեցին իրանց աղեղները, որ խփեն աղքատին և տնանկին և սպանեն նրանց, բայց նրանց սուրն իրանց սրտի մէջ մտաւ և նրանց աղեղները փշրուեցին։

«Տէրը ոչնչացնում է հեթանոսների խորհուրդները, անարգում է ժողովրդների մտածմունքները։ Մեր օգնականը Տէրն է, նրանով են ուրախ մեր սրտերը, նա այց արաւ իր ժողովրդին, Իսրայէլին։ Տէրը զօրութիւն կը տայ իր ժողովրդին»։

Այս ընդհանուր ցնծութեան չէր մասնակցում Սաւուղը. Նա սրտում մահ էր զգում, միևնոյն ժամանակ կատաղի զայրոյթ։ Նա համոզուած էր —Ռեբեկայի հաղորդածները չէին կարողացել խախտել նրա մէջ այդ համոզմունքը—թէ Եսթերը, կամենալով ազատել հօրը և իրան ու ժողովուրդը, ծախել էր իրան իմամ-ջումային. Նա այժմ միայն մի բան էր ուզում—տեսնել Եսթերին, մի անգամ համբուրել նրա մեղր շրթունքը, սուրը ցցել նրա սրտում և նոյն սրով սպանել իրան։ Զը յագեցած տենչը, ցանկութիւնը, չը յագեցած սէրը լափում, տոչորում էր նրան։ Հիւանդութիւնից ապաքինելով, նա ամբողջ օրերով կարդում էր «Երգ երգոց»-ի այն գլուխը, ուր Սողոմոնը գովում է իր սիրուհուն և այդ նկարագրութիւնը համեմատում էր Եսթերի գեղեցկութեան հետ։

«Դու գեղեցիկ ես, ով ընկերուհիս, գեղեցիկ. աչքերդ աղաւնու աչքերի նման են. վարսերդ Գաղաադի լեռներից իջնող այծերի երամակների նման. ատամներդ լուացարանից դուրս եկող խուզած հօտի նման. Շրթունքներդ՝ որդան կարմրի թելի նման և բերանդ՝ վայելուչ, կիսած նռնի նման։ Ջուխտ ստինքդ՝ նման է մի ջուխտ ուլերի, երկուորեակ այծեամի, որ արածում են շուշանների մէջ։ Մեղրախորիսխ է կաթում շըրթունքներիցդ, ով իմ հարս. մեղր ու կաթ կայ լեզուիդ տակին և հանդերձներիդ հոտը՝ կնդրկի հոտի նման։ Փակեալ պարտէզ է իմ քոյր հարսը, փակեալ ակն է, կնքեալ աղբիւր է. Նարդոս և քրքում, խունկեղէգն ու կինամոն, զմուռս և հալուէ, բոլոր գլխաւոր բուրմունքներով»։

Սաւուղը գրեթէ խենթանում էր, երբ մտածում էր, որ այդ փակեալ պարտէզը պէտք է

բացուի մի զզուելի, ծերունու առաջ, որ այդ փակեալ ակնը, կնքեալ աղբիւրը ուրիշը պէտք է վայելէ, այն էլ ով, մի մուսուլման, մի փտած կրօնաւոր։ Ոչ, ոչ, մեղաւոր է Եսթերը. Նա պէտք է սպանէր իրան, թոյն խմէր և այդ անարգանքը յանձն չառնէր։ Նա ինձ չէ սիրում ուրեմն—գալարւում էր դառն մտածմունքների և հոգեկան տանջանքների մէջ խեղճ սիրահարը։

Նա չը կարողացաւ այլ ևս դիմանալ, լսելով իր հայրենակիցների փառաբանական սաղմոսը, որի ամեն մի խօսքը ասեղի նման ծակում էր նրա սիրտը։

—Բաւական է, լռեցէք. դուք փոխանակ լացելու, ուրախանում էք, դուք, որ գիտէք, թէ ինչ անարժան և անարգ գնով ձեռք է բերուել այդ ֆիթվան։ Դուք ուրախանում էք մեր աղջիկների մինի բռնաբարութեամբ և խայտառակութեամբ։

—Եսթերը զոհեց իր անձը ժողովրդի համար, փրկեց Իսրայէլը. Եհովան կը ների նրան և դու զուր ես ամբարշտութեամբ ընդդիմանում ճակատագրին, խստութեամբ պատասխանեց րաբբիներից մինը։

Յանկարծ կանանց դասից մի ձայն պոռաց.

—Ահա և Եսթերը։

Զարմացման աղաղակներ բարձրացին ամեն կողմից։

—Այո, ահա և ես. օրհնեալ է Եհովան, որ ազատեց ձեզ և ինձ. ալէլուիա, ալէլուիա նրան.



արտասանեց Եսթերը՝ դեռ գունատուած յուզմունքից և փոքր ինչ առաջ կրած սարսափից։

Սաւուղը այլ ևս չը կարողացաւ համբերել։ Մի ոստիւնով ցատկեց, արձանացաւ Եսթերի առաջ և հանելով գօտու մէջ թաքցրած մի կեռ դաշոյն, պոռաց.

—Անզգամ աղջիկ, դու դեռ համարձակւում ես երևալ այստեղ պոռնկութեան նշանով, երբ ճմլուել են քո ծծերը, երբ շօշափուել են քո կուսութեան ստինքները։

Եւ նա բարձրացրեց դաշոյնը, բայց հանդիպելով Եսթերի նայուածքին, որ փայլում էր անմեղութեան, անարատութեան փայլով, նա ճնշուեց այդ նայուածքից, թուլացաւ և դաշոյնը ընկաւ նրա ձեռքից։

—Դու զուր ես մեղադրում ինձ, Սաւուղ, ասաց յորդ արտասուք թափելով Եսթերը. ես անմեղ եմ, և ես սպանած կը լինէի ինձ առաջ քան մինը յանդգնէր շօշափել իմ ստինքները։

Եւ նա յուզուած, խոցուած անարդար վիրաւորանքից, սկսեց պատմել Իմամ-Ջումայի տան անցածը։

Սարսափ, զարհուրանք պատեց ամենքին։

—Վայ մեզ, վայ մեզ. աղաղակեցին րաբբիները և ծերունիները. Իսրայէլը կորած է այժմ։

Առանց ուշ դարձնելու այդ ողբին, Սաւուղը, ուրախացած, առանց մտածելու, որ ոտակոխ է անում աւանդական սովորութիւնը, առանց ա-

մաչելու և քաշուելու, փաթաթուեց Եսթերի վզով և, համբուրելով նրա ճակատը, ասաց.

—Ներիր, ներիր, իմ Եսթեր, հոգիս, խելագարուած էի. վիշտը կասկած էր մտցրել սրտիս մէջ:

Եսթերը, շառագունած ամօթից, հրեց Սաւուղին և դառնալով ծերունիններին, ասաց.

—Բայց ինչու կարծում էք որ մեզ վտանգ է սպառնում. հօ ես չեմ սպանել, իսկ Իմամ-ջուման մեզ ֆիթիլայ է տուել։

—Ո՞վ կը հաւատայ մեր խօսքին։

Եւ հրամայելով լռութիւն պահպանել, ծերունինները հրամայեցին Եսթերին մանրամասն պատմել անցքը։ Պատմութեան ժամանակ նա ձեռքը տարաւ ծոցը, որ հանի խէնջարը և տուփը և առաջին անգամ նկատեց նրանց աներևոյթանալը. այժմ միայն յիշեց, որ վեր կենալիս բաց էր թողել իմամ-ջումայի սենեակում. նա յիշեց նոյնպէս, որ չարշաւն թողել էր այնտեղ և Եասամանի չարշաւն էր ձգել։ Վերահասու լինելով բոլոր այդ մանրամասնութիւններին և իմանալով, որ բացի Լէյլա խանըմից ոչ ոք չէ տեսել սէյիդին ու իմամ-ջումայի տան մէջ դեռ ոչինչ չը գիտէին մինչև Եսթերի փախչելը, ծերունինները միաբերան աղաղակեցին.

—Վայ մեզ, վայ մեզ, մենք կորած ենք: Հիմա սպանութիւնը յայտնուած կը լինի և որովհետև Եսթերը փախել է ու նրա չարշաւն ու խէնջարը այնտեղ գտած կը լինեն, ուստի և ամենքը



կ'ասեն, որ Եսթերն է սպանել ու փախել մեզ մօտ։ Մենք կորած ենք. անխուսափելի է այլ ևս ջհուդ-քուշանը:

—Բայց չէ որ Լէյլա խանըմը գիտէ, որ մարդասպանը սէյիդն է:

—Լէյլա խանըմը չի ասի, կամ նրան թոյլ չեն տայ, որովհետև մուսուլմանների համար խայտառակութիւն կը լինի։

Տիրեց ընդհանուր յուզմունք: Յանկարծ սինագոգի դուռը բացուեց և մի քանի հրէաներ սփրթնած, դողդոջուն ներս մտան, երկու հայ երիտասարդների հետ:

—Մեր տունը քանդուեց, ինչ էք նստել. գլխներիդ ճարը տեսէք։

Հայերը պատմեցին, որ իրանք մի քանի հաշիւների կարգադրութեան համար սադրազամի տունն էին գնացել և երբ մի ժամ առաջ դուրս էին գալիս, մի իրարանցում տիրեց և ֆէրրաշներ, սէյիդներ, մօլլաներ ներս վազելով գոռում էին, թէ իմամ-ջումային սպանել է ջհուդ աղջիկն ու փախել։ Լսելով այդ, նրանք վազեցին եկան իմաց տալու. անկասկած, առաւօտեան երբ լուրը տարածուի քաղաքում, խուժանը թափուելու է հրէաների թաղի վրա և ջհուդ-քուշան են սարքելու։ Քանի որ դեռ գիշեր է և բաւական ժամանակ կայ, պէտք է պաշտպանութեան միջոցներ որոնել, պատրաստուել։

Հայերի բերած լուրը ընդհանուր սարսափ տարածեց։ Լաց, ճիչ, սուգ-շիւան պատեց ամեն կողմ. կանայք անագին վայնասուն բարձրացրին և սկսեցին պատռել օձիքները, խփել կուրծքը։ Ծերունիները և րաբբիները խորհուրդ կազմեցին, կշռելով վերահաս վտանգի բոլոր հետևանքները և կարևոր կարգադրութիւններն արին. պէտք էր անմիջապէս մի քանի աղախնկալ [1]) ուղարկել սադրազամի մօտ, նրան պատմել գործի էութիւնը ու խնդրել զօրք ուղարկել Թաղը պաշտպանելու. միւս կողմից, որովհետև այդ օգնութեան վրա շատ յոյս չէ կարելի դնել, նոյն իսկ եթէ զօրք ուղարկուի—որ շատ կասկածելի է—պէտք է անմիջապէս ամեն մարդ իր տան մէջ ունեցած թանկագին իրերը՝ փող, զարդ, քարեղէն, շալեղէն բերի սինագոգը՝ թաքցնելու ստորերկրեայ գաղտնարանում, կամ ով կարող է և միջոց կայ, տանի պահ տայ հայերին, գեաբրներին [2]) և եւրոպական դեսպաններին։ Տան մէջ պէտք է թողնել ծանր-կահ կարասիք, պղնձեղէն, դրունները պէտք է պինդ ամրացնել, բայց որ ամենագլխաւորն է—պատուիրում էին ծերունիները—ի սէր Եհովայի, յանուն Տապանակի երդուեցնում ենք երիտասարդներին, որ զէնք չը գործածեն. աւելի լաւ է մի քանի հոգի զոհուեն, քան ամբողջ ժողովուրդը, որովհետև զէնքի գործածու-

1) Ծեր։ 2) Կրակապաշտներ։



թիւնը առաջ կը բերի հրէաների ամբողջական ջնջումը։ Ապա ծերունիները պատուիրեցին, որ կանայք և աղջկերքը բոլորը հաւաքուեն սինագոգում, Թաղի կենտրոնը, իսկ տղամարդիկ պաշտպանեն տները, բայց Եսթերին անկարելի է թողնել սինագոգում, որովհետև նրան, երևի իշխանութիւնը կը պահանջի և ոչ ոք էլ չէ կարող թագցնել նրան իր տան մէջ, որովհետև նրա պատճառով կարող են ամբողջ տունը քանդել։

—Եսթերը պէտք չունի ոչ ոքի պաշտպանութեան, նա իմ նշանածն է, ես կը պաշտպանեմ նրան և որպէս զի կարողանամ տանել իմ տունը, խնդրում եմ այս րոպէիս իսկ կատարել և օրհնել մեր ամուսնութիւնը։

Ես արտասանելով այս խօսքերը, Սաւուղը բռնեց Եսթերի ձեռքից ու երկուսն միասին չոքեցին խախամի առաջ։ Քահանան օրհնեց նրանց պսակը և երկու սիրահար ամոլները շտապով հեռացան սինագոգից. Նրանց հետևեց ծերունի Բենիամինը։

—

Արշալոյսը նոր էր ծագում, երբ իմամ-Ջումայի սպանութեան լուրը հրէայ աղջկայ ձեռքով արդէն տարածուել էր Թէհրանում։ Այդպիսի սոսկալի յանդգնութիւնը — մուսուլման քահանայապետի սպանութիւնը անարգ, արհամարհուած ջհուդի ձեռքով—այնքան անակնկալ էր, որ շատերը չէին հաւատում։ Ամենքը շտապում էին գնալ Նամազը

կատարել մզկիթներում, ուրպէս զի այդտեղ իմանան մանրամասնութիւնները։ Մզկիթները լի էին բազմութեամբ. ամեն մի ամբիոնի վրա մի մօլլա կամ սէյիդ գրգռում էր ամբոխը՝ օրինակելի կերպով պատժել մուրտառ ջհուդներին, նրանց եօթը պորտը անիծել, որ եօթը պորտ յիշեն այդ պատիժը։

—Ջհուդ-քուշան, ջհուդ-քուշան, աղաղակում էր ամբոխը. սալաւաթ, սալաւաթ։

Եւ կազմւում էին խմբեր, խանութները չէին բաց անում. սատահակ մանուկները վազելով փողոցներում, պոռում էին. «ջհուդ-քուշանի գնանք, ջհուդ-քուշանի»։ Ամեն մարդ վազում էր տունը և մի գործիք վերցնում. բահ, կացին, երկաթէ ձող, թուր, խէնջար, հրացան, ինչ որ ձեռքն էր ընկնում. չէին մոռանում տոպրակ, քսակ, չուալ եւ վերցնել՝ առատ աւար բերելու սրուած ախորժակով։

Լճացած խաղաղ կեանքը ալեկոծուել էր. երեկուայ ահաբեկուած ամբոխը այսօր սրել էր ատամները և գնում էր մի նոր թամաշայի—աւերելու, կողոպտելու, սպանելու, յանուն կրօնի, յանուն հաւատի պաշտպանութեան։ Լսւում էր հեռուից գոռացող հեղեղի աղմուկը և ամենքը զգում էին, որ ոչ մի ամբարտակ կարող չէ այդ հեղեղի առաջն առնել. նա պէտք է կատարէ իր աւերիչ գործը, հիմնայատակ անէ ամեն ինչ, որին կը հանդիպէ իր ճանապարհին։ Ինչպէս կա-



րող են դիմադրել այդ կատաղած հեղեղին խեղճ հրէաները, մի փոքրիկ հօտ ոչխարների, շրջապատուած գիշատիչ գազաններով. իսկ մոլեռանդութիւնը գիշատիչ էր դարձրել նոյն իսկ ճնշուած, հարստահարուած գիւղացուն։

—Սալաւաթ, սալաւաթ, պոռում էր ամբոխը։

Եւ մոլեռանդ քարոզիչները պոռում էին.

—Մուսուլմաններ, վրէժ, վրէժ առէք մուրտառ, անհաւատ ջհուդներից։

Այդ քարոզիչների և գրգռողների մէջ աչքի էր ընկնում մարդասպան սէյիդը, վառուած վրէժխնդրութեան ծարաւով և յուսալից, որ նորից ձեռք կը ձգէ իր որսին։ Նա հաւատացած էր, որ ոչ ոք չի իմանայ իր ոճրագործութիւնը, քանի որ միակ վկան՝ իմամ-ջումայի կինը պահելու է լռութիւն, բայց եթէ նոյն իսկ յայտնուի որ ինքն է սպանել, նա յոյս ունէր արդարանալ նրանով, որ ջհուդ աղջիկը խելքից հանել էր կրօնապետին հմայքով և կախարդութեամբ և կրօնապետը դաւաճանել էր մեծ մարգարէի օրէնքին. Նա կազմակերպում և գլխաւորում էր խմբեր և մի խմբի առաջնորդութիւնը ստանձնելով, ոգեւորում էր նրան առատ և հարուստ աւարի խոստումներով։

—Ջհուդ-քուշանի գնանք, ջհուդ-քուշանի գնանք—թնդում էր Թէհրանի մի ծայրից միւսը։

Եւ ամբոխային հեղեղը հոսեց դէպի հրէաների թաղը։ Նա նմանում էր քաղցած գայլերի վոհմակին, որ հեռւում մսի հոտ է առել և վազում

է, աչքերը պսպղան, երախը լայն բացած։ Մի քանի ֆէրրաշներ և մօտ յիսուն սարբազներ, որոնց բէգլար-բէգին ուղարկել էր, սադրազամի հրամանով, պաշտպանելու հրէական թաղը, չէին կարող, ի հարկէ, այդ հեղեղի առաջն առնել և բաւական էր մի երկու ծերունի մօլլաների յորդորը և կոչը նրանց մուսուլմանական զգացումներին, որ նրանք միանային ամբոխին և նրա հետ մասնակցէին աւարառութեան ու յարձակման։ Մուսուլման սարբազը պարտաւոր չէ ամենևին պաշտպանել քաֆիրներին մուսուլմանների դէմ. այդ մտքին շատ ջերմ կողմնակից էր ներքինապետը, որ եկել էր սադրազամի մօտ և յորդորում էր նրան թողնել ժողովրդին՝ կատարել իր պարտքը։

Հրէայ աղսախկալները, որոնք հազիւ կարողացել էին լուսածագին ներկայանալ սադրազամին, որքան երդուեցին, պնդեցին, որ սպանողն Եսթերն չէ, այլ սէյիդը, որքան աղաչեցին ստուգել, քննել գործը, բայց չը կարողացան համոզել և աւելի սաստիկ կատաղեցրին ներքինապետին։

—Լսեցէք, մուրտառ ջհուդներ. դուք դեռ կամենում էք կեղտոտել մեր սուրբ կրօնապետին. ձեր լեզուն պէտք է կտրել։

Վախեցած հրէաները լռեցին։ Սակայն մի անակնկալ օգնութիւն՝ սիրտ տուեց հրէաներին։ Սենեակը ներս մտաւ Ալի-Հէյդար դէրվիշը, սադրազամի հին ծանօթը և բարեկամը։ Դէրվիշը



դաւուդի[1]) էր ծածուկ. նա սոսկացել էր, տեսնելով թէ ինչ մեծ վտանգի են ենթարկուել խեղճ հրէաները և երբ նա լսեց մզկիթի առաջ երիտասարդ սէյիդի քարոզը, նա իսկոյն ճանաչեց մարդասպանին։ Նա վճռեց այլ ևս լուռ չը մնալ ու շտապեց սադրազամի ապարանքը։ Այստեղ նա պատմեց սադրազամին և ներքինապետին իր տեսածը և յայտնեց, որ հրէաները անմեղ են։ Ներքինապետը դարձեալ չէր ուզում հաւատալ. նա գոռաց, որ դէրվիշն ափիոնով հարբած է եղել և զառանցել է, բայց սադրազամը, որ արդէն մեծ կասկածներ ունէր և շատ անհաւանական էր գտնում Եսթերին վերագրած յանցանքը, ճանաչում էր դէրվիշին ճշմարտախօս մարդ, իսկոյն կանչել տուեց բէգլար-բէգուն, պատմեց դէրվիշի վկայութիւնը և հրամայեց հարցաքննել Լէյլա խանըմին։ Վերջինս ստիպուեց խոստովանել, որ սպանողը սէյիդն է, բայց ինքը վախեցել է յայտնել, որպէս զի խամ-ջումայի անունը չարատաւորուի։ Սէյիդի թողած կօշիկներն ևս գտնուեցան, միայն անկարելի եղաւ իմանալ, թէ ինչպէս է մտել սէյիդը թալարը և թաքնուել։ Անմիջապէս հրաման տրուեց բազմաթիւ զօրք ուղարկել հրէական թաղի պաշտպանութեան համար, բայց արդէն շատ անագան էր...։

Ջհուդ-քուչանը վաղուց սկսուել էր։ Մի քանի տներ արդէն աւերուել էին, գոյքը աւարի առնուել։

1) Մի աղանդ է, Դաւիթ մարգարէին հետևողներ.

Ամբոխը, արդէն արիւնի հոտ առած, սկսել էր կատաղել. երկու-երեք ծերունի հրէաններ, որոնք փորձեցին ընդդիմանալ և թոյլ չը տալ, որ գինու կարասները ջարդ ու փշուր լինեն, վիրաւորուեցին, իսկ մի քանի երիտասարդներ, որոնք աշխատեցին փայտերով պաշտպանուել, երկաթի ձողերի հարուածներով սպանուեցին: Ամենից կատաղին այն խումբն էր, որին առաջնորդում էր երիտասարդ սէյիդը, բուն ոճրագործը. նա աշխատում էր բոլէ առաջ հասնել Սաւուղի տան, որովհետև Բենիամինի տունը թափուր գտնելով, նա հասկացել էր, որ Եսթերը նշանածի տանն է պատսպարուած: Եւ երբ նա հասաւ Սաւուղի տան, ուրախութիւնից ոռնաց. կտուրի վրա կանգնած էր [1]) Սաւուղը մի քանի երիտասարդների հետ, ոտքից գլուխ զինաւորուած. տունը, ինչպէս երևում էր, ամրացրած էր: Եւ արդարև, Սաւուղը, իր մի քանի ընկերների օգնութեամբ, ամբողջ գիշերը աշխատել էր և պաշտպանողական միջոցներ ձեռք առել: Բոլոր նրա աղաչանքը, պաղատանքը Եսթերին, որ նա թողնուէր մի հեռու տեղ, անօգուտ էին անցել. Եսթերը վճռողաբար յայտնել էր, որ կամենում է իր ամուսնու հետ ապրել կամ նրա հետ մեռնել և չէ կամենում իր պատճառով ուրիշներին վտանգի ենթարկել:

[1]) Պարսկաստանում կտուրները հարթ են և նրանց վրա ամառները քնում են ու ճեմում:



Բարեբախտաբար, տունը այնպիսի դիրք ունէր, որ կտրից կարելի էր երկար ժամանակ պաշտպանուել և յետ մղել ամեն կողմից յարձակումը: Տան դուռը պինդ ամրացրին երկաթներով և քարերով. կտուրի վրա քարեր կուտեցին, երկու մեծ կաթսայ դրին և ջուր եռացրին, ինչպէս և իւղ, փայտեր դիզեցին: Եսթերը ամուսնու կողքից չէր հեռանում. նա ևս մի նոր կէս դաշոյն էր խրել գօտու մէջ: Պաշտպանուողները պատնէշ էին չինել որի ետև կարող էին թաղնուել:

Վերջապէս, ամբոխը հայհոյանք, աղաղակ արձակելով, մօտեցաւ Սաւուղի տան: Հազիւ սէյիդը նկատեց Սաւուղին և նրա կողքին Եսթերին, պոռաց:

—Մուսուլմաններ, ահա այս շան աղջիկն է սպանել մեր սուրբ կրօնապետին և այս շան լակոտը յափշտակել է նրան ու չնացել նրա հետ:

—Սուտ է, անօրէն սէյիդ, պոռաց վերևից Սաւուղը, իմամ-ջումին դու ես սպանել, երբ նա կամենում էր բռնաբարել սրան. սա իմ կինն է, օրինաւոր կինը:

—Մահ, մահ մուռտառ ջհուդներին, ոռնաց ամբոխը:

Եւ սոսկալի հարուածները տեղացին դրան դէմ, բայց յանկարծ վերևից, կտուրից թափուած եռացող ջուրը յետ մղեց ամենքին.

—Վայ երեսս այրուեց, վայ խաշուեցի, լսուեցին ողբալի ձայներ:

—Միթէ մուսաւո ջհուդները պէտք է մեր առաջը կտրեն. փչրեցէք այս դուռը, ինչ տղամարդիկ էք, պոռաց սէյիդը։

Եւ ամբոխը նորից մօտեցաւ դռան ու կացնի հարուածներով փորձեց փչրել դուռը։

Վերևից մի քանի քարեր թափուեցին և վիրաւորեցին մի քանիսին։

—Ձեզ չան պէս կը սատկեցնեմ, պոռաց Սաւուղը, եթէ յետ չը դառնաք։

Բայց ամբոխը կատաղել էր. դուռը արդէն սկսել էր շարժուել կացինների հարուածների տակ։ Մի աման եռուն իւղ թափեց Եսթերը և կռացաւ. այն միջոցին, երբ ներքևում, չարերը կսկիծից խանչում էին, ու Սաւուղը, գլուխը հանելով պատնէշի ետևից, կամեցաւ յետ քաշել Եսթերին, սէյիդը, մի զինուորի հրացանը խլելով, ուղղեց Սաւուղին. հրացանը թնդաց և արիւնլուայ Սաւուղը յետ ընկաւ կտրի վրա։

Ամբոխը ուրախութիւնից սոսկալի ոռնոց արձակեց. դուռը ընկաւ հարուածների տակ և խուժանը թափուեց տան բակը։ Սկսեցին ամեն բան ջարդ ու փչուր անել. մի մասը վազեց սէյիդի առաջնորդութեամբ դէպի այն սանդուխները, որոնցով բարձրանում էին կտուրը։ Սրա դուռն թէև նոյնպէս ամրացրուած էր, բայց ի հարկէ, երկար դիմանալ չէր կարող։

Եսթերը, համարեա խելագար, ընկաւ ամուսնու վրա. Սաւուղը դեռ շնչում էր. «փախիր,



փախիր, Եսթեր, ազատիր քեզ»։ Այս խօսքերը սթափեցրին երիտասարդ աղջկան. նա նորից կռացաւ, համբուրեց Սաւուղին և շշնջաց. «ես կը գամ քո ետևից. այնտեղ, երկնքում, մենք կ'ապրենք, բայց ես դեռ պէտք է վրէժ առնեմ»։

Եւ նորից մի համբոյր դրոշմեց ամուսնու շրթունքներին։

—Իմ հոգեակս, իմ թագ ու պարծանքս, եղան Սաւուղի վերջին խօսքերը։ Նա աւանդեց հոգին։

Հարուածները կտրի դռան սկսուեցին, լսւում էր սէյիդի կատաղի ոռնոցը։ Եսթերը այդ ձայնից ծլունկ եղաւ, հանեց խէնջարը ու կանգնեց դռան առաջ։

Դուռը սոսկալի շառաչիւնով վայր ընկաւ և երևաց սէյիդի գաղանացած դէմքը, կացինը ձեռքին։ Մի ակնթարթում Եսթերը թռաւ վրան, խրեց խէնջարը նրա կուրծքը և երբ սէյիդը յետ յետ գնալով, ընկաւ իր ետևից եկողների վրա, որոնք սկսեցին գլորուել սանդուղներով, Եսթերը դարձաւ Սաւուղի դիակի մօտ և «ահա ես էլ գալիս եմ քեզ հետ, իմ աննման, սրտի հատոր, Սաւուղ», մրմնջալով, արիւնաթաթախ խէնջարը խրեց իր կուրծքը ու ընկաւ Սաւուղի վրա։

ՎԵՐՋ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Публичная Библиотека 7/XI 1922

ՀՀ Ազգային գրադարան
NL0320833